Դ.ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ, Ն.ՀԵՔԵՔՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Գործնական աշխատանքների ձեռնարկ բուհերի ուսանողների համար

Հինգերորդ հրատարակություն

«ԱՍՈՂԻԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Երևան 2006

ՀՏԴ 809.198.1(07)
ԳՄԴ 81.2Հ գ7
Գ 697

Երաշխավորված է
ՀՀ կրթության և գիտության նախարարության
կրթական բարեփոխումների կենտրոնի կողմից

Տպագրվում է
Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական
լեզվաբանական համալսարանի հայագիտության
ամբիոնի որոշմամբ

Խմբագիր՝ պրոֆ. Ֆ.Հ.Խլղաթյան

Գ 697 Գյուրջինյան Դ.Ս., Հեքեքյան Ն.Հ.
Հայոց լեզու. գործնական աշխատանքների
ձեռնարկ բուհերի ուսանողների համար:-Եր.:
«Ասողիկ» հրատ., 2006, 232 էջ:

Գ 4602020100
0136(01)2006 2006 ԳՄԴ 81,2Հ գ7

ISBN 99941-65-14-3

© Դ.Գյուրջինյան, Ն.Հեքեքյան

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Գործնական աշխատանքների այս ձեռնարկն ստեղծվել է Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի հայագիտության ամբիոնում և նախատեսված է բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների համար:

Գիրքն ընդգրկում է ժամանակակից հայոց լեզվի բուհական դասընթացի բոլոր բաժիններին վերաբերող առաջադրանքներ: Դրանք հիմնականում գործնական ուղղվածություն ունեն: Երբեմն ընտրվել է մատուցման այնպիսի եղանակ, երբ ներկայացվում են տեսական բնույթի նյութեր՝ «տեսանելի դարձնելով» դրանք և անուղղակիորեն նպաստելով նրանց յուրացմանը:

Հայերենի բուհական ուսուցման ամբողջականությունն ապահովելու նպատակով ձեռնարկի մեջ զետեղվել են բազմապիսի աշխատանքներ՝ տեքստի համառոտում, ծավալում, համր բնագրի կետադրում, նամակ գրել և այլն: Որոշ առաջադրանքներ էլ նպատակաուղղված են բանավոր խոսքի զարգացմանը:

Առաջադրանքները տրված են ըստ լեզվի ուսումնասիրության բաժինների, սակայն հաճախ ընդմիջարկվում են տարաբնույթ այլ աշխատանքներով: Նպատակն անցած նյութի անընդհատ կրկնությունն ու ամրապնդումն է, ինչպես նաև բազմազանության և հետաքրքրականության ապահովումը: Դրանով կապ է ստեղծվում նաև հայոց լեզվի դպրոցական նոր դասընթացի հետ:

Միևնույն ենթաթեմայի վերաբերյալ այլազան աշխատանքներ են առաջարկվում: Ըստ իր հայեցողության՝ դասախոսը դրանք կարող է հանձնարարել լսարանում կամ թողնել տանը կատարելու համար, չրջանցել այս կամ այն վարժությունը կամ էլ շերտավորել դրանք՝ հաշվի առնելով ուսանողների մասնագիտությունը, կրթական, ինչպես նաև հայերենի իմացության մակարդակը: Որպեսզի դյուրությամբ գտնվեն նույն թեմային վերաբերող նյութերը, գրքի վերջում ներկայացվում է առարկայական ցանկ: Այստեղ տրված են թեման, ապա նրան

առնչվող առաջադրանքների համարները: Այդպես անհրաժեշտության դեպքում «կողք կողքի կբերվեն» իրարից հեռացած նյութերը: Որոշ առաջադրանքներ, որոնք կրկնակի պահանջ են պարունակում կամ առնչվում են տարբեր թեմաների, բնականաբար հիշատակվում են երկու անգամ:

Կարծում ենք, որ սույն ձեռնարկը կնպաստի հայոց լեզվի ծրագրային նյութի ըստ ամենայնի յուրացմանը և ուսանողների գրավոր, ինչպես նաև բանավոր խոսքի մշակմանն ու կատարելագործմանը:

Գիրքը գրելիս մեր աչքի առաջ ունեցել ենք մեր երեկվա և այժմյան ուսանողներին: Գրել ենք սիրով, ուստի և հուսով ենք, որ ուսումնառության ընթացքում ուսանողն էլ սիրով կբացի այս գիրքը: Դա կլինի մեր ամենամեծ վարձատրությունը:

Հեղինակներ

Ի՞նչ է հայրենիքը: Հայրենիքը միայն հողն ու քարը չէ, նաև այդ հողին ու քարին շաղախված դարերն են ու մշակույթը՝ գիրը, գույները, երգը, կոթողը: Իսկ ավելի շատ՝ հայրենիքը այս ամենի ճառագայթումն է մարդու շուրջը և մարդու հոգու մեջ, այդ ճառագայթումից բաղադրված մթնոլորտը:

Եվ եթե, գոնե հիմա, հնարավոր չէ մեր աշխարհատարած ժողովրդին հավաքել նույն հողի վրա, պետք է հավաքենք նրան նույն հոգևոր երկնքի տակ, պահենք այն մթնոլորտի մեջ, որ լիցքավորվում է Արարատից, դարերից ու մագաղաթներից, Վանա ծովից ու Մարութա սարից, Անիի ավերակներից ու Նարեկացուց, Էջմիածնի ու Գանձասարի վանքերից, Միծեռնակաբերդի հավերժ կրակից, հնից, նորից, Երևանից, ողջ նորամանուկ Հայաստանից, մեր երազներից, մեր հավատից, այս ամեն-ամենից անվերջորեն հեռարձակող ճառագայթումով:

Ս. Կապուտիկյան

ա) Հայոց աշխարհի լեռների անուններ
բ) լճերի ու գետերի անուններ
գ) մայրաքաղաքների անուններ
դ) հայ պատմիչների և միջնադարյան բանաստեղծների անուններ
ե) ճարտարապետական հուշարձանների անուններ

ա) Լույսի հայրենիք, հույսի հայրենիք
բ) Նամակ հայրենիքից
գ) Այս մեծ աշխարհի մեր անկյունը

Մեր նախնիները մեզ և աշխարհին փոքր ժառանգություն չեն կտակել: Բայց մենք պիտի հասկանանք և հասկանալով չմոռանանք երբեք, որ մեր ժառանգության մեծագույն գանձը մեր լեզուն է:

Պարույր Սևակ

Հայոց լեզվի մասին մեջբերումներ հոդի ասելիքներ

... Ապրեց մեր լեզուն,
Ոսկեղենիկը մեր մեսրոպազուն...
...Շողաց, հուրհրաց նա բոցի նման,
Եվ երբ շուրջբոլոր մռայլը մութի շատ էր խտանում,
Բոցն այդ առավել բորբոք էր դառնում,
Քանզի ցասումի փայլակն էր գալիս, ծուլվում այդ բոցին,
Ատելությունն իր շանթերն էր տալիս նրա հնոցին,
Սերն իր շիկնանքն էր նրա մեջ վառում,
Հույսն իր շողերն էր նրան գումարում,
Իր մաքրությունն էր տալիս արցունքը,
Քրտինքն՝ իր լույսը,
Խունկն՝ իր բուրմունքը,
Նետն՝ իր սլացքը,
Եվ սուրն՝ իր շողը,
Խոփն՝ իր ցոլանքը,
Մուրճն՝ իր կրակը,
Իսկ մեր արյունը, իսկ մեր արյունը
Տալիս էր նրան իր տաք ավյունը
Եվ անմահության գաղտնիքն էր տալիս:

Վահագն Դավթյան

Հայոց լեզվին նվիրված ոգեշունչ մտքեր, գրություններ անկրկնելի

Աշխարհի շինողն ու քանդողը լեզուն է:

Հայկական առած

Լեզվի մասին մտքեր, գրություններ, գրքերի տիտղոսներ

ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ես երջանիկ էի հայերեն խոսքի կարկաչյունով ու ճարճատյունով:
Ես լսում էի օտար խոսքը և համայվում էի նրանով: Իսկապես, կոշտի, չիկացածի և զարմանալիորեն փափուկի, քնքուշի ինչպիսի՜ զուգակցում:
Ինչպես կոշտ, այրված հողը և հյութալի պտուղը, որ հասունանում է նրա վրա:

Անդրեյ Բիտով
(ռուս գրող)

1. *Հետևյալ քառատողերում որոշեցեք ծայնավոր և բաղաձայն հնչյունների տոկոսային հարաբերությունը:*

Առուներով, գետակներով, վտակներով անհամար
Հորդում են հար ու կուտակվում քո մեջ խոհեր ու գանձեր.-
Այդպես գետե՛րն են գոյանում վտակներից աննշմար,
Անհատնելի ու անդադար, անկերպարանք ու անձև:

***

Եղե՞լ է երբ, որ քո մտքում հուրհրացող խոհ մի խոր
Գրի առած՝ լինի այդքա՛ն ինքնաբավ ու այդքա՛ն նոր.-
Ա՜խ, բույր ունեն խոհերը մեր, ունեն կշիռ, ունեն խորք,
Բայց գրքերում դառնում են լոկ – ցոլք ու ցնորք հեռավոր:

***

Այս խոհերի, այս գրքերի, այս մտքերի աշխարհում
Կա մի արև անեզրական, որ չի իջնում ու մարում.
Վառվում է նա լույսով անմար և ջեռ պահում մեր ոգին
Ստեղծագործ հրով անճառ՝ անգետ չարին ու բարուն:

Եղ.Չարենց

2. *Գրեցեք բառեր, որոնցում հնչյունների և տառերի քանակի անհամապատասխանություն կա: Բացատրեցեք, թե ինչո՞վ է դա պայմանավորված:*

3. *Հայերենի ձայնավոր հնչյունները տեղադրեցեք համապատասխան տեղերում:*



4. *Բնութագրեցեք ձայնավոր հնչյունները, որոնցով տարբերվում են ներքոհիշյալ բառերը:*

ա) չոր – չիր բ) քոր(ել) – քեր(ել) գ) զը՞նգ - զանգ դ) ծակ-ծուկ

5. *Հայերենի բաղաձայնական համակարգի վրա ցույց տվեք՝*

ա) ձայնեղ, խուլ, շնչեղ խուլ և ձայնորդ բաղաձայնները
բ) պայթական, շփական և կիսաշփական բաղաձայնները
գ) • առաջնալեզվային, ետնալեզվային և միջնալեզվային բաղաձայնները
• շրթնային և շրթնատամնային բաղաձայնները
• ռնգային և կոկորդային բաղաձայնները
դ) պարզ և բարդ բաղաձայնները

բ	պ	փ	վ	ֆ	մ
գ	կ	ք	ղ	խ	ն
դ	տ	թ	զ	ս	լ
ձ	ծ	ց	ժ	շ	ր
ջ	ճ	չ		հ	ռ
					յ

6. *Նշեցեք, թե հակադրվող բաղաձայնները միմյանցից ո՞ր հատկանիշներով են տարբերվում:*

ա) բակ - փակ	զ) պայթել – պայտել	ժա) խաշ – խաժ
բ) ճար – չար	է) կանոն – քանոն	ժբ) ծեծ – ցեց
գ) գամ – կամ	ը) ձորակ – ծորակ	ժգ) ձախ – ցախ
դ) կեռ – կեր	թ) վես – ֆես	ժդ) կոր - քոր
ե) սեխ - զեխ	ժ) յոդ - յոթ	ժե) ող – ոխ

7. *Տրված բանաստեղծությունից երկու բառ ընտրեցեք և ենթարկեցեք հնչյունային վերլուծության:*

Արարատի ծեր կատարին
Դար է եկել, վայրկյանի պես,
Ու անցել:

Անհուն թվով կայծակների
Սուրն է բեկվել աղամանդին,
Ու անցել:

Մահախուճապ սերունդների
Աչքն է դիպել լույս գագաթին
Ու անցել:

Հերթը հիմա քոնն է մի պահ.
Դու էլ նայիր սեգ ճակատին,
Ու անցիր...

Ավ.Իսահակյան

8. *Երկհնչյուններով հակադրվող բառազույգեր գրեցեք և նշեցեք դրանց իմաստները: Ուշադրություն դարձրեք դրանց արտասանությանը:*
Նմուշ՝ թույր - *գույն, երանգ,* թյուր – *սխալ, անճիշտ*

9. *Ընդգծեցեք երկհնչյունները: Հայերենի ո՞ր երկհնչյունները չկան տրված բանաստեղծության մեջ:*

Իրիկուն էր: Իրիկնային տրտմության
Հուշն էր հյուսվում – մայրամուտի մի երազ:

Դու հարազատ ու մոտ էիր ինձ այնքան՝
Քո աչքերով իրիկնային, ցողաթաց...

Քո աչքերի ու երկնքի կամարում
Ճառագայթները, այնքան հե՜զ, այնքան ջի՜նջ,
Ճախրում էին, հոգեվարում ու մարում՝
Համբուրելով ծիածանը ամոքիչ...

Եվ լույսերը, որ ճախրեցին ու անցան,
Իրիկնային ժպիտի մեջ այն վերջին –
Անրջացած, երազ դարձած սրբացան,
Որպես դեմքը քո լուսավոր – իմ հոգին:

Եղ. Չարենց

10. *Տրված բառազույգերի երկրորդ եզրում հնչյունի կորուստ (անկում) է տեղի ունեցել: Այլ բառերի միջոցով ցույց տվեք, որ առաջին եզրերը (կամ նրանց արմատները) հանդիպում են նաև անհնչյունափոխ ձևով:*

Նմուշ՝ կարասի – կարաս, *կահ-կարասի*

ա) քարշել – քաշել գ) խարշել – խաշել ե) նուռն - նուռ
բ) խորհել – խոհ դ) տեղի – տեղ զ) ծառայ – ծառա

11. *Ասացեք, թե փոխազդեցական հնչյունափոխության ո՞ր տեսակներն են ներկայացված առանձին շարքերով: Յուրաքանչյուր տեսակին մեկական օրինակ ավելացրեք:*

ա) կապերտ – կարպետ, կրուկն – կրունկ...
բ) զուժկալ – ժուժկալ, բոկիկ - բոբիկ, զքողել – աքողել....
գ) բառ+բառ→բարբառ, կաչ+կաչ→կարկաչ....
դ) աշխարհահայացք - աշխարհայացք, ճարտարասան - ճարտասան...
ե) Աստվածատուր - Ասատուր / Ծատուր, աքացի – քացի....
զ) արդուկ – հարթուկ, *հուն.* օրգանոն – *հայ.* երգեհոն....

12. *Տրված արմատներով այնպիսի բառեր կազմեցեք, որոնցում մի դեպքում ռ-ն հնչյունափոխվում է բ-ի, մյուս դեպքում՝ ոչ:*

Նմուշ՝ բառ - *բարբառ, բառագետ*

ա) դուռ բ) եղեռն գ) ձեռն (ձեռք)

13 *Բառեր կազմեցեք՝ հետևյալ բառերի առաջին բաղադրիչները երկրորդ բաղադրիչ դարձնելով: Համեմատեցեք հնչյունափոխված և անհնչյունափոխ տարբերակները:*

Նմուշ՝ քննություն - *խորաքնին:*

Լլկանք, զննում, կթվոր, կթոց/քթոց, սննդարար, տպագրիչ, խնդրագիր, սփռել, ցնցուղ, դրժել, գուժկան, մտամոլոր, մտնել, խցաբնակ, կցկտուր, բխել, հնչյուն, շնչեղ:

14. *է ծայնավորի հնչյունափոխության (կամ չհնչյունափոխվելու) դեպքեր մատնանշող յուրաքանչյուր շարքին համապատասխան 1-2 օրինակ գրեցեք (նույն արմատներն աշխատեցեք չկրկնել):*

ա) էշ – իշամեղու
բ) ծես – ծիսական, պարտեզ-պարտիզպան
գ) մարգարե - մարգարեանալ
դ) էջ(ք) - էջմիածին
ե) ծես – ծեսեր
զ) պետքական, օրենսդիր, դեմառդեմ

15 *Համապատասխան օրինակներով լրացրեք է ծայնավորի հնչյունափոխությունը ներկայացնող հետևյալ գծապատկերը:*

Չի հնչյունափոխվում *Հնչյունափոխվում է*



16. *Ի ծայնավորի հնչյունափոխության (կամ չհնչյունափոխվելու) դեպքեր մատնանշող յուրաքանչյուր շարքին համապատասխան 1-2 օրինակ գրեցեք:*

ա) ինչ(ք) - ընչաքաղց
բ) ինն – իննսուն
գ) սիրտ – սրտային
դ) ոսկի – ոսկեզօծ
ե) պատանի - պատանյակ
զ) մարմին - մարմնագույն
է) բարի - բարություն
ը) ծի – ծիավոր
թ) փոշի - փոշիանալ
ժ) քաղաքացի – քաղաքացիություն
ժա) ուսադիր – ուսադիրներ
ժբ) նախագիծ – նախագծեր

17. *Համապատասխան օրինակներով լրացրեք Ի ծայնավորի հնչյունափոխությունը ներկայացնող հետևյալ գծապատկերը:*



18. *Բաբի և Հոգի բառերն իբրև սկզբնաբաղադրիչ գործածելով՝ 7-ական բառ կազմեցեք և դրանք գործածեցեք բառակապակցությունների մեջ:*

19 *Ու ձայնավորի հնչյունափոխության (կամ չհնչյունափոխվելու) դեպքերը մատնանշող յուրաքանչյուր շարքին համապատասխան 1-2 օրինակ ավելացրեք:*

ա) ունպ – ընպել
բ) ուբ – ուբական
գ) սուր –սրիչ
դ) ռուս – ռուսներ
ե) սնունդ - սննդի
զ) աշուն - աշնան
է) հուզում – հուզումնալից
ը) առու - առվակ
թ) վերարկու - վերարկուի

20 *Համապատասխան օրինակներով լրացրեք Ու ձայնավորի հնչյունափոխությունը ներկայացնող հետևյալ գծապատկերը:*



ԲՍ - բառասիջում, ԲՍ - բառասկզբում, ԲՎ - բառավերջում
Ø - հնչյունը սղվում է

21 *Կազմեցեք հետևյալ բառերի հոգնակին՝ ուշադրություն դարձնելով հնչյունափոխության դեպքերին:*

Նիշ, վիթ, խումբ, գիստ, ծիլ, քիմք, միրգ, հունդ, սուրճ, քիստ, լինդ, գունդ, գինդ, դուքս, թուր, գին, վեպ, շեն, վեճ, գիծ, թուխպ, տիպ, թուրք, ռումբ, սուր, շիթ, շիվ, բուրդ, ռուս, տուփ, խիճ, հինգ, նիգ, բութ, մուրճ, թուղթ, քուղ, քուրծ, վիշտ, քուրդ, տեր, թիմ, թեմ, սիրտ, կուղբ:

Ի		Ու		Է	
հնչյունափոխվ.	*անհնչյունափոխ*	*հնչյունափոխվ.*	*անհնչյունափոխ*	*հնչյունափոխվ.*	*անհնչյունափոխ*

22. *Հոգնակիի հետևյալ զուգածևություններից որո՞նք եք նախընտրելի համարում:*

Քուրմեր - քրմեր, սունկեր - սնկեր, թուզեր - թզեր, գուռեր - գռեր, ճիտքեր - ճտքեր, ճիմեր - ճմեր, չիրեր – չրեր, ճիվեր - ճվեր, տիկեր – տկեր, պինչեր – պնչեր:

23. *Որոշեցեք, թե ի՞նչ հնչյունափոխության են ենթարկվել երկհնչյուն-ները՝ և գրեցեք համապատասխան սյունակներում:*

Բնավեր, ստորոգելի, առաքելական, խուսափել, կապուտակ, հանգուցալուծում, սառցանավ, հուսաբեկ, պտուտակ, պտտահողմ, եղջերավոր, պատանեկություն, ողջունել, միութենական, համբուրել, ալրաթաթախ, արնաշաղախ, զրուցընկեր, ատենապետ, լուսապսակ, մատենանիշ, կենսախինդ, ծնաբուք, սենեկապետ, գործունեություն:

ույ			*յու*			*յա*
ու	Ø	ը	ե	Ø	ը	ե

24. *Հետևյալ բառերը սկզբնաբաղադրիչ դարձնելով՝ բառեր կազմեցեք: Հետևեցեք նրանց արտասանությանը. ի՞նչ հնչյունափոխություն է տեղի ունեցել:*

Բարձր, ազդր, թանձր, մեղր, կայսր, դուստր, համր, քաղցր, մանր, փոքր, կարծր:

25. *Վերականգնեցեք տրված բառերի արմատները (բառակազմական հիմքերը) և որոշեցեք հնչյունափոխությունը:*

Կոճկել, որկրամոլ, անդադրում, չորեքշաբթի, մժղուկ, պատռել, ավլել, համրիչ, շտկել, ցամքոց, առջև, քաղքենի, արմտիք, օրրան:

26. *Կազմեցեք բարդ բառեր՝ տրված բառերի արմատները գործածելով թե՛ իբրև առաջին, թե՛ իբրև վերջին բաղադրիչ:*

Նմուշ՝ զրույց - զրուցակից, հարցազրույց:

Միտք, գույն, վեճ, գունդ, հույզ, տուն, բույս, մատյան, սեր, գլուխ, սիրտ, ծաղիկ:

27. *Ընդգծված բառերը (կամ բառամասերը) հնչյունափոխության ենթարկեցեք բառեր կամ բառաձևեր կազմելու միջոցով:*

Հոգիս արթնացավ հարավի բույրից,
Ինձ դուրս է կանչում զեփյուռը նրա,
Ձյունն էլ արևի ջահել համբույրից
Ուրախ լալիս է դաշտերի վրա:
Ելնեմ՝ ծաղկումն է ծնծաղիկների՝
Ձյունից ինձ նայող աչերն համբուրեմ,
Գնամ հետևից ծիծեռնակների
Նրանց հետ հետ գամ, գարունը բերեմ,-
Բարձրանամ կապույտ գահը լեռների՝
Արևն իբրև թագ իմ գլխին առնեմ,-
Հագնեմ ծիրանին արշալույսների,-
Գարնան թագավոր ինձ թագադրեմ....

Հովհ. Շիրազ

28. *Շեշտադրեցեք հետևյալ բառերն ու բառաձևերը և խմբավորեցեք ըստ շեշտադրման ընդհանուր հատկանիշի:*

Բուռն, մանավանդ, քարշ տալ, գուցե, գոնե, դուստր, մի խոսիր, տուն եկ, Անանիա, նույնպես, քանիերորդ, քաղաքը, վեցերորդ, սիրտս, գիրքդ, երբևէ, որերորդ, ծաղկամանը, միթե, երգելու եմ, միգուցե, տանելու ես, վեհանձն, սիրտ տալ, չեմ գրի, առայժմ, նույնքան, չես կարող, որևիցե, իհարկե, միմիայն, երեմիա:

29. *Այսպես կոչված «1,5 վանկանի» բառերի (գաղտնավանկը վերջում) 7-10 օրինակ գրեցեք: Կարդացեք և ուշադրություն դարձրեք շեշտադրությանը:*

30. *Հայերենում ո՞ր լեզվական միավորները (բառեր և այլն) չեն շեշտադրվում:*

31. *Շեշտադրեցեք հետևյալ փոխառյալ բառերը: Կազմեցեք յուրաքանչյուրի սեռական հոլովաձևը և ուշադրություն դարձրեք շեշտադրությանը:*

Մատերիա, օպերա, տեխնիկա, ռադիո, Ամերիկա, Լերմոնտով, Իտալիա, Անտոնիո, Ջուլիետա, քիմիա, ֆիզիկա, մաթեմատիկա, Դրայզեր, Չայկովսկի, դիալեկտիկա, եֆրեյտոր, էներգիա, մարշալ:

32 *Կետադրեցեք: Ո՞ր շեշտերը չնշանակեցիք և ինչու:*

Չյուն էիր դու երկնքում ճերմակ ճերմակ ձյուն
Ինչու իջար դու աշխարհ ով երկնաբնակ
Քեզ կոխկրտեց կեղտոտեց թե մարդ և թե շուն
Չյուն էիր դու ձյուներեն ձյուն էիր ճերմակ:

Վերից նայեց նախատեց արեգակը քեզ
Եվ զղջալով լաց եղար անվերջ անդադար
Չյուն էիր դու ձյուներեն ձյուն էիր դու հեզ
Ինչ ունեիր երկնքից ինչու իջար վար:

Գ.Սարյան

33 *Վանկատեցեք տրված բառերը և որոշեցեք վանկերի տեսակները:*

ժամացույց, կայսր, գծագրություն, ծովափնյա, վերցնել, դրդապատճառ, վագր, դրվածք, լեռնաբնակ, ապակեպատ, տերևաթափ, մանրէաբան, երկվորյակ, թեթևաբարո, արդարամիտ, կարկին, առու, ապակի, արդյունավետ, սևագորշ, թանձր, խաղաղություն, պայթյուն, սրթսրթալ, դայլայլել, հանապազօրյա, երկկենցաղ, գործունեություն, թրխկոց, գրեթե, որևէ, հեկեկալ, անդունդ:

34 *Գրեցեք միավանկից մինչև տասը վանկ ունեցող բառերի երկուական օրինակ:*

ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Մեր հազարամյա անցյալի այն երկար ճանապարհին, որի վրա փռված են մեր անհուն տառապանքները, ո՛չ բանակներ ունեինք մեր պաշտպանության համար, ո՛չ ուժ, ո՛չ հնարավորություն, ո՛չ էլ դրսի օգնություն, այլ մի հատիկ բան միայն՝ մեսրոպյան գիրը:

Լեո

35. *Սեղմ ներկայացրեք հայկական այբուբենի հետևյալ գրատեսակները՝ երկաթագիր, բոլորագիր, գլխագիր, շղագիր, նոտրգիր:*

36. *Բացատրեցեք ուղղագրության հետևյալ սկզբունքները՝ ելնելով ներքոհիշյալից.*

հնչույթային (կամ հնչյունական)	*պատմական (կամ ավանդական)*	*ձևաբանական*	*բառակազմական*
հոդված	ով	բառարանդ	բաց անել
բնույթ	վարդ	ծոցատետրդ	ալ կարմիր
հուղարկավորել	աշխարհ		գյուղից գյուղ
նվեր	անգամ		ոլոր-մոլոր
օր	բարձր		ի շահ

37. *Հայերենի ուղղագրության պատմության մեջ ինչո՞վ են հայտնի 1922 և 1940 թվականները:*

38. *Կարդացեք հետևյալ հատվածը և մատնանշեցեք դասական և նոր ուղղագրության տարբերությունները:*

Այդ ժամանակ երկու անառակ կանայք եկան ու կանգնեցին արքայի առջև: Կանանցից մէկն ասաց. «Լսի՛ր ինձ, տէ՛ր իմ, ես եւ այս կինը մի տան մէջ էինք: Ես երեխայ ունեցայ այդ տանը: Այնպէս պատահեց, որ երրորդ օրն այս կինն էլ ծնեց: Մենք էինք միայն տանը, մեր երկուսից

բացի ոչ ոք չկար տանը: Գիշերը սրա որդին մեռաւ, որովհետև նա իր երեխայի վրայ էր պառկել: Սա գիշերուայ կէսին զարթնել է, վերցրել իմ մանկանն իմ գրկից, երբ ես՝ քո աղախինը, քնած եմ եղել, պառկեցրել է իր ծոցում, իսկ իր մեռած որդուն դրել է իմ ծոցը: Առաւօտեան վեր կացայ, որ կուրծք տամ իմ որդուն, բայց տեսայ, որ մեռած է: Ցերեկը մի լաւ դիտեցի նրան և տեսայ, որ դա իմ ծնած երեխան չէ»: Միւս կինն ասաց. «Ո՛չ, մեռածը քո որդին է, իմ որդին կենդանին է»: Առաջին կինն ասում էր. «Ո՛չ, կենդանին իմ որդին է, իսկ քո որդին մեռածն է»: Այսպէս վիճեցին արքայի առջեւ: Արքան ասաց նրանց. «Դու ասում ես, թէ՝ "Այս կենդանին է իմ որդին, մեռածը նրա որդին է", իսկ դու էլ ասում ես՝ "Ո՛չ, մեռածը քո որդին է, կենդանին իմ որդին է"»: Արքան ասաց. «Կտրեցէ՛ք, երկու կէս արէ՛ք այս կենդանի ծծկեր մանկանը, նրա մի կէսը տուէ՛ք սրան, իսկ միւս կէսը՝ նրան»: Այն կինը, որի որդին կենդանի էր, ցաւից գալարուեց իր որդու համար: Նա ասաց արքային. «Լսի՛ր ինձ, տէ՛ր, կենդանի մանկանը տուէ՛ք նրան, միայն թէ մի՛ սպանէք մանկանը»: Միւս կինն ասաց. «Ո՛չ իմը թող լինի, ո՛չ նրանը, մէջտեղից կիսէ՛ք նրան»: Պատասխան տուեց արքան՝ ասելով. «Նրա՛ն տուէք կենդանի մանկանը, ով ասաց, թէ՝ "Դրա՛ն տուէք, միայն թէ մի՛ սպանէք երեխային": Նա է դրա մայրը»: Եւ ամբողջ Իսրայէլը լսելով արքայի վճռած դատաստանը՝ երկնչեց արքայից, քանզի տեսաւ, որ նրա մէջ դատաստան վարելու Աստծու իմաստնութիւնը կար:

Աստուածաշունչ, Գ Թագ, 3.16-28

39 ***Յուրաքանչյուր բառի դիմաց մեկական այնպիսի հոմանիշ գրեցեք, որի մեջ լինի ուղղագրական արժեք ունեցող՝***

գ, կ կամ ք

ա) արշալույս	ե) մուշտակ	թ) ծնկել
բ) գուշակություն	զ) նավակ	ժ) հեղինակազրկել
գ) ծարավ	է) պաշտել	ժա) բարեսիրտ
դ) հանցանք	ը) փական	ժբ) նախորդ

դ, տ կամ թ

ա) թիկնեղ	ե) ծուղակ	թ) անթարթ
բ) համեմատել	զ) խոտոր	ժ) մրթմրթոց
գ) բարդ	է) խղճալ	ժա) խռովվել
դ) գլխարկ	ը) թմրել	ժբ) անտուն

բ, պ կամ փ

ա) ըմբոստ	ե) շտապ	թ) շփանալ
բ) տեսիլք	զ) պաչիկ	ժ) սողոսկել
գ) կալանավորել	է) երկնամուխ	ժա) զարմանալ
դ) խայտաբղետ	ը) առևանգել	ժբ) ուռկան

Ձ, ծ կամ ց

ա) կապոց
բ) հեծկլտալ
գ) այտուց
դ) կարոտալի
ե) երթևեկ
զ) արու
է) հնամենի
ը) ժլատ
թ) հյուսն
ժ) սանձ
ժա) տենդ
ժբ) ընդդիմակա

Ջ, ճ կամ չ

ա) ձեռնածու
բ) համառ
գ) կույտ
դ) ապաշխարել
ե) կրճատել
զ) անդրանիկ
է) ամուլ
ը) ակնախոռոչ
թ) ունայն
ժ) սեթևեթանք
ժա) խոճկոր
ժբ) խառնիխուռն

Ժ կամ շ

ա) բոթաբեր
բ) ընդհարվել
գ) մեղեդի
դ) թագուհի
ե) դաժան
զ) սպասուհի
է) ուժգին
ը) սակավապետ
թ) ստույգ

Զ կամ ս

ա) այգեպան
բ) խայտաբղետ
գ) փողկապ
դ) աստիճանաբար
ե) պատառոտել
զ) մարմնակրթություն
է) երկնահուպ
ը) ալեկոծ
թ) սիրավառ

Ղ կամ խ

ա) ապականել
բ) ծաղրածու
գ) սեգ
դ) գեհեն
ե) խեղաթյուրել
զ) ավարտ
է) ուսապարկ
ը) ընչացք
թ) ծանծրալի
ժ) գանահարել
ժա) երդմնազանց
ժբ) փայտանյութ

Ն կամ մ

ա) գոռոզամիտ
բ) անզարդ
գ) վայելել
դ) բաժակ
ե) մեղադրյալ
զ) թափթփված
է) մաքուր
ը) սուրհանդակ
թ) ի մի բերել
ժ) շտեմարան
ժա) անհաշտ
ժբ) ասեկոսե

Ր կամ ռ

ա) թռչկոտել
բ) աղմուկ
գ) գունատվել
դ) հրահրել
ե) խրվել
զ) դող
է) հենվել
ը) կարդալ
թ) քամահրել
ժ) ականավոր
ժա) տրորել
ժբ) ծիծաղել

ԵՒ կամ եվ

ա) առևանգել
բ) ոսկեզօծել
գ) շնչակտուր
դ) կրոնավոր
ե) շնորհել
զ) անքթիթ
է) հանգրվան
ը) գամ
թ) ոսկեծամ
ժ) կոտրատվել
ժա) հարուստ
ժբ) ծեր

40 *Բացատրեցեք հետևյալ բառերի իմաստները.*

ա) կտրիճ - կտրիչ
բ) գիրգ - գիրկ
գ) մեղկ – մեղք
դ) փուք - փուտ
ե) ուտիճ - ուտիչ
զ) բրդել - բրթել
է) խոխոջուն – խոխոջյուն
ը) կարգին – կարկին
թ) այլասեր - այլասեռ

41 *Գրեցեք իգական անձնանուններ, որոնք վերջանան տրված բաղադրիչներով:*

ա) -յա բ) -իա գ) -դուխտ դ) -անուշ

42 *Հայկական (հայերի մեջ գործածվող) անձնանուններ գրեցեք, որոնցում գրության և հնչման տարբերություն կա:*
Նմուշ՝ Սերոբ (փ):

43 *Հայերեն և փոխառյալ բառեր գրեցեք իա, իե, իո, եա, եո հնչյունակապակցություններով (երկձայնավորներով):*

44 *Բառասկզբում զբ, զգ, շտ, սկ, սպ, ստ, սփ հնչյունակապակցություններ ունեցող երկուական բառ գրեցեք և արտասանեցեք: Հետևեցեք չգրվող ը-ի դիրքին և արտասանությանը:*

45 *Հետևյալ կրկնակ բաղաձայններով երկուական բառ գրեցեք:*
ռռ, որ, նն, շշ, զզ, վվ

46 *Գրեցեք փոխառյալ բառերի օրինակներ, որոնցում օտար բառի կրկնակ բաղաձայնի դիմաց հայերենում մեկ բաղաձայն ունենք:*
Նմուշ՝ դոլար:

47 *Գրեցեք փոխառյալ բառերի օրինակներ, որոնք հայերենում պահպանում են օտար բառի կրկնակ բաղաձայնի գրությունը:*
Նմուշ՝ Շիլլեր, տոննա:

48 *Գրեցեք բառեր (հատուկ և հասարակ անուններ), որոնցում կրկնակ ձայնավոր լինի:*
Նմուշ՝ Հաագա, կոորդինատ:

49 *Առնվազն 1-ական բառ կազմեցեք հետևյալ արմատներով:*

ա) աղտ-ախտ
բ) ուղտ-ուխտ
գ) որդ-որթ
դ) վարկ-վարք
ե) ուղի-ուղիղ
զ) հով-հովիվ

50. *Հետևյալ բառերի ուղղագրությունը պարզաբանելու համար դրանք բաժանեցեք բառակազմական բաղադրիչների:*

Ամպհովանի, անշնորհք, թովչանք, ընդարձակ, տարկետում, տարադրամ, տարրալուծել, հովվերգություն, հովեկ, լուսատտիկ, ընդդիմախոս, այբբենարան, հովհար, հովար, հեղեղատ, ամպագոռգոռ, սիգապանծ, սրախողխող, փողկապ, փոխօգնություն, քաղցրահնչյուն, փողք, գործուղում, անուղղակի, բնօրրան, Վարդգես, բանբեր, հոգեվարք, գերեվարել, ոսկևորել, երթևեկել, տարեվերջ, կարկաչյուն, կարկաչուն:

51. *Փակագծերը հանելով՝ տրված բառերը գրեցեք գծիկով, միասին կամ առանձին:*

Արևոտ առավոտ էր:

Բարկ արևը հուր(կրակ) էր թափում. հրածին ցոլքերը դառնում էին ոսկեգօծ մշուշ և իջնում դաշտ ու այգու վրա:

Չորս(բոլորն) ամենուր գույների խաղ էր՝ (դեղին)կանաչ կրակներով, խորքում՝ խոխոջուն առուների կանչ ու կարկաչը, ու արև՝, հուր(հեր) ու ազատ արև, որից պայթել(բացվել) էր հողը, քարը՝ (ճաքել)ճաքճքել:

Անտես(անհայտ) մշուշն աննկատելիորեն մաղվում էր Արարատյան դաշտի վրա ու գնում (կորչում) հուռթի այգիների մեջ: Մեղմ(օրոր) հովիկը տարուբերում էր ծառերի զմրուխտ սաղարթները: Արևազօծ այգեստաններից լսվում էին պար բռնած մեղուների (մի)օրինակ բզզոցը, ծառից(ծառ) թռչող խուռն(երամ) թռչունների (ճիչ)ճռվողյունը:

Նորոգված մայր(ուղու) երկու կողմերում (դեմ)հանդիման շարված վեհաշուք առանձնատները՝ կառուցված կարմիր(վարդագույն) տուֆից, նայում են Սարդարապատի հուշարձան(համալիրին):

Գյուղի շուրջ(բոլորն) անծիր(անծայր) այգիներ են՝ մրգերով ծանրաբեռ ծառերով, որ գլուխ(գլխի) տված ըմբոշխնում են վաղորդայնի քնքշությամբ (առ)լեցուն (հուր)հրեղեն արևի ջերմությունը:

Կիրակնօրյա այդ առավոտյան ինսուն(երկու) տարեկան Գրիգորը, ծեռնափայտին կռթնելով, ծանր(ու)մեծ գնում էր դեպի Սարդարապատի բարձունքը՝ պղտոր հայացքն ուղղած (դեմ)դիմաց շարված քարեղեն արծիվներին: Տաքացնող մի հոսանք էր անցնում նրա ցամաքած երակներով, և անցած(գնացած) օրերի կարոտը թրթռում էր մարող(մարմրող) հիշողության ծալքերում: Գնում էր նա ծերունական դողդոջուն քայլերով և օրվա վայրկյանների հետ խառն(ի)խուռն հուշերի կծիկն էր քանդում(հավաքում)՝ սրտի խորքում զգալով վաղուց(ի)վեր իրեն հանգիստ չտվող մորմոքը:

Նա մի պահ փակեց հոգնած աչքերը, և նրա կոպերի տակ մեկեն(ի)մեկ պարզ(որոշ) նկարվեցին անցած(հեռացած) օրերի ցաք(ու)ցրիվ պատկերները. հիշեց էրգրի արևոտ առավոտները, հայրենի գյուղը, իրենց գետի

ծալ(ծալ) կոհակները՝ լի ծկների վտառներով, ու այդ վերհուշից նրա սիրտը տակն(ու)վրա եղավ:

Ծերունին լուռ(ու)մունջ ու հանդիսավոր մոտեցավ քարե արծիվներին, ջերմորեն համբուրեց քարերն ու հետ(հետ) գնաց: Արծիվների թիկունքից հեռու(հեռվում)՝ (բաց)կապույտ մշուշի մեջ, երևում էր Հայկական պարը: Ծեր ալաշկերտցին մերթ(ընդ)մերթ նայում էր հեռավոր լեռներին, և նրա մշուշված հայացքը սահում(անցնում) էր լեռներն(ի)վեր, այնտեղ փնտրում(որոնում) բարձրաթռիչ արծիվներին, բայց չգտնելով՝ նորից (գալիս)դեմ էր առնում քարակերտ թռչուններին, ու կարոտից փշուր(փշուր) էր լինում նրա հոգին:

52. *Հետևյալ բայական հարադրությունների մեջ անհրաժեշտ տեղում դրեք միության գծիկը:*

Գնալ բերել, գնալ գալ, զուգել զարդարել, ընկնել ելնել, գալ հսկել, տանել բերել, կցել կցմցել, ընկնել ջարդվել, առնել փախչել, կտրել կարել, գտնել բերել, շահել պահել, գնալ քնել, ելնել իջնել, ելնել մտնել, թողնել փախչել, բռնել բերել, ջարդել փշրել, առնել նստել, առնել տալ, թողնել հեռանալ, քաշել բերել, գալ գնալ, գալ դեմ առնել, առնել գնալ, քաշել քաշքշել, թռչել գնալ, հանել դնել, հանել փռել, մեռնել հառնել:

53. *Բացատրեցեք, թե ինչու առաջին շարքի բառերը գրվում են անանջատ, իսկ երկրորդ շարքինը՝ գծիկով:*

ա) դիմածնոտային, գիտահետազոտական, ռազմաքաղաքական, վարչատարածքային,

բ) իսրայելա-պաղեստինյան, գերմանա-հայկական, ամերիկա-եվրոպական, արաբա-հրեական:

54.

ա) Տրված սյունակների բառերից ընտրելով՝ բարդածանցավոր բառեր կազմեցեք:

պատմական	օդային
ռազմական	մարզական
գիտական	ճարտարապետական
կրոնական	հանրամատչելի
կրթական	դավանաբանական
ուսումնական	դաստիարակչական

բ) Առաջին շարքի բառերով նմանատիպ երկուական կազմություն գրեցեք:

55 *Նորագույն բառարաններից երկգրություն ունեցող առնվազն 5 բառ դուրս գրեցեք և ասացեք, թե որն եք դո՛ւք նախընտրում և ինչո՛ւ:*

56 *Բացատրեցեք հետևյալ լեզվական միավորների գրության տարբերությունը և դրանցով մեկական նախադասություն կազմեցեք:*

ա) ոսկե թել – ոսկեթել
բ) ինքն իրեն – ինքնիրեն
գ) երեք հարյուրամյակ - երեքհարյուրամյակ
դ) բարձր արժեք - բարձրարժեք

57

ա) Հետևյալ հակադրությունների մեջ բացատրեցեք փոքրատառերով գրվածների իմաստները:

ա) մարտիրոս – Մարտիրոս
բ) վարուժան – Վարուժան
գ) կարապետ – Կարապետ
դ) սեպուհ – Սեպուհ
ե) պարթև - Պարթև
զ) նահապետ – Նահապետ

բ) Նմանատիպ 5 զույգ ավելացրեք:

58

Ա) Արտագրեցեք: Որտեղ անհրաժեշտ է, գրեցեք մեծատառով:

Յոթ հարյուր տարի առաջ սյունյաց նահանգի վայոց ձորում՝ գլաձորի վանքում, ծնվեց միջնադարյան հայաստանի խոշորագույն կրթական կենտրոններից մեկը՝ գլաձորի համալսարանը:

Համալսարանի հիմնադիր ներսես մշեցին բազմաթիվ թելերով կապված էր հայ կրթական այլ կենտրոնների հետ, որոնք XII-XIII դարերում ծնվում ու երկրի տարբեր մասերում մի քանի տասնամյակ գործելով՝ իրար էին հաղորդում մտավոր կյանքի ավանդույթները, ուսուցչից աշակերտին փոխանցում գիտության, արվեստի ու գրականության նվաճումները: Ինքը՝ ներսես մշեցին, նշանավոր պատմիչ և մատենագիր վարդան արևելցու աշակերտն էր, խոր վիրապի վարդապետարանի սանը: Վերջինիս դպրոցն իր հերթին կապված է եղել հովհաննես տավուշեցու դպրոցի հետ: Տավուշեցին, մխիթար գոշի աշակերտը լինելով, անմիջականորեն շարունակել է նոր գետիկի (գոշավանքի) վարդապետարանի ավանդույթները: Այս դպրոցներն էլ իրենց հերթին սերտորեն կապված էին XI-XII դարերի խոշորագույն կրթօջախների՝ անիի, սանահինի, հաղպատի, բջնիի դպրոցների հետ:

Ընդունելով արևելյան հայաստանի կրթական կենտրոնների հոգևոր լիցքը՝ գլաձորի համալսարանը շարունակել է նախորդ շրջանի՝ գրիգոր մագիստրոսի, հովհաննես սարկավագի, մխիթար գոշի և գիտության ու լուսավորության այլ երախտավորների դպրոցների արգասավոր ավանդույթները:

Լուսավորության այս նոր օջախը, որն իր ծաղկումն ապրեց ներսես մշեցու աշակերտ եսայի նչեցու ղեկավարության տարիներին, սյունյաց իշխանական տների՝ օրբելյանների և պռոշյանների հովանավորությամբ գոյատևեց շուրջ 60 տարի, բայց թողեց հոգևոր մեծ ժառանգություն, աճեցրեց շնորհալի և բեղմնավոր գիտնականների ու մանկավարժների մի ջոկատ: Նրանց մեջ առանձնանում են հովհան որոտնեցին, գրիգոր տաթևացին, մոմիկը, թովմա մեծոփեցին և ուրիշներ:

Համալսարանում քերականությունը դասավանդվում էր ուսուցչապետ եսայի նչեցու վերլուծութիւն քերականութեան դասագրքով, իսկ ճարտասանության արվեստ սովորելու համար օգտագործում էին քերթողահայր մովսես խորենացու գիրք պիտոյից աշխատությունը:

Այսօր երևանի մատենադարանում պահվում են նաև գլաձորի մանրանկարչական դպրոցի բարձրարժեք նմուշներից, ինչպես մատթեոս ավետարանիչի մանրանկարը՝ 1292-ի ավետարանում, քրիստոսի խաչելությունը՝ 1318 թ. աստվածաշնչում և այլն:

բ) Հաղորդում պատրաստեցեք հայ մշակույթի նշանավոր գործիչներից մեկի մասին:

59. *Գրեցեք բաղադրյալ տեղանուններ, որոնց մեկ բաղադրիչը գունանուն է:*

60. *Գրեցեք մեծ, փոքր, նոր, վերին, ներքին, հյուսիսային, հարավային, արևմտյան, արևելյան բաղադրիչներով բաղադրյալ տեղանուններ:*

61. *Տրված տեղանուններից կազմեցեք ածականներ և դրանք գործածեցեք բառակապակցությունների մեջ: Ուշադրություն դարձրեք ուղղագրությանը:*

Սև ծով, Փոքր Ասիա, Նոր Զելանդիա, Միջին Ասիա, Հարավային Ամերիկա, Արևմտյան Եվրոպա, Առաջավոր Ասիա, Արևելյան Եվրոպա, Խաղաղ օվկիանոս, Հարավային Կորեա:

62. *Փակագծերում դրված բառերից ածանցման միջոցով կազմեցեք ածականներ: Ուշադրություն դարձրեք բառերի ուղղագրությանը:*

1. Մեծ Բրիտանիա և (Իռլանդիա) կղզիների միջև՝ (Իռլանդիա) ծովում, փոթորիկները հաճախակի են: 2. 18-րդ դարի վերջերից ավելի մեծ տեսակարար կշիռ է ստացել անգլերենով (Իռլանդիա) գրականությունը: 3. Դանիան արևմուտքից ողողվում է (հյուսիս) ծովի ջրերով:

4. Թերակղզու (կենտրոն) և (հյուսիս) շրջանների պետություններն ու ժողովուրդները սերտ առնչությունների մեջ են եղել Հունաստանի և Հռոմի հետ: 5. Ինդոնեզիայի և (կենտրոն) Ամերիկայի որոշ շրջաններ ունեն հասարակածային կլիմա: 6.Ստավրոպոլի և Կրասնոդարի երկրամասերը մտնում են (հյուսիս) Կովկասի մեջ: 7. Մոտ 650 կմ երկարություն ունեցող լեռնային համակարգ է (հայ) Տավրոսը: 8. Հայաստանում գործածվող կապույտ ներկը՝ (հայ) կապույտը, հաճախ նույնացվել է լաջվարդին:

63. *Մեկական նախադասություն կազմեցեք հետևյալ միավորներով, բացատրեցեք գրության յուրաքանչյուր ձևը:*

ա) հաղթական կամար – Հաղթական կամար - «Հաղթական կամար»
բ) Նոյի ագռավ - «Նոյի ագռավ»
գ) կրեմլ – Կրեմլ
դ) ակրոպոլիս - Ակրոպոլիս

64. *Գրեցեք հետևյալ երկրների պաշտոնական անվանումները, յուրաքանչյուրի դիմաց՝ նրա վարչատարածքային որևէ միավորի անուն:*
Նմուշ՝ Ռուսաստան – Ռուսաստանի Դաշնություն – Կրասնոդարի երկրամաս (կամ Վլադիմիրի մարզ):

Գերմանիա, Անգլիա, Ֆրանսիա, Իրան, Թուրքիա, Լեհաստան, Չինաստան, Սիրիա:

65. *Գրեցեք երկուական անուն՝*

ա) համաշխարհային կամ միջազգային կազմակերպության
բ) կուսակցության
գ) օրենսդիր կամ գործադիր մարմնի
դ) մշակութային, մարզական կամ գիտական հաստատության (կամ միության):

66. *Տրված բառերը տողադարձեք հնարավոր բոլոր ձևերով:*

ա) Լեռնաշղթա, սերկևիլ, զբաղվածություն, զմրուխտափայլ, ննջասենյակ, ծովեզրյա, դրդապատճառ, ընձառյուծ, ծաղկաման, ընդդիմախոսություն, գերեվարել, գույնզգույն, գոտևորել, թույրիթույր, ենթաորովայնային:
բ) Հետաքրքրաշարժ, բարձրացնել, առևանգել, հետզհետե, հակաազգայնական, հարցնել, բարձիթողի, սրթսրթալ, էքսկուրսավար, տրամադրություն, սկզբնամաս, շտապողականություն, կտրականապես,

անակնկալ, մթերանոց, զգեստապահարան, ինքնիշխան, վշտակցել, երկպառակություն, խնդրահարույց, օրենսդրություն, անօգտակար, դժկամորեն:

67 *Տողադարձեք հետևյալ հատուկ անունները և նմանատիպ ուրիշ անուններ ավելացրեք:*

Ստրասբուրգ, Շտուտգարտ, Սպարտակ, Սկանդինավիա, Սմոլնի, Ստամբուլ, Ստոկհոլմ, Զբիգնև:

68

ա) Անհրաժեշտ տեղում չակերտներ դրեք և բացատրեցեք:

Միջնադարում արհեստավոր վարպետի կոչում ստանալու համար պետք էր ներկայացնել մի օրինակելի նմուշ՝ chef- d'œuvre (ֆրանսերեն է, որից էլ փոխառել է ռուսերենը՝ шедевр):

Այստեղից էլ առաջ եկավ այսպես կոչված շեդևր հասկացությունը, որն արվեստում նշանակում է բարձրագույն նվաճում հանդիսացող գործ: Հայերենում այն թարգմանվում է գլուխգործոց:

Գեղանկարչության բարձրագույն նվաճումներից են Զորջոնեի Հուդիթը, Մուրիլիոյի Հանգիստ եգիպտոսի ճանապարհինը, Տիցիանի Դանայան, Դելակրուայի Մարոկկացին ձին թամբելիսը, Ռեպինի Իվան Ահեղը և նրա որդի Իվանը, Սերովի Դեղձերով աղջիկը, Ռենուարի Հովիարով աղջիկը, Սարյանի Հայաստանը...

Այս թվարկումը կարելի է չափազանց երկար շարունակել:

բ) Երկու նախադասություն գրեցեք՝ գործածելով ձեր սիրելի արվեստագետի կամ նշանավոր գիտնականի գործերի վերնագրերից (անվանումներից):

69 *Բարձրաձայն կարդացեք և որոշեցեք, թե ո՞ր բառերը չեն համապատասխանում ուղղախոսական միևնույն սկզբունքով կազմված շարքերին:*

ա) Մեներգ, ապերջանիկ, քսաներեք, աներևույթ, խուռներամ, զուգերգ, երեսուներկու, աներևակայելի, վրաերթ, շքերթ, երկրեերկիր, ամենաերջանիկ, ծովեզր, վայելուչ, անեզական, անենթակա, տասներեքերորդ:

բ) Անորակ, կանխորոշում, ախտորոշում, ամենաորակյալ, եղբորորդի, լուսնոսկի, բարորակ, չարորակ, ենթաորովայնային, հոգեորդի, հազարոտնուկ, ութոտնուկ, եռոտանի:

70. *Տրված բառերը բաժանեցեք երկու խմբի.*

♦ *ա) ր-ից հետո դ-ն դ է արտասանվում, բ) դ-ն թ է արտասանվում.*

Վարդավառ, վրդովել, արդարամիտ, հարդարել, զարդարել, լարդ, վարորդ, անդրդվելի, մակարդակ, բարդի, արդուկ, բերդակալ, խարդախություն, ջարդարար, վարդապետ, նյարդայնանալ, կարդալ, երդմնազանց, խլուրդ, ծղրիդ, լծորդ, երիտասարդական, հարդագույն, Խարբերդ, Գեղարդ, խորհրդավոր, արդուզարդ, երդիկ, վաղորդայն, լերդանալ, հաղորդիչ, Վարդուհի:

♦ *ա) ր-ից հետո բ-ն բ է արտասանվում, բ) բ-ն փ է արտասանվում.*

Արբանյակ, երբեմնի, սրբազան, կարբիդ, ներբող, նրբիրան, սրբագրիչ, ուրբաթախոս, բորբոս, հարբեցող, լրբություն, Սերբիա, բորբոքել, տարբեր, պարբերություն, բորբ, որբանոց, արբենալ, գինարբուք, դարբնոց, ներբան, իբրև, հարբուխ, Գաբրիելյան:

♦ *ա) ր-ից հետո ձ-ն ձ է արտասանվում, բ) ձ-ն ց է արտասանվում.*

Հարձակում, դիահերձարան, մանկաբարձուհի, բարձիթողի, կայարանամերձ, մերձկասպյան, հանդերձյալ, վերամբարձ, բարձրավանդակ, հուշարձան, բարձունք, վրձին, դերձակուհի, հորձանուտ, հորձանք, փորձառություն, իրադարձություն, լորձաթաղանթ, որձաքար, արվարձան, վերադարձ, խուրձ, օրավարձ, Համբարձում, հայրենադարձություն, մերձավոր:

71. *Արտասանեցեք հետևյալ բառերը: Մատնանշեցեք երկակի հնչում ունեցողները, դրանց շրջանակում՝ ձեր կողմից նախընտրելի համարվողները, և բացատրեցեք:*

Մղկտալ, էջմիածին, գտնվել, թաքնվել, ձեռնբաց, բռնկվել, ուղղել, ուղերձ, փղձկալ, համբույր, ողջույն, ընկույզ, դաշույն, դռնբաց, չարորակ, շպարվել, եղբորորդի, ջերմեռանդ, շուրջերկրյա, աներևութանալ, եղերերգ, խաչեղբայր, դեռևս, թերևս, այծեղջյուր, ատամնաբույժ, շեղբ, թրթուրավոր, արտաքին, չղջիկ, գանգուր, մարմարյա, զուգափայտ, զուգել, անզուգական, խաբեբայություն, ստնտու, սպանել, քննել, քննչական, թագուհի, թագավորություն, Համբարձումյան, Միջագետք, իջնել, Իջևան, վայրկենացույց, մատյան, հայտնվել, պճնվել, մարմնական, գազար:

72 *Կարդացեք հետևյալ բառերը և մտապահեցեք դրանց ճիշտ արտասանությունը: Ո՞ր սխալից պիտի խուսափել:*

ա) Այսինքն, առնվազն, ուրեմն, և այլն, մանրամասն, հաշմանդամ, հոտնկայս, ներողություն, մոտավորապես, արտասովոր, հիսուն, վաթսուն, բաշխել:

բ) Անձեռոցիկ, ավելորդ, ընձեռել, կապվել, խաբվել, տարկետում, արժանվույն, ըստ պատկանելույն, բարձունք, մանրուք, ընտանեկան, հարսանեկան, ֆիդայի, առայժմ, իրավամբ, ճանաչել, կանացի, քան, զոքանչ:

գ) Հյուրանոց, համբույր, դաշույն, ընկույզ, ողկույզ, հյուք, ալյուր, ատամնաբույժ, ծյուք, տույժ, բույն, Մարիամ, դաստիարակ, սյունակ, աղյուսակ, պայուսակ, ջղային:

դ) Առտնին, պատճեն, նախագահ, բավականին, գործունեություն, ընդհակառակը//ընդհակառակն, ըստ երևույթին, առաջին, վերջին, երկրորդ, փայլփլել, ասեկոսե, տրամվայ, երաժշտական:

73 *Բարձրաձայն կարդացեք հետևյալ փոխառյալ բառերը՝ ուշադրություն դարձնելով դրանց ուղղախոսությանը:*

Տրանսպորտ, իդեալիզմ, էտյուդ, ռադիո, ստարտ, տերմին, գոլֆ, տրակտոր, օբյեկտ, տեքստ, գվարդիա, տրամվայ, գանգստեր, ինստիտուտ, ֆակուլտետ, քրեստոմատիա, ասֆալտ, պրոֆեսոր, ռեկտոր, իդիոմ, պարաշյուտ, ինդիկատոր, դիպլոմ, կարդինալ, պոմիդոր, կոնսերվատորիա, կոնտրաբաս, կոնստրուկտոր, ֆրանկ, սխեմա:

74 *Գրեցեք փոխառյալ բառեր, որոնց վերջին վանկը չի շեշտվում: Կազմեցեք որևէ թեք ձև և հետևեցեք շեշտադրմանը:*

75 *Գրեցեք հայերեն և բարձրաձայն կարդացեք:*

ա) ռուսերեն Москва, Чайковский, Тургенев, Зощенко, Достоевский, Королёв, Краснодар, Новосибирск, Поволжье, Петербург, Одесса.

բ) անգլերեն - Wales, Wilde, Washington, Byron, Ulster, Manchester, Kennedy, Clark, Tomson, Lock, Baldwin, Faulkner, Charles, Harrison.

գ) ֆրանսերեն - Caen, Charles, Gounod, Germain, Cherbourg, Georges, Claude, Versaille, Daudet, d'Artagnan, Richard, "Air France", Raymond.

դ) գերմաներեն – Mainz, Beier, Lerah, Lessing, Müller, Alex, Erich, Becker, Oder, Häusler, Siegelberg, Marienberg, Hofsee, Zimmermann:

76 *Արտագրեցեք և անգիր սովորեցեք գրաբար հետևյալ ասույթներն ու թևավոր խոսքերը: Ճիշտ արտասանելու համար ուշադրություն դարձրեք յուրաքանչյուր նախադասությունից հետո տրված կանոն-հուշումներին:*

- *Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ* (Ճանաչել իմաստությունն ու խրատը, իմանալ հանճարի խոսքերը):

= *Զ նախդիրն իրեն հաջորդող բաղաձայնից առաջ* ըզ *է կարդացվում, իսկ ձայնավորի հետ միածույլ: Օրինակ՝* զխրատ [ըզխրատ], *բայց՝* զորդին [զօրդին]:

= *Ու-ը բաղաձայնից առաջ և փակ վանկում* յու *է կարդացվում: Օրինակ՝* զիմաստութիւն [զիմաստություն], արիւն [արյուն]:

= *Յ-ն բառավերջում* ա-*ից և* ո-*ից հետո չի կարդացվում: Օրինակ՝* հանճարոյ [հանճարո], տղայ [տղա]:

= *Երբ բառը բաղաձայնով է՝ վերջանում և* ա,դ *կամ* ն *մասնիկներ ունի, սրանց և բառի վերջին բաղաձայնի միջև* ը *է արտասանվում: Օր.* զբանս [ըզբանըս], Ձերդ [ձերըդ], զքաղաքն [ըզքաղաքըն]:

- *Մարգարէ յիւրում գաւառի պատիւ ոչ ունի* (Մարգարեն իր գավառում պատիվ չունի):

= *Յ-ն* բառասկզբում, ձայնավորից առաջ *հ* է կարդացվում: Օրինակ՝ *յանուն [հանուն], յերկինս [հերկինըս], յիւրում [հյուրում]:*

= *Ի (ւ)* տառը *ա, ե, ի* ձայնավորներից, ինչպես նաև բաղաձայնից հետո *վ* է կարդացվում: Օրինակ՝ *գաւառ [գավառ], պատիւ [պատիվ], հոգւոյ [հոգվո]:*

- *Ամենայն չարիք մտանեն ի միտս մարդոյ յանուսումնութենէ* (Ամեն չարիք մարդու միտքն է մտնում անուսումնությունից):
- *Կոյր զրկի ի ճառագայթից արեգական, և տգիտութիւն զրկի ի կատարեալ կենաց* (Կույրը զրկվում է արեգակի ճառագայթներից, իսկ տգետը՝ կատարյալ կյանքից):

= *Ու-ը* բաղաձայնից առաջ *ույ* է կարդացվում: Օրինակ՝ *լոյս [լույս], յոյս [հույս]:*

= *Եա-ն յա* է կարդացվում: Օրինակ *մատեան [մատյան], յաւիտեան [հավիտյան]:*

- *Լաւ է կոյր աչօք, քան կոյր մտօք* (Լավ է կույր [լինել] աչքով, քան մտքով):
- *Որ ոչ լսէ ընկամբ, լուիցէ թիկամբ* (Ով չի լսում ականջով, կլսի թիկունքով):

= *Ու-ն* ուրիշ ձայնավորից առաջ *վ* է կարդացվում: Օր. *լուիցէ [լվիցե], պատուարժան [պատվարժան]:*

- *Մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց* (Ձեր մարգարիտները խոզերի առաջ մի՛ նետեք):
- *Բազում են կոչեցեալք, և սակաւք են ընտրեալք* (Բազմաթիվ են կանչվածները, բայց սակավաթիվ են ընտրյալները):

ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հայոց լեզվի մեջ մարմնացած է հայ ժողովրդի հոգին: Ամեն մի բառը նրա հոգու մի կտորն է: Այդ բառերի մեջ են նյութացած, առարկայացած մեր վիշտը, զրկանքները, դառն ու զվարճալի ապրումները, մեր երազները, հույսերը, իղձը, սերը՝ մեր ողջ ժողովուրդը... Նրա համար ծով արյուն են թափել մեր նախնիները:

Ավ. Իսահակյան

Բառը մի աշխարհ է:

Հ. Թումանյան

Բառարանը տիեզերքն է՝ այբբենական կարգով դասավորված:

Անատոլ Ֆրանս

77. *Տրված բառերին բաղադրիչներ ավելացնելով՝ կազմեցեք մենիմաստ բառեր:*

Նմուշ՝ պահարան - գրապահարան, զգեստապահարան:

Պահեստ, պայքար, սենյակ, ծայր, աման, սեղան, տուփ, մաս, ընկեր:

78. *Կազմեցեք նախադասություններ՝ ընդգծված բառերը գործածելով առնվազն 2 այլ իմաստներով:*

1. Այդ պահին դրսից ինչ-որ տարօրինակ <u>ձայն</u> լսվեց: 2. Ծեր պարտիզպանը այցի էր գնում իր պատվաստած ծառերին ու ճյուղերը <u>կտրում:</u> 3. Տղան քարը գետի մի ափից մյուսն էր <u>գցում</u>: 4. Դա թեև փոքր, բայց <u>խոր</u> լիճ է: 5. Թոնրատան պատերը ծխից <u>սևացել</u> էին: 6. Ձնհալից ու հորդառատ անձրևներից գետը վարար ու <u>պղտոր</u> էր դարձել:

79 *Կազմեցեք նախադասություններ՝ հետևյալ բառերն օգտագործելով տրված իմաստներով:*

ա) *ընդունել* - 1. Վերցնել: 2. Պաշտոնի՝ աշխատանքի վերցնել: 3.Հյուրընկալել: 4. Համաձայնել: 5. Կուլ տալ, խմել: 6. Որևէ կրոնի հետևորդ դառնալ:

բ) *ելնել* - 1. Ոտքի կանգնել, տեղից վեր կենալ: 2. Մի բանի վրա բարձրանալ: 3. Ծագել, դուրս գալ: 4. Ելակետ ունենալ՝ ընդունել: 5. Հորդանալ, վարարել:

80 *Գտեք փոխանունության դեպքերը, որոշեցեք նրանց տեսակը: Շարունակություն գրեցեք:*

Անձրև է, աշուն...

Յոթ օր է, ինչ տխուր եմ, անչափ տխուր: Եվ անդադար Տերյան եմ կարդում, անհագաբար ունկնդրում Չայկովսկի, Ռախմանինով, Մոցարտ... Անընդհատ թունդ սուրճ եմ խմում: Երեկ չորս գավաթ եմ խմել, իսկ այսօր՝ արդեն յոթը: Գինին է ընկերս:

Եվ անուրջներիս մեջ հաճախ նա է գալիս՝ մետաքս հագած, հմայքներով ու հրապույրներով առլեցուն: Երեկոյան կապույտ է հագած լինում, առավոտյան՝ կարմիր, արևին՝ պայծառ դեղին:

81 *Տրված բառակապակցությունների ընդհանուր բաղադրիչը փոխարինեցեք հոմանիշներով:*

ա) Խիստ մարդ, խիստ ծմեռ, խիստ հաշվառում, խիստ կարևոր, խիստ դեմք:

բ) Թեթև աշխատանք, թեթև հարված, թեթև սնունդ, թեթև աղջիկ, թեթև քամի, թեթև հագուստ, թեթև երաժշտություն, թեթև նկատողություն:

գ) Ծանր օդ, ծանր կերակուր, ծանր մեղադրանք, ծանր լսողություն, ծանր երիտասարդ, ծանր տարի:

դ) Ողորմելի մարդ, ողորմելի գումար:

ե) Կարճ շարադրանք, կարճ ուղևորություն, կարճ մարդ:

զ) Կնճռոտ դեմք, կնճռոտ հարց:

է) Երաժշտություն լսել, լսել ծնողներին, լսել նորությունը, դատական գործը լսել:

ը) Կոտրել բաժակը, կոտրել մեկին, կոտրել ցավը:

թ) Չոր ծմեռ, չոր վերաբերմունք:

82 *Տրված բազմիմաստ բառերը տարբեր իմաստներով գործածեցեք բառակապակցությունների մեջ և փոխարինեցեք հոմանիշներով:*
Նմուշ՝ մութ գիշեր – խավար գիշեր, *մութ* գործեր - գաղտնի գործեր:

Հայտնի, խառնվել, մեղմ, նվազ, մեծ, չար, պայծառ, համառ, ծածկել, լուրջ, դաժան, թույլ, ամուր, կպցնել, կռվել, կենդանի, հայացք, կտրել, դիրք:

83 *Տրված բառերը վերածեցեք հոմանշային երեքական շարքի:*

ա) Լիակատար, ամբողջական, միանգամայն, առատ, հիմնովին, ամբողջապես, արգասավոր, լիառատ, կատարյալ, լիովին, անթերի, բերրի, բեղուն, լրիվ, արգավանդ, ամբողջովին:
բ) Ժրաջան, սթափ, ուշադիր, ջանասեր, անաչառ, արթուն, զգոն, արդարասեր, անկողմնապահ, փութեռանդ, ողջախոհ, արդարախոհ, խոհեմ, գործունյա, աչալուրջ, տքնասեր, ճշմարտասեր, աշխատասեր, արդարադատ, զգաստ, ողջամիտ, տքնաջան, անկողմնակալ, անկանխակալ, փութաջան:
գ) Ջատել, կարճացնել, անջատել, վատնել, պակասեցնել, առանձնացնել, կտրել, ընտրել, շռայլել, կրճատել, կղզիացնել, սպառել, անջրպետել, համառոտել, զեղչել, ծախսել, մեկուսացնել, մսխել, բաժանել:
դ) Անմիջապես, մշտապես, մշտական, հավերժորեն, հավերժ, իսկույն, հարատև, առմիշտ, հավետ, անհապաղ, հավիտյան, մշտնջենական, վայրկենապես, մշտնջենապես, հավերժական, անդարձ, մշտակայուն, իսկույնևեթ, հավիտենաբար, ակնթարթորեն, հավիտենական, ընդմիշտ, տևական, առհավետ:

84 *Գրեցեք տրված բառերի առնվազն 2-ական հոմանիշ:*

ա) կռահել	ե) հարևանցի	թ) հավանաբար
բ) կարմիր	զ) խաթարել	ժ) ճկվել
գ) թովիչ	է) ոգևորել	ժա) ժխտել
դ) համառոտ	ը) խոհեմ	ժբ) մարտնչել

85 *Գրեցեք տրված բառերի առնվազն 5-ական հոմանիշ:*

ա) կապույտ	գ) դաժան
բ) մաքուր	դ) ժիր

86 *Արտագրեցեք՝ ընդգծված բառերը փոխարինելով հոմանիշներով:*

Նեղ հունի մեջ խեղդված գետը մոլեգնորեն ծառս էր լինում բարձրաբերձ ժայռերի դեմ և հոսում՝ հոխորտալի դղրդյունով խախտելով կիրճի անդորրը: Սյուների պես երկինք մխրճված ահռելի բերձերի վրա ոչ մի ծիլ, ոչ մի կանաչ չէր երևում: Միայն հանդիպակաց ապառաժների վրա, որտեղ մնացել էին հողի աննշան պատառիկներ, ապաստան էին գտել հաղարջի գաճաճ թփեր, հոնի ծառեր: Զզգալով հեղձուցիչ տապը՝ ուղևորն անթարթ նայում էր ամառնամուտի երփներանգ գույներով պճնված հյուրընկալ լեռնաշխարհին: Այդ վայրերում էին անցել նրա անհոգ մանկությունը, երազներով լեցուն պատանեկությունը: Հեռվում, որտեղ ոլորվում էր կանաչազարդ սարերի անվերջ շղթան, երևում էր լեռնաշխարհի վրա բազմած հազարակնյա Արամազդ լեռը: Հավերժական ձյան մի անաղարտ շերտ հայելու բեկորի նման փայլփլում էր նրա գագաթին:

Բերկրանքով համակված՝ ուղևորը շարունակում էր նայել միջօրեի մշուշով սքողված ձյունածածկ բարձունքներին: Տարիների բացօթյա կյանքն իր դրոշմն էր դրել նրա վրա, և երբեմնի նուրբ դեմքը դարձել էր առնական:

Հայացքը հեռուներին հառած՝ նա չգիտեր՝ երջանկությու՞ն էր սպասում իրեն, թե՞ դառն հուսախաբությունը: Իսկ այնտեղ ապրող հարազատները դեռ չգիտեին, որ ինքը տուն է դառնում՝ ուրախություն ու սփոփանք բերելու իրենց:

Ըստ Ս.Խանզադյանի

87 *Տրված հոմանիշներով կազմեցեք բառակապակցություններ:*

ա) մաքուր, ականակիտ, անբասիր, հստակ
բ) պատյան, պարկուճ, պատիճ, բոժոժ
գ) դատարկ, թափուր, փուչ, ունայն
դ) թանձր, խիտ, հոծ, ստվար, թավ
ե) պտղաբեր, արգավանդ, բեղուն, բեղմնավոր

88 *Տրված հոմանիշներով կազմեցեք նախադասություններ:*

ա) ուղարկել, առաքել, հղել
բ) կանգնեցնել, ընդմիջել, կասեցնել
գ) խնդրել, հայցել, մուրալ
դ) բարձրանալ, մագլցել, ծառանալ
ե) բազմություն, ամբոխ, թափոր
զ) հայտնել, ծանուցել, ավետել, գուժել
է) մտնել, ներխուժել, խցկվել, սողոսկել, սպրդել

89 *Ասացեք հետևյալ բառերի հականիշները:*

1. ա) բազմաբջիջ, բազմաթիվ, բազմամարդ, բազմափորձ, բազմիմաստ, բազմաստվածություն, բազմամյա
   բ) բարեբախտաբար, բարենպաստ, բարեխիղճ, բարեձև
   գ) լուսանալ, լուսասեր, լուսադեմ
   դ) գերակատարել, գերադաս, գերբեռնվածություն
2. ա) համակրել, համակողմանի, համաձայնություն, համանիշ, համաճարակային, համընթաց
   բ) նախադաս, նախապատերազմյան, նախերգ, նախաբան
   գ) մեծահոգի, մեծածախ, մեծաթիվ, մեծամասնություն
   դ) ներգաղթ, ներմուծել, ներկայություն, ներշնչել, ներառյալ
3. ա) խոշորագիր, խոշորամարմին, խոշորատառ
   բ) ծածկագրել, ծածկամիտ, ծածկել
   գ) վատառողջ, վատաբանել, վատություն
   դ) վերոհիշյալ, վերելք, վերընթաց

90. *Գտեք տրված բառերի մեկից ավելի նույնարմատ հականիշներ:*
Նմուշ՝ ազգային - ապազգային, հակազգային:

Արդյունավետ, բախտավոր, բարոյական, բնական, գեղեցիկ, տրամաբանական, համաձայնություն, կարող, կուսակցական, համակարծիք, համակրելի, գիտուն, շնորհալի, համասեռ, համաձև,սահմանադրական:

91 *Գրեցեք տրված բառերի նույնարմատ և տարարմատ հականիշները:* *Նմուշ՝ աղմկոտ* - անաղմուկ, լուռ:

ա) Արդար, ազնիվ, արի, երջանիկ, զորեղ, ընդունելի, իսկական, իրական, ճիշտ, լուսավոր, խառն, խարդախ, խելացի, սովորական, խնայողաբար, կայուն, կենդանի, հարթ, համաձայնություն, վախկոտ:

բ) Համարձակ, հայտնվել, հանգստանալ, հաշտ, հաջողակ, մաքուր, չար, հաստատուն, պակաս, շքեղ, հարազատ, մշակովի, հնազանդ, պարկեշտ, հեռատես, միօրինակ, շտապ, ուժեղ, սթափ, վստահելի, հարմար, ունևոր, տնտեսվար, սուրբ, սխալ, մահանալ, համեստ, հայտնի:

92 *Գրեցեք տրված բառերի հականիշների հոմանշային շարքերը:*
Նմուշ՝ արատավոր - անարատ, մաքուր:

ա) Աղմկոտ, ամուսնանալ, ամուր, աշխատասեր, առաջադաս, առողջ, բաց, բնիկ, գովել, երախտագետ, ընբոստ, գեր, նախորդ, հաստատել, գիտուն, բոցավառվել, հայտնվել:

բ) Առավելություն, արագընթաց, երջանիկ, ընդարձակ, թուլացնել, բազում, բարեկամ, լավատես, միանալ, շատախոս, նուրբ, արդար, թուլասիրտ, բնական, լուսավոր, նոր:

գ) Կառուցել, առատաձեռն, կոշտ, մաքուր, պայծառ, սկիզբ, վառել, տրտում, ունևոր, փոփոխական, օրինանք, նվազել, շնորհալի, զարդարուն, երերուն:

93. *Գրեցեք տրված բառերի հոմանիշները և կազմեցեք դրանց հականիշների հոմանշային շարքերը:*

Նմուշ *Մեծ*, խոշոր, հսկայական, ահռելի - *փոքր*, չնչին, աննշան:

ա) Արի, երերուն, թանձր, թերի, աղքատ, ժխտել, ծածուկ, ժամանակավոր, գեղեցիկ:

բ) Նպաստել, հարատև, միատեսակ, հիմնել, շնորհալի, պարկեշտ, կուտակել, կարծր, դաժան:

գ) Արշալույս, զորեղ, թյուր, ակնհայտ, աչառու, խինդ, մեղմ, հսկայական:

94. *Ընդգծված բառերը փոխարինեցեք հականիշներով:*

Ա. 1. Նա սովորություն ուներ ուշ աշնանը վերջին անգամ այգին մտնելու, այգու դուռն ու հնձանը փակելու: 2. Թագավորը հաճույքով լսեց վիրաբույժի խորհուրդը և ընդունեց նրա առաջարկը: 3. Նրան թվաց, թե սուրհանդակը գալիս է իր զորքերի հաղթանակի լուրն ավետելու: 4. Նա արդեն մոռացել էր այդ քաղաքում անցկացրած օրերը՝ մեկը մյուսից խավար, մեկը մյուսից տաղտկալի: 5. Ծառերի սաղարթախիտ կատարները, իրարից հեռանալով, բազում էին երկնքի կապույտ շերտը: 6. Սպարապետն իր ծրագրերը մանրամասնորեն էր ներկայացնում իշխանին՝ նրան վստահելի համարելով, և դրանք սկսում էին հստակորեն գծագրվել իշխանի անխոնջ հայացքի դեմ: 7 Այդ օրը դերասանի խաղը բնական էր ու համոզիչ: 8. Անձուկ և անհյուրընկալ սենյակը մռայլ էր ու խավար: 9. Նա կարող է քեզ կտրիճ դարձնել, հոգուդ վրայից ցրել նոսր մառախուղը, լուսավորել աշխարհը և կյանքը սիրելի դարձնել քեզ համար: 10. Չնայած իր տարիքին՝ տիկինը դեռևս պահպանել էր մաշկի թարմությունը: 11. Ուղևորը նայեց պարզ երկնքին և վստահորեն շարժվեց առաջ:

Բ. 1. Պատմում էին, որ նրա տան ներքնահարկում կա մի անձուկ սենյակ՝ սառն ու մթին: 2. Դաշտում տակավին շարունակվում է աշխատանքը: 3. Տարեցտարի ավելի մարդաշատ է դառնում այդ փոքրիկ ավանը, որովհետև հայրենի ափեր են վերադառնում բնակիչներից շատերը: 4. Ջառիվերը վտանգավոր էր, վերելքը՝ անհնարին: 5. Վերջում Եվան հրաժեշտ տվեց մեկնողներին: 6. Հեռավոր

սարերի թիկունքից ծագող արևի առաջին շողերն ընկել էին վաղորդյան մշուշի մեջ հագիվ նշմարվող գյուղերի վրա: 7. Նրա հոգին այլեկոծվում էր խորք միջավայրում: 8. Նրա քախծոտ աչքերն ամենուրեք տեսնում էին ավերակ գյուղեր, չորացած այգիներ, խոպան դաշտեր: 9. Հակառակ տարիների սովորությանը՝ նրանք գնում էին զրուցելով և ընտրել էին ամենակարճ, բայց վտանգավոր ճանապարհը: 10. Կեսգիշերին հասանք լեռնային մի գյուղ և այնտեղ մնացինք մինչև լուսաբաց: 11.Նրանց նամակագրությունն առժամանակ ընդհատվեց:

95. ***Գրեցեք տրված համանունների իմաստները: Երկրորդ սյունակի բառերով կազմեցեք նախադասություններ:***

ա) դատել - դատել	ե) անարգել - անարգել
բ) վայր – վայր	զ) տարեկան – տարեկան
գ) փոկ - փոկ	է) վայել – վայել
դ) հարել – հարել	ը) վարկ – վարկ

96. ***Գտեք այն բառերը, որոնք համանուն ունեն՝ նշելով յուրաքանչյուրի իմաստը: Այդ համանուններով նախադասություններ կազմեցեք:***

1. Երեք բարդ խոտ պիտի տար իբրև հարկ: 2. Աշուն է, ողջ բնությունը ոսկե հանդերձ է հագել: 3. Հրապարակում իրարանցում սկսվեց, երբ ուղղաթիռից մի քանի թռուցիկ նետեցին ցած: 4. Ծերունիների ասելով՝ այդ ծառն այնքան հաստ բուն ուներ, որ չորս մարդ միասին չէին կարող գրկել: 5. Մեզ անհրաժեշտ է թթվային միջավայրում անլուծելի որևէ նյութ: 6. Այս արձանիկը 175 կրոնով գնել ենք Պրահայի՝ հնաոճ իրերի ամենամեծ խանութից: 7. Իշխանը գերյալներին նետեց գնդանը: 8. Հայաստանի բազմաթիվ գյուղեր կրկին բնական գազ են ստանում:

97. ***Հետևյալ բառերը գործածեցեք առանձին նախադասությունների մեջ:***

ա) մեղկ – մեղք	գ) բարակ - բարաք
բ) ոգի – հոգի	դ) վարկ – վարք – վարգ

98. ***Հետևյալ բառերով կազմեցեք նախադասություններ:***

ա) սովորություն – սովորույթ	դ) պահպանել – պաշտպանել
բ) տեղական – տեղային	ե) հասկացություն – հասկացողություն
գ) ցեղական – ցեղային	զ) իմաստություն – իմաստնություն

99. ***Բացատրեցեք հետևյալ բառերի նշանակությունները:***

ա) ցուցում – ցուցմունք գ) կազմակերպական – կազմակերպչական
բ) տեղի տալ – տեղիք տալ դ) պաշտոնական – պաշտոնեական

100. ***Հետևյալ բառերը խմբավորեցեք ըստ իմաստային խմբերի և անվանեցեք դրանք:***

Առվույտ, անանուխ, քողտիկ, կողով, կարաս, զրնգի, զամբիկ, պատմուճան, սքեմ, երիվար, գդակ, ապարանք, դաստակերտ, փարչ, արկ, լուսանն, մաշիկ, հյուղ, արմավ, վահան, մատակ, վեղար, տիկ, սվին, կճուճ, սոլ, գավ, գիհի, տակառ, փաղանգ, սուսեր, բաբան, գավիթ, ասպար, դարձին, արտույտ, խույր, վրան, կիպարիս, կուղբ, քուդ, տաղավար, խուց, խաշխաշ, ոլոռ, աքիս, պանդոկ, մայրի, բորենի, ծղրիդ, կուժ, գեղարդ, վաշտ, լաչակ, մտրուկ, դասակ:

101. ***Շարունակեցեք՝ ստեղծելով բառաիմաստային (թեմատիկ) շարքեր:***

ա) զենք բ) հագուստ գ) մարմին դ) մարդ

102. ***Գրեցեք տարիքային անվանումներ (մարդկանց և կենդանիների):***
Նմուշ՝ պատանի, քոթոթ:

103. ***Լրացրեք կացարան նշանակող բառերով:***

մեծ, շքեղ տուն՝ շինություն	*փոքր, անշուք տուն*	*որևէ գործառույթով հատկանշվող կացարան*
պալատ	***խրճիթ***	***հյուրանոց***

104. ***Հետևյալ բարդությունների մեջ որոշեցեք տուն բաղադրիչի նշանակությունը:***

ա) ձեռագրատուն, զինատուն դ) գետնատուն, իշխանատուն
բ) սեղանատուն, գլխատուն ե) պարետատուն, մաքսատուն
գ) գինետուն, գրատուն զ) ներկատուն, լուսանկարչատուն

105. *Գրեցեք հայերեն բուսանունների օրինակներ և այդ բույսերից մեկի մասին պատում կամ հեքիաթ հորինեցեք:*

ծառեր	*ծաղիկներ*	*թփեր*	*խոտաբույսեր*

106. *Գրեցեք կրոնական, եկեղեցական բառեր, արտահայտություններ և բացատրեցեք դրանց նշանակությունը:*

107. *Հետևյալ աղյուսակը լրացրեք համապատասխան տերմիններով:*

երաժշտություն	*բժշկություն*	*դիվանագիտություն*	*գրականագիտություն*

108. *Գրեցեք բառերի օրինակներ, որոնք տերմինի արժեք ունեն մեկից ավելի տերմինային համակարգերում:*

Նմուշ՝ արմատ (լեզվաբանություն, կազմախոսություն, բուսաբանություն, մաթեմատիկա):

109. *Բառարանների օգնությամբ գրեցեք հետևյալ բառերի տերմինային նշանակությունները:*

ա) շնիկ	դ) շերեփ	է) բաժակ	ժ) ճակատ
բ) պսակ	ե) թմբուկ	ը) բռունցք	ժա) թարթիչ
գ) երակ	զ) մոմ	թ) մկնիկ	ժբ) եթեր

110. *Միջազգային տերմինակազմիչներով և հայերեն կամ օտար բաղադրիչներով բարդ բառեր կազմեցեք և լրացրեք հետևյալ աղյուսակը:*

Նմուշ՝ *ֆոտո* – ֆոտոփաստաթուղթ, ֆոտոէֆեկտ:

Միջազգային տերմինակազմիչ	*+ հայերեն բառ*	*+ օտար բաղադրիչ*
ավիա		
ավտո		
կինո		
մակրո		
միկրո		
ռադիո		

111. *-ություն և -ություն ածանցներով լեզվաբանական տերմիններ գրեցեք և բացատրեցեք դրանց իմաստները:*

112. *Կարդացեք հետևյալ նյութը և յուրաքանչյուր ենթակետում ավելացրեք ձեր օրինակը (կամ օրինակները): Գտած բառերի ստուգաբանությունը կարող եք ճշտել Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» միջոցով:*

Պարսկերենից (իրանյան) փոխառյալ շատ բառեր կան հայերենում, ավելի շատ, քան ուրիշ որևէ լեզվից: Եվ դրա պատճառը հայ և պարսիկ ժողովուրդների դարավոր հարևանությունը չէ միայն, այլ առաջին հերթին այն, որ մանավանդ նախաքրիստոնեական շրջանում երկու ժողովուրդները կյանքի տարբեր բնագավառներում շփման շատ եզրեր են ունեցել, տոհմեր ու գերդաստաններ են խաչվել...

Բառն իրանյան է, պարսկերենից փոխառյալ, եթե ունի հետևյալ հնչյունակապակցությունները.

բառասկզբում՝

1) *դժ-* (եթե ժխտական նախածանց է) - *դժվար, դժխեմ, ...*
2) *ապ-* (դարձյալ եթե ժխտական նախածանց է) *ապաստան, ապուխտ,*
3) *հր-* (եթե հուր արմատի հետ կապ չունի, ինչպես՝ *Հրաչյա*) – *հրահանգ, հրաման, ...*
4) *հան-* (եթե հանել բայի արմատի հետ կապ չունի) – *հանդարտ, հանդես,*
5) *պայ-* - *պայման, պայազատ, ...*
6) *պատ-* (եթե պատ-ի, պատել-ի հետ կապ չունի) – *պատկեր, պատգամ,*
7) *պար-* (եթե պար հայերեն արմատի հետ կապ չունի) – *պարարտ, պարթև, ...*

բառամիջում կամ բառավերջում՝

1) *շխ* - *աշխարհ, բդեշխ, ...*
2) *ոզ* - *մարզ, գուրզ, ...*
3) *ոժ* - *վարժ, ախորժ(ակ), ...*
4) *ոհ* - *նիրհ, ժպիրհ,*
5) *շտ* - *աշտարակ, հաշտ, ...*
6) *խտ* - *դրախտ, ուխտ, ...*

բառավերջում՝

1) *-ակ, -ուկ, -իկ* (եթե փոքրացուցիչ-փաղաքշական չեն) – *մահակ, բազուկ, խորտիկ,*
2) *-անդակ* – *սուրհանդակ, վանդակ, ...*
3) *-ոտ* - *աշակերտ, հպարտ,*

- Էլ ի՞նչ մնաց,- կասեք հիմա դուք:

- Ի՞նչ. տասնյակ ու տասնյակ հազարավոր բառեր, հայերեն բառեր: Ինչքան էլ որ փոխառյալ բառեր շատ ունենք,-ապացուցում է լեզվական վիճակագրությունը,-բնագրերում, հայերեն խոսքի մեջ բուն հայերեն բառերի տեսակարար կշիռը միշտ բարձր է, 65-70%:

Չմոռանանք նաև մի «բայց». *քարտ* բառը, չնայած *-ատ* ունի, հունական փոխառություն է: «Կռիվ» իմաստով *մարտ*-ը բնիկ հայկական արմատ է, սակայն ամսանուն *մարտ*-ը՝ լատիներենից, իսկ *մարտիրոս*-ը՝ հունարենից: Նաև *հրեա*, որ ասորերենից է, և այլն:

Ուստի վերևում նկարագրվածը դիտենք իբրև *կողմնորոշիչ* հանգամանք:

Ըստ Պ.Բեդիրյանի

113. *Յուրաքանչյուր բառի դիմաց նմանատիպ առնվազն 3 փոխառյալ բառ գրեցեք:*

Նմուշ՝ կեսար, ցար, միկադո, շահ, սուլթան, փարավոն:

ա) կոնյակ, ...	գ) մադամ,
բ) ռուբլի,...	դ) կոնգրես,

114. *Հետևյալ բառերից առանձնացրեք օտարաբանությունները և գրեցեք նրանց հայերեն համարժեքները:*

Զնկոլոգ, օլիմպիադա, տրակտոր, թենիս, կուլտուրա, կլասիցիզմ, օպերա, բալետ, ակտուալ, տանկեր, ադմիրալ, կամերտոն, վոլեյբոլ, ֆուտբոլ, իդեա, կոմպրոմիս, ռոմանս, լիրիկա, սոլիստ, բասկետբոլ, ստարտ, ծյուդո, գեներալ, կարդիոլոգ, պրոգրես, սեսիա, կարդինալ, մարկիզ, կոմեդիա, օպերատոր, ռեժիսոր, բիոլոգ, պերիոդիզացիա, ռեպետիտոր, պրոցես, նատյուրմորտ:

օտարաբանություն	*հայերեն համարժեք*

115. *Գրեցեք հետևյալ բառերի հայերեն համարժեքները:*

ա) ուլտիմատում	զ) դեֆեկտոլոգիա	ժա) տրիո
բ) ալտերնատիվ	է) օնկոլոգիա	ժբ) պեյզաժ
գ) մեմորանդում	ը) տրավմատոլոգ	ժգ) էսքիզ
դ) դե ֆակտո	թ) կարդիոգրամա	ժդ) ակվարել
ե) դե յուրե	ժ) սիմպտոմ	ժե) արիա

116. *Գրեցեք նորագույն փոխառությունների օրինակներ՝ նշելով փոխատու լեզուն, հայերեն համարժեքը և գործածության ոլորտը:*

փոխառյալ բառ	*փոխատու լեզու*	*հայերեն համարժեքը*	*գործածության ոլորտը*
մարքեթինգ	*անգլ.*	*շուկայագիտություն շուկայաբանություն*	*տնտեսություն, տնտեսագիտություն*

117. *Մամուլից կամ գեղարվեստական գրականությունից քաղեցեք նորակազմ բառերի օրինակներ՝ դրանց գոյությունն ստուգելով բառարանների միջոցով:*

118. *Դիպվածային բառեր կազմեցեք հետևյալ բաղադրիչներով:*

ա) –սեր բ) -մոլ գ) ան- դ) հակա-

119. *Բացատրական բառարանների միջոցով որոշեցեք հետևյալ հնաբանությունների իմաստները:*

ա) գահնամակ	ե) զորանամակ	թ) մաղխազ
բ) բդեշխ	զ) մարզպան	ժ) հազարապետ
գ) սենեկապետ	է) կուսակալ	ժա) սպարապետ
դ) մարդպետ	ը) ոստանիկ	ժբ) գունդստաբլ

120. *ա) Հետևյալ հատվածից դուրս գրեցեք հնաբանությունները և բացատրեցեք դրանց իմաստները:*

Սենյակը, որտեղ նստած էր նա, ներկայացնում էր նրա ընդունարանը: Հատակը պատած էր նախշուն օթոցներով, անկյուններում դրված էին ծանր ու թեթև նիզակներ, տեգեր, գեղարդներ, աշտեներ և երկաթյա ահագին լախտեր՝ գեղեցիկ քանդակներով զարդարված, ոսկեհուռ դրվագներով ագուցած: Պատին մեխած վագրի մորթու վրա քարշ էին ընկած զանազան զենքեր՝ կապարճ՝ լի նետերով, լայնալիճ աղեղ, թեթև վահան, ծանր ասպար՝ խոշոր կոճակների նման բևեռներով գամված, զանազան թրեր, դաշույններ:

Սենյակի դռան մոտ կանգնած էր մի տղամարդ: Նա հագել էր սուրհանդակի թեթև զգեստ՝ մեջքը պնդած լայն գոտիով:

Ըստ Ռաֆֆու

բ) Հայ դասական և ժամանակակից գրողների պատմավեպերից դուրս գրեցեք բառային հնաբանությունների օրինակներ:

121 *Դեմ դիմաց գրեցեք արևելահայերեն և արևմտահայերեն համարժեք բառերը:*

ժամանակ, աղեկ, աղվոր, ճատրակ, տղա, նպաք, լպվ, անանկ, փակ, քարյուղ, ատամ, լմննալ, քակել, այնպես, այնպիսի, ատեն, ֆինանսական, աշխատավարձ, հյուլե, շախմատ, ամուսին, ակռա, գոց, փաթպթվել, ատոմ, բռնցքպմարտ, հոն, մանչ, քանդել, երիկ, այստեղ, գեղեցիկ, ելևմտային, հոս, լրանալ, պլլվիլ, կռփպմարտ, փող, այնտեղ, ստակ, ամսական:

122 *Հետևյալ բառերը տարբեր իմաստներ ունեն արևելահայերենում և արևմտահայերենում. բառարանների օգնությամբ գրեցեք դրանք:*

	արևելահայերեն	արևմտահայերեն
մականուն		
վայրկյան		
պահ		
գործողություն		
արկած		
անսվաղ		
ձգել		
գրագետ		
բանավոր		
ախոյան		
պահարան		

123 *Արևելահայերեն հետևյալ նախադասություններում գտեք արևմտահայերենին բնորոշ բառեր և բացատրական բառարանների օգնությամբ բացատրեցեք դրանց իմաստները:*

1. Ծնողներս ինձ փոխադրեցին Բերայի Մխիթարյանների նախակրթարանը: 2. Բոլորը վրաս թափվեցին և մի ակնթարթում հագցրին, սանրեցին, ներկեցին ինձ և դարձրին մի շատ սիրուն պուպրիկի նման աղջնակ: 3. Դեռևս այն ժամանակ հաճույքով տեսել էի նրա սալոնում Ղազազ ամիրա Պեզճյանի յուղաներկ նկարը, որին տանտերը համարում էր հանճարեղ ելևմտագետ: 4. Ես քովնտի մոտեցա Բրաբիոնի ձեռքին և ամուր բռնեցի նրա գոսացած ձեռքը: 5. Մինչև 1913 թվականը նա գլխավորում էր հույն ընկերվարական շարժումը: 6.Մի քանի րոպե էլ

զբաղվում էինք մարմնակրթանքով, որից հետո միայն չորացած, տաքացած ու կայտառ վերադառնում էինք մեր սենյակները: 7. Եվ իրոք, ոչ մի մայր այդքան աչալուրջ, այդքան ներող չի եղել իր զավակի հանդեպ, և ոչ մի զավակ այդքան հնհնուք, այդքան հոգս չի պատճառել իր մորը, որքան ես նրան: 8. Երկար տարիներ շրջագայել էր Ֆրանկոնիի կրկեսի հետ՝ գազանազուսպի պաշտոնով: 9.Խաժակն, հանդարտ և միշտ անխնամ հագնված մի տղեկ էր նա *(բոլորն էլ՝ ՎՓ):*

124. *Հետևյալ դարձվածքների իմաստն արտահայտեցեք մեկ բառով:*

ա) ընդհանուր լեզու գտնել
բ) հոգոց հանել
գ) փակագծերը բացել
դ) ընկած-ելած
ե) պատի ծեփ դառնալ
զ) աշխարհից կտրված
է) արյունը գլխին խփել
ը) Աստծու կրակ
թ) աչքերը լայն բանալ
ժ) լեզուն չորանալ

125. *Գրեցեք տրված դարձվածքներին հոմանիշ ածականներ:*

ա) ջրի գին
բ) քթից ընկած
գ) աչքը ծակ
դ) սարի արջ
ե) ձեռքը պինդ
զ) հարսի պես

126. *Հետևյալ բայական դարձվածքներին հոմանիշ մեկական դարձվածք և բայ գրեցեք:*
Նմուշ՝ արյունը գլխին խփել -բերանը փրփուր կոխել-մոլեգնել:

ա) լեղին ճաքել
բ) բերան ծռել
գ) ճամփա պահել
դ) խելքը կտրել
ե) հոգին ավանդել
զ) անարգանքի սյունին գամել

127. *Բացատրեցեք հետևյալ դարձվածքների իմաստները:*

ա) աչքի ընկնել - աչքին ընկնել
բ) սիրտ առնել – սիրտն առնել
գ) գլուխ պահել - գլուխը պահել
դ) ձեռք տալ – ձեռքը տալ
ե) հոգի տալ – հոգին տալ
զ) անուն հանել - անունը հանել

128. *Գրեցեք հետևյալ դարձվածքների տարբերակային ձևերը:*
Նմուշ Աստված չանի - Աստված մի արասցե, Աստված ոչ անի:

ա) կյանքի և մահվան խնդիր
բ) մեկի նվագի տակ պարել
գ) արյունը գլուխը տալ
դ) մտքով անցնել
ե) այն աշխարհը գնալ
զ) կենաց ծառ

129. *Նշեցեք հետևյալ դարձվածքների առաջացման սկզբնաղբյուրը և դրանցից մի քանիսով նախադասություններ կազմեցեք:*

ա) փշե պսակ
բ) կարապի երգ
գ) Ավետյաց երկիր
դ) վերջին մոհիկան
ե) Աստծու գառ
զ) Ռուբիկոնն անցնել
է) դրակոնյան օրենքներ
ը) հողմաղացների դեմ կռվել
թ) կոտրած տաշտակի առաջ կանգնել
ժ) մեջներով սև կատու անցնել

130. *Հայ գրողների ո՞ր ստեղծագործություններից են գրական լեզու մուտք գործել հետևյալ դարձվածքներն ու արտահայտությունները. բացատրեցեք դրանց արտահայտած նշանակությունները:*

ա) մեծապատիվ մուրացկաններ
բ) Նազարի բախտ
գ) ի խորոց սրտի
դ) (մեկից) քարվան կտրող դուրս չի գա
ե) դառը դատել՝ դատարկ նստել
զ) ճիտին պարտքը
է) տեր Թոդիկի դպրոց
ը) Կիկոսի մահը դառնալ
թ) նրբացուցիչ (մեղմացուցիչ) դեպք հանցանաց
ժ) անբան Հուռի

131. *Բացատրեցեք Աստվածաշունչ մատյանից առաջ եկած հետևյալ դարձվածքների (թևավոր խոսքերի) նշանակությունը, պատմեցեք համապատասխան դրվագները:*

ա) ձեռքերը լվանալ
բ) արգելված պտուղ
գ) Սոդոմ և Գոմոր
դ) Նոյի ագռավ
ե) քավության նոխազ
զ) անառակ որդի
է) երեսուն արծաթ
ը) Հուդայի համբույր
թ) բաբելոնյան աշտարակաշինություն

132. *Որևէ պատում հորինեցեք՝ գործածելով հետևյալ դարձվածքները:*

ա) Կրակի բաժին դառնալ, օձիքն ազատել, հոգին հանել, աչքերը լայն բանալ, թիկունքին կանգնել, ճամփա պահել, սիրտ տալ, սիրտ առնել:

բ) Աշխարհ գալ, մատը մատին չտալ, անուն հանել, միտք անել, ականջի հետև գցել, ձեռք մեկնել, երես դարձնել, հոգոց հանել, գրպանում մկներ խաղալ:

133 *Կետադրեցեք համր բնագիրը: Ընդգծված բառերը փոխարինեցեք հոմանիշներով:*

Ես թողնում եմ ասֆալտապատ ճանապարհը բռնում մի փոշոտ ճամփա ու հայացքս խճճվում է սար ու քարի մեջ: Ամռան հրիկնամուտին երկինքը կարմիր փոշի է մաղել հանդիպակաց բլուրների խանձված գլուխներին թրատված դեմքերին և լեռները խուլ տնքում են ու թե ականջ դնես փայլփլող որձաքարերին կլսես տնքոցը: Բարձր լեռան գագաթից իջնում է ճերմակ մի առու ոլորուն ու գզգզված: Թվում է թե երկնքից է գալիս և ամպերի մեջ է նրա ակունքը: Թվում է առուն ոչ թե ջրով այլ ամպաքուլաներով է լցված: Գյուղի կտուրներն էլ ամպերի պես ճերմակ են և նրանց վրա օրոր-շորոր նազում են սաղարթախիտ ու բարձրուղեշ ծառերի ճյուղերը ինչպես ամպերից պոկված ու ցած իջած թչթչան առվի վրա ափերի կանաչը: Իսկ գյուղի դիմաց փռվել է հարթավայրը ասֆալտապատ ճանապարհով երկատված: Հարթավայրում երկու կտոր կանաչ կա այգին ու ծխախոտի արտը իսկ մնացածը ցորենի հուռթի արտերն են որտեղ ինչպես ողորկ հայելու մեջ անդրադառնում են հրաշեկ արևի ոսկեգօծ ճառագայթները:

Գյուղի ոլոր-մոլոր փողոցների հոկված քարերին փշրվում են ծանրացած ոտնաձայները: Դաշտից տուն դարձող մարդկանց հետ մթնշաղը թանձրանում է լցվում սար ու հանդերի բույրով:

Երեկոն իր հոգնած գլուխը դնում է գյուղի թիկունքի աջ ու ձախ լեռների վրա ու համրանում: Ներքևում դաշտի գյուղերում պատուհաններից դուրս ելած լույսերի փնջերը մեկիկ-մեկիկ ծրարվում են տների ծանրացած կոպերի տակ և հոգնած գյուղը գլուխը սարին դրած հանդարտ ննջում է:

Դիմացը բիբլիական լեռան ճակատն է պարզ ու ճերմակ: Թվում է եթե փակ աչքերով քայլեմ մի քիչ կփարվեմ լեռանը: Բայց փոշոտ ճամփան դեմ է առնում հարթավայրը կիսող ճանապարհին և ես ոտքս տաք ասֆալտի վրա ոտքերիս փոշին եմ թափում:

Ըստ Մ.Գալշոյանի

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

Բառից ավելի զորեղ ոչինչ չկա:
Մենանդրոս

134. *Որոշեցեք բառերի կազմությունը: Բաղադրյալ ձևերը տրոհեցեք բառակազմական ձևույթների:*

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում,
Մեր հին սազի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում,
Արնանման ծաղիկների ու վարդերի բո՛ւյրը վառման
Ու նահրյան աղջիկների հեզաճկուն պա՛րն եմ սիրում:

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե,
Արևն ամռան ու ձմեռվա վիշապածայն բուքը վսեմ,
Մթում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սև
Ու հնամյա քաղաքների հազարամյա քա՛րն եմ սիրում:

Ուր էլ լինեմ - չեմ մոռանա ես ողբածայն երգերը մեր,
Չե՞մ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր,
Ինչքան էլ սու՞ր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր -
Էլի՞ ես որբ ու արնավառ իմ Հայաստան յարն եմ սիրում:

Իմ կարոտած սրտի համար ո՛չ մի ուրիշ հեքիաթ չկա,
Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա.
Աշխա՛րհ անցիր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա.
Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սա՛րն եմ սիրում:

Ե.Չարենց

135. *Գրեցեք տրված ածանցներով բառեր, որոնք ցույց են տալիս՝*

ա) աշխատանքի գործիք, սարք

-ոց	
-իչ	
-ան	
-ակ	

բ) զբաղմունք, մասնագիտություն

-վոր	
-որդ	
-իչ	
-պան	
-գործ	
-բան	
-արար	
-ական	
-ային	

գ) գործողության կատարման կամ մի բանով առատ, հարուստ տեղ

-ոց	
-անոց	
-արան	
-ատան	
-ուտ	

136 *Տրված կաղապարներով ածանցավոր բառեր կազմեցեք:*

ա)
1. ան- _____ -ություն
2. ան- _____ -ելի//-ալի
3. ան- _____ -ական
4. ան- _____ -ում
5. դժ- _____ -ություն
6. համա- _____ -ություն
7. համա- _____ -ցի
8. հակա- _____ -ություն

բ)
1. անդր- _____ -յան
2. ենթա- _____ -ային
3. փոխ- _____-ություն
4. ստոր- _____-յա
5. վեր(ա)-_____-ում
6. տար- _____ -ություն
7. նախա- _____-ական
8. տ-_____-ություն

137 *Տրված ածանցներով կազմեցեք նույնարմատ հականիշներ:*

ա) համ(ա)-___տար(ա)-
բ) ներ-_____բաց-
գ) արտա-_____ներ-
դ) ստոր- _____վեր-
ե) համ(ա)-_____հակ(ա)-
զ) -ավոր _____ան-
է) –ուն _____տ-
ը) -ավետ_____ան-

138. *Հետևյալ համանիշ ածանցներով կազմեցեք նույնարմատ բառեր:*

ան-	
ապ(ա)-	
ան-	
ա-	
-(ա)բար	
-որեն	
-(ա)պես	
-(ա)բար	
-(ա)վոր	
-եղ	

139. *Տրված հոմանիշ ածանցներով նույնարմատ բառեր կազմեցեք հետևյալ բայերի արմատներից:*

Նմուշ *ցուցանել* – ցուցմունք, ցուցում:

Սահել, իջնել, բերկրել, դնել, հարցնել, արարել, կախարդել, շարադրել, հոսել, քայլել, վարել, գործել, ուսանել, հյուսել, հուզել, խոսել, խնդրել:

1.	*-մունք*	
	-ում	
2.	*-մունք*	
	-ք	
3.	*-անք*	
	-ք	
4.	*-վածք*	
	-ք	
5.	*-ություն*	
	-անք	

140. *Հետևյալ բառերի արմատներից առանձնացրեք նրանք, որոնցով բառեր են կազմվում թե՛ -այ ին և թե՛ -ական ածանցներով: Դրանցից յուրաքանչյուրով կազմեցեք բառակապակցություններ:*

Նմուշ՝ տուն տնային, տնական
տնային աշխատանք, տնական պանիր:

Ջուր, գիրք, արև, շարք, քաղաք, տեղ, սիրտ, միտք, անապատ, գույն, իր, նյութ, ցեղ, ազգ, կամք, սահման, ծաղիկ, տիպ, լույս, լեռ, սեռ:

141. *Տրված նախադասություններում գտեք ածանցավոր բառերը և դրանց ածանցներով կազմեցեք նոր բառեր (առնվազն 15 բառ):*

Ա. 1. Ձորն այստեղ բոլորովին նեղ էր, ժայռերն ընդհուպ մոտեցել էին իրար և թողել միայն մի փոքրիկ անցք, որի միջով հոխորտալի դղրդյունով հոսում էր շառաչուն գետը: 2. Փորձառու որսորդն այստեղ զգուշորեն է շարժվում, որպեսզի կեր չդառնա մթին թավուտների խորքերում վխտացող զարհուրելի գազաններին:

Բ. 1. Եռօրյա գինարբուքից հետո, խեղդելով անորսալի թախծի ալիքը, ընդարձակ սրահի մի անկյունում, բազմոցի թավշե բարձիկներին ընկողմանած, քնել էր մղձավանջային մի երազով: 2. Լեռնային մի նեղ արահետ այսօր էլ ուխտավորին առաջնորդում է դեպի ավերակ մենաստանը, որ հավատի մոմեր վառի անցյալ փառքի մնացորդների վրա, համբուրի սրբավայրի մրոտված ու դարերի շնչից մաշված քարերը: 3. Վերապրի՛ր այդ տարօրինակ զգացմունքները և մի՛ մոռա-նա, որ լավագույն ուսուցիչդ քո ներքին ձայնն է, որ պիտի հղկես ու ընդլայնես՝ համընդհանուր ձայնի հետ բաղդատելով:

142. *Տրված արմատների (բառերի) կրկնությամբ բարդ բառեր կազմեցեք:*

Նմուշ՝ ծուկ → ծուկ-մուկ:

ա) մարդ	ե) կոկլիկ	թ) լակոտ	ժգ) փոքր
բ) պարապ	զ) մանր	ժ) լոթի	ժդ) խունջիկ
գ) աման	է) պակաս	ժա) ոլոր	ժե) ծակ
դ) փառք	ը) փալաս	ժբ) սուս	ժզ) ձայն

143. *Հետևյալ բառերից յուրահատուկ հնչյունափոխությամբ կրկնավորներ կազմեցեք:*

Նմուշ՝ ճերմակ → ճեփ-ճերմակ:

ա) սև	գ) շիտակ	ե) դեղին	է) դատարկ
բ) նոր	դ) կարմիր	զ) լեցուն	ը) չոր

144. *Առ, ի, ըստ, ընդ, զ նախդիրներով կրկնավորներ կազմեցեք:*
Նմուշ՝ մերթընդմերթ:

145. *Շաղկապավոր կամ անշաղկապ հարադրություններ կազմեցեք իմաստով առնչակից բառերով:*
Նմուշ՝ *թև* → թև ու թիկունք:

ա) վար	ե) աղմուկ	թ) հարս	ժգ) սև
բ) զենք	զ) անուն	ժ) ծափ	ժդ) կոշտ
գ) մսուր	է) մահ	ժա) երկինք	ժե) վարք
դ) սեղան	ը) նետ	ժբ) դեղ	ժզ) շաչյուն

146. *Անվանական հարադրություններ կազմեցեք հետևյալ գոյականների թեք հոլովաձևերի հարադրությամբ: Հարկ եղած դեպքում նրանցով բառակապակցություններ կազմեցեք:*
Նմուշ՝ *երգ, պար* → երգի-պարի (համույթ):

ա) տակ, գլուխ	գ) հայր, մայր	ե) տուն, տեղ
բ) ոտ, գլուխ	դ) սար, ձոր	զ) աչք, ունք

147. *Գրեցեք անվանական հարադրություններ, որոնք բաղադրված են՝*

ա) հոմանիշներով (օր. *անթիվ-անհամար*)
բ) հականիշներով (օր. *գիշեր-ցերեկ*)

148. *Գրեցեք զուգաբայական հարադրություններ, որոնք բաղադրված են՝*

ա) հոմանիշներով (օր. *ասել-խոսել*)
բ) հականիշներով (օր. *գնալ-գալ*)

149. *Գրեցեք տրված բայերին համարժեք հարադրական կազմությունները:*
Նմուշ՝ խուսափել – խույս տալ:

Սկսվել, գունատվել, ապաստանել, լուսավորել, թաքնվել, այցելել, սթափվել, խաղալ, կատակել, ծառանալ, զրուցել, մտածել, հրամայել, խելագարվել, շրջվել:

150. *Հետևյալ հարաբերական ածականներից բարդություններ կազմեցեք՝ ուշադրություն դարձնելով նրանց գրությանը:*

Նմուշ *հայկական, ռուսական* → հայ-ռուսական
ուսումնական, մեթոդական → ուսումնամեթոդական

ա) պատմական, մշակութային
բ) անգլիական, ամերիկյան
գ) գիտական, հետազոտական
դ) ֆրանսիական, գերմանական
ե) իբերական, կովկասյան
զ) ազգային, եկեղեցական
է) ռազմական, ծովային
ը) հասարակական, քաղաքական
թ) վարչական, տարածքային
ժ) գրական, գեղարվեստական

151. *Տրված բառերում գտեք հնչյունափոխված արմատները և դրանց անհնչյունափոխ ձևերով բարդ բառեր կազմեցեք:*

Նմուշ՝ վրիպակ – ժամանակավրեպ:

Հուզիչ, միջուկ, բազկատարած, տարրալուծել, դիմագիծ, լուսադեմ, տիրակալ, ծփանք, գլխարկ, սնունդ, խնդություն, սրիչ, կիսատ, բուժակ:

152. *Գտեք տրված բառերի այն արմատները, որոնք կարող են հնչյունափոխվել: Բարդ բառեր կազմեցեք ընտրված բաղադրիչների հնչյունափոխությամբ:*

Նմուշ՝ *հարցազրույց* - զրուցասեր, զրուցակից:

Ներկաջուր, հացատուն, նամակագիր, ակնաբույժ, հացաբույս, զորախումբ, գործատեր, դասամատյան, հատակագիծ, զորագունդ, օդաչու, արդարամիտ, փայտաշեն, քաղաքակիրթ:

153. *10-ական բարդ բառ կազմեցեք տուն, ծաղիկ, նկար, պետ վերջնաբաղադրիչներով և ինքն, ջուր, օդ, հուր, հող, Աստված սկզբնաբաղադրիչներով:*

154. *Անհոդակապ բարդություններ կազմեցեք՝ տրված բառերը գործածելով իբրև վերջին բաղադրիչ: Որոշեցեք բարդության տեսակը:*

Նմուշ՝ *անուն* – նույնանուն, բայանուն, տեղանուն, ազգանուն:

Երգ, իմաստ, ընտիր, ուղի:

155. *Տրված արմատներով կազմեցեք հոդակապով և անհոդակապ բարդություններ և որոշեցեք դրանց տեսակները:*

Չիգ, լույս, հաց, որս, երգ, արյուն, ընկեր, արվեստ, աստղ, օգուտ:

156. *Տրված բառերից յուրաքանչյուրով կազմեցեք իսկական, կցական (կամ հարադրական) և կրկնավոր մեկական բարդություն:*

Նմուշ՝ օր – օրավարձ, կեսօր (օր ու գիշեր), օր օրի:

ա) տեղ, հինգ, գլուխ, մեծ, ծանր
բ) փոքր, շատ, պակաս, չոր, տաք

157. *Հետևյալ բառերի մեջ ընդգծեցեք բառակազմական ձևույթները (հիմնական ձևույթները՝ մեկ գծով, երկրորդականները՝ երկու):*

Համահայկական, ծաղկունք, հեռահաղորդակցություն, երեսպաշտորեն, դերծովակալ, գեղատեսիլ, վարակակիր, անհեռատեսորեն, հայերենագիտություն, վեհանձն, հակախորհրդային, գրադարանավարուհի, գեղանկարչական, վանքապատկան, անհատապաշտություն, հեռուստաաշտարակ, պատմավիպասան, առօրյա, ինքնընտինքյան, միանձնուհի, կամրջաշինարար:

158. *Առանձնացրեք բառակազմական միևնույն բաղադրիչն ունեցող բառերը՝ դրանց մեջ մատնանշելով համապատասխան ենթախմբեր:*

Իզուր, ծիրանի, խոսրովիդուխտ, դեպի, մայրենի, հիշատակ, հանուն, համար, երկդիմի, իհարկե, Իջևան, իշամեղու, կատաղի, սարնիվեր, ջուրնիվար, հոտնկայս, հյուր, հանիրավի, հանպատրաստից, հանկարծ, կույրիկույր, մերձիմահ, տմարդի, այրուձի, բանիմաց, այլազգի, վրացի, բանալի, բացի, ապակի, խառնիխուռն, ծայրեիծայր, իսպառ, վայրի, փոքրիշատե, անալի, կորովի, օրնիբուն:

159. *Առանձնացրեք բառակազմական միևնույն բաղադրիչն ունեցող բառերը: Հիմնավորեցեք կատարված խմբավորումը:*

Զուգասահք, գույնզգույն, սփռել, սփրթնել, սթափվել, սգալ, զգալ, զիջել, զայրանալ, զարմանալ, հետզհետե, զագս, զանազան, արդուզարդ, ստուգել, զորօրինակ, գիշերուզօր, հանապազօրյա, հանապազորդ, զորակոչ, զորեղ, զվարթանալ, նավազ, հովազ, եռուզեռ:

160. *Հետևյալ նախադասությունների բառերը ենթարկեցեք բառակազմական վերլուծության:*

1. Լուսամուտներից մեկից քիչ հեռու դրված շքեղ բազմոցին մտախոհ ու ներամփոփ նստած էր օրիորդական թարմությունը պահած մի կին՝ մոտ քսանինը տարեկան, դեմքի նուրբ գծագրությամբ:

2. Ծովի մոտ՝ բարձրադիր քարակոփ ժայռի վրա, կանգնած էր մի մարդ՝ լայնեզր գլխարկով և եվրոպական հագուստով, ու ակնդետ հայացքով նայում էր վեր սլացող լեռնագագաթներին, շուրջը տարածված հաճելի տեսարաններին և հիանում դրանց գեղեցկություններով:

161. *Հետևյալ նախադասությունների բառերը ենթարկեցեք բառակազմական վերլուծության: Առանձնացրած բաղադրիչներն օգտագործելով՝ կազմեցեք նոր բառեր (10-15 բառ):*

Նմուշ՝ Արևն իր շողերով մեղմիկ շոյում է աստղածաղիկներին:

Արևածաղիկ, արևաշող, աստղիկ, Շողիկ, Արևիկ:

1. Այստեղ սիրտդ լցվում է անհուն բերկրանքով, գեղգեղումՙէ արևածագի լույսից զարթնած թռչունների նման, ծաղիկների պես ուրախ բացում թերթերը, պայծառանում, ինչպես հավատով լի ուխտավորի լուսախոհ հայացքը:

2. Այդ աննախընթաց անհաջողությունից խորապես խոցված թշնամին որոշեց անընդմեջ հարձակումներից անցնել հյուծիչ պաշարման՝ արյունաքամ անելով ամրոցի դիմադրող բնակիչներին:

3. Լուսնկա գիշերներին երկնակամարի վրա հեզասահ լողում էր լուսինը, որի լույսի տակ ծփուն ծովակի բոսոր գույնը փոխվում էր արծաթափայլի և ծավալվելով ձգվում դեպի հեռավոր ափերը, որոնք շրջապատված էին երկնակարկառ լեռներով ու ծաղկափթիթ սարալանջերով:

162 *Հետևյալ կապակցություններից հապավումներ կազմեցեք:*

Գիտական աշխատող, քաղաքական բանտարկյալ, ջերմային էլեկտրակայան, զինվորական գրքույկ, ատոմային էլեկտրակայան, էլեկտրական ցանց, ավտոմատ հեռախոսային կայան, բնակարանային շահագործման տեղամաս, պետական ապահովագրություն:

163 *Բացեք հապավումները:*

1) ԱՊՀ, ԳԴՀ, ՌԴ, ՓԲԸ, ՄՕԿ, ԵԱՀԿ, ՀՀ ԳԱԱ, ՍՊԸ, ԱԱՀ, ՀՀ ԿԲ, ԿԸՀ, ՊՁ, ՀԲԸՄ, ՀՅԴ, ԽՍՀՄ, ՀՁ, ՀՕՊ, ՁԻԱՀ:

2) Սոցապ, ուսխորհուրդ, զինկոմ, քիմմաքրում, ֆինբաժին, ուստարի, աշխղեկ, գիտխորհուրդ, զինղեկ, բնակտնտեսություն, բանավան, կազմխորհուրդ, արհմիություն, սանմաս:

164 *Մամուլից դուրս գրեցեք նորագույն տառային հապավումների օրինակներ և բացատրեցեք:*

165 *Կետադրեցեք հետևյալ համր բնագիրը: Որտեղ անհրաժեշտ է, դրեք նաև միության գծիկը:*

Պայծառ կեսօր էր: Գետի ոլոր մոլոր ափերով մի մեծ քարավան էր գնում դեպի հարավ արևմուտք ավելի ճիշտ մի մեծ զինավառ խումբ հազարից հազար հինգ հարյուր ծիավորներով որոնց մեծ մասը զինվորներ էին նիզակներով տեգերով նետ աղեղներով զինված: Աչքի էին ընկնում ոչ միայն նրանց զենքերը այլև նոփ նոր հագուկապը: Նրանց ձիերն անգամ տարբերվում էին մյուս խմբերի ձիերից ունեին մուգ կարմիր կաշվե պախուրցներ ու արծաթերանգ թամբեր գույն գույն ծոպերով կերպասյա ծածկոցներ: Խմբի հետևից դանդաղընթաց գնում էին տեսակ տեսակ իրերով ու հակերով բեռնված ձիեր ոտքից գլուխ զարդարված կապույտ կանաչ թելերի փնջերով՝ու ոսկեօղ բոժոժներով որոնց ծորուն միօրինակ հնչյունները մեկումեջ խառնվելով գետի շաչյուն շառաչյունին լցնում էին գարնան վետվետուն օդը և խախտում չորսբոլորը նիրհող դաշտ ու անտառի անդորրը: Տոնահանդես գնացողի բարձր տրամադրությամբ զինվորներից շատ շատերը ուշիուշով լուռումունջ դիտում էին թե դեմ հանդիման վեր բարձրացող լեռները նրանց լանջերն ի վեր ձգվող անտառները թե զմրուխտափայլ մարգագետինները և թե գետի հորդացած ջրերը որոնք խշշում խշխշում էին շաչյուն շառաչյունով հոսում նրանց ծուռտիկ մուռտիկ ճանապարհին զուգահեռ տեղ տեղ գոռում գոչյունով ափերից դուրս գալով և ընդարձակ ճահճուտներ ու եղեգնուտներ ստեղծելով:

Եվ ճանապարհը այսպես վերուվար անելով մերթ հարթավայրով ձգվում ոլորվում էր առաջ մերթ թեքվում աջ ու ահյակ մերթ իջնում մտնում էր քարակարկառներով ու դարուփոսերով լի մի ձոր որտեղից երևում էր երկնքի բաց կապույտ մի շերտ միայն հետո այդտեղից դուրս գալով մխրճվում էր ծառ ու ծաղկով թարմ բույրերով լեփ լեցուն անտառը: Հեռու հեռվում երևում էին ծառաստանների մեջ խճճված կորած կամ լեռնակողերին կառչած կպած գյուղեր որոնց գոյությունը մատնում էին տասը քսան երդիկներից ծվեն ծվեն բարձրացող ծխի քուլաները կամ շների այստեղից այնտեղից մերթընդմերթ լսվող հաչոցը:

Ճամփորդությունն սկսելուց հինգ վեց օր հետո ի վերջո հասան Եփրատի այն տեղը որտեղից սովորաբար անցնում գնում էին Կիլիկիա: Առանձնապես դժվար եղավ հակերով բեռնված ձիերի գետանցը ափից ափ անցնելիս նրանք համառում էին ծառս լինում ու ինչ որ տարօրինակ ձայներ արձակում:

ՉԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Քերականությունը հրամայում է
նույնիսկ թագավորներին:
Մոլիեր
(Ֆրանսիացի թատերագիր)

ԳՈՅԱԿԱՆ

166 *ա) Կարդացեք բանաստեղծությունը: Գտեք գոյականները: Որոշեցեք նրանց կազմությունը:*
բ) Առանձնացրեք 5-7 գոյական և գրեցեք նրանց հոմանիշները:

Ապառաժների լռության վրա
Քարայծն սպիտակ առագաստի պես
Լողում է ծորի կապույտ երկնքում:

Իր փոքրիկ, տխուր գլուխը թեքում,
Տխուր աչքերը թափանցիկ, տխուր զանգակների պես
Կախում անդունդին,
Լուսնյակ պոզերով պոզահարում է դեմքը լուսնյակի,
Եվ մի անմոռաց, հավիտենական խոր ափսոսանքի
Փշրանքներ խամրած
Ընկնում են հատ-հատ
Չորում թավալվող սարսափի վրա:

Կարոտի լեզուն ծերմակ հպումով
Նրա շուրթերից սրբում է ճաքած տապը կարոտի,
Եվ զանգակները թրթռում են վայրի
Արտացոլանքով տխրաբուխ սրտի:

Ռ.Դավոյան

167 *Հետևյալ բառերից նվազական-փաղաքշական նշանակությամբ գոյականներ կազմեցեք:*

Պատանի, որբ, աթոռ, մարդ, որդի, մուկ, էշ, հորթ, ծեր, կղզի, գիրք, գունդ, աղավնի, թիթեռ, թիզ, հատոր, ծուկ, աղջիկ, ցուլ, առու, դուռ, հոգի, հյուղ, արտույտ, ծով:

168. *Տրված բառերից (կամ արմատներից) համապատասխան ածանցներով գոյականներ կազմեցեք:*

Սառույց, հեռու, զորք, դպիր, ջերմ, արգելել, արվեստ, ծմեռ, կույս, կաթողիկոս, պվազ, աղ, գաղտնի, ճպիճ, տերմին, կենալ, ծիղանի, թուք, աղոթել, մեղու, կեչի, ամբուր, կտակ, բույր, գերեզման, կին, գանձ, այգի, մթերք, լվանալ, եղեգ, պատրիարք, ծառ, դարբին, աշխատել:

-անոց	-արան	-ոց	-ստան	-ուտ

169. *-ուհի վերջածանցով 4-ական գոյական կազմեցեք՝*

ա) անձի հասարակ անուններից գ) ժողովրդի կամ երկրի անուններից
բ) անձի հատուկ անուններից դ) ածականներից կամ բայարմատներից

170. *Տարբեր ածանցների միջոցով կազմեցեք մասնագիտություն զբաղմունք ցույց տվող գոյականներ:*

Նմուշ՝ դռնապան, շինարար:

171. *Տրված գոյականակերտ ածանցները խմբավորեցեք ըստ բառակազմական նշանակությունների:*

-անոց, -ակ, -ունք, -արք, -ում, -արան, -իկ, -անք, -ան, -վոր, -ենք, -ոց, -ի
-որդ, -ոն, -վածք, -ու, -յակ, -ցի, -ստան, -պան, -մունք, -եղեն, -ուտ, -բան,
-ություն, -ուկ, -գործ:

172. *Հետևյալ բայերի արմատներից (կամ բայահիմքերից) ածանցման միջոցով կազմեցեք գոյականներ:*

Արգահատել, լուծարել, ստուգել, վազել, հանել, քերել, բրել, դոփել, թրմփալ, զգալ, պարսավել, պահել, հնչել, ճռռալ, ուսուցանել, բանալ, այցելել, քամահրել, շրխկալ, ձգել, ասել, պայթել, համակարգել, ծրագրավորել, նախատել:

173. *Ածանցման միջոցով կազմեցեք որևէ տեղացի, երկրացի անվանող գոյականներ:*

Մուշ, Իտալիա, Հայաստան, Արցախ, Իսպանիա, Բելգիա, Բրազիլիա, Նյու Յորք, Էջմիածին, Ջուղա, Անի, Մեղրի, Սևան, Լոս Անջելես,

Ավստրալիա, Իրան, Բյուզանդիա, Եթովպիա, Սյունիք, Նոր Զելանդիա, Նորվեգիա, Ավստրիա, Նոր Նախիջևան, Տավուշ, Եգիպտոս, Բեյրութ, Պետերբուրգ, Գյումրի, Իգդիր, Պոլիս, Ջավախք:

174. *Հետևյալ երկրանուններից առանձնացրեք նրանք, որոնց հիմնական բնակիչների անվանումը արմատական բառ է (մատնանշեցեք զուգածևությունները):*

Անգլիա, Լեհաստան, Հայաստան, Ամերիկա, Արգենտինա, Ճապոնիա, Չեխիա, Բելգիա, Ֆինլանդիա, Շվեդիա, Հունաստան, Կանադա, Ուկրաինա, Սլովակիա, Դանիա, Թաքարստան, Տաջիկստան, Հոլանդիա, Ռուսաստան, Իսրայել, Չինաստան, Հնդկաստան, Իսպանիա, Պարսկաստան, Ուզբեկստան, Լատվիա, Էստոնիա, Ղազախստան, Ֆրանսիա, Թուրքիա, Վրաստան:

175. *Բառակազմական հետևյալ կաղապարներով կազմեցեք բարդ գոյականներ:*

ա) գոյական + գոյական
բ) գոյական + բայահիմք
գ) ածական + բայահիմք
դ) բայ (բայարմատ) + գոյական
ե) ածական + գոյական
զ) դերանուն + բայարմատ

176. *Առանձնացրեք այն հասարակ գոյականները, որոնք գործածվում են նաև իբրև հատուկ անուններ:*

Ձնծաղիկ, ցայգ, նվագավար, կորյուն, քոթոթ, կռունկ, կաղնուտ, զինվոր, ավետիս, ամպրոպ, ռազմիկ, շանթ, մատուռ, արագիլ, վարպետ, տարափ, շուրթ, գետաբերան, երամակ, աղջամուղջ, ակն, գոհար, գալուստ, մատենադարան, հյուսն, լաջվարդ, զանգակ, կակաչ, վարդ, համբարձում, գրիչ, մարտիկ, աղավնի, հարություն, դեղին, այգեստան, արշալույս, գավիթ, գավառ, սպիտակ, ամանոր, զատիկ:

177. *ա) Հետևյալ բնագիրը բաժանեցեք պարբերությունների:*

Հին հույները հսկայական դեր են խաղացել եվրոպական քաղաքակրթության ստեղծման և զարգացման գործում: Հիշենք միայն ամենակարևոր ներդրումները: Հույները փյունիկեցիներից վերցրին նրանց գիրը և այնպես կատարելագործեցին այն, որ հունական այբուբենը դարձավ եվրոպական բոլոր ժողովուրդների գրերի հիմքը: Հույներն ստեղծեցին գրավիչ դիցաբանություն և բարձր արվեստ, որը ոգեշնչող ազդեցություն ունեցավ հատկապես Վերածնության դարաշրջանի արվեստագետների, բանաստեղծների և ճարտարապետների վրա: Աշխարհին Հոմերոս, նրա «Իլիական» և «Ոդիսական»

էպոսները հույները տվեցին: Հույներն ստեղծեցին անասելի հմայքով, կատարյալ ներդաշնակությամբ ու վեհությամբ գերող բարձրաքանդակներ, արձաններ ու քանդակախմբեր: Այդպիսիք են, օրինակ, Ֆիդիասի գլուխգործոցները: Հույները տրամաբանական մտածողության նախաձեռնողներն էին, փիլիսոփայության հիմնադիրները, մի գիտություն, որից հետզհետե անջատվեցին ուրիշ գիտաճյուղեր: Հունական հասարակության մեջ են ծնվել այնպիսի մտածողներ, ինչպիսիք են Պլատոնը, Արիստոտելը, Դեմոկրիտը, էպիկուրը և մյուսները: Հույներն ունեին նաև Պյութագորասի, Էվկլիդեսի, Արքիմեդի նման հրաշալի մաթեմատիկոսներ, երկրաչափներ և ֆիզիկոսներ: Հույները մարմնի և հոգու, ձևի և բովանդակության, գեղեցկության և բարության ներդաշնակությունն էին դավանում: Նրանց մեջ հայտնի էին առանձնապես սպարտացիները՝ իրենց ժուժկալ և պարզ ապրելակերպով: Նրանք ուտում էին հասարակ շիլա ու բլիթ, պանիր, կանաչեղեն, բակլա, ձուկ: Հազվադեպ նաև միս էին ուտում, իսկ գինին գրեթե միշտ ջրով բացած էին խմում: Հույներն էին Օլիմպոսում կազմակերպվող մարզական համերկրային խաղերի նախաձեռնողները: Մեր ժամանակներում այդ ավանդական մրցություններն իրենց նոր կյանքը գտան աշխարհի խաղաղասեր ժողովուրդների օլիմպիական խաղերի մեջ: Հին հունական աշխարհի ծաղկումը համեմատաբար կարճ տևեց՝ ընդամենը մի քանի դար, սակայն նրա մշակույթի ճառագայթման տևողությունը կարող ենք հազարամյակներով չափել:

բ) Տեքստից դուրս գրեցեք գոյականները՝ լրացնելով հետևյալ աղյուսակը:

Անձ		Իր	
հատուկ	*հասարակ*	*հատուկ*	*հասարակ*

178. *Գրեցեք նշանավոր անձանց բաղադրյալ անուններ, որոնց մի բաղադրիչը՝*

ա) մականուն է **բ) մատնանշում է որևէ տեղացի լինելը**

179. *Բացատրեցեք, թե ինչպես են առաջացել հետևյալ հասարակ անունները: Նշեցեք դրանց գործածության ոլորտները:*

Մեկենաս, ռենտգեն, կոնյակ, շամպայն, ամպեր, նյուտոն, ջոուլ, մաուզեր, օհմ, գալիֆե, լովելաս, նագան, դիզել, ժավել, ատլաս, դոնժուան:

180. *ա) Որտեղ անհրաժեշտ է, գրեցեք մեծատառով:*

Տրդատ ճարտարապետն ապրել է ժ դարի վերջին և ժա դարի սկզբին՝ բագրատունիների թագավորության ժամանակաշրջանում: Ճարտարապետի կենսագրության կցկտուր տեղեկություններ պահպանվել են մատենագիր ստեփանոս տարոնեցի ասողիկի պատմության մեջ:

Իր առաջին կառույցը տրդատն իրականացրել է արգինայում: 965 թվականից այն դարձել էր հայ առաքելական եկեղեցու կաթողիկոսների աթոռանիստ, երբ անանիա մոկացին, թողնելով վանա լճի աղքամար կղզին, բնակություն էր հաստատել անի քաղաքին մերձակա այդ վայրում: Անին դրանից ոչ շատ առաջ՝ 961 թվականին, հռչակվել էր հայաստանի մայրաքաղաք:

Նորընտիր կաթողիկոս խաչիկ առաջին արշարունին որոշում է նոր աթոռանիստի համար հիմնել մեծ եկեղեցի, որի կառուցումը հանձնարարվում է տրդատ ճարտարապետին:

Ավարտելով կաթողիկոսի հանձնարարած աշխատանքը՝ տրդատը թողնում է արգինան և գնում անի, որտեղ սմբատ բ թագավորը՝ աշոտ երրորդի որդին, նույնպես շինարարական խոշոր աշխատանքներ էր ձեռնարկել:

Թագավորը տրդատին հանձնարարում է անիի մայր տաճարի կառուցումը, որը հետագայում հռչակվում է իր հոյակերտ ճարտարապետությամբ: Սակայն սմբատ երկրորդի օրոք ճարտարապետը դնում է այդ կառույցի հիմքերը միայն. թագավորի մահվան պատճառով աշխատանքները միառժամանակ ընդհատվում են:

Ժամանակավոր դադարը տրդատն օգտագործում է բյուզանդական կայսրության մայրաքաղաք այցելելու համար, որտեղ նրան պատվիրում են վերականգնել կայսրության գլխավոր եկեղեցու՝ սուրբ սոֆիայի տաճարի գմբեթը:

Վերադառնալով բյուզանդիայից՝ ճարտարապետը վերսկսում է տաճարի կառուցման աշխատանքները գագիկ առաջին բագրատունի արքայի կնոջ (վերջինս սյունյաց վասակ իշխանի դուստրն էր) հանձնարարությամբ և ավարտում 1001 թվականին:

Տրդատ ճարտարապետն է կառուցել գրիգոր լուսավորչի (գագկաշեն)՝ զվարթնոցի տիպի հրաշալի տաճարը, նաև այլ շինություններ, որոնց մեծ մասն ավերվել ու մեզ չի հասել: Տրդատին են վերագրվում արգինայի կաթողիկոսարանը, հաղպատի սուրբ նշան, սանահինի ամենափրկիչ եկեղեցիները, անիի սմբատաշեն պարիսպը, միջնաբերդի պալատի հյուսիսային դահլիճները, փրկչի եկեղեցին, մարմաշենի գլխավոր եկեղեցին:

բ) Հաղորդում պատրաստեցեք կամ որևէ ավանդազրույց պատմեցեք հայկական ճարտարապետության կամ պատմամշակութային երևելի հուշարձաններից մեկի մասին:

181 *Փոխադրեցեք տեքստը՝ հարստացնելով բաղադրյալ հատուկ անուններով:*

Բիբլիական լեռան հայացքի տակ՝ Արարատյան դաշտի սրտում, շքեղաշուք փռվել է հինավուրց ու նորօրյա ոստանը՝ Երևանը:

Ամեն առավոտ ալեզարդ Մասիսն իր ծյունաճերմակ գագաթների շողարձակումներով ողջունում է արթնացող քաղաքին, իսկ Երևանն իր տուֆակերտ շենքերի վարդագույն ժպիտներով ողջունում է հարազատ լեռան լուսաբացը:

Իր բազմադարյան պատմության ընթացքում շատ մայրաքաղաքներ է ունեցել Հայաստանը՝ Երվանդաշատ, Արմավիր, Դվին, Անի... Վերջինը՝ տասներկուերդը, Երևանն է՝ հինավուրց հողում կառուցված հին, բայց երիտասարդ քաղաքը:

Վաղուց անհետացել են կավաշեն տները, ծուռումուռ, նեղ փողոցները՝ իրենց տեղը զիջելով բազմահարկ շենքերին, լայն փողոցներին ու պողոտաներին: Քաղաքի նոր թաղամասերը տարածվել են դեպի հյուսիս-արևելք, հարավ և արևմուտք:

Երևանը հայ ժողովրդի գիտական ու մշակութային կյանքի կենտրոնն է:

Այսօր Երևանն ապրում է մեծ քաղաքներին հատուկ ռիթմով ու շնչառությամբ: «Զվարթնոց» օդանավակայանը մեր քաղաքն օդային ուղիներով կապում է աշխարհի տարբեր երկրների հետ:

182 *Հոգնակի թվով գործածված բառերը խմբավորեցեք ըստ օրինաչափությունների:*

Շոգեքարշերը փնչում էին, ապրանքատար վագոնների բաց դռները վիշապի երախների պես սպասում էին իրենց զոհերին: Կայարանում հերթապահող զորամասերի չոր ու խստահայաց զինվորների ուղեկցությամբ բեռնատարներով ժամանում էին դժբախտ ընտանիքներ: Կապոցներ և ուսապարկեր շալակած ուղևորները դժկամորեն էին բարձրանում վագոնները, որոնք լուսամուտներ չունեին:

Քաղաքը հատող հորդառատ գետի ջրերն այդ տարի բարձրացել էին, և արվարձանների մի քանի թաղամասեր հեղեղվել էին, դժբախտ դեպքեր էին պատահել: Սնոտիապաշտների պնդմամբ՝ չարագուշակ տարին էլի ավերածություններ էր նախապատրաստում: Այդ պատճառով էլ կառախմբերով մոտակա ավաններն էին տեղափոխվում քաղաքի գրեթե բոլոր բնակիչները՝ թողած իրենց աշխատատեղերը. հանքափորները՝ քարհանքերը, դասախոսները՝ լսարանները, դեղագործները՝ դեղատները, բժիշկները՝ վիրաբույժներ, ակնաբույժներ, նյարդաբաններ՝ հիվանդանոցները, դերասանները՝ թատերաբեմերը, երեխաները՝ մանկապարտեզներն ու զբոսավայրերը:

Երկնքի աստղերը գիշերվա մթության մեջ ասես հսկում էին հեռագրասյուներին թառած թռչուններին ու վագոններում բոլոր նստատեղերը զբաղեցրած քաղաքացիներին:

183. *Կազմեցեք հետևյալ գոյականների հոգնակին՝ դրանք խմբավորելով ըստ օրինաչափությունների:*

Ամսագիր, ռումբ, թուր, երգահան, գրաշար, նուռ, ծառ, աստղ, թատերագիր, սպա, հարս, շարասյուն, գյուղացի, ռուս, ձուկ, կադր, տուփ, շուրթ, ավազան, թոռ, կուրծք, հեռագրասյուն, վագր, թռչուն, ճյուղ, եզր, խնդրագիր, նախագիծ, ծունկ, բաղածայն, դավադիր, հեռուստացույց, տեսակետ, տետր, լուսան, թիմ, դասագիրք, վարագույր, թուրք, ներդիր:

184. *Շարունակեցեք լրացնել աղյուսակը:*

միավանկ գոյական վերջնաբաղադրիչով բարդ բառ	*միավանկ բայարմատ վերջնաբաղադրիչով բարդ բառ*
ձեռագիր - ձեռագրեր	**ուսադիր - ուսադիրներ**

185. *Կազմեցեք տրված գոյականների հոգնակին և դրանցով հարստացրեք տեքստը:*

Լեռնանցք, գետ, կամուրջ, երկիր, զենք, զորամաս, փոքրիկ, ուղեցույց, զինվոր, քնապարկ, ուս, մեջք, զրահատանկ, ավիաշարժիչ, օդանավ, զրահագնացք, վագոն, ամբարձիչ, ամուսին, կին:

Միակ խճուղու վիճակի մասին ծածկագրերը տաղտկալի նույնությամբ հաղորդվում էին ամեն օր: Խճուղին լեռնային գահավեժ ճանապարհ էր, որն անցնում էր գալարապտույտ անկումներով, մթին անտառներով: Այդ ճանապարհով էր մեզ հասնում ուղարկվող ռազմական օգնությունը և այն ամենը, ինչ պետք էր երկրի պաշտպանության համար: Լեռնային այդ ճանապարհը ամիսներով կարող էր մնալ ձյան տակ. հողմերն ու մրրիկները մինչև ինը-տասը մետր բարձրությամբ ձյուն կկուտակեին նրա վրա, եթե չլինեին կալանավորները:

Տարվա տասներկու ամսից տասը ձմեռ էր, մինչև յոթանասուն աստիճանի հասնող սառնամանիքներ: Ճանապարհի առանձին հատվածներ կորչում էին մշուշի մեջ, եռացրած ջուրը պակաստում էր, զինվորների ու կալանավորների սնունդը կանոնավոր ու որակով չէր: Ինչ խոսք, հանգստի պայմաններ չկային. դա ավելորդ պերճանք էր: Վարորդները քնում էին մեքենաների մեջ: Սակայն դրանք այնքան քիչ էին, որ շատերը պարզապես չէին քնում: Բայց ամեն ինչ անում էին, որ ճանապարհը չփակվեր նույնիսկ շատ կարճ ժամանակով: «Ձեռքերի վրա կբարձրացնենք ընկած մեքենաներն ու ճանապարհը կբացենք»,-սա էր նրանց կարգախոսը: Իսկ այդ հսկա բեռնատարները քաշում էին բազմատեսակ զենք ու զրահ, ռազմամթերք:

Ըստ Վ.Սրուանյանի

186. *Տրված անհոգնական գոյականները խմբավորեցեք ըստ իմաստի և քերականական հատկանիշների:*

Կապար, բանջարեղեն, զայրույթ, հատուցում, Սատուրն, ամպրոպ, լուսին, լուութերականություն, Հնդկական օվկիանոս, ուսանողություն, ուրան, Վարդանյան, թթվասեր, արծաթեղեն, ֆեոդալիզմ, անձրև, գյուղացիություն, ատելություն, բուդդայականություն, մեգ, թթվածին, կաթ, հնդկացորեն, զեփյուռ, ամանեղեն, յուղ, մտավորականություն, Կասպից ծով, կենսոլորտ, կապիտալիզմ, կարկուտ, պապոնք, Վարդանանք:

նյութ ցույց տվող գոյականներ	
եզակի առարկաներ	
մտքի ուղղություն ցույց տվող գոյակ.	
բնության երևույթներ	
վերացական հասկացություններ	
հավաքական գոյականներ	
հատուկ գոյակ.	
-անք, -ենք, -ոնք ածանցներով կազմված գոյակ.	

187. *Ընտրեցեք անհոգնական գոյականները:*

Գիշեր, ավազ, հոգս, երկիր, ցուրտ, օվկիանոս, հույզ, երկիր, ծով, վրդովմունք, արարք, գինի, շարժում, քար, կարկուտ, անագ, Գասպար, շինություն, գալուստ, ընդհարում, զավակ, գուլպա, լող, առարկա, ջուր, կոզի, շաքարավազ, ածխածին, երկինք, փառք:

188. *Դուրս գրեցեք անհոգնական գոյականները: Առանձնացրեք նրանք, որոնք կարող են գործածվել հոգնակի թվով:*

Փչում էր գարնանային քամին, երկինքն ամպել էր: Երկաթուղային կայարանի անդորրը խախտվել էր: Այնտեղ ժխոր էր, իրարանցում: Կանանց աղեխարշ ճիչերի, երեխաների աղիողորմ լացուկոծի մեջ խեղդվում էր վեճի բռնված Հովհաննեսի ձայնը: Զարմանքն ու զայրույթը պատել էին բոլորին:Գիշերով էին հայտնել մեկնումի անակնկալ լուրը, և մարդիկ շփոթի ու տագնապի մեջ էին: Հայտնի չէր, թե նրանք ճանապարհին ինչպես

էին հաղթահարելու ցուրտն ու տապը, քաղցն ու ծարավը: Զգացվում էր, որ ուղևորությունն անցնելու է փոխադարձ անվստահության ու անբարյացակամության մթնոլորտում, սննդի ու ջրի պակասի պայմաններում:

189. *Առաջին սյունակում գրեցեք այն անհոգնական գոյականները, որոնք կարող են գործածվել հոգնակի թվով, երկրորդում՝ նրանք, որ չեն կարող:*

Կարապետյան, Մասիս, ձյուն, սուգ, Տավուշի մարզ, պրոպան, քամի, ֆաշիզմ, Բալթիկ ծով, խռովք, Լուսին, խոտ, վախ, ատելություն, անձրև, կոնյակ, Վանա լիճ, հատուցում, ուսում, ամպրոպ, Ֆրանսիա, քրիստոնեություն, Բոսնիա, ջրածին, Լուսինե, Արեգակ:

հոգնակի կարող են ունենալ	*հոգնակի թվով չեն կարող գործածվել*

190. *Հետևյալ բառերից առանձնացրեք այն հավաքական գոյականները, որոնք կարող են հոգնակիով գործածվել:*

Գումարտակ, ակնեղեն, ուսանողություն, Վարդանանք, բանակ, առածանի, ազգ, ընտրանի, երամ, վաշտ, Վեդունք, դարձվածանի, մտավորականություն, երամակ, գոհարեղեն, նամականի, հոտ, ժողովուրդ, սպիտակեղեն, դեղորայք, դասակ, ավագանի, տեսականի:

191. *Ո՞ր գոյականները թվական որոշիչ չեն ընդունում. բերեք օրինակներ:*

192. *Կազմեցեք նախադասություններ՝ **նախագահ, համակարգիչ, պաշտոն, դավաճան** բառերը գործածելով որոշյալ և անորոշ առումներով:*

193. *Գիրքը, հեռախոսը, մարդը, գիտելիքը ձևերը նախադասությունների մեջ գործածեցեք անորոշի իմաստով:*

194. *Արտագրեցեք՝ փակագծերում տրված բառերին ավելացնելով Ը կամ Ն հոդերը:*

1. (Ներկավաճառ), իհարկե, արվեստի սիրահար էր, բայց երբեք գիտակ չդարձավ: 2. (Բժիշկ) ստիպված էր մի առանձին բնակարան վարձել և այն վերածել յուրատեսակ թանգարանի: 3.(Հրատարակիչ) իմպրեսիոնիստների խմբի հետ իր (մտերմություն) սկսեց առաջին ցուցահանդեսից դեռ շատ առաջ: 4. Սակայն նրա (հնարավորությունը-

ներ) էլ սահմանափակ չէին: 5. Այդ (մարդ) միշտ էլ օգնել է իմպրեսիոնիստներին, գնել նրանց (կտավներ) անգամ այն ժամանակ, երբ (հասարակություն) երես էր թեքել նրանցից:

195. *Բաց թողնված տեղերում ավելացրեք նախադասության մտքին համապատասխանող գոյականներ (որոշյալ կամ անորոշ առումով):*

1. Նրա շրթունքները լարված էին, ասես զսպում էին բառերի ինչ-որ ....: 2. Նա զգուշորեն վերցրեց լսափողը, բայց որևէ չհավաքեց: 3. Մաթեմատիկական շատ մի քանի ունեն: 4.Երիտասարդներն այդ ընթացքում ոչ մի չարտասանեցին: 5.Ամեն կյանքում իր ճակատամարտն է մղում: 6. Տնօրենը սեղանին դրված ինչ-որ էր մակագրում: 7. Նա գիտեր, որ Վահանը չէր սիրում իրեն, և փոխադարձաբար նույն՝ ուներ: 8.Երեսունյոթ առաջ չլսեց հոր խորհուրդներն ու այդ մասնագիտությունն ընտրեց: 9. Երկու հետո կավարտեն դպրոցն ու կբաժանվեն իրարից: 10. Ըստ հին հունական.... Հերմես աստվածը Զևսի որդին էր:

196. *Հորեղբայր, այգի, բառարան, չնիկ գոյականները ստացական Ս և Դ հոդերով գործածեցեք նախադասությունների մեջ:*

197. *Օրերս, առակս, վերջինս բառաձևերով նախադասություններ կազմեցեք այնպես, որ Ս հոդն արտահայտի ցուցական իմաստ:*

198. *Նախադասություններ կազմեցեք՝ հետևյալ կապակցությունները գործածելով տարբեր հոլովաձևերով:*

ա) մենք՝ հայերս
բ) ես՝
գ) դուք՝ վրացիներդ
դ) սիրելի՛դ իմ Աշխեն

199. *Հետևյալ բառերով նախադասություններ կազմեցեք՝ դրանք գործածելով անձի և իրի առումներով:*

ա) ուսանող
բ) գործավարուհի
գ) քաղաքացի
դ) արհեստավոր
ե) կատու
զ) վագր

200. *Կազմեցեք բառակապակցություններ: Նշեցեք հոլովական զուգաձևությունները:*

(Շուշի) ազատագրումը, (Շուշի) կոլոլակ, (սուգ) մեջ լինել, (սուգ) թափոր, (անկյուն) գագաթ, (անկյուն) խանութ, (Լոռի) մարզ, (Լոռի)

բնություն, (ձյուն) փաթիլ, (ձյուն) պես ճերմակ, (հեռացում) խոսքեր, (հեռացում) հրաման, (Մանուկ) որդին, (մանուկ) հայացք, (գառ) մորթի, (գառ) նման, (եզ) լեզու, (եզ) խոնարհություն, (ամիս) 25-ին, (ամիս) սկիզբ, (Գյումրի) քաղաքապետ, (Գյումրի) տրնգի, (գալուստ) լուր, (Գալուստ) կին, (մահ) չափ, (մահ) մասին, (մահ) տարած, (կայսր) հրաման, (կայսր) նման, (ձմեռ) գլխարկ, (ձմեռ) օրեր, (համբարձում) գիշեր, (Համբարձում) ընտանիքը, (պատում) սկիզբ, (արյուն) կանչ, (բաժանում) խոսքեր, (բաժանում) գործողություն:

201. *Փակագծերում տրված բառերը համապատասխանեցրեք նախադասությանը և մատնանշեցեք սեռականի հոլովական զուգածևությունները:*

1. Ո՞ր իրավունքով է ինքը խցկվում այս մարդու հոգու մեջ՝ առանց դուռը թակելու, առանց (բանալի): 2. Հարկավոր է բանալի գտնել, ներս մտնել և տեսնել՝ ի՛նչ կա նրա հոգում, այլ ոչ թե նայել ասես (բանալի) անցքից: 3. Դասերից հետո քիմիայի լաբորատորիայում հաջորդ (օր) փորձերը պիտի նախապատրաստեր: 4. (Օր) վերջին հեռախոսազրույց ունեցավ փոխնախարարի հետ: 5. Ի՞նչ (օր) է հասել դպրոցը, իսկ տնօրենը դեռ չի կորցրել հումորի զգացումը: 6. Մաթեմատիկայի ուսուցիչը կրկին բացատրեց նախորդ (ժամ) նյութը: 7.Օգտվենք մեկ (ժամ) մեր ազատությունից:

202. *Առանձնացրեք այն գոյականները, որոնց բացառականը կազմվում է սեռականի ձևից, և դրանք խմբավորեցեք ըստ ընդհանուր հատկանիշի (նշեցեք նաև զուգածևությունները):*

Միասնություն, հասցեատեր, կին, Գևորգենք, սկզբնակետ, խաղատուն, փորձակայան, նախահայր, սյուն, սկեսուր, լուսատու, քեռակին, տարի, գինի, կնքամայր, քույր, իրողություն, ձյուն, խնդիր, մորեղբայր, քեռորդի, շաբաթ, երգչախումբ, ուսմունք, դասընկեր, օր, հույս, գիշեր, երևույթ, տղամարդ, հիմնահարց, մահ, հարս, սեփականատեր, շարժում, աղջիկ, Վահանենք:

203. *Առանձնացրեք այն գոյականները, որոնց գործիականը կազմվում է սեռականի ձևից, և դրանք խմբավորեցեք ըստ ընդհանուր հատկանիշի:*

Հափշտակություն, հրապարակ, տարազ, ռազմաճակատ, անուն, բարձունք, վանահայր, գործիչ, թիվ, հորեղբայր, արյուն, ոսկի, մայր, ունելի, հորաքույր, բարդություն, դար, ամրակ, ծառուղի, տանտիկին, վայրկյան, Արամենք, հողատեր, կին, արև, տեսակետ, բնույթ, բնություն, իմաստ, տիկին, ժամանակ, աներ, ցերեկ, շինություն, սյուն, տեր:

204. *Փակագծերում տրված բառերը համապատասխանեցրեք նախադասությանը՝ նշելով բացառականի և գործիականի զուգածևությունները:*

1. Այդ (օր) կղզին կոչվեց Աղքամար: 2. Երկու (օր) կստանանք մեկնելու թույլտվությունը: 3. Անցյալ (տարի) երիտասարդ գիտնականն զբաղվում է միջուկային ֆիզիկայով: 4. Մեկ (տարի) տարագիր գործիչը կվերադառնա հայրենիք: 5. Ձեռքի մի (շարժում) նա տվեց իր պատասխանը: 6. Իր (արյուն) անպատճառ կմաքրի անարգանքը: 7. Նրա (զեկուցում) կեզրափակվի գիտաժողովը: 8. Որոշեցին նոր դպրոցը կոչել ակադեմիկոս Արարատ Ղարիբյանի (անուն): 9. Սուրենն (անուն) մարդ է: 10. Նրանք զբաղված են այդ խնդրի (լուծում):

205. *Առանձնացրեք ներգոյական հոլով չունեցող գոյականները:*

Կարաս, մահ, ծնունդ, մազ, խափշիկ, ծայր, երկրաբան, խայթոց, գավաթ, ողբերգակ, ճառ, հեծանվորդ, երկիր, մեկնիչ, սիրտ, երգ, կարծիք, շարժում, երեկո, գրվածք, ապրուստ, գիսակ, գրախոսական, լարդ, անկյուն, ծերություն, մեղեդի, ողբերգություն, նովել, ծոց, կեսօր, սուգ, ամսագիր, տարի, պետություն, տող, ցերեկ, հնչյուն, ելույթ, դար:

206. *Գրեցեք որոշչային կապակցություններ, որոնց որոշիչ բաղադրիչն արտահայտված լինի գոյականի ուղղական, սեռական, բացառական, գործիական հոլովներով: Դրանք գործածեցեք նախադասությունների մեջ:*

207. *Հաց, գինի, կտավներ, ստեղծագործություններ բառերի (բառածևերի) ուղղականի և բացառականի ձևերով նախադասություններ կազմեցեք՝ դրանք գործածելով ենթակայի և ուղիղ խնդրի պաշտոններով:*

208. *Գոյականի տարբեր հոլովածևերը գործածեցեք տեղի, ժամանակի և հիմունքի պարագաների շարահյուսական պաշտոններով:*

209. *Տրված բառերը դասակարգեցեք ըստ հոլովումների:*

ա) Պահանջ, նվիրվածություն, ամիս, աստվածամայր, Աստված, ժպիտ, տարի, արյուն, խնամք, շարասյուն, դասընկեր, նախահայր, վաճառատուն, Հարություն, ցերեկ, շավիղ, հարություն, Արամենք, մահ, ծյուն, նոնենի, մուկ, գառ, հաշիվ, քույր:

արտաքին	*ներքին*

բ) Ուսում, ընկերուհի, կեղծանուն, թելադրանք, հորեղբայր, տիկին, տղամարդ, Գրիգորենք, սկեսուր, Մանուկ, գիշեր, պատիվ, աստվածամայր, գործընկեր, խաղատուն, մահ, տավիղ, օր, վայրկյան, լռություն, անկողին, մանուկ, մարզ, բանալի, ամիս, բալենի, շնաձուկ:

ձևային	*իմաստային*	*ընդհանրական*

210. *Առանձնացրեք իմաստային և ձևային հոլովումների գոյականները՝ դրանք խմբավորելով ըստ իմաստային և ձևային հատկանիշների:*

Տանտիրուհի, նուռ, մորեղբայր, օձաձուկ, թերակղզի, հայորդի, տանտեր, խաղընկեր, ամիս, զեկուցում, կնքահայր, հասկացություն, անկյուն, ծերունի, վանահայր, շաբաթ, Սերոբենք, զորաստյուն, առավոտ, բազմություն, հեռագրասյուն, տիկին, գետաձի, դաշտամուկ:

211. *Ընտրեցեք այլաձև հոլովման պատկանող գոյականները և կազմեցեք դրանց սեռականը (նշեցեք նաև զուգաձևությունները):*

Պահ, կայսր, ամուսին, բեռ, անուն, սառցալեռ, աղջիկ, պատիվ, հույս, բույս, ծերունի, մանուկ, սեր, լույս, դար, ժամ, ձյուն, այրվածք, սուգ, հագուստ, կորուստ, անկողին, գալուստ, դուստր, թոնիր, փախուստ, Վահանենք, մեջբերում, հանգիստ, լռություն, ընչատեր, ծնունդ, խոհ:

212. *Որոշեցեք հետևյալ հատվածում գործածված գոյականների ձևաբանական հատկանիշները:*

-Այսօրվա նման հիշում եմ Թամանյանի խոսքը, երբ Կառավարական տան շքամուտքի սյուներն էի տաշում,-իր մտքերի հետևից գնալով՝ զրուցակիցներին դարձավ վարպետ Տիգրանը՝ բարի դեմքին մի ժպիտ դրվագելով: - «Չի կարելի անտեսել հայկական ոճը, քանի որ այդ ոճը թեկուզ հանճարեղ, բայց և այնպես արվեստագետ-ճարտարապետի երևակայության պտուղ չէ: Այդ ոճը ստեղծվել է դարերի ընթացքում: Հավաքական մտածողությունը վիթխարի ուժ է: Հայկական ճարտարապետությունը ներդաշնակ է մեր քարի բնույթին, մեր երկրի առանձնահատկություններին՝ լույսին, երկնքին, գույնին, կլիմային, ինչպես և ժողովրդի հոգևոր կերտվածքին: Ժողովուրդը դարեր շարունակ զարգացրել և ազնվացրել է այդ ոճն ըստ իր ճաշակի ու պահանջմունքների: Ուրեմն և չկա վերացական ոճ ճարտարապետության մեջ»: Ասում էր, որ ինքն էլ այն կարծիքի է, որ շենքը, կառույցը ստորագրություն պիտի ունենա: Այդ հարցում շատ են օգնում զարդաքանդակները, որ գալիս են հնից էլ հին ժամանակներից:

Ըստ Ա.Սեկոյանի

213 *Արտագրեցեք տրված հատվածը՝ ընդգծված գոյականները փոխարինելով հոմանիշներով:*

Զառիկոդին կանգնած հինավուրց միհարկանի շինությունը՝ գետնափոր ներքնահարկով ու ցանկապատված հողամասով, մեր քաղի վերջին բեկորներից էր, որ քառասունինը տարի առաջ կառուցել էր Պարսկաստանից հայրենիք վերադարձած վարսավիր Հակոբը:

Հիշողությունների գիրկը գնացին հին քաղը՝ իր ոլորաձիգ փողոցներով, կեսօրվա տոթով, իրիկնադեմի փոշով, քարաշեն տներն ու փայտաշեն խրճիթները, որոնք, թվում է, հիմա կթափվեն իրար վրա ու կգլորվեն ցած, և վարսավիր Հակոբը, որի անվերջանալի զանգատներն ու փնթփնթոցները կարծես հիմա էլ արձագանքում են մեր ականջներում:

Թիթեղապատ տանիքով ու փոքրիկ պատուհանով վարսավիրանոցը գտնվում էր տնից ոչ հեռու՝ փարթամ ու ստվերաշատ ընկուզենու տակ: Ամռան օրերին ընկույզների վրա քաղի չարաճճի մանուկների նետած քարերը երբեմն ընկնում էին կտուրի թիթեղին, և հաճախորդները ցնցվում էին ողողունից, իսկ Հակոբը, անափ զայրույթից կարմրատակած, դուրս էր նետվում տաղավարից ու անեծքի տարափ տեղում անկարգների գլխին:

Ողդին՝ Եփրեմը, կիսատ էր թողել ուսումը և վարսավիրանոցում օգնում էր հորն ու միաժամանակ սովորում նրա արհեստը:

Կնոջ մահվան տարելիցը լրանալուն պես Հակոբն ամուսնացրեց տղային: Նոյեմը՝ հարսը, որի աչքերում միշտ վախի ու տրտմության արտահայտություն կար, մինչև կյանքի վերջն այդ տանն ապրեց խորթ զավակի պես, զգույշ, կարծես ոտքի մատների վրա, ինչպես մի անմարմին տեսիլք:

Հակոբի բնավորության անտանելի գծերը՝ անբարյացակամությունը, ընչաքաղցությունը, հաստատապես փոխանցվել էին որդուն: Երբ Նոյեմը հիվանդանում էր, Եփրեմը գիշեր-ցերեկ անցկացնում էր տաղավարում, որպեսզի հիվանդի հառաչանքները չգրգռեին նյարդերը:

Ըստ Աբ. Ավագյանի

214 *Կենդանիների անուն բաղադրիչներով դարձվածքներ գրեցեք:*

ա) առյուծ	գ) մուկ	ե) արջ	է) աղվես
բ) շուն	դ) գառ	զ) ագռավ	ը) օձ

215 *Նախադասություններ կազմեցեք հետևյալ գոյականներով:*

ա) հրատարակություն – հրատարակչություն
բ) ավանդություն - ավանդույթ
գ) երախտիք - երախտագիտություն
դ) պատրաստակամություն – պատրաստականություն
ե) բարդություն - բարդույթ

216. *Կետադրեցեք համր բնագիրը: Ցանկացած երկու պարբերությունից դուրս գրեցեք գոյականները, որոշեցեք հոլովները և շարահյուսական կիրառությունները:*

Շատ բանով պակաս կլիներ հայկական մատյանների արժեքը եթե նրանց ողորկված մագաղաթե էջերին հպված չլիներ ծաղկողների ձեռքը:

Ձեռագիր մատյաններից հազիվ հինգ կամ վեց հազարը զուրկ լինեն որևէ զարդաբանությունից մանրանկար կոչված այն պատկերից որ կամ գրքի բովանդակության հիման վրա ստեղծված նկարներ են կամ խորանազարդեր գլխազարդեր ու լուսանցազարդեր զարդատառեր ու դիմանկարներ: Իսկ դա նշանակում է որ Մատենադարանի հարկի տակ պահվում է հայոց մատենական նկարչության մի վիթխարի հավաքածու այսինքն աշխարհում եղած հայկական մանրանկարների կեսը:

Մանրանկարված գրչագրերը հմայում են իրենց թրթռուն գույների միայն բնությանը բնորոշ համադրությամբ: Շատ բան թվում է հեքիաթային երևակայական մինչդեռ խորամուխ հայացքն ամենուր կարող է իրական կյանքի գաղտնագրված արտացոլանքներ գտնել:

Պատմության հին շրջանին հետևելով միջնադարի ժողովրդական տաղանդները մշտապես կապված մնացին այսերկրային կյանքի տառապանքներին ու վայելքներին: Երբ զարդ ու պատկեր էին նկարում նրանք բնության հրաշալիքներով հիացած եղան մանկորեն միամիտ գեղեցիկի սիրահար:

Կոնկրետ իմաստներ են արտահայտում գույներն ու նրանց համադրությունները որ միաժամանակ ազգային նախասիրություններն են ընդգծում խտացնելով ասելիքը գաղափարը: Մեր հայացքի դեմ տարածվում է այնքան լաջվարդ որ թվում է անկաշկանդ բացվել են երկնային անհունի դարպասները և այնքան որդան կարմիր որ ակամա հավատում ես թե ծմռան սառնամանիքին ծաղկողներն այդ բորբոքուն կրակով են տաքացրել իրենց սառչող մատները:

Զգուշությամբ թերթում ես ուշադիր դիտում թափանցելով պատկերների մանրանկար զարդահյուսվածքների մեջ և քո դեմ հառնում է կարծես մի իրական աշխարհ: Գրքի զարդանկարները թվում է վառում ու մարում են պայծառության բոցեղեն կրակները և ասես լսելի է դառնում անլռելի զանգերի տագնապալի դողանջը: Մի տեղ երևում են տաճարներ ու ապարանքներ մի ուրիշ տեղ դպրատուն ու գրապահոց իսկ սրանց մոտ մթին ու խոնավ խցեր ձեթի ճրագների ծխով լի և ապա գրակալին դրված անավարտ մատյանների ներկերի վրա այդ միևնույն ծուխը նաև սրահարված ծաղկողի արյան կաթիլը:

Ըստ Վ.Խեչումյանի

ԱԾԱԿԱՆ

217. *ա) Կարդացեք բանաստեղծությունը և գտեք ածականները՝ դրանք խմբավորելով ըստ տեսակների:*
բ) Առանձնացրեք 5-7 ածական և գրեցեք նրանց հոմանիշները:

Խաղաղ գիշերով դու կգաս ինձ մոտ,
Քնքուշ ձեռքերդ ես կհամբուրեմ,
Կցրեմ կյանքի հուշերը ցավոտ
Ու հեքիաթային լույսեր կվառեմ...

Երկար մազերդ կարծակես ազատ,
Հիվանդ գլուխդ կդնես կրծքիս,
Կլինես քնքու՜շ, մոտի՜կ, հարազա՜տ,-
Անուշ խոսքերով կդյութես հոգիս...

Պայծառ աշխարհում կլինենք մենակ,
Ցավ կյանքի մեռնող լույսերից խաբված,
Կերազենք անհուշ, անվերջ ու անհագ,-
Հեքիաթ աշխարհում առհավետ կապված:

Վ.Տերյան

218. *Տրված որակական ածականները խմբավորեցեք ըստ հետևյալ աղյուսակի:*

Ուռուցիկ, կծու, հեզ, խաժ, գանգուր, շվայտ, խելացի, հնազանդ, դեղձան, պարկեշտ, կլոր, ջերմ, գորշ, լաջվարդ, ժանտ, համեստ, լուրթ, ծուռ, թթու, խորամանկ, հարթ, բիրտ, մանր, քաղցր, ծավի, ուղիղ, ծույլ, բիլ, խորդուբորդ, ճաղատ, նենգ, շիտակ:

առարկայի արտաքին-ձևային հատկանիշ	*առարկայի ներքին հատկանիշ*	*մարդկանց ու կենդանիների բարոյական, մտավոր ու հոգեկան հատկանիշներ*	*գույներ*

219. *Տրված հարաբերական ածականները խմբավորեցեք ըստ հետևյալ աղյուսակի: Մատնանշեցեք այն բառերը, որոնք մեկից ավելի իմաստով կարող են մեկնաբանվել:*

Քարե, լեռնային, անստորագիր, պողպատյա, որդիական, գավառական, հողեղեն, գերմանական, հունիսյան, միջնադարյան, մարդակերպ,

գործարանային, գետափնյա, հայկական, տասնամյա, նիզակակիր, օձանման, հետճաշյա, անգլուխ, երևանյան, եղջերավոր, քարակոփ, պղնձե, մորուքավոր, կեսգիշերային, շղթայածև, պոչատ, ձյունաճերմակ, տարեվերջյան, նախապատերազմական, դաշտային:

տեղային-տարածական հատկանիշ	ժամանակային հատկանիշ	կազմության (նյութի) հատկանիշ	վերաբերության (ծագման, պատկանելության, հատկացման) հատկանիշ	ունենալու կամ չունենալու հատկանիշ	նմանության հատկանիշ

220. *Տրված նախադասություններում ածականի բաղդատական աստիճանի կազմության մի ձևը փոխարինեցեք մեկ ուրիշով:*

Նմուշ՝ Օգոստոսն ավելի շոգ ամիս է, քան հունիսը. - Օգոստոսը հունիսից [ավելի] շոգ ամիս է:

1. Ոչ մի կին նրա համար ավելի սիրելի չի լինի, քան դու: 2.Հենց այդ օրերին Ռուբենը, որը մեզանից երկու տարով մեծ էր, ձեռք էր գցել մի փոքրիկ գիրք: 3. Բժշկի խոսքերը նրա սրսկած դեղից ավելի ազդեցիկ էին: 4. Կենդանի փայտոջիլն ավելի վտանգավոր է, քան մեռած Նապոլեոնը: 5. Ոչինչ չէր կարող ավելի հետաքրքիր լինել, քան այդ զրույցները: 6. Կոմիտասը օպերաներ չի գրել, բայց դրանից ավելի մեծ գործ է կատարել. հայտնագործել է մեր ազգային երգը:

221. *Կազմեցեք տրված ածականների գերադրական աստիճանի ձևերը:*

Ազնիվ, հին, բարի, նոր, ծանր, զգայուն, սուր, երկար, խոշոր:

222. *Տրված ածականների հատկանիշի տարբեր աստիճանավորումներն արտահայտեցեք բառակազմական միջոցներով:*

Նմուշ՝ չոր - չորուկ, *դատարկ* - դափ-դատարկ:

Կարմիր, մութ, երկար, բարձր, թուխ, խոր, դեղին, քաղցր, շեկ :

223. *Հետևյալ նախադասություններում ածականները գործածեցեք գերադրական աստիճանի հնարավոր բոլոր ձևերով (ձևաբանական, շարահյուսական, բառակազմական, ոճական):*

1. Մեծ սենյակի կենտրոնում թոնիրն էր: 2. Դա մեր մեծ նվաճումն է: 3. Մենք մեծ հարգանքով ենք վերաբերվում մեր սիրելի ուսուցիչներին: 4. Նա բարձր դիրքի կիսասնի: 5. Ալպյան լեռնաշղթայի բարձր գագաթը

Մոնբլանն է: 6. Հեքիաթները կյանքի լավ դասագիրք են: 7. Սուրենը մեր լավ բարեկամն է: 8. Դա հարցի լավ լուծում է: 9. Բուհն ավարտելուց հետո նա լավ աշխատանք կունենա: 10. Տղաների մեջ ազնիվը Սարգիսն է: 11. Նա ազնիվ մարդ է: 12. Հուզիչ էր շրջանավարտների հրաժեշտի խոսքը: 13. Երեկույթի հուզիչ պահին շրխկոցով բացվեցին դահլիճի լուսամուտների փեղկերը: 14. Առավոտից անհանգիստ էր ծովը: 15. Մեր ընտանիքի անհանգիստ անդամը քույրս է: 16. Դիտարանում տեղադրվեցին հզոր ռադիոդիտակներ: 17 Հայերի համար հեթանոսական աստվածներից հզորը Արամազդն է: 18. Հայկական լեռնաշխարհի խոշոր լճերն են Ուրմիան, Վանը և Սևանը:

224. *Առանձնացրեք համեմատության աստիճան չունեցող որակական ածականները:*

Հպարտ, կույր, խեղճ, գեղեցիկ, չար, հիվանդ, նենգ, պարկեշտ, արու, բարի, վեհ, ագահ, հղի, էգ, ժլատ, վսեմ, համր, պիղծ, ամուրի, խուլ, շիտակ, լավ, արդար, ճերմակ, գծուծ:

225. *Հետևյալ բառակապակցությունների մեջ հարաբերական ածականի իմաստով գործածված բառերն ընդգծեցեք մեկ, որակականի իմաստով գործածվածները՝ երկու գծով:*

Բանաստեղծական ոտք, բանաստեղծական հոգի, արմատական բարեփոխումներ, արմատական բառարան, տարրական քաղաքավարություն, տարրական մասնիկներ, մարդկային հասարակություն, մարդկային վերաբերմունք, ողբերգական ավարտ:

226. *Տրված բառերից առանձնացրեք այն հարաբերական ածականները, որոնք որակական ածականների արժեք են ձեռք բերել, և յուրաքանչյուրի համար համեմատության որևէ աստիճան կազմեցեք:*

Դաշտային, մարդկային, իրիկնային, նվիրական, ահավոր, գավառական, մայիսյան, նյարդային, երեկոյան, ուսանողական, գարնանային, հեղինակավոր, էական, գիսավոր, լեռնական, բարոյական, վտանգավոր, հայրական, պոչավոր, լուսավոր, իտալական, անապատային, կիլիկյան:

227. *Առանձնացրեք այն բառերը, որոնք արտահայտում են և՛ առարկայի, և՛ հատկանիշի իմաստ:*

Ծանր, զիլ, անջրդի, գիժ, խուլ, թանձր, բամբ, դպրոցական, ծովային, աշնանային, օդային, կախարդ, թշնամի, գող, ցամաքային, ազգայ-

նական, արևմտյան, գվարդիական, հորդառատ, խոպան, հյուսիսային, վեհաշուք, շարքային, սիգապանծ:

228. *Տրված բառերով նախադասություններ կամ բառակապակցություններ կազմեցեք դրանք գործածելով թե՛ ածականի, թե՛ գոյականի արժեքով:*

Ավագ, բարբարոս, դավաճան, խավար, հերոս, հով, հսկա, մութ, առևտրական, վիրավոր, բանակային, ազնվական, հրշեջ, հանցագործ, պալատական, զինվորական, ապստամբ:

229. *Տրված գոյականները բառակապակցությունների մեջ գործածեցեք հատկանշային փոխաբերական նշանակությամբ:*
Նմուշ՝ փրփուր - փրփուր լավաշ:

Զմրուխտ, արծաթ, քար, առյուծ, դեզ, ծով, ծաղիկ, գոհար, վարդ:

230. *Տրված բառերով (կամ նրանց բառակազմական հիմքերով) կազմեցեք ածանցավոր ածականներ:*

Նուրբ, ողբալ, քաղաք, կարմիր, ուժ, հուր, թախիծ, աղետ, բույր, փառք, պողպատ, ածել, հարմար, արևմուտք, վախ, մեղմ, համ, վճար, պոչ, վստահել, գմբեթ, լեզու, գրավել, զրնգալ, ծարավ, ծև, կթել:

231. *Տրված վերջածանցավոր ածականները խմբավորեցեք ըստ բառակազմական նշանակությունների:*

Անիծյալ, լուսեղեն, մարմարե, վախկոտ, հանածո, լեզվանի, պղնձե, քնատ, հյութեղ, մտածկոտ, ծուլածո, գեղանի, շահավետ, հնչեղ, գունատ, պահանջկոտ, պողպատյա, բուրավետ, գունեղ, զորեղ, հրեղեն, պոչատ, բրածո, մեռյալ, հարմարավետ, յոթգլխանի:

հարակատար դերբայի իմաստ ունեն	*մի բան ունեցող*	*մի բանից ստացված պատրաստված՝ ծագած*	*մի բանով հարուստ՝ առատ*	*մի բանից զուրկ*	*մի բանի տրամադրված լինելու կամ ենթակայական դերբայի իմաստով*

232 *Տրված բաղադրիչներով կազմեցեք ածականներ:*

ա) ածանցավոր

Լույս, աղամանդ, սեր, հուր, համ, գույն, ծիծաղ, բախտ, դառն:

բ) բարդ

Քար, թեթև, երկինք, ազգ, արդյունք, բազում, ոսկի, արագ, ազատ, մեծ, մարդ, երկիր:

գ) բարդածանցավոր

Հին, օտար, դար, հարկ, հազար, գետին, գլուխ, դժվար:

233 *Համադրական բարդ ածականներ կազմեցեք հետևյալ կաղապարներով:*

ա) ածական + գոյական
բ) գոյական + գոյական
գ) գոյական + բայահիմք
դ) ածական / մակբայ + բայահիմք
ե) ածական + ածական

234 *Տրված ածանցներով կազմեցեք ածականներ և գոյականներ:*

	ածական	*գոյական*
-ան		
-ացի		
-իչ		
-ուտ		
-ենի		
-(ա)վոր		
-ուն		
-եղեն		

235 *Տրված բառերով կազմեցեք բարդ ածականներ և գոյականներ (առնվազն 2-ական):*

Գիր, մարդ, սիրտ, ատամ, հող, լույս, ցավ, սյուն, ջուր, կարգ, գլուխ, հուր, տուն:

236 *Հետևյալ բայերից կազմեցեք 1-ական ածական և գոյական: Յուրաքանչյուրի դիմաց գրեցեք որևէ հոմանիշ:*

Նմուշ՝ հմայել - հմայիչ, թովիչ, *հմայք,* թովչանք:

Համակրել, բուժել, զգվել, ծլվլալ, հուզել, ազդել:

237. *Գրեցեք հին հունական դիցաբանությունից եկած թևավոր խոսքեր, որոնցում լինեն տրված հատուկ անուններից կազմված ածականներ: Բացատրեցեք դրանց նշանակությունը:*

Ավգիոս, Աքիլլես, Գորդիոս, Դամոկլես, Դանայոս, Սիզիփոս (Սիզիֆ), Հերկուլես, Տրոյա, Տանտալոս:

238. *Գրեցեք -գույն բաղադրիչով գունանուններ :*

ա) բույսերի անուններից
բ) տարբեր առարկաների անուններից
գ) մետաղների անուններից

239. *Հետևյալ բառակապակցություններից կազմեցեք ածականներ և դրանք գործածեցեք որևէ գոյականի հետ:*

Վեճ հարուցող, հյուրին մեծարող, միշտ բխող, սիրտ կեղեքող, լուրջ մտածող, բույնն ավերված, աշխարհով մեկ ափռված, նոր տնկված, զարդերով նախշված, երկնքի մեջ մխրճված:

240. *Հետևյալ բառակապակցություններով և նրանցից առաջացած ածականներով նախադասություններ կազմեցեք:*
Նմուշ՝ բաց սիրտ - բացսիրտ:

Բարձր աստիճան, նման օրինակ, քար սիրտ, ոսկե օղ, տաք արյուն, լավ որակ, չար աչք:

241. *Փակագծերում դրված բառերից ածանցման միջոցով կազմեցեք ածականներ: Ուշադրություն դարձրեք բառերի ուղղագրությանը:*

Ա. 1. Առաջին (Ավստրալիա) թերթը լույս է տեսել 1824-ին: 2. Ավստրալիայի հարավային ափի մոտ՝ երկու հրվանդանների միջև, ընկած է (Ավստրալիա) մեծ ծոցը: 3. Ավստրալիայի հարավ-արևելքում գտնվող բարձրավանդակը՝ (Ավստրալիա) Ալպերը, Մեծ լեռնաշղթայի ամենաբարձր մասն է: 4. Գրենլանդիա և Իսլանդիա կղզիների միջև ընկած է (Դանիա) նեղուցը: 5. 19-րդ դարի կեսերի (Դանիա) պատմագրության բնորոշ առանձնահատկությունը սկանդինավիզմն էր՝ հին սկանդինավյան մշակութային ժառանգության փառաբանումը: 6. Դանիան գտնվում է Յուտլանդիա թերակղզու, (Դանիա) արշիպելագի և Բորնհոլմ կղզու վրա:

Բ. 1. Հայկական լեռնաշխարհի ընդարձակ հարթավայրերից մեկը՝ (Արարատ) դաշտը, շրջապատված է Արագած, Գեղամա, Արարատ և Հայկական պար լեռներով: 2. Երևանի, Ջուղայի, Նոր Բայազետի բարբառները մտնում են (Արարատ) բարբառախմբի մեջ: 3. Այս գինիները պատրաստված են (Արարատ) խաղողից: 4. (Ալպեր) լեռնաշղթան Միջերկրական ծովի ափերից ձգվում է մինչև Դանուբի դաշտավայրը: 5. Հայաստանում (Ալպեր) արոտներ կան Գեղամա լեռնաշղթայում, Զանգեզուրի լեռներում, Արագածի բարձունքներում: 6. Երիտասարդ լեռներն առաջացել են (Ալպեր) ծալքավորության հետևանքով:

242 *Կազմեցեք բառակապակցություններ՝ փակագծերում տրված գոյականները գործածելով սեռական հոլովով կամ նրանցից կազմելով հարաբերական ածականներ (գրեցեք նաև հնարավոր զուգաձևությունները):*

(Հունգարիա) ապրանք, (Հունգարիա) նախագահ, (դպրոց) քննություն, (դպրոց) ղեկավարություն, (նախագահ) աշխատակազմ, (նախագահ) նստավայր, (նախագահ) ընտրություններ, (Աստված) շնորհ, (Աստված) որդի, (Աստված) կամք, (գարուն) ավետաբեր, (գարուն) հեղեղ, (գարուն) տրամադրություն, (գարուն) գալուստ, (գիտություն) բնագավառ, (գիտություն) աշխատանք, (գիտություն) լեզու, (փիլիսոփայություն) հիմնադիր, (փիլիսոփայություն) խորհրդածություն, (պաշտոն) մարմաջ, (պաշտոն) չարաշահում, (պաշտոն) գրություն, (պատմություն) ֆակուլտետ, (պատմություն) քառուղիներ:

243 *Հետևյալ բառերի հետ դիպուկ լրացումներ գործածեցեք:*

ա) թարգմանություն	գ) գործիչ	ե) ընտրություն
բ) վերլուծություն	դ) շարժում	զ) բնակություն

244 *Հետևյալ բառերի հետ լրացումներ գործածեցեք:*

1. *-ական ածանցով*

ա) ոճ	գ) կյանք	ե) ժամանակաշրջան
բ) թերթ	դ) հաշվարկ	զ) բառարան

2. *-ային ածանցով*

ա) երկիր	գ) երեկո	ե) փոփոխություն
բ) զինվոր	դ) աշխատանք	զ) ցուցահանդես

3. *-ավոր ածանցով*

ա) արծակագիր բ) մարդ գ) ընկեր դ) կենդանի

245. *Ավելացրեք տեքստին համապատասխանող ածականներ:*

Ա. Երևում էին լեռները՝ իրենց հովիտներով, երևում էր քաղաքը՝ իր պարիսպներով ու աշտարակներով, երևում էին քաղաքի մինարեթներն ու եկեղեցիների գմբեթները, երևում էր միջնաբերդը՝ իր կերպարանքով, երևում էր ծովը՝ իր ալեբախությամբ:

Բ. Շավիղը, որով անցնում էին կանայք, տեղ-տեղ կորչում էր թփերի ու մացառների մեջ: Փշերը պատառոտում էին նրանց հագուստը և ծվատում մարմինը: Բայց նրանք շարունակում էին իրենց ճանապարհը: Անցնելով մի քանի կիրճեր ու դարուփոսեր՝ հասան մի քարայրի:

Գ. Առավոտ էր: Արեգակի ճառագայթներն անհետանում էին մառախուղի մեջ, որ պատել էր լեռների գագաթները: Անտառները դեռ մրափում էին մռայլի մեջ: Սարերը, դաշտերն ու հովիտները ընկղմված էին խավարի մեջ: Հեռվից բծերի նման երևում էին գեղջուկների տնակները:

246. *Բայական անդամի հետ գործածված ածականն ընդգծեցեք մեկ, գոյականի հետ գործածվածը՝ երկու գծով:*

Ա. Եվ մի իրիկուն զանգերի երգում
Լսեցի վճիտ խոստումները քո:
Կարծես թե հոգիդ իրիկվա միգում
Կանչում էր անտես... խաղաղ երեկո:

Ու ղողանջները կապույտում անծայր
Թիթեռի նման ճախրում էին դեռ -
Երբ հեռուներում զնգալով անցար,
Որպես մի ղողանջ, մի լուսե թիթեռ...

Անցար - լուսավոր, հեռավոր, թեթև,
Ճառագայթի պես իրիկնամուտի:
Իսկ սիրտս՝ տխուր, հոգնաբեկ, անթև,
Խմում էր իջնող տագնապը մութի...

Ե.Չարենց

Բ. Օվկիանոսի մեջ ծաղկեփնջի պես մի կղզի կար՝ մշտափթիթ ու բուրումնավետ: Եվ այնտեղ մահ չկար: Ապրում էին ծիլ ու թիթեռ, թև ու թռչուն միշտ պայծառ, միշտ ուրախ, և երբ մոտենում էր թառամելու վայրկյանը, իջնում էր անմահության ցողը նրանց վրա, և նորից մանկանում էին նրանք, թարմ ու զվարթ շողշողում:

....Մարդիկ ... գնում էին անմահության աղբյուրը, որ բխում էր հակինթե ժայռերի կրծքից, լողանում էին լուսեղեն ջրերի մեջ:

Եվ հաղթական կյանքը ծաղկում էր ամենուրեք, մահն անզոր էր մի տերևի վրա ձեռք դնել անգամ:

Ըստ Ավ. Իսահակյանի

247 *Ընդգծեցեք փոխանվանաբար գործածված ածականները:*

Ագահի աչքը մի բուռ հողը կկշտացնի:
Անբանը հաց ուտելիս առողջ է, բանելիս՝ հիվանդ:
Կուշտը սովածին մանր կբրդի:
Օձի սևն էլ անիծվի, սպիտակն էլ:
Մեծին չլսող ջահելի ոտը քարին կգա:

248 *Տրված նախադասություններում ընդգծված կապակցությունները փոխարինեցեք համապատասխան փոխանուն ածականով:*

1. Բնության մեջ եղած չորս տարրերը՝ կրակը, ջուրը, օդն ու հողն են *ամենից անհրաժեշտ, ամենից կենսական տարրերը*: 2. Խղճուկ սենյակի տափակ պատի փոխարեն անսահմանություն կնկարեմ՝ օգտագործելով մի հասարակ ֆոն՝ ամենահարուստ *կապույտ գույնից*: 3. Այսօր, երբ այդ աթոռին ես, մի՛ համարիր, որ դու ես *ամենաարժանավոր մարդը*: 4. Երփնագրի մեջ նա երաժշտություն է փնտրում և ասես լսում է, թե իր վրձնի տակ ինչպես են երգում *կանաչ, կարմիր, կապույտ գույների* տարբեր երանգները, իսկ *դեղին գույնի* մեղեդին հասնում է անհնարին թվացող ելևէջների:

249 *Տրված նախադասություններում փոխանուն ածականները փոխարինեցեք համարժեք կապակցություններով:*

1. Բնությունը կապույտը փռել է ծովի վրա, կանաչը հագցրել այգիներին ու անտառներին, այստեղ-այնտեղ էլ պատառներով դրել իր վառ կարմիրը: 2. Նա լավ տղա է, դեմ չեմ, բայց նմանի հետ չեմ ամուսնանա: 3. Թվում էր՝ մշտապես կանաչ այս երկրում էլ շուտով վրա կհասնի ծմեռը՝ իր ցերմակով, բուք ու բորանով: 4.Կանցնի որոշ ժամանակ, և տեսնելով նրա կտավները՝ մեղավորներն իրենց անմեղ կզգան, դժբախտները՝ բախտավոր:

250 *Հետևյալ ածականները փոխանվանաբար գործածեցեք նախադասությունների մեջ:*

Հին, ազնիվ, մեծ, գլխավոր, մանր, փայլուն, կապույտ, աջակողմյան, կենտրոնական, բանասիրական:

251. *Լրացրեք հետևյալ առածների ածականները՝ դրանք ընտրելով տրվածներից:*

Ճանր, պաղ, լավ, սև, անպտուղ, անուշ, զորավոր, շիտակ, արագար, ոսկե, լավ:

Լեզու կա .... է, լեզու կա՝ լեղի:
.... յուղը ջրի տակ չի մնա:
Սպիտակ փողը .... օրվա համար է:
Խելքը .... թագ է, ամեն մարդու գլխին չի լինում:
.... ծառին քար գցող չի լինի:
Հեռավոր սուրբը .... կլինի:
.... քարը իր տեղում կմնա:
.... աղջիկը յոթ տղա արժե:
.... խոսքը հանաքով կասեն:
.... հնձվորը դաշտում էլ կհնձի, սարում էլ:
.... ապուր, շան կերակուր:

252. *Տրված առածներում լրացրեք ածականները:*

.... ծառին քար գցող շատ կլինի:
.... հավը կչկչան կլինի:
.... լեզուն օձը բնից կհանի:
.... քարը ցեխի մեջ էլ գին ունի:
.... ձուն զատկին կսազի:
Նոր-նոր հավեր են դուրս եկել, ... ձվեր են ածում:

253. *Հետևյալ առածների մեջ լրացրեք հականիշ ածականը:*

.... աչքով աղջիկ առ, ջահելի աչքով՝ ձի:
Գիտունի հետ քար քաշիր, ... հետ փլավ մի՛ ուտիր:
Ծամը երկար, խելքը՝ ....
Թոկի երկարն է լավ, խոսքի՝ ....
Գիժը մի քար գցեց ծովը, հազար .... չկարողացան հանել:
Խոսքը մեծին, ջուրը՝ ....
Փորձված քանը .... մեծունից լավ է:
Սև սիրտ, ... խտամ:
Մինչև .... բարակի, բարակի հոգին դուրս կգա:
Հալալ մազը չի կտրվի, ... գերանը կկոտրվի:
Թանկից .... չկա:
Առյուծը առյուծ է՝ էգ լինի թե .... :
Հարուստը օձ կերավ, ասին՝ դեղ է, ... կերավ, ասին՝ սոված է:

254. *Բացատրեցեք ածական բաղադրիչ ունեցող հետևյալ շրջասություններ իմաստները: Գտեք այլ օրինակներ:*

ա) սև ոսկի
բ) սպիտակ ոսկի
գ) սպիտակ ջարդ
դ) օդային դարպասներ
ե) կաշվե ծեռնոցներ
զ) կանաչ դեղատուն

255. *Կետադրեցեք համր բնագիրը և ընդգծված ածականները փոխարինեցեք հոմանիշներով:*

Եփրատն այդ կողմերում արագընթաց էր ու աղմկաշատ: Նրա ջրերն անցնում էին զառիկող լանջերի նռան ու նշենու պուրակների հոնի թփուտների մոտով: Գետի զուլալ ջրերը ողողում էին ժայռոտ ափերը զարկվում պսպղուն որձաքարերին խշշում ու փրփրում:

Այնտեղ ուր հորդառատ Եփրատն ընդունում էր իր փոքր-ինչ պակավաջուր բայց նույնքան սրընթաց ու խռխռջուն վտակներից մեկը մի ահռելի քարաժայռ էր ելնում ուղղաձիգ լանջակողերով: Ժայռի երկնաբերձ կատարը եզերում էին բերդի հաստաբետ պարիսպները իսկ մուտքի մոտ մի դրոշ էր ծածանվում: Երբ քամին ուղղում էր կարմիր պաստառը դրոշի վրա զայտուն գծագրվում էին երկգլուխ արծիվը և կաթողիկոսական զինանշանի խաչը:

Բարձրաբերձ էր քարակերտ բերդն ու անառիկ: Կառուցել էին խոշոր կոպտատաշ քարաբեկորներից ամրացնելով կապարե հանգույցներով: Բազմաշտարակ ամրակուռ բերդ էր դա և ողորկ քարաժայռերն ու դեպի վեր տանող ճանապարհի մեծ թեքությունը առավել անմատչելի էին դարձնում այն: Դեպի ամրոց տանող գաղտնի անցումները հսկում էին կաթողիկոսի անվեհեր ու զգոն զինվորները որոնք թաքնվում էին թեք լանջերի խիտ թփուտների մեջ և թշնամիները երբեք չէին իմանում որ կողմից են տեղալու անթիվ նիզակներն ու նետերը:

Ամրոցը գտնվում էր Կիլիկիայից դուրս բայց նրա սահմանին շատ մոտ: Այդուհանդերձ հայ եկեղեցու սրբազան հայրերն իրենց նստավայրի համար ավելի լավ տեղ և նպաստավոր դիրք չէին կարող գտնել բերդն անվտանգ էր ու աղետի պահին միշտ կարելի էր դիմել հայրենակիցների օգնությանը: Բացի դրանից կաթողիկոսն աշխատում էր որքան կարելի է հեռու մնալ արքայից որն անչափ սիրում էր խառնվել եկեղեցու զանազան գործերին:

Բերդը կառուցել էին բյուզանդացիները և կոչել Հռոմկլա հունական ամրոց: Հետո այն ձեռքից ձեռք էր անցել հույներից արաբներին արաբներից հայոց իշխան Գող Վասիլին սակայն Հռոմկլա անունը մնացել էր անփոփոխ բերդը կանգուն: Դա Կիլիկիո հայոց կաթողիկոսի աթոռանիստն էր:

Ըստ Թ.Զուրաբյանի

ԹՎԱԿԱՆ

256. *Հետևյալ հատվածի մեջ գտեք թվականները, որոշեցեք նրանց տեսակները:*

Բառարան գրելը դժվարին ու տանջալից աշխատանք է: Եվրոպացի բառարանագիրներից մեկն ասել է. «Եթե որևէ դատավոր խիստ պատիժ է կամենում մեկին, թող դատապարտի նրան բառարան հորինելու»:

Մեծ բառարաններն ստեղծվել են տքնաջան աշխատանքի շնորհիվ, տասնյակ տարիների ընթացքում: Բավական է նշել, որ Վլ.Դալն իր "Толковый словарь живого великорусского языка" բառարանի վրա աշխատել է հիսուներեք տարի: Նոր Հայկազյան բառարանի վրա Գ.Ավետիքյանը, Խ.Սյուրմելյանը և Մ.Ավգերյանն աշխատել են շուրջ հինգ տասնամյակ (լույս է տեսել 1836-37 թթ. Վենետիկում. այն պիտի կազմեր 12 հատոր, բայց ֆինանսական դժվարությունների պատճառով դարձել է երկու ստվարածավալ հատոր. պարունակում է շուրջ 55 հազար բառահոդված): Ակադ. Հր. Աճառյանն իր քառահատոր «Արմատական բառարանի» վրա աշխատել է ավելի քան 40 տարի: Գրիմ եղբայրների ձեռնարկած գերմաներենի "Deutsches Wörterbuch" պատմական բառարանի առաջին հատորը լույս է տեսել 1854 թ., իսկ յոթերորդը՝ 1961-ին: Այդ բառարանի վրա աշխատել է հինգ սերունդ: Դանիերենի բացատրական բառարանի միայն տպագրության ընթացքը տևել է 112 տարի, իսկ եթե ավելացնենք նաև բառարանը կազմելու և անհրաժեշտ նյութեր հավաքելու նախապատրաստական աշխատանքները, որ սկսվել էին 1730-ական թվականներին, ապա այդ բառարանը կազմելու և հրատարակելու ընթացքը տևել է շուրջ երկու դար:

Բառարանային ամեն մի բառահոդվածի մշակումը պահանջում է երկար ու մանրազնին պրպտումներ: «Օքսֆորդի բառարանի» խմբագիրներից մեկը պատմում է, որ մի աշխատակից իրեն ասել է, թե 40 ժամ է անհրաժեշտ եղել to set «դնել, տեղավորել, զետեղել» բառահոդվածի նշանակությունները ճշտելու և բացատրելու համար: Խմբագիրն ավելացնում է, որ նույնքան ժամ պահանջվեց այդ բառահոդվածը խմբագրելու համար: Ի դեպ, այս բառարանի՝ "The Oxford English Dictionary"-ի (պարունակում է 400 հազ. բառահոդված) միայն խմբագրական աշխատանքները տևել են 70 տարի:

Ըստ Գ.Գասպարյանի

257. *Թվականների ո՞ր խմբերը չեն զետեղվում բառարաններում, և որո՞նք են տեղ գտնում նրանց մեջ:*

258. *Առանձնացրեք թվականները:*

Չորս հարյուր քսանութ, տասանոց, տասնօրյակ, միլիարդ, եռյակ, երեք հարյուր, քանիցս, երեքական, քսանմեկերորդ, երիցս, քիչ, ինչքան, հինգերորդ, հնգապատիկ, բյուրավոր, հինգ-վեց, հազարավոր,

առաջին, այսքան, վեց-վեց, հարյուրանոց, վերջին, մեկ հինգերորդ, երկու միլիոն, եռօրյա, քառակողմ, երկնիստ, երեք հարյուրերորդական:

259. *Հետևյալ թվականները խմբավորեցեք ըստ տեսակների:*

Տասնյոթ, երկու երրորդ, քառասունմեկերորդ, ինը-տասը, քսան-քսան, հիսուն-վաթսուն, մեկ, հարյուր քսանհինգ, հինգ միլիոն, ութսունական, առաջին, քառորդ, զրո, վաթսունհինգական, հազար, հազար հիսուն, մեկ հինգերորդ, երրորդ, տասներեքերորդ:

Քանակական				Դասական
բացարձակ	բաշխական	կոտորակային	մոտավորական	

260. *Փակագծերում տրված թվականներից ըստ անհրաժեշտության կազմեցեք դասական, բաշխական, մոտավորական թվականներ:*

Ա. (1) տպագիր գրքերը եղել են փայտափորագիր: Դրանցից հնագույնը համարվում է (12) տախտակից արտատպված այն գիրքը, որն ստեղծվել է Կորեայում (704-751) թվականների միջև ընկած ժամանակահատվածում: Քանի որ այդպիսի գրքերը հեշտ չէին ստեղծվում, մարդկանց շատ սերունդներ փորձում էին ստեղծել առանձին տառերից կազմված տպաձև: Դա հաջողվեց Յոհան Գուտենբերգին, որի գյուտն արագորեն տարածվեց աշխարհում, և (15) դարի վերջին արդեն գրքեր էին տպագրվում Եվրոպայի տարբեր քաղաքներում:

Բ. Հայկական տպագրության հիմնադիր Հակոբ Մեղապարտը (1512) թվականին լույս ընծայեց հայերեն (1) տպագիր գիրքը՝ «Ուրբաթագիրքը», որից (1) օրինակ պահպանվել է Երևանի ազգային գրադարանում և Ե.Չարենցի անվան գրականության թանգարանում: «Պատարագատետրի» (5) օրինակներից պահպանվել են (4)-ը, իսկ (5)-ը հրդեհի զոհ է դարձել Իզմիրում: Մինչև այժմ «Պարզատումարից» հայտնաբերված է (6) օրինակ, որոնցից (2)՝ Վիեննայի Մխիթարյան գրադարանում, (1) օրինակներ կան Երուսաղեմի Հայոց վանքի գրադարանում, Երևանի ազգային գրադարանում և Մաշտոցի անվ. Մատենադարանում:

Գ. (2) հայ տպագրիչը Աբգար Թոխաթեցին է, որը (1560) թվականներին նախ Վենետիկում, ապա Կոստանդնուպոլսում տպագրեց մի շարք գրքեր, այդ թվում հայերեն (1) տպագիր այբբենարանը:

(17) դարում հայկական տպագրություն հիմնվեց նաև այլ քաղաքներում՝ Լվովում, Նոր Ջուղայում, Ամստերդամում: Հատկապես կարևոր էր Ամստերդամի հայկական տպագրությունը: Այստեղ գործում էր հայ

տպագրիչների մի ամբողջ խումբ՝ Ոսկան Երևանցու ղեկավարությամբ: (26) տարվա ընթացքում՝ (1660-1686 թթ.), նրանք տպագրեցին մի շարք գրքեր այբբենարաններ, Վ.Այգեկցու «Աղվեսագիրքը», (1) տպագիր Աստվածաշունչը՝ (1222) էջանոց մի հսկա:

Դ. (1) դարի հռոմեացի բնագետ Պլինիոս Ավագը հավաստում է, որ Հայաստանից համաշխարհային շուկա արտահանվող հիմնական ապրանքների ցուցակն սկսվում էր որդան կարմիր ներկով: Այն ստացել են փոքրիկ կարմիր միջատից՝ հայկական որդան կարմիրից, որը տարածված է եղել Արարատյան դաշտում: Հայկական որդան կարմիրը ներկատու հայտնի միջատներից ամենախոշորն է: Նրա էգերը անթև են, ունեն (4-12) մմ երկարություն, իսկ արուները թևավոր են, և նրանց մարմնի երկարությունը (2-3) մմ է: Աշնանն էգերը դնում են (750-800) ձու, որոնցից ապրիլի վերջերին և մայիսի սկզբներին դուրս են գալիս թրթուրները: Զարգացման մի քանի փուլ անցնելուց հետո նրանք դառնում են հասուն միջատներ և աշնանը (35-40) օր շարունակ վաղ առավոտյան դուրս են գալիս հողի մակերևույթ: Հենց այդ ժամանակ էլ նրանց հավաքում են ներկ ստանալու համար:

261. ***Տրված թվականները խմբավորեցեք ըստ կազմության:***

Քսան, քառասուն, տասը-տասնմեկ, մեկուկես, երեսուներեք, տասնհինգերորդ, միլիոն, տասնմեկ, հիսուն, յոթ-յոթ, ութական, հարյուր երեք, հարյուր, երկու երրորդ, վաթսունվեց, հինգ-հինգ, ինսունական, քսանհինգական, հազար ինը հարյուր քսան, միլիարդ, յոթանասուն տասնհինգ-քսան, ինը, տրիլիոն:

Պարզ	Ածանցավոր	Բարդ		
		կցական	կրկնավոր	հարադրական

262. ***Թվականները գրեցեք բառերով:***

1. Իր ջրառատությամբ և ավազանի տարածությամբ (7.180.000 քառ. կմ) ամենամեծ գետի՝ Ամազոնի գլխավոր ակունքը սկիզբ է առնում 4840 մ բարձրությունից և մինչև գետաբերան հոսում՝ ընդունելով մոտ 500 վտակ, որոնցից 20-ն ունեն 1500-3500 կմ երկարություն: Գետի հոսանքի արագությունը 2,5 կմ/ժ է: 2. Ներկայումս աշխարհի տարբեր վայրերում հաշվվում են հայերեն շուրջ 25.000 ամբողջական և 4000 պատառիկ ձեռագրեր: 10.780 ամբողջական և 2000 պատառիկ ձեռագրեր պահվում են Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում: 3. Ըստ Հր.Աճառյանի հաշվումների՝ աշխարհաբար խոսքում հնչյունական կազմը այսպիսի տեսք ունի. ձայնավորներ՝ 41%,

բաղաձայններ՝ 59%, ուստի կարելի է ասել, որ հայերենը երաժշտական, փափուկ և հնչեղ լեզու է: 4. Լուսնի զանգվածը Երկրի զանգվածի 1/81 մասն է: Երկրի մակերևույթի միջին ջերմաստիճանը 14,8^0 է: 5.Շուրջ 500 մլն տարի առաջ օրվա տևողությունը եղել է 20,8 ժամ:

263. *Լրացրեք տառերի թվային արժեքները:*

Ա	Ժ	Ճ	Ռ
Բ	Ի	Մ	Ս
Գ	Լ	Յ	Վ
Դ	Խ	Ն	Տ
Ե	Ծ	Շ	Ր
Զ	Կ	Ո	Ց
Է	Հ	Չ	Ւ
Ը	Ձ	Պ	Փ
Թ	Ղ	Ջ	Ք

264. *Տառերով արտահայտված թվականները գրեցեք թվանշաններով կամ բառերով:*

Ա. 1. Մ.թ.ա.189 թվականին, երբ Արտաշես Ա-ն հիմնադրեց Մեծ Հայքի թագավորությունը, Արմավիրը դարձավ նրա մայրաքաղաքը: 2. Հայ իրականության մեջ դասական պատմավեպի հիմնադիրը Ծերենցն է, որի ստեղծագործություններից բացառիկ գեղարվեստական արժեք է ներկայացնում «Երկունք Թ դարու» վեպը: 3. 1868 թվականին Կոստանդնուպոլսում Տիգրան Չուխաջյանն ստեղծել է հայկական ազգային առաջին՝ «Արշակ Բ» օպերան:

Բ. Առաքել Դավրիժեցին (ԺԷ դար) անցյալի պատմությունը գրելիս օգտագործել է իր ձեռքը հասած բոլոր վավերագրերը: Իր գրքի ՃԵ գլուխը մի համառոտ ժամանակագրություն է, որն սկսվում է 561 թվականով և վերջանում 1665-ով: Պատմիչը կարգավորում է հիշյալ ժամանակագրությունը, ճշտում դեպքերի հաջորդականությունը և լրացնում իր օրերի ժամանակագրությամբ: Այդպիսի գրավոր հիշատակարանների արդյունք են Լ, ԼԲ, ԼԶ, ՃԱ և այլ գլուխներ:

265. *Տրված նախադասություններում թվականները գրեցեք՝*

ա) արաբական թվանշաններով

1. Հայոց եկեղեցին զանգերի գործածությունն սկսել է տասներորդ դարի երկրորդ կեսից: 2. Հայ գրչության առաջին կենտրոնը Վաղարշապատն է, որտեղ հինգերորդ դարից սկսած՝ գրվել, բազմացվել և Հայաստանի տարբեր կողմեր են առաքվել հայերեն ձեռագրեր: 3. Հազար ութ

հարյուր քսանինը թվականի սեպտեմբերի տասներկուսից տասներեքի և տասնութից տասնինների անհաջող փորձերից հետո սեպտեմբերի քսանյոթին Ֆրանսիացի բնախույզ, բժիշկ և ֆիզիկոս Ֆրիդրիխ Պարրոտը, Խաչատուր Աբովյանը, երկու հայ գյուղացի և երկու ռուս զինվոր լեռնագնացության պատմության մեջ առաջին անգամ հաղթահարել են Մեծ Մասիսի գագաթը, իսկ հոկտեմբերի քսանյոթին բարձրացել Փոքր Մասիս:

բ) հռոմեական թվանշաններով

1. Չորրորդ դարի ասորի եպիսկոպոս Հակոբ Մծբնացին պատմությանը հայտնի առաջին անձնավորությունն է, որը փորձել է բարձրանալ Արարատ լեռը: 2. Հայաստանում հավանաբար առաջին անգամ մ.թ.ա. երկրորդ դարում Գառնիի պարիսպներում է կրաշաղախն օգտագործվել որպես լիցք: 3. Կրաշաղախի լայն օգտագործումը հնարավորություն է տվել չորրորդից յոթերորդ դարերում ստեղծել բազմազան հորինվածքներ ունեցող կառուցվածքներ:

գ) հայերենի այբուբենի տառերով

Մխիթար Գոշի առակներում արտացոլված է հոգևոր և աշխարհիկ դասերի պայքարը. հետաքրքրական են ժողովածուի 6-րդ, 114-րդ, 121-րդ, 104-րդ առակները: Գոշի կարծիքով տարբեր ժամանակներում տարբեր արհեստներ կարող են մեծարելի լինել (168), ըստ որում նրանցից «հասարակաց օգտակարն պատուական է», քանի որ չկա «ոչինչ պատուական, քան զհասարակաց օգուտն» (67):

266. *Թվականի հետ գոյականն ի՞նչ թվով է գործածվել և ինչո՞ւ:*

1. Մատենադարանի ամենամեծ ձեռագիրը կազմված է հորթի ավելի քան 600 կաշվից: 2. XI դարի վերջին տասնամյակներից Կիլիկիայում հայկական թագավորության ստեղծումը նպաստեց միջին գրական հայերենի դիրքերի ուժեղացմանը, իսկ XII-XIV դարերում այն, իբրև պետական լեզու, նորմավորվեց և միասնականացավ: 3. Գերմանացի լեզվաբան Հ.Հյուբշմանը ճիշտ ստուգաբանել է հայերեն 1971 հասարակ անուն և 217 հատուկ անուն: 4. Հր.Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» տեղ գտած շուրջ 11.000 արմատական բառերից, ըստ Գ.Ջահուկյանի հաշվումների, ժամանակակից հայերենում գործածական է շուրջ 4000-ը: 5.Պ.Սևակն իր չափածո ստեղծագործություններում գործածել է 14.200 բառ, ստեղծել 1150 նոր կազմություններ: 6. Մեծանուն երաժիշտը, անհուն կարոտը սրտում, 15 տարի ապրեց հայրենիքից հեռու: Այդ 15 տարիներն այնուամենայնիվ լի էին ստեղծագործական վերելքներով ու վայրէջքներով: 7. Տարբեր մատենադարանների մոտավորապես 200 հայերեն գրչագրեր պարունակում են առակների ամբողջական ժողովածուներ կամ մասնակի ընդօրինակություններ: 8. 1512-1513 թթ. Հ. Մեղապարտը հավանաբար լույս է ընծայել 6 գիրք, որոնցից այժմ պահպանված է 5-ը: 9. Նույն խնդիրը հազար ու մի լուծում է ունենում:

267. ***Փակագծերում տրված գոյականները գործածեցեք եզակի կամ հոգնակի թվով:***

ա) XIII դարի 50-60-ական (թվական) Թորոս Ռոսլինն ապրում էր ստեղծագործական ամենածաղկուն շրջանը: 12 (տարի) ընթացքում (1256-1268 /թվական/) նա պատկերազարդում է 7 տարբեր (ձեռագիր), որոնցից 5 (ձեռագիր) ինքն էլ արտագրել է:

բ) «Օգուտ բժշկութեան» գրքում Ամիրդովլաթ Ամասիացին ընդարձակ էջեր է նվիրել մարդակազմությանը: Ըստ նրա, տղամարդու կմախքը կազմված է 248, կնոջը՝ 252 մեծ ու փոքր (ոսկոր): Ամիրդովլաթը կռահել է մարդու 5 (զգայարան) և գլխուղեղի ֆիզիոլոգիական համագործակցությունը: Նա ճշտել է նաև 300 կարևոր (դեղամիջոց) հատկությունները և այբբենական սկզբունքով կազմել դեղագիտական հանրագիտարան՝ դեղամիջոցներից յուրաքանչյուրն անվանելով 5 տարբեր (տերմին)՝ հայերեն, լատիներեն, ֆրանսերեն, արաբերեն և պարսկերեն:

գ) Հեթանոսական շրջանից են գալիս հին հայկական ամսանունները, որոնք Հայաստանում գործածվել են նաև միջին դարերում: Ըստ որում հայերն ունեցել են ոչ թե 12 (ամիս), ինչպես այժմ է, այլ 13 (ամիս): 12 (ամիս) յուրաքանչյուրն ունեցել է 30 (օր), իսկ հավելյալ ամիսը՝ 5: Նախաքրիստոնեական հայկական տոմարում անուններ են ունեցել ոչ միայն 13 (ամիս), այլև ամսվա 30 (օր) ամեն մեկը և նույնիսկ օրվա ժամերը: Ա. Շիրակացու «Պատճէն տումարի» աշխատության մեջ բերված են ամիսների, օրերի և օրվա 24 (ժամ) հայկական անունները:

268. ***Փոխանուն թվականները փոխարինեցեք համապատասխան կապակցություններով, իսկ շղատառով կապակցությունները՝ փոխանուն թվականներով:***

Ա. 1. Տիգրանյանը քառասունհինգին մոտ մարդ էր՝ սպիտակող քունքերով: 2. Սիա չորսը հասան ինքնաթիռին ու բարձրացան աստիճաններով: 3. Նա տխուր մտածեց, որ իր տղան էլ կարող էր այդ հինգի մեջ լինել: 4. -Աղջիկս երեք հրաշալի զավակ ունի, սակայն չորրորդի մասին մտածել անգամ չի ուզում,-ցավով ասում էր մայրը: 5.Քսանութից գրականությունն իրենց չսիրած առարկան էին համարել տասնութը:

Բ. 1. Վտանգի պահին ոչ թե մեր սովորական հինգ զգայարանները, այլ միայն *վեցերորդ զգայարանն* է օգնում ճիշտ կողմնորոշվելու: 2. Ուսուցիչները նստել էին երկար սեղանի շուրջը. մի քանիսը գրավոր էին ուղղում, *երկու ուսուցիչ* շախմատ էին խաղում: 3. Կատարվածի մասին *չորս մարդ* գիտեն, և ինձ թվում է՝ *հինգերորդ մարդը* չի իմանա: 4. Քո *տասներորդ դասարանն* այս տարի ավարտում է, մյուս տարի քեզ երկու իններորդ դասարան կտանք:

269. *Հոլովեցեք երկու, տասը, երրորդ թվականները և գործածեցեք նախադասությունների մեջ:*

270. *Հետևյալ բառակապակցություններից կազմեցեք՝*

ա) ածականներ

Չորս սյուն ունեցող, երեք օրվա, երեք անկյուն ունեցող, երկու դեմք ունեցող, չորս տարվա, հինգ հարկ ունեցող, ութ տարեկան, երկու ժամվա, երկու կենսակերպ ունեցող (երկու տարբեր միջավայրերում ապրող), մի աչք ունեցող, վեց ամսվա, յոթ գլուխ ունեցող, երկու կողմ ունեցող, հազար տարվա:

բ) գոյականներ

Տասն օր, հինգ տարի, մեկ ամիս, ութ ոտք ունեցող, հարյուր տարի, յոթ ամիս, ութ հոգուց բաղկացած, հազար տարի, չորս ոտք ունեցող (կենդանի), չորս հոգուց բաղկացած, երեք ամիս, երեք հոգուց բաղկացած, երեք ոտք ունեցող:

271. *Լրացրեք համապատասխան թվականները:*

Ուզողի .... երեսը սև, չտվողի ....-ը:
.... չափիր, ... կտրիր:
Գիտունին՝ ...., անգետին՝ ....:
Մի ունեցիր .... դահեկան, ունեցիր .... բարեկամ:
.... մատիցդ որ մեկը կտրես, արյուն դուրս կգա:
Բերնեբերան, ... բերան:
.... խելքը լավ է, ... ավելի լավ:
Հերոսը .... անգամ է մեռնում, վախկոտը՝

272. *Լրացրեք անհրաժեշտ թվականները (բառերով կամ թվերով):*

ա) Լեզվաբաններն ընդունում են հայերենի զարգացման հետևյալ փուլերը՝ նախագրային հայերեն (կազմավորման շրջանից մինչև .... դարը), հին հայերեն կամ գրաբար (.... դարից մինչև դարը), միջին հայերեն (.... - .... դդ.), աշխարհաբար կամ նոր հայերեն (.... դարից մինչև մեր ժամանակները):

բ) Մեսրոպ Մաշտոցը հայոց գիրն ստեղծել է .... թվականին: Հայոց այբուբենն ունի տառ՝ հնչույթի համար (.... ձայնավոր և բաղաձայն):

գ) Ըստ Հր.Աճառյանի տվյալների՝ հայերենում հնդեվրոպական արմատների թիվը հասնում է շուրջ ....-ի, հետագա ուսումնասիրությունների տվյալներով դրանց քանակն անցնում է ....-ից:

դ) Գրաբարով են ստեղծագործել քերթողահայր Մովսես Խորենացին, Եղիշեն (.... դ.), Դավիթ Անհաղթը (.... դդ.), Անանիա Շիրակացին (.... դ.), Գրիգոր Նարեկացին (.... դ.) և ուրիշներ, միջին հայերենով՝ Մխիթար Հերացին (.... դ.), Մխիթար Գոշը և Վարդան Այգեկցին (....դդ.), Նահապետ Քուչակը (.... դ.) և այլք: Հայ միջնադարյան գրականության վերջին ներկայացուցիչը Սայաթ-Նովան է (.... դ.):

273. *Գրեցեք տրված կայուն բառակապակցությունների իմաստները: Դրանցով նախադասություններ կազմեցեք:*

ա) առաջին մեծության աստղ
բ) երկրորդ ջութակ
գ) երրորդ աշխարհի երկրներ
դ) չորրորդ իշխանություն
ե) սայլի հինգերորդ անիվ
զ) վեցերորդ զգայարան
է) յոթերորդ երկինք
ը) ութերորդ հրաշալիք

274. *Տեքստը պարբերությունների բաժանեցեք (հարկ եղած դեպքում նաև համարակալեցեք): Ձևավորման ի՞նչ տարբերակ կարող եք առաջարկել:*

ՀԱՅՈՑ ԱՄՍԱՆՈՒՆՆԵՐԸ, ՕՐԱՆՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԱՆՈՒՆՆԵՐԸ

Հեթանոս հայերը (պարսիկների և եգիպտացիների նման) ունեցել են ոչ թե 12 ամիս, այլ 13, որից 12-ը երեսնական օրով, իսկ մեկը՝ 5 օրով: Հայկական ամիսներն ունեցել են հետևյալ անունները՝ Նավասարդ, Հոռի, Սահմի, Տրե, Քաղոց, Արաց, Մեհեկան, Արեգ, Ահեկան, Մարերի, Մարգաց, Հրոտից, Ավելյաց: Հայկական տոմարում անուններ են ունեցել ոչ միայն ամիսները, այլև ամսվա բոլոր օրերը: Հայոց օրանուններն են՝ Արեգ, Հրանդ, Արամ, Մարգար, Ահրանք, Մազդեզ, Աստղիկ, Միհր, Ձոպաբեր, Մուրց, Երեզկան, Անի, Պարխար, Վանատուր, Արամազդ, Մանի, Ասակ, Մասիս, Անահիտ, Արագած, Գրգուռ, Կորդուիք, Ծմակ, Լուսնակ, Ցրոն (Սփյուռ), Նպատ, Վահագն, Սիմ, Վարագ, Գիշերավոր: Հայկական ամսօրերից ամեն մեկը նվիրված է եղել հայկական հեթանոսական աստվածներին՝ Արեգ, Աստղիկ, Միհր, Անահիտ, սրբազան համարված վայրերին՝ Անի, Մասիս, Արագած և այլն: Հին հայկական տոմարում իրենց անուններն են ունեցել օրվա 24 ժամերը: Գիշերային ժամեր՝ Խավարակ, Աղջամուղջ, Մթացյալ, Շաղավոտ, Կամավոտ, Բավական, Խավթափյալ (Հավթափյալ), Գիզակ, Լուսաճեմ, Առավոտ, Լուսափայլ, Փայլածու: Ցերեկային ժամեր՝ Այգ, Ծայգ, Ձորացյալ (Ձայրացյալ), Ճառագայթյալ, Շառավիղյալ, Երկրատես, Շանթակալ, Հրակաթ, Հուրթափյալ, Թաղանթյալ, Առավար, Արփող: Ինչպես ուրիշ ժողովուրդներ, այնպես էլ հայերը օրը ժամերի բաժանելուն անցնելուց առաջ հնագույն ժամանակներում այն սովորաբար բաժանել են պահերի: Ցերեկը և գիշերը ունեցել են երեքական պահ՝ յուրաքանչյուրը չորսժամյա տևողությամբ: Նշվում են հետևյալ հավանական անունները: Ցերեկային պահեր և դրանց մասերը՝ առաջին պահ՝ Արշալույս, Այգ և Լուսադեմ,

Աղոթարան, երկրորդ պահ՝ Առավոտ, երրորդ պահ՝ Երեկո, Արևմուտք: Գիշերային պահեր և դրանց մասերը՝ առաջին պահ՝ Խաղաղական, Ցայգ, երկրորդ պահ Գիշեր, Հասարակ կամ Խոր գիշեր, երրորդ պահ՝ Հավախոս:

275. *Կարդացեք բանաստեղծությունը և մանրապատումը:*
ա) Գտեք գոյականներն ու ածականները:

ԱՐՑՈՒՆՔ

Խորհրդավոր է իմ ծնունդն այնպես...
Ցավից եմ ծնվում,
Ուրեմն պիտի ցավի սև կաթիլ
Ու տառապանքի սև ցող լինեի,
Կարմիր-լինեի, ինչպես ճիչն արյան,
Կամ դեղին, ինչպես լեղին մորմոքի...
Սակայն վճիտ եմ
Իբրև աստղի ցող:
Երևի անհայտ իմ ճանապարհին
Անցնում մարդկային տաք սրտի միջով,
Այնտեղ եմ թողնում
Իմ սևն ու լեղին,
Այնտեղ եմ թողնում
Ալ ճիչը արյան
Եվ հետո միայն հասնում աչքերին:
Ու չեմ զարմանում, որ սիրտը մարդու
Ճաքում է հանկարծ
Ու պատառոտվում...

Վ. Դավթյան

բ) Գտեք թվականները, որոշեցեք տեսակները:

Արցունքը անգույն հեղուկ է՝ բաղկացած իննսունութ ամբողջ մեկ տասնորդական տոկոս ջրից, մեկ ամբողջ քառասունվեց տոկոս օրգանական աղերից և զրո ամբողջ չորս տասներորդական տոկոս սեղանի աղից:

Բայց արդյո՞ք այդպես է:

Օ՜, եթե արցունքներն իրենք լեզու առնեին և ասեին, թե ինչ են իրենք իսկապե՜ս...

Դ. Դեմիրճյան

գ) Շարադրություն գրեցեք տրված թեմաներից որևէ մեկով:

1. Երջանկության արցունքները
2. Հիշում եմ տատիս գաղտնի արցունքները
3. Եթե արցունքները լեզու առնեին

ԴԵՐԱՆՈՒՆ

276. ***Գտեք դերանունները, որոշեցեք նրանց տեսակները:***

Թե ինձանով է իմ կյանքն սկսվում, երա՛կ իմ արյան,
Որտեղի՞ց քո մեջ վայրենի թախիծն այս քարեդարյան:
Թե ամենայն ինչ ցնդում է, ինչպես մշուշն ու քամին,
Ինչու՞ եմ հապա դեռ սիրահարված ես Շամիրամին:
Ինչու՞ եմ, ասա՛, դեռ այսքան խոցված, այսքան կարեվեր,
Սեփական խաչս ուսերիս առած՝ ելնում սարն ի վեր:

.

Թե ինձանով է ավարտվում, իրոք, կյանքն իմ սեփական,
Ինչու՞ է հապա իմ մեջ մորմոքում մթին ապագան...

* * *

Ես ամեն գիշեր գնում եմ այնտեղ,
Կանգնում եմ այնտեղ ու ոգիանում...
Ու պետք չէ ինձ մոմ, ու պետք չէ կանթեղ,
Մի ուրիշ լույս եմ ես ինձ հետ տանում:
Տունս կքել է իր բախտին հլու,
Մանկության բույր է օդում թրթռում...
Այնքան բան ունենք իրար ասելու
Եվ դրա համար լռում ենք, լռում:
Ահագնանում է լռությունն այդ մեծ,
Ժամանակն անգամ իր շունչն է պահել,
Գիտեմ, չի լսել նա այլ մի անեծք,
Որ այդքան լուռ է ու այդքան ահեղ...

Վ. Դավթյան

277. ***Հետևյալ դերանունները դասավորեցեք ըստ տեսակների:***

Միմյանց, ով, այդտեղ, միևնույն, ուր, որոշ, դա, այսչափ, ամեն, **ինչ-որ**, այլ, սույն, դու, ինչ, յուրաքանչյուր, ոմն, մեկը, ոչ ոք, նա, իրար, **քանի**, համայն, նույն, ես, որ, ինչպիսի, բոլոր, մյուս, ինքս, մեկմեկու, երբ, որքան, ինքդ, ամենայն, ուրիշ, ոչինչ, այսինչ, ինքը, ինչ-ինչ, ոչ մի, որևէ, ոչ մեկը, որևիցե, մի քանի, այնքան, սա, այսպիսի:

անձնա-կան	*ցուցական*	*փոխա-դարձ*	*հարցաքա-ռաբերա-կան*	*որոշյալ*	*անորոշ*	*ժխտական*

278. *Բաց թողնված տեղերում գրեցեք անձնական դերանուններ:*

1. Հայտնվեցին հովիվները. մեկը կրակի մոտ նետեց եղջյուրը փշրված մի այծ: 2. Մարդը շարունակեց ճանապարհը: 3. Մի պահ թվաց, թե արևն .... շռայլ ճառագայթները հավաքեց այսօրվա վրայից: 4. Լևոնը նկատեց բժշկին ու .... վախից կորցրեց: 5. Բժիշկը էլ չնկատեց, թե ինչ հուշեց 6. Ոտքի կանգնեցինք ու կամաց-կամաց շարժվեցինք, իսկ աղջիկները չհետևեցին մնացին պուրակում: 7 Ծերունին չէր վշտանում, որ մարդիկ չեն նկատում ...., թեև .... կուզեր ժպտալ, խոսել հետ: 8. երկուսով գնացեք, իսկ հետո կմիանամ ...,-ասաց Գևորգը՝ նայելով մեկ ինձ, մեկ Դավթին:

279. *Անձնական դերանունները խմբավորեցեք ըստ հոլովվելու հատկանիշի:*

Հոլովվող		Չհոլովվող
դերանվանական	անվանական	

280. *Ես, դու, նա/ ինքը դերանունները գործածեցեք հետևյալ կապերի հետ:*

ա) հետո, պես, հետ, համար, առաջ, մասին, մոտ
բ) նման, չափ, բացի, վրա, փոխարեն, մեջ

281. *Նախադասություններ կազմեցեք ես, ես ինքս, ինքս անձնական դերանուններով և բացատրեցեք նրանց իմաստային-ոճական առանձնահատկությունները:*

282. *Բացատրեցեք անձնական դերանվան՝ հոգնակի թվով գործածվելու իմաստային-ոճական նշանակությունը:*

ա) Գրքի առաջաբանում հեղինակը գրում է. «Այս գործին մենք ձեռնամուխ ենք եղել տակավին երիտասարդ տարիքում...»:

բ) «Սիրելի՛ ուսուցիչ, Ձեզ գրում է Ձեր խոնարհ աշակերտը: Հնարավոր է, որ Դուք մոռացած լինեք ինձ՝ հազարավորներից մեկիս, բայց Ձեզ ես չեմ կարող մոռանալ»:

գ) Այդ օրվա անչափ տհաճ բացահայտումից հետո լաբորատորիայի վարիչ Վարդան Հունանյանն այսպես դիմեց իր ընկերոջը.

-Այսուհետև Դուք կարող եք մենակ շարունակել գործը. մեր ճանապարհները բաժանվեցին:

դ) Արքայի հրովարտակում գրված էր. «Ի լուր ամենքի, այսօրվանից մենք թեթևացնում ենք ժողովրդից գանձվող հարկը»:

283. *Քաղաքավարական հոգնակիի տարբեր հոլովաձևերով մի երկտող գրեցեք, որ ուղղված լինի հանրահայտ երգչի կամ որևէ պարբերականի խմբագրի:*

284. *Գեղարվեստական գրականությունից օրինակներ բերեք, որոնցում անձնական դերանունները գործածված լինեն կենդանիների և իրերի անունների փոխարեն:*

285. *Բառեր կազմեցեք **ինքն, յուր** և **ես** դերանուններով:*

286. *Ցուցական դերանունները խմբավորեցեք ըստ հետևյալ գծապատկերի:*

առարկա մատնանշող դերանուններ	առարկայի հատկություն մատնանշող դերանուններ	գործողության հատկանիշ մատնանշող դերանուններ

287. *Մա, դա, նա դերանունների իմաստային յուրահատկությունները բացատրեցեք համապատասխան նախադասությունների միջոցով:*

288. *Ցուցական դերանունները խմբավորեցեք ըստ հոլովման տիպի:*

անվանական	դերանվանական	չեն հոլովվում

289. *Նախադասություններ կազմեցեք՝ **այս, այդ, այն** դերանունները գործածելով հատկանշային և առարկայական նշանակություններով:*

290. *Բաց թողնված տեղերում գրեցեք՝*

ա) ցուցական դերանուններ

1.Ա՜խ, որքան հաճախ ենք .... վարվում: 2. Առավոտյան գնում են նրա սենյակը, բայց նրան չեն գտնում: 3. Անցյալ տարի գարնանը վարդերի ծիշտ մի փունջ էլ կնոջս նվիրեցի: 4.Մարդիկ .... են գալու տարբեր ճանապարհներով, բայց հեռանալիս .... ուղին են բռնելու: 5. գունազարդ էին ...., ... գեղեցիկ, որ թվում էր՝ ծիածանն է երկնքից իջել: 6. բուժքույրը քննիչին ասաց, որ հիվանդի կինը ցերեկն էլ է նրա մոտ անցկացնում, գիշերն էլ:

բ) փոխադարձ դերանուններ

1. Մարդիկ ակնածանքով ճանապարհ էին տալիս անծանոթ երիտասարդին, քչփչում հետ: 2. Հեռու հորիզոնում ինչ-որ գիծ նորից բաժանել էր .... ծովն ու երկինքը: 3. Գլխարկն այնպես էր նստել գլխին,

ասես այդ գլուխն ու գլխարկը .... համար էին ստեղծվել: 4. Տարբեր երկրներում ապրող գիտնականները վաղուց էին հետաքրքրվում ... :

291. *Հարցական դերանունները խմբավորեցեք ըստ համապատասխան հարաբերակցության:*

Դերանունը հարաբերակից է			
գոյականին	*ածականին*	*թվականին*	*մակբային*

292. *Կարդացեք բնագիրը և նրանից բխող հարցեր ձևակերպեցեք՝ օգտագործելով հարցական դերանուններ:*

Ա. Միջնադարյան Հայաստանում վանքերը հարուստ տնտեսություններ ունեին: Ամառվա ամիսներին վանքապատկան անասուններին քշում էին լեռնային արոտավայրերը: Լեռնային վատ ճանապարհների պատճառով շատ դժվար էր ամեն օր կաթը վանք հասցնել: Հնարավորության դեպքում տվյալ վայրում կառուցում էին կաթնամուղներ՝ թրծած կավից խողովակաշարեր: Այդպիսին կար Բյուրականում, որը էջմիածնի վանքի ամառանոցն էր: Անասուններն արածում էին Արագածի լանջերին, որտեղից էլ կաթը խողովակներով ուղարկվում էր Բյուրական:

Բ. Վաղուց, շատ վաղուց մի արքայադուստր էր ապրում: Եվ ահա մի օր նա որոշեց ճանապարհորդել: Նրա ուղևորության մասին չինական հնագույն տարեգրություններում ոչինչ չէր պահպանվի, եթե արքայադուստրը գեղեցիկ ծաղիկներով զարդարված զարմանալի գլխարկ դրած չլիներ: Ծաղիկների մեջ թաքցված էին մետաքսի բոժոժներ: Դրանք արքայադուստրը տանում էր Հնդկաստանում ապրող իր սիրեցյալի համար:

Այս դեպքը կատարվել է մ.թ.ա. XV դարում և գաղտնիքի առևանգման առաջին օրինակներից մեկն է:

293. *Հարցական դերանունները խմբավորեցեք ըստ հոլովման տիպի:*

անվանական	*դերանվանական*	*չհոլովվող*

294. *Բաց թողնված տեղերում գրեցեք հարցահարաբերական դերանուններ:*

1. Հիմա ենք հասկանում, թե .... անտարբեր ենք եղել այդ մարդու հանդեպ: 2. .... ձեռքով են կառուցվել այս շենքերը, պողոտաներն ու փողոցները: 3. Զարմանքով նայում ես շուրջդ ու մտածում, թե է կյանքն այսպիսին դարձել: 4. Միայն նա կասի՝ է կատարվել այստեղ: 5. .... լավ կզգար այդ մարդն իրեն, ... կխաղաղվեր նրա փոթորկ-

ված հոգին: 6. կասի, թե մեր քաղաքում հայտնվեցին այդ փոխադրամիջոցները: 7.-Ներեցե՛ք,-դիմեց նա վշտահար մորը,-հիվանդը Ձեր երեխան է: 8. Դեպի վանք տանող ճանապարհներն անցնում էին նեղ արահետներով, անհատակ վիհի եզրերով, հազիվ մի մարդ կարող էր անցնել: 9. Սա մի անգնահատելի գանձ է, Դուք պարգևեցիք ինձ: 10.Երանի նրան, հայրենական հարկի տակ հանգչում է հիմա:

295. *Հետևյալ նախադասություններում որոշեցեք ինչ դերանվան նշանակությունները՝ դրանք արտահայտող միավորներն ընտրելով տրվածներից:*

Ինչպիսի, ինչքան, ո՛չ...ո՛չ..., թե՛ թե՛, ինչու՞, մի՞թե, ա՛յ թե, որ, երբ/հենց:

ա) –Ի՞նչ պիտի վճարեմ այս թանկարժեք քարերի համար,- հետաքրքրվեց տիկինը:

բ) Ի՞նչ երգ, ի՞նչ մեղեդի. աղմուկ էր ու ճիչ:

գ) –Ի՞նչ, դուք կարծում եք, թե չենք կռահել գիշերվա անցուդարձի պատճառը,-խորամանկ ժպտաց նա:

դ) Ինչ ես, ինչ դու ստել չենք կարողանում:

ե) Պա՛հ, ինչ էլ միամիտն ես:

զ) –Ի՞նչ ես խեթ-խեթ նայում ինձ,- զարմացավ տանտերը:

է) Չորրորդ օրն է, ինչ շարունակվում է հանքափորների գործադուլը:

ը) Ինչ սկսվեցին այս անձրևները, քույրս հանգիստը կորցրեց:

թ) Երիտասարդը դուրս նայեց և բացականչեց.
-Ի՞նչ հիասքանչ տեսարան է:

296. *Բառակապակցությունների փոխարեն հետևյալ հարցերին պատասխանող բառեր գրեցեք:*

Ո՞վ	*Ի՞նչ*
ա) թանկարժեք քարեր վաճառող	ա) կաթողիկոսի նստավայրը
բ) նույն երկրի քաղաքացիներ	բ) իր վրա ինքնաթիռ ունեցող նավ
գ) ծեռագիր մատյաններ արտագրող	գ) մահվան մասին տեղեկացնող հայտարարություն
դ) դատարանի վճիռն ի կատար ածող պաշտոնյա	դ) վիրաբուժական սուր դանակ
ե) ծաղիկներ աճեցնող, նրանց նոր տեսակներ ստացող մարդ	ե) բենզին փոխադրող մեքենա
զ) կառավարության ղեկավարը	զ) տաք և չոր քամի

297. *Որքան, ինչպիսի, ինչ, քանի դերանունները նախադասությունների մեջ գործածեցեք հարցական և բացականչական հնչերանգներով:*

298. *Ով, ինչ, որ, երբ դերանունները նախադասությունների մեջ գործածեցեք հարցում արտահայտող և նախադասություններ կապակցող բառերի արժեքով:*

299. *«Անպատասխան հարցեր» վերնագրով փոքրիկ շարադրություն գրեցեք՝ գործածելով հարցական դերանուններ:*

300. *Որոշյալ դերանունները խմբավորեցեք ըստ նրանց արտահայտած իմաստների:*

Որոշյալ դերանուններ, որոնք ցույց են տալիս՝	
առարկաների, նրանց քանակի ընդհանուր ամբողջությունը	
առարկաների, նրանց քանակի ամբողջությունը՝ նրա մեջ մտնող առարկաներն առանձին-առանձին մատնանշելով	
մի առանձին առարկայի հավաքական կամ ոչ հավաքական ամբողջությունը	

301. *Բաց թողնված տեղերում գրեցեք որոշյալ դերանուններ:*

1. Թվում էր՝ աննշան դեպք էր, բայց խորապես հուզեց ....: 2. ...գիշեր ծերունին աչք չկպցրեց: 3. .... անգամ այդ ճանապարհով անցնելիս տխրում էր քաջ հայդուկը: 4. Մութն ընկնելուն պես այդ անառիկ ամրոցը սարսափազդու տպավորություն էր թողնում .... անցորդի վրա: 5. Մահն հաշտեցրել էր նրա հետ, աշխատում էր իր վշտակցությունը հայտնել ժառանգներին: 6. Դատական բժիշկն մանրամասնությամբ ուսումնասիրել էր փորձաքննության արդյունքները:

302. *Որոշյալ դերանունները խմբավորեցեք ըստ հոլովվելու հատկանիշի: Որոշեցեք հոլովման տեսակը:*

հոլովվող	*չհոլովվող*

303. *Նախադասություններ կազմեցեք թե՛ առարկայական, թե՛ հատկանշային իմաստներով գործածվող որոշյալ դերանուններով:*

304. *Բանաստեղծական տողեր հիշեցեք, որոնցում գործածված լինեն անձնական, ցուցական, հարցական և որոշյալ դերանուններ:*

305. *Անորոշ դերանունները խմբավորեցեք ըստ նրանց արտահայտած իմաստների:*

մեկից ավելի առարկա ակնարկող, այսինքն՝ հոգնակիի իմաստ ունեցող դերանուններ	*մեկ առարկա ակնարկող, այսինքն՝ եզակիի իմաստ ունեցող դերանուններ*

306. *Բաց թողնված տեղերում գրեցեք անորոշ դերանուններ:*

1. Գորշավուն ստվարաթղթի վրա բան էր գրված, որ արդեն անընթեռնելի էր դարձել: 2. Հասնելով շենքի՝ նա կանգ առավ, նայեց շուրջը և ներս մտավ: 3. Մեքենան .... ուղղություն վերցրեց: 4. Հազիվ թե .... գար ու կեսգիշերին քունս խանգարեր. անձրևն էր փսփսում պատուհանիս տակ: 5. Մի վայրկյան լուռ կանգնելուց հետո հեռացանք. այդտեղ այլևս անելիք չուներինք: 6. Անցան ևս խաղաղ տարիներ, և ծեր գիտնականը զգաց մոտալուտ վախճանը: 7. Հյուրերից արդեն դուրս էին եկել պատշգամբ՝ մաքուր օդ շնչելու: 8. Ընթրիքի ժամանակ նրա դեմքին տիաճ զգացման արտահայտություն չկար: 9. Սրտի թրթիռով հիշում եմ մեր հին թաղամասը, բայց նա կարծես չի էլ եղել ....: 10. Նա կարողացավ հստակ հասկացնել, որ դեղը կարելի է գնել միայն իր միջոցով:

307. *Թվարկեցեք այն անորոշ դերանունները, որոնք կարող են հոլովվել:*

308. *Կապակցություններ կազմեցեք այն անորոշ դերանուններով, որոնց հետ կարելի է գործածել թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվով գոյականներ:*

309. ***Բոլոր, որևէ, ինչ-ինչ, ոչ մի, յուրաքանչյուր, ամեն, ողջ, ոմն, որոշ*** *դերանունների հետ գործածեցեք եզակի կամ հոգնակի թվով գոյականներ:*

310. ***Մի և մեկ*** *բառերը նախադասությունների մեջ գործածեցեք թվականի և դերանվան նշանակություններով:*

311. *Բաց թողնված տեղերում գրեցեք ժխտական դերանուններ:*

1. չնկատեց, թե տարեց բժիշկը ե՛րբ դուրս եկավ հիվանդասենյակից: 2. Երկար ժամանակ նրանցից չէր համարձակվում խոսել: 3. Գույների այս համադրությունից էլ չստացվեց: 4. Արտասվող ապակիների միջից բան չէր երևում: 5. Թանգարանի դահլիճներում գրեթե չէր փոխվել, ցուցանմուշ կարծես չէր տեղաշարժվել. գողության մասին չէր կասկածում, աշխատակիցներից մտքով նման բան չէր էլ անցնի:

312. *Լրացրեք հետևյալ աղյուսակը:*

Որ, ոմն, որքան, սա, յուրաքանչյուր, ինքը, ուրիշ, ոչ մեկը, ո՞վ, այդ, ամբողջ, դու, միևնույն, ուր, ամենքը, ողջ, ի՞նչ, դա, ամեն ոք, բոլոր:

տեսակը	*եզակի*	*հոգնակի*
անձնական	*ես*	*մենք*
հարցական	*ե՞րբ*	-

313. *Առանձնացրեք հոլովման համակարգում տարարմատություն դրսևորող դերանունները:*

Այս, բոլոր, ոչ ոք, ե՞րբ, դա, այստեղ, ոչինչ, մի քանի, ես, մեկմեկու, սա, ինքը, ինչու՞, ոմն, ուրիշ, դուք, ինչ, դու, ինքս, ով, այնտեղ, նա, ինչպիսի՞, միմյանց, այն, որ, մեկը:

314. *Առանձնացրեք հոլովման պակասավոր հարացույց ունեցող դերանունները:*

Ես, ի՞նչ, իրար, դու, նա, ո՞վ, քանի՞սը, միմյանց, դա, որտե՞ղ, մեկմեկու, սա, ո՞ր, ե՞րբ, ոչինչ, ոչ մեկը, ոմն, մեկը, ինքը, բոլորը, յուրաքանչյուրը, այսքան:

315. *Հետևյալ դերանուններից որո՞նք չեն հոլովվում:*

Այս, ամեն մեկը, սա, ու՞ր, բոլոր, մեկը, ինքս, ինքը, դու, ողջ, ոչ մի, մեկմեկու, այդ, ես, այստեղ, ամեն մի, նա, ամբողջ, դու՞, ո՞վ, երբևէ, որոշ, յուրաքանչյուր, այն, մեկմեկի, ե՞րբ, ինչպե՞ս, այլ, համայն, յուրաքանչյուր ոք, ոչինչ, մեկնումեկը:

316 *Համապատասխան դերանուններ լրացրեք:*

ա) Լույս տեսած .... հոդվածի առիթով էդուարդ Մանեն գրում էր հեղինակին. «.... չգիտեմ, թե .... գտնեմ ...., որպեսզի սեղմեմ ձեռքը և ասեմ, թե երջանիկ եմ, որ պաշտպանում է տաղանդավոր մարդ, ... եք: .... հրաշալի հոդված: Անչափ շնորհակալ եմ ....»:

բ) 1875 թ., երբ Կլոդ Մոնեն ծայրահեղ ծանր նյութական վիճակում էր, է.Մանեն գրեց Թեոդոր Դրայզերին. «Երեկ այցելության գնացի Մոնեին: բոլորովին ընկճվել է ու կորցրել: Խնդրեց գտնել մեկին, հատը հարյուր ֆրանկով տասը-քսան բնանկար կգնի Ուզու՞մ եք՝ .... երկուսով անենք այդ գործը: բաժինը կլինի 500 ֆրանկ: Իհարկե, և մանավանդ Մոնեն, չպետք է իմանա, որ մասնակցում ենք .... գործին: մտածում էի դիմել արվեստասերի, բայց վախենում եմ մերժվելուց»:

317 *Լրացրեք դերանունների կազմության գծապատկերը.*

Պարզ	Ածանցավոր	Բարդ	
		կցական	հարադրական

318 *Նախադասություններ կազմեցեք հետևյալ կրկնավորներով:*

ա) իրեն-իրեն գ)ուրիշ-ուրիշ ե) ինչ-ինչ
բ) ում-ում դ) քանի-քանի զ) այս-այս

319 *Կետադրեցեք համր բնագիրը՝ ընդգծելով դերանունները:*

Երբ մենք մտանք արվեստանոց Մինասը վառեց բոլոր լամպերը և պատերից մեզ նայեցին նրա աշխատանքները: Այն ինչ ես տեսա այնքան անսպասելի էր ինձ համար որ մինչ այդ եղած ամեն ինչ անձրև ցեխ և ուրիշ շատ բաներ իսկույն անհետացան ասես ցնդեցին: Թվաց ինչ-որ տարօրինակ բան կատարվեց այնպիսի մի ապրում ունեցա որպիսին երբևէ չէի ունեցել:

Ամբողջ երեկո և արվեստանոցում և տունդարձի ճանապարհին և տանը ես շարունակ փորձում էի որևէ կերպ բնորոշել ինձ հետ կատարվածը գտնել այն բառը որը համապատասխաներ Մինասի նկարներից ստացած առաջին տպավորությանը բայց այդպես էլ չկարողացա գտնել այն: Այդ բառը միտքս եկավ շատ տարիներ անց եկավ այն ժամանակ երբ ես վաղուց արդեն չէի փնտրում այն:

Վենետիկում էր: Մենք համերգային խմբի անդամներս դուրս եկանք հյուրանոցից և ուղղվեցինք դեպի Սուրբ Մարկոսի հրապարակ մեր

ուղերթը ճշտելով բազմաթիվ ուղենշաններով գրված եվրոպական գրեթե բոլոր լեզուներով բացի ռուսերենից: Գնում էինք նեղլիկ փողոցներով որոնց լայնությունը երբեմն հասնում էր երկու-երեք մետրի: Ստնում էինք խանութները ավելի ճիշտ խանութիկները ուր եթե միաժամանակ երեք-չորս մարդ մտներ շարժվելու տեղ չէր լինի:

Եվ ահա մի քանի մետր քայլելով այդպիսի շրջակայքում որտեղ ամեն ինչ կամերային էր ամեն ինչ մոտիկ և չկար ոչ մի հեռապատկեր ու տարածություն տներից մեկի նեղ կամարի միջով մենք հանկարծ անսպասելիորեն դուրս եկանք Սուրբ Մարկոսի հրապարակը: Ես չվրիպեցի գրելով հանկարծ բառը: Թեև գիտեինք թե ուր էինք գնում և քայլում էինք հենց դեպի հրապարակ այդուհանդերձ այն իր ողջ վեհությամբ մեր առջև հայտնվեց իսկապես որ հանկարծ անսպասելի անակնկալ: Վիթխարի էր այն շրջապատված մեծ ու բարձր տուն-պալատներով որոնք մինչ այդ իմ տեսած մյուս տների համեմատ երկնաքերներ թվացին ինձ: Այդ ամենը նույնչափ անսպասելի էր որչափ պայթյունն է անսպասելի լինում: Դա իսկապես պայթյուն էր տարածության պայթյուն եթե կարելի է նման բառակապակցություն գործածել:

Եվ հենց այնտեղ Սուրբ Մարկոսի հրապարակում ես ակամա հիշեցի Մինասին և նրա նկարներից ստացած տպավորությունը: Եվ հասկացա թե ինչ էր կատարվել ինձ հետ: Եվ վերջապես գտա այն բառերը որոնք կարող էին բացատրել կատարվածը: Իսկ ինչ էր կատարվել: Այնտեղ արվեստանոցում նույնպես պայթյուն էր եղել գույնի պայթյուն:

Ըստ Յա.Զարգարյանի

320. ***Ընդգծեցեք անուն խոսքի մասերին պատկանող բառերը:***

Բալի շուրթերով իմ հեքիա՛թ, կարոտել եմ քեզ: Ու հիմա գիտեմ, որ կարոտի զգացումը գուցե ամենալավ նկարիչն է, որովհետև տեսնում եմ քեզ այնպես, ասես աչքիս առաջ նստած ես, տեսնում եմ քո դեմքի ամեն մի մանրամասնը, մինչև անգամ քո մի մազափունջը, որ երբեմն-երբեմն ընկնելով դեմքիդ՝ ծածկում է ձախ աչքդ...

Դրսում անտանելի ցուրտ է: Գրում եմ քեզ՝ թուղթը դրած լուսամուտի գոգին: Լուսամուտի առաջ, ուր աչքս կտրի, ամեն բան ծածկված է սպիտակ ձյունով: Բայց երբ մտածում եմ քո մասին, թվում է, թե դիմացս տեսնում եմ ծաղկած բալենի՝ նուրբ սպիտակ ծաղիկներով: Ծաղկած բալենին ամենագեղեցիկ ծառն է, դու ամենագեղեցիկ արարածն ես աշխարհում:

Նայում եմ դուրս ու աշխատում պատկերացնել քո սիրելի դեմքը: Կարոտս օգնում է նկարել քեզ, ու տեսնում եմ քո ալ կարմիր շրթունքները: Այդ շրթունքների համար էր, որ քեզ «բալի շուրթերով հեքիաթ» անվանեցի: Ես տեսնում եմ, զգում եմ քեզ այնպես մոտիկ, այնպես պարզ, որ թվում է, թե զգում եմ քո շնչառությունը, քո տաք շունչը...

Ըստ Շ.Թաթիկյանի

ԲԱՅ

321. *ա) Կարդացեք բանաստեղծությունը և դուրս գրեցեք բայերը:*
բ) Առանձնացրեք 5 բայ և գրեցեք դրանց հոմանիշները:

Ես չգտա այն բառերը,
Որոնք պիտի ասեի քեզ,
Ամեն անգամ հանդիպելիս
Ուրիշ խոսքեր էի ասում:
Գնում էիր գլխի ընկած,
Այրվում էի ու ափսոսում.
Ու փնտրեցի, փնտրեցի ես,
Ի՞նչ հավատով և ի՞նչ սիրով:
Ողողեցի շուրջս ամեն
Քամուն տված սրտի հրով,
Նետեցի ինձ ամենուրեք,
Ինչ որ ունեմ ողջը ցրած,
Ամենաթանկն աշխարհի մեջ
Շուրջս անվերջ ու կորցրած:
Կյանքս անցավ որոնելով,
Սիրագորով ու սրտակեզ,
Ես չգտա այն բառերը,
Որոնք պիտի ասեի քեզ:

Մ.Մարգարյան

322. *Հետևյալ բայերի 5-ական հոմանիշ գրեցեք:*

ա) հմայել գ) հավաքել ե) վախենալ
բ) խնդրել դ) զայրանալ զ) ցանկանալ

323. *Հետևյալ առածներում լրացրեք համապատասխան բայերը:*

1. Ձրի .... ջուրը ....:
2. .... քարը գետնին ....:
3. Ուրիշի հացով փորը ....:
4. Խոսք .... սարի գլուխ կհանի, խոսք .... սարից ներքև ....:
5. Ում սայլին ..., նրա հորովելը ...:
6. Խոսք մի փութ մեղրով ...:
7. Աշխարհի ու .... լեզուն է:
8. Քաղցր լեզուն օձին էլ բնից

324.

ա) Ըստ համապատասխան խոնարհումների գրեցեք տրված բայերի հոմանիշները:

Ե խոնարհում	Ա խոնարհում
զարթնել	
	զարմանալ
թուչկոտել	
	ուրախանալ
դավաճանել	
	ցանկանալ
առկայծել	
	վախենալ
հոդս ցնդել	
	թուլանալ
ծիծաղել	

բ) Նմանատիպ 10 զույգ ինքներդ գրեցեք:

325.

ա) Բայական բառույթի կառուցվածքային բնույթին համապատասխան գրեցեք տրված միավորների հոմանիշները:

համադրական	վերլուծական
արտասվել	
	մեջ ընկնել
աղաչել	
	առաջն առնել
ընդդիմանալ	
	միրտ տալ
համառել	
	ման դալ
երևալ	
	վրա տալ

բ) Նմանատիպ 5 զույգ ինքներդ գրեցեք:

326. *Հետևյալ բայերը խմբավորեցեք ըստ սերող հիմքերի և որոշեցեք, թե ի՛նչ խոսքի մասերի են պատկանում դրանք:*

Շտապել, ողջունել, մատռվակել, պղծել, նվազել, հնձել, ափսոսալ, վճարել, երկրորդել, գրկել, հաճախել, մրրկել, քառապատկել, անարգել, թշշալ, նույնանալ, գամել, կախարդել, բարդել, խարդախել, երկուանալ, յոթնապատկել, շամփրել, կապտել, վայել, նյութել, կեռել, մաքրել, ավաղել, բուրել, բզզալ, ոչնչանալ, կանխել, պայտել, դանդաղել, ծառայել, ապշել, ամբողջանալ:

327. *Հետևյալ խոսքի մասերից համադրական բայեր կազմեցեք:*

գոյական	
ածական	
թվական	
դերանուն	
մակբայ	
ծայնարկություն	

328. *Հարադրական բայեր կազմեցեք ըստ տրված աղյուսակի:*

	գոյական հարադիրով բայ	*մակբայ հարադիրով բայ*
անել		
լինել		
գալ		
տալ		
ընկնել		

329. *Հետևյալ բայերից զուգաբայական (կամ զուգադրական) հարադրություններ կազմեցեք:*

Նմուշ՝ բացել → բացել-փակել:

ա) շահել	ե) ծլել	թ) տանել	ժգ) ելնել
բ) ջարդել	զ) զուգել	ժ) գնալ	ժդ) առնել
գ) լինել	է) կտրել	ժա) նստել	ժե) կապել
դ) գալ	ը) ընկնել	ժբ) թռչել	ժզ) չափել

330. *Հետևյալ բայերը խմբավորեցեք ըստ կազմության՝ ընդգծելով բայածանցները:*

Վերնագրել, յուղոտել, ցատկոտել, բնակվել, ձգտել, իջնել, մահանալ, գտնել, պատրաստվել, գեղեցկանալ, դժգոհել, գլորվել, բոցկլտալ, ցեխոտել, թագավորել, կպչել, հագենալ, քանդքնդել, սլանալ, պատռտել, մրոտել, բզկտել, հագնել, փարթամանալ, հոգնել, ճաքճքել, կեղտոտել, գրոտել, համբուրվել, ելնել, մեռնել, մերձենալ, կուրանալ, անտեսել, դիպչել, կտրատել, պարփակել, նախասահմանել:

պարզ	*ածանցավոր*

331. *Տրված ածանցներով բայեր գրեցեք:*

ան	
են	
ն	
չ	
ատ	
ոտ	
կոտ	
տ	

332. *Կազմեցեք հետևյալ բայերի բազմապատկական ձևերը:*

Նստել, ծալել, ճաքել, խշշալ, պատռել, չափել, ծախել, պոկել, գրել, փետրել, բզզալ, փայլել, խառնել, ճանկռել, փշրել, դողալ, փորել, շողալ, կծել, խազել, թափել, ցատկել, բռնել, ծռել, քաշել, քանդել:

333. *Ածանցման միջոցով կազմեցեք հետևյալ բայերի պատճառականը:*

Պայթել, նստել, խմել, հիշել, հագնել, իջնել, քնել, մեծանալ, փախչել, թռչել, կորչել, դողալ, պարել, երգել, խաղալ, վախենալ, մոտենալ, բնակվել, ծիծաղել, փայլել, քրտնել, շողալ, կատաղել, մղկտալ, խոսել, ֆշշալ, սառչել, դադարել, սահել, զբաղվել, աճել, հասնել, կանգնել:

334. *Նշեցեք այն բայերը, որոնցից ածանցման միջոցով պատճառական չի կազմվում:*

Ծերանալ, բերել, գրել, քրտնել, լարել, նկարել, վախենալ, օգտագործել, օրհնել, սովորել, թարգմանել, կռվել, հագնել, փախչել, աղալ,

կանգնել, աշխատել, տխրել, լուծել, գլխատել, տանել, լողանալ, թռչել, նվաստանալ, բնակվել, խուզել, զբաղվել, նստել, փայլել, սպասել, հերկել, բազմանալ, պայթել, սահել, որսալ, ամաչել, կարել:

335 *Առանձնացրեք այն բայերը, որոնք պատճառական չեն:*

Հոգնեցնել, հագցնել, լցնել, ամաչեցնել, կորցնել, փախցնել, շողացնել, պառկեցնել, խռմփացնել, զարմացնել, կպցնել, վերցնել, հանգցնել, վերջացնել, ապշեցնել, թռցնել, մերձեցնել, բարձրացնել, հարցնել, հասցնել, լրացնել:

336. *Պատասխանեցեք ներգործական սեռի բայերին տրված հետևյալ հարցերին:*

ա) գրել → ո՞ւմ → ի՞նչ
ուղարկել → ո՞ւմ → ի՞նչ

գ) պատժել → ո՞ւմ
նախատել → ո՞ւմ
երկրպագել → ու՞մ

բ) պաշտել < ո՞ւմ / ի՞նչը

դ) լուծել → ի՞նչ(ը)
կազմել → ի՞նչ(ը)
քննարկել → ի՞նչ(ը)
թարգմանել → ի՞նչ(ը)
նկարագրել → ի՞նչ(ը)

ազատագրել < ո՞ւմ / ի՞նչը

337 *Հետևյալ բայերը խմբավորեցեք ըստ սեռի:*

Կառավարել, ելնել, մոտենալ, որոնել, դյութել, կարոտել, ճանաչել, անցնել, թախծել, տուժել, հավատալ, ատել, ծածկել, շաչել, կանչել, կործանել, բորբոքել, սքողել, կաշկանդել, խնդալ, շողալ, հանձնել, հեռանալ, իջնել, փրկել, արիանալ, տանել, վախենալ, վիճել, տիրապետել, ցնծալ, խենթանալ, դնել:

Ներգործական	*չեզոք*

338 *Հետևյալ բայերով կազմեցեք ներգործական կառուցվածքի նախադասություններ:*

ա) ճանաչել
բ) պահպանել
գ) փոխադրել
դ) քննել
ե) հարգել
զ) այրել

339 ***Կազմեցեք հետևյալ բայերի կրավորականը:***

Ջտել, աղալ, կպցնել, հեռացնել, գողանալ, հագնել, տանել, խորանալ, մոտեցնել, տապալել, ավելանալ, մաքրել, քանդել, կառուցել, միացնել, թուլանալ, վերցնել, զգալ, ոսկևորել, մտցնել, սպանել, գոտևորել, իջեցնել, պայթեցնել, չարչարել, առնել, գտնել, ճնշել, ստրկացնել, շոյել, իմանալ:

340 ***Հետևյալ բայերը խմբավորեցեք ըստ սեռի:***

Գունատվել, գանգատվել, կառուցվել, հիշվել, փնտրվել, հարձակվել, լսվել, զորակոչվել, ուսումնասիրվել, վիատվել, հիասթափվել, հեռացվել, վախճանվել, հաշտվել, մտադրվել, սիրահարվել, մշակվել, գրվել, համարձակվել, բնակվել, բերվել, գերվել, կառավարվել, գժտվել, քշվել, արտասվել:

կրավորական	*կրավորական չեզոք*

341 ***Հետևյալ բայերով կազմեցեք կրավորական կառուցվածքի նախադասություններ:***

ա) ստանալ բ) բացել գ) բռնել դ) նորոգել

342 ***Առանձնացրեք կրկնասեռ և կրավորական չեզոք բայերը:***

Հակառակվել, բնակվել, համաձայնվել, նմանվել, զբաղվել, վերաբերվել, գանգատվել, մաշվել, հրճվել, տրաքվել, ընդհարվել, բաժանվել, գժվել, ծավալվել, կախվել, բորբոքվել, փռվել, խաղաղվել, փակվել, գունատվել, մոլորվել, փոխվել, խելագարվել, ավարտվել, սրվել, զմայլվել, հալվել, ոգևորվել, անջատվել, սկսվել, մռայլվել, սիրահարվել, տանջվել, փշաքաղվել, պապանձվել, չարչարվել:

կրկնասեռ բայեր	*կրավորական չեզոք բայեր*

343 ***Հետևյալ կրկնասեռ բայերի սեռային յուրաքանչյուր նշանակությամբ կազմեցեք նախադասություններ:***

ա) նայել գ) մաշվել ե) վառվել
բ) ապրել դ) լալ զ) ուղղվել

344. *Հետևյալ բայերը խմբավորեցեք ըստ չեզոք սեռի իմաստային դրսևորումների:*

Համբուրվել, հագնվել, հանվել, պատրաստվել, օծվել, շպարվել, պաչպչվել, սափրվել, զուգվել, գրկախառնվել, սանրվել, զարկվել, տեղավորվել, տեսնվել, շփվել, բախվել, մաքրվել, լվացվել, ողջագուրվել, պաշտպանվել, զարդարվել:

անդրադարձ բայեր	*փոխադարձ բայեր*

345. *Ներգործական կառուցվածքի նախադասությունները փոխակերպեցեք կրավորական կառուցվածքի նախադասությունների:*

1. Հնադարի մեծագույն մաթեմատիկոս և ֆիզիկոս Արքիմեդը մշակեց մեխանիկայի հիմունքները: 2. Դամբարանը կառուցող ճարտարապետներն օգտագործել են հունական ճարտարապետության բոլոր երեք ոճերը: 3. Հրդեհներն ու ջրհեղեղները խիստ քայքայեցին հնադարյան այդ կառույցի մնացորդները: 4. Մ.թ.ա. 332-331 թթ. Ալեքսանդր Մակեդոնացին հիմնադրեց Հելլենական եգիպտոսի նշանավոր մայրաքաղաք Ալեքսանդրիան: 5. Հաճախակի տեղի ունեցող երկրաշարժերը կործանեցին Օլիմպոսի տաճարները: 6. Բազմաքանակ թշնամու դեմ տարած հաղթանակը ոգևորել էր Մակեդոնացու զինվորներին: 7.Ֆիդիասի քանդակների առջև վեհության զգացումն էր լցնում մարդկանց հոգիները:

346 *Տրված բայերը խմբավորեցեք ըստ սեռի:*

Որոնել, հրճվել, երևակայել, գրել, արտասվել, աղալ, զբոսնել, շարժել, պառկեցնել, հասնել, հակակրել, փնչալ, երևալ, խառնել, սիրահարվել, պահել, ծածկել, հիշվել, հուզվել, տրորել, զարմացնել, ընտրել, բախել, փռել, զարթնել, գժտվել, փախցնել, քննել, արբենալ, կառավարել, կանգնել, պաշտել, հայտնել:

Ներգործական	*Կրավորական*	*չեզոք*

347. *Հետևյալ բայերով (բայածներով) կազմեցեք նախադասություններ:*

ա) մոտենալ - մոտեցնել - մոտեցվել
բ) տաքանալ - տաքացնել - տաքացվել

348. *Առանձնացրեք հետևյալ բայերի անորոշի հիմքերը և դրանցով կազմեցեք բայանուն գոյականներ:*

Քամահրել, սպանել, գովել, մեծարել, կրկնել, զեկուցել, ընթանալ, սպասարկել, սպասել, նզովել, աղոթել, թարգմանել, սրբագրել:

բայ	բայահիմք	բայանուն գոյական
շարժել	*շարժ-*	*շարժում*

349. *Կազմեցեք հետևյալ բայերի անցյալ կատարյալի հիմքը և բացատրեցեք կազմության օրինաչափությունները:*

ա) գրել, կարդալ
բ) մոտենալ, զարմանալ
գ) ելնել, թռչել
դ) նստեցնել, խաղացնել, թռցնել
ե) ցատկոտել, գրոտել, կտրատել
զ) գալ, ուտել, լինել

350. *Առանձնացրեք բայերը, գրեցեք նրանց անորոշի և անցյալ կատարյալի հիմքերը:*

ա) Թռան անցան օրերս,
Ո՞ւր գնացին, չգիտեմ:
Ո՞ւր հեռացան լորերս,
Ո՞ւր մնացին, չգիտեմ:

Սերերս ո՞ւր հեռացան,
Հարցում արի ծորերիս,
Խուլ ձևացան ծորերս,
Լուռ մնացին... Չգիտեմ:

բ) Գետը արեգակի հուր ու բոցից փախել,
Թաքուն տեղ չի գտել, որ գլուխը պահի.
Ամբողջովին հալած արեգակ է դարձել
Ու ներքև է գալիս,
Ոտքերի տակ տալով ինչ պատահի...

գ) Ով ինձ համար ուշքը կորցրեց,
Ո՞վ գիտե ում սիրտը կոտրեց,
Չտեսնելու տվի, անցա...
Բայց երբ հետո ուշքի եկա,
Թե ես ինչ եմ կորցրել անդարձ,
Անվերադարձ, ուշ էր արդեն:

Հ.Սահյան

351. *Որոշեցեք բայերի կազմությունը և սեռը:*

Ա. Դաշտերի ճանապարհով միայնակ մի մարդ էր գնում: Ցուպ չկար ձեռքին, բեռ չուներ, գլխարկ չկար գլխին, գրպաններում ոչինչ չէր դրել: Ոչ այնտեղ, որտեղից գալիս էր, սպասող ուներ, ոչ էլ այնտեղ, ուր գնում էր, կանչող կար: Միայնակ ու դատարկ գնում էր:

Այդ նույն ճանապարհով անցել էր մրջյունը, մողեսը, թագավորը, թագավորի տղան, գառնուկ ախպերը, հուրիփերիներ, հրեղեն ձիեր, կտրիճ մարդիկ, կույր գուսաններ: Հիմա գնում էր այդ մարդը:

Զ. Խալափյան

Բ. Ո՛չ, մենք չենք սիրել ճանապարհներ: Ճանապարհները կա՛մ թշնամիներ են բերել մեր տուն, կա՛մ մեր պապերին տարել են դեպի օտարություն ու ետ չեն բերել: Չգիտեմ՝ որտեղից եմ լսել, որտեղ եմ կարդացել այս տարօրինակ միտքը, բայց նույնը չի՞ ասում արդյոք մեր ոչ այնքան հեռու անցյալը: Մեր բոլոր գավառները կտրված էին իրարից, կապվում էին բարալիկ, հազար տեղ թելի նման կտրվող կածաններով, քարքարոտ, տխուր ճանապարհներով, որ փակվում էին առաջին ձյունից, որ ավելի շատ բաժանում, քան միացնում էին:

Ես հիմա հրճվում եմ, երբ օդանավի բարձունքից նայում եմ Հայաստանին, տեսնում ճանապարհները, որ արյունատար անոթների պես մեր հողը դարձնում են մարմին՝ շնչող, անհանգիստ ու թրթռուն: Սիրում եմ ճանապարհներին նայել գիշերով, երբ իրենք՝ այդ ճանապարհները, չեն երևում, երևում են ավտոմեքենաների շարժվող, կրակե աչքերը:

Մենք դեռ շատ ճանապարհներ ունենք բացելու, եղածները կարճելու, մենք դեռ շարունակում ենք վախենալ առատ ձյունից, խենթ անձրևից, դեռ պակաս են մեր երկաթե ուղիները, կամուրջները: Կլինեն: Հիմա ճանապարհները բարեկամներ են բերում մեր երկիր, հիմա ճանապարհները մեզ տանում են մեծ աշխարհ, միացնում են, կապում:

Ըստ Վ. Պետրոսյանի

352. *Շարադրություն գրեցեք տրված թեմաներից մեկով:*

ա) Հե՜յ, ճամփաներ, ճամփաներ բ) Մեր ուղին

353. *Գտեք անկախ դերբայները և որոշեցեք նրանց ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները:*

Այդ հուշերի մեջ կա մի քաղցր ցավ,
Մի թովիչ երազ.
-Մեկը իմ սիրտը փշրելով անցավ...

Լուսնի շողերը թովիչ-խուսափող
Ստվերիդ նման և հեռու, և մոտ,
Ես մի լուսնահա՛ր, ես մի խենթ լուսնո՛տ,
Դու ցո՛ւք, դու ցնո՛րք հավիտյան խաբող:
Իմ մեջ սառել է հիվանդ մի կարոտ
Եվ չգտնելու տանջանքը մաշող:

* * *

Ունկնդիր եղա հողմի խենթ երգին.
-Ես էլ եմ ուզում հեկեկալ անհագ.
Կանգնած եմ մռայլ վիհի եզերքին,
-Տրտում է հոգիս, հիվանդ ու՝մենակ...

* * *

Ինչպե՞ս չսիրեմ, երկի՛ր իմ կիզված,
Պարզված վերստին սրերին սուրսայր.
Ինչպե՞ս չսիրեմ – հեզությամբ լցված
Դու յոթնապատիկ խոցված Տիրամայր:

Լցված է արդեն բաժակը թունոտ,
Համբերելու ժամն անցել է արդեն.
Ելնենք ճչալու խնդությամբ քինոտ
Ու հպարտ կանգնենք մութ բռնության դեմ:

* * *

Փախչում եմ և հեռանալիս փառաբանում եմ և օրհներգում եմ քեզ:

Վ.Տերյան

354. *Կազմեցեք պաշտել, հավատալ, հագենալ, կպչել, հիշեցնել, տեսնել բայերի դերբայական ձևերը:*

անորոշ	հանա-կատար	ենթակա-յական	հարա-կատար	անկա-տար	ապա-կատար	վաղա-կատար	ժխտա-կան

355. *Հոլովեցեք դիմել և զարգանալ բայերը (անորոշ դերբայները):*

356. *Մեկական նախադասություն կազմեցեք հանդիպել, զրուցել, մենանալ բայերի անորոշ դերբայի սեռական-տրականով և ապակատար դերբայով:*

357. *Գեղարվեստական գրականությունից օրինակներ քաղեցեք անորոշ դերբայի տարբեր հոլովաձևերով և շարահյուսական կիրառություններով:*

358. *Դուրս գրեցեք բայերը և վերականգնեցեք անորոշի ձևը:*

Առաջին իմ երգ, կորել ես, չկաս,
Ու չեմ էլ հիշում՝ ինչ ես դու եղել՝
Տխուր ուռենի՞ - ջրերին կքած,
Թե՞ հովի շնչից զնգացող եղեգ:
Գուցե թիթեռ ես եղել տերևի,
Երկնքին ուղղված անմեղ մի հարցում...
Չէ՛, ծաղկաթերթ ես բիլ ու վրան՝ արցունք...

Վ.Դավթյան

359. *Կազմեցեք նախադասություններ երազել, քննադատել և բարձրանալ բայերի համակատար դերբայով:*

360. *Կազմեցեք հետևյալ բայերի ենթակայական դերբայը: Առանձնացրեք գոյականի բառական արժեք ձեռք բերած միավորները:*

Ախտորոշել, հավաքել, թարգմանել, նախագծել, ծաղկել, ուսանել, դժգոհել, մոտենալ, ասմունքել, ստորագրել, մատուցել, բարձրանալ, սառչալ, խաղալ, առաջնորդել, անիծել, հագենալ, ճռնչալ, մոնտաժել, լողանալ, իջնել, գծել, ընտրել, կպչել, հեռանալ, աշխատել, նստել, ճչալ, գրել, ուղևորվել, ծնել, փախչել, երգել, ընթերցել, զգալ, վաճառել, քերթել, ցատկոտել, բերել, ուրանալ, զոդել, հեկեկալ:

361. *Դերբայական հետևյալ ձևերի մեջ ածականական որոշակի իմաստներ կարելի է մատնանշել. որոշեցեք դրանք:*
Նմուշ՝ ընդառաջող - բարյացակամ:

ա) ուրացող գ) կամեցող ե) գռփող
բ) ուտող դ) քծնող զ) զիջող

362. *Կազմեցեք հետևյալ բայերի հարակատար դերբայը: Դրանցից որո՞նք կարող են հանդես գալ սահմանական եղանակի ներկա և անցյալ ժամանակների կազմության մեջ:*

Գործել, բերել, կանգնել, սովորել, դիմել, գրվել, ջանալ, քնել, աղմկել, խաղալ, մնալ, ընկնել, հնծել, նստել, գամել, գրոհել, դյութել,

հրապուրել, քրտնել, աղալ, ծուլել, սառչել, նշանել, ամփոփել, զարմանալ, շողալ, կանխել, սիրվել, վազել, հրապուրվել, բարկանալ:

363. *Կազմեցեք հետևյալ բայերի հարակատար դերբայը և որոշեցեք, թե դրանցից որոնք են ծեռք բերել գոյականի խոսքիմասային նշանակություն:*

Նվագել, մտածել, արարել, մերժել, այրել, աղոթել, հերքել, հոգնել, հնձել, խորովել, բանտարկել, հինել, նշանել, ծախսել, գրավել, շիկնել, մանել, կարդալ, սիրել, սիրահարվել, հավաքել, կոտորել, լողանալ, հանձնել, կանգնել, ապականվել, հարվել:

364. *Գրեցեք հարակատար դերբայից անկախացած հետևյալ ածականների իմաստները՝*

Նմուշ՝ նստած – *ծանրակշիռ:*

ա) հասած	գ) ընկած	ե) քնած
բ) զարգացած	դ) կարդացած	զ) հոտած (մարդ)

365. *Նախադասություններ կազմեցեք՝ հետևյալ բառերը գործածելով դերբայի և գոյականի կամ ածականի նշանակություններով:*

ա) հասած	գ) խորոված	ե) գրող
բ) կարդացած	դ) աշխատող	զ) ծաղկող

366. *«Հարակատար + ք» կաղապարով (կամ -վածք ածանցով) 10 բառ գրեցեք:*

367. *Գրաբարի անցյալ դերբայի -եալ վերջավորությունից ծագած -յալ մասնիկով բառեր գրեցեք՝ նրանց դիմաց նշելով հարակատարի համապատասխան ձևերը:*

Նմուշ՝ զինյալ - զինված:

368. *Գրեցեք հետևյալ գոյականների հիմքում ընկած բայերի անորոշ դերբայի ձևերը:*

ա) ասացվածք, հավելված, դիպված, վիժվածք
բ) կառուցվածք, դարձված, հոդված, դրվածք

369. *-իչ մասնիկով ածականներ գրեցեք՝ նրանց դիմաց նշելով ենթակայական դերբայի համապատասխան ձևերը:*

Նմուշ՝ սպանիչ - սպանող:

370. *Գրեցեք գրաբարի ապառնի դերբայից ծագած ածականներ և գոյականներ (-ելի, -ալի մասնիկներով):*

գոյական	ածական
բանալի	պատկառելի

371. *Գրեցեք -իք մասնիկով բառեր (ապառնի երկրորդի ձևեր) և նրանցով բառակապակցություններ կազմեցեք:*

Նմուշ՝ սպասել – սպասելիք:

372. *Կազմեցեք հետևյալ բայերի հարակատար, վաղակատար, ենթակայական դերբայները:*

Ցոլալ, փախչել, թռչել, տաքանալ, հանգչել, իջնել, տեսնել, հագենալ, գալ, աճել, ծերանալ, կանգնել, գտնվել:

անորոշ	հարակատար	վաղակատար	ենթակայական

373. *Առանձնացրեք կախյալ դերբայները (ձևաբայերը) և որոշեցեք նրանց ձևաբանական և գործառական առանձնահատկությունները:*

ա) Իսկ գժվելուց չե՞ն սիրում ու ատում:
Իսկ գժվելուց չէ՞ փայտը ճարճատում:
Առանց գժվելու՝ չկա՛ շահած մարտ:
Առանց գժվելու՝ չե՞ն ծնի նոր մարդ:
Մինչև չգժվի՝ ջուրը չի՛ եռա,
Կեղև չի պատռի հատիկը նռան:
Ծառե՞րն են փթթում՝
Գժվա՜ծ են անշուշտ:
Երկի՞ն է պտտում՝
Գժվա՜ծ է անշուշտ...

բ) Շա՜տ ջուր է հոսել - անցել են արդեն տարիներ քանի:
Մեծ քաղաքների մայթերում արդեն՝ ես նույնիսկ հիմա
Երբ հանդիպում եմ քեզ նման մեկին՝ միշտ շուռ եմ գալիս,
Միշտ ետ եմ դառնում՝ արևը սիրող այն ծաղկի նման:

գ) Մտածեք նաև ձեր որդու՜ մասին.
Խոսում եմ նաև նրա՛ անունից:
Դուք գնալու եք,
Իսկ նա գալու՜ է:

Պ.Սևակ

374. *Ընդգծեցեք բայերը և դրանցից մեկով կազմեցեք սահմանական եղանակի ժամանակային բոլոր ձևերը:*

Ես սիրել գիտեմ իմ ամբողջ հոգով,
Գիտեմ և ատել,
Բարեկամի հետ խոսել հարգանքով,
Թշնամուն՝ դատել...
Գեղեցկի առջև գիտեմ խոնարհվել
Ու սիրտս բանալ...
Հուզվել թշվառի մեկ հառաչանքից,
Անօգին՝ խղճալ,
Եվ օտար մարդու մաքուր հրճվանքից
Խելահեղ ճչալ...
Գիտեմ կարծրանալ ու դառնալ անբեկ՝
Չարի դեմ տձև,
Ու պողպատի պես չծռվել երբեք
Թշնամու առջև....
Գիտեմ երազել, անրջել, թախծել,
Ժպտալ մանկան պես,
Հաճախ էլ պայծառ աչքերս թացել.
Չէ՞ որ մարդ եմ ես...

Վ. Հովհաննիսյան

375. *Բացատրեցեք սահմանական եղանակի անցյալի ժամանակաձևերի իմաստային յուրահատկությունները:*

376. *Ընդգծեցեք հրամայական եղանակի բայաձևերը: Կազմեցեք դրանց եզակիի և արգելականի ձևերը:*

Դրե՛ք սիրտս վիրավոր
Հարազատ օրրան,
Օրորեցե՛ք վիրավոր
Սիրտս նահրյան...
Նվագներով պարզ ու նուրբ
Գգվեցե՛ք նրան,
Հայրենական երգով սուրբ
Սգացե՛ք վրան...
Ոսկե թևեր ուներ նա,
Ուներ բոցեր բորբ,
Արյուններկ է հիմա
Ու երկրիս պես որբ:

Դրե՛ք սիրտս դարավոր
Հարազատ օրրան,
Օրորեցե՛ք վիրավոր
Սիրտս նահրյան...

Վ.Տերյան

377 *Կազմեցեք հետևյալ բայերի հրամայականի ձևերը և բացատրեցեք կազմության օրինաչափությունները:*

ա) նստել, հարգել
բ) հավատալ, մնալ
գ) իջնել, կորչել
դ) ընկերանալ, հագենալ
ե) հասցնել, լավացնել, կանգնեցնել
զ) բերել, թողնել
է) ուտել, գալ, լինել
ը) ասել, դնել

378 *Գտեք ըղձական, ենթադրական և հարկադրական եղանակների բայաձևերը: Որոշեցեք նրանց ժամանակային ձևերը:*

Ես ուզում եմ խոսել քեզ հետ: Անսահման տարածություն է բաժանում մեզ իրարից: Բայց ես կխոսեմ: Ես պիտի խոսեմ, որպեսզի զբաղեցնեմ աչքերս, ու արցունքները չհորդեն: Նայում եմ երկնքին ու մտածում, որ այս րոպեին գուցե քո հայացքն էլ է դեգերում այնտեղ: Ինձ թվում է՝ եթե երկուսս էլ միաժամանակ նայենք երկնքին, ապա անշուշտ կտեսնենք իրար: Այս ի՞նչ է, աչքերս արցունքով են լցվում: Օ՜, ո՛չ... Երկնքից ձյուն է մաղում: Քո գլխին էլ է իջնում: Դու երևի ծիծաղես ճերմակած գլխիդ վրա ու քեզ մտովի «ծերուկ» անվանես: Իսկ իմ գլխի ձյունը հալվում է, որովհետև «գլուխս տաքացած է», ինչպես կասեիր դու: Ձյունը արցունքի նման հոսում է մազերիցս... Արցու՞նք, ո՛չ, ո՛չ... Սենյակում ծաղիկներ կան: Թերթիկները թաց են, իսկ իրենք ժպտում են մռայլ ճերմակությամբ. ժպիտ արցունքների միջից... Ապակիների եղյամը կհալվի. ծորակը կաթիլ-կաթիլ արցունք կծորա. երկինքը ձյունի արցունք կթափի... Չէ՛, ավելի լավ է արտասվեի...

Ըստ Հ.Դարյանի

379 *Անցյալի ժամանակային ձևերը, որտեղ հնարավոր է, փոխարինեցեք ներկայով: Հիմնավորեցեք փոփոխությունները:*

Մի չար մարդ է եղել, որը որքան չարություններ, վատություններ է արել, այնքան մեխ է խփել իր տան առջևի ծառի բնին: Եվ մի օր էլ, երբ տեսել է, որ այլևս տեղ չի մնացել, և մեխը մեխին այլևս հնարավոր չի եղել խփել, գնացել է իմաստունի մոտ և ասել.

-Իմաստու՛ն, ես իմ ամեն մի չարությունից հետո մի մեխ եմ խփել ծառի բնին, և հիմա այլևս տեղ չի մնացել: Ի՞նչ անեմ:

Իմաստունը, որ իսկապես իմաստուն է եղել, ասել է.

-Գնա՛ և այսուհետև միայն լավություններ արա ու ամեն բարությունից հետո մի մեխ դուրս քաշիր ծառի բնից: Երբ բոլոր մեխերը հանես, կգաս ինձ մոտ:

Անցել են տարիներ: Չար մարդը, որ այդ ընթացքում բարություններ է արել, մի օր նորից եկել է իմաստունի մոտ, հիշեցրել է, թե ինքն ո՛վ է, և ասել.

-Հիմա ծառի բնին այլևս մեխ չկա, տեղ է բացվել:

Իմաստունը, որ իսկապես իմաստուն է եղել, շատ տխրել է ու ասել.

-Մա՛րդ, ես քեզ այդ ամենն ասել էի ոչ թե տեղ բացելու համար, այլ որ տեսնես ու հասկանաս, թե որքան էլ բարություն անես, չարություն-ներիդ հետքերը կմնան:

-Իսկ ես դրա համար էլ ուզում եմ մեխեր խփել, որ հետքերը չմնան,- ասել է չար մարդը:

Եվ իմաստունը, որ իսկապես իմաստուն է եղել, հանկարծ հասկացել է, որ այնքան էլ իմաստուն չէ, լռել է ու ոչինչ չի ասել:

Ըստ Ռ.Արամյանի

380 *Ընդգծված բայաձևերն արտահայտեցեք նախադասության մտքին համապատասխանող ուրիշ ժամանակաձևերով:*

1. Եթե պարտեզի դռնակը բացվեր, կամ մի հարևան գար տուն, Զանին տեղից վեր էր կենում, փեշերը թափ տալիս ու բարկանում կատվի վրա (ԱԲ): 2. Եթե արձակուրդ ստացա, կգամ ձեզ մոտ կարճ ժամանակով (ՎԹ): 3. Այս թագավորն իր պալատի առաջ ունենում է մի մեծ այգի՝ ամեն բարիքով լիքը... Բայց այդ պտուղները թագավորը ո՛չ ինքն է ուտում, ո՛չ ուրիշի է տալիս (ԱԲ): 4. Շատ իմանալը ձեռքբերովի բան է. շատ կարդաս, մի քիչ էլ հիշողությունդ լավ լինի՝ կիմանաս (ՌՋ): 5. Մահարին տեղից ռեպլիկներ կնետեր միշտ սուր, հումորով լի՝ հաճախ շփոթի մատնելով ելույթ ունեցողներին (ՌՋ): 6. Եթե ասպարեզ մտած երիտասարդ գրողների մեջ կայծ տեսներ, ոգևորում էր նրանց, սակայն եթե նրանք շեղվեին իսկական բանաստեղծի ճանապարհից, կգրեր նրանց մասին և ցույց կտար մեղանչումները (ՌՋ):

381 *«Լինել» բայի հարադրությամբ կազմված ժամանակային հետևյալ ձևերը գործածեցեք նախադասությունների մեջ:*

ա) թարգմանելիս է լինում
բ) կառավարելիս է եղել
գ) ուղարկելիս էր լինում
դ) գրելիս էր եղել

382 *Որոշեցեք հետևյալ առածներում գործածված բայերի եղանակաժամանակային ձևերը, նրանց ժամանակային հիմնական (և երկրորդական) նշանակությունները:*

1. Հացի կտրածը թուրը չի կտրի:
2. Դատարկ տակառը բարձր ձայն կհանի:
3. Փոս փորողն ինքն է ընկնում մեջը:
4. Ագահությունն աղի ջրի նման է. ինչքան խմես, այնքան ավելի կծարավես:
5. Պտղատու ծառի ճյուղերը կռացած կլինեն:
6. Աչքովդ տես, փեշովդ ծածկե:
7. Գողն եկավ, սևերես գնաց:
8. Ով ալարի, ոչ դալարի:
9. Ինչ ցանես, այն էլ կհնձես:

383 *Գտեք բայի վերլուծական և պարզ ժամանակաձևերը, որոշեցեք նրանց քերականական կարգերը:*

Գարուն էր: Ծեր այգին ծածկվել էր մատղաշ սաղարթով:

Աշակերտները դուրս բերեցին իրենց ուսուցիչ Էպիկուրին, որին հիվանդությունը գամել էր բազկաթոռին: Իմաստասերը սիրում էր աշակերտներին, և նրանք էլ իրեն էին սիրում: Նա ժպտում էր, բայց մուգ աչքերը տխուր էին: Նա չի վախենում աստվածներից և ոչ էլ մահից: Վախը կարելի է հաղթահարել, և դրա լավագույն միջոցը նրա փիլիսոփայությունն է: Բանականությունն օգնում է բուժելու հոգեկան ցավը: Բայց ո՞վ կարող է զսպել տխրությունը, երբ հասել է բարեկամներից հավիտյան բաժանվելու ժամանակը: Էպիկուրի տան դուռն է ծեծում մահը:

-Իմ բարեկամնե՛ր,- ասաց Էպիկուրը,- տեսնում եմ, որ այսօր բոլորդ եք եկել: Բարեկամներին տեսնելը մեծագույն երջանկություն է: Ինձ թվում է, որ այս նշենին, որի հովանու տակ նստած եմ, ցրտի ու մթության մեջ տարեցտարի իր արմատներն ավելի խորն է գցում միայն նրա համար, որ իր սնուցած ճյուղերի վրա ծաղիկներ են բացվում: Ճիշտ այդպես հանգիստ է դեպի անէություն գնացող մարդը, որովհետև ողջ իմաստնությունը, որ նա կուտակել է իր կյանքի ընթացքում, փոխանցվում է մտերիմներին: Դուք չեք մոռանում ինձ, ես էլ մշտապես մտածում եմ ձեր մասին

Երեկ ես կտակ եմ գրել, որով ինձ համար թանկ մարդկանց միջև բաժանել եմ այն ամենը, ինչ ունեմ: Դա այն է, որ տրոհվում է և անհետանում: Բայց ահա մնացել է այն, ինչը յուրաքանչյուրին է հասնում անտրոհելի, ամբողջությամբ: Ով ցանկանում է ստանալ այդ ժառանգությունը, նա էլ կստանա այն: Դուք գիտեք, թե ինչի մասին է խոսքս. դուք արդեն տիրապետում եք դրան: Իսկ նրանք, ովքեր մեզ հետ չեն, ինձ են դիմել իմ ուսմունքը նամակներում շարադրելու խնդրանքով, բայց ես ժամանակին դա չեմ արել:

Ահավասիկ, բարեկամնե՛րս, ծեզանից յուրաքանչյուրը թող դառնա իմ աջ ձեռքը և գրի առնի այն, ինչ ես ուզում եմ ասել բացականերին:

«Պիտի հոգանք այն բանի համար, ինչը մեզ երջանիկ կյանք է պարգևում: Ահա այդպիսի կյանքի, երջանիկ կյանքի տարրերը...»:- Էպիկուրը փակեց աչքերը և լռեց:

Աշակերտները երկար սպասեցին, թե ե՛րբ կրկին կխոսի ուսուցիչը, բայց նա քնեց:

-Չանհանգստացնենք նրան,-կամացուկ ասաց աշակերտներից մեկը:- ժամանակը չվատնելու համար մեզանից յուրաքանչյուրը թող շարունակի սկսված նամակը: Չէ՞ որ մենք գիտենք, թե ի՛նչ էր ուզում ասել ուսուցիչը:

384. *Գրեցեք տեսնել և մնալ բայերի ապառնի ժամանակի բոլոր ձևերը (եզակի թվի 1-ին դեմքով):*

385. *Գրեցեք ճանապարհորդել բայի անցյալի բոլոր ձևերը (եզակի թվի 3-րդ դեմքով) և բացատրեցեք նրանց իմաստային տարբերությունները:*

386. *Փակագծերում տրված բայերը գործածեցեք անհրաժեշտ ժամանակային ձևերով:*

Ա. Սերենդիպի՝ հնագույն Շրի Լանկայի արքայորդիների մասին մի հին հեքիաթ (գոյություն ունենալ): Ճանապարհորդելով աշխարհով մեկ՝ նրանք (գտնել) այն, ինչը նույնիսկ (չփնտրել): Այդ հեքիաթի հիման վրա (ստեղծվել) *սերենդիպություն* բառը, որ (նշանակել) թանկարժեք կամ հաճելի իրեր գտնելու շնորհք, երբ այդ իրերը (չփնտրել):

Գիտության պատմությանը հայտնի են սերենդիպության փայլուն օրինակներ. մեծագույն շատ հայտնագործություններ (կատարվել) պատահականության բերումով: Լոգարանում ջրի մակարդակի բարձրանալը Արքիմեդին (տալ) մարմինների լողալու օրենքի հայտնաբերման բանալին: Ընկնող խնձորը Նյուտոնին (հանգեցնել) համընդհանուր ձգողության օրենքին և այլն:

Թեև այն ուղիները, որոնք (հանգեցնել) այդ և բազմաթիվ այլ հայտնագործությունների, պատահականություն էին, բայց (պահանջվել) հանճարի ներշնչում, որպեսզի դրանք մեծ հայտնագործություններ (դառնալ): Ինչպես մեծ Պաստյորն (ասել), «պատահականությունը նախապատրաստված խելքին (օգնել)»: Կարևոր շատ հայտնագործություններ (տեղի չունենալ) այն պատճառով, որ դիտորդի ուղեղը պատրաստված չէր ընկալելու տեսածը:

Բ. Սերենդիպության ամենանշանավոր օրինակներից (լինել) Կոլումբոսի ճանապարհորդությունը, ատոմի միջուկի տրոհման՝ մարդկության պատմության մեջ թերևս մեծագույն հայտնագործությունը: Առաջին հայտնագործողների և նրանց հետնորդների միտքը պատրաստ (չլինել) նորի ընկալմանը. կանխակալ պատկերացումները (խանգարել) նոր փաստերն

ընդունելուն: Սակայն (պատահել), որ աշխարհի շատ գլուխների անպատրաստությունը բարիք (դառնալ) մարդկության համար: Եթե այդ կուրությունը (չլինել), ապա երկրորդ համաշխարհայինի սկզբին Հիտլերն ատոմային ռումբ (ունենալ) և անկասկած դրա միակ տերը (լինել):

Ուրանի ատոմի տրոհումը, որ հնարավոր (դարձնել) ատոմային ռումբի ստեղծումը, առաջին անգամ (իրագործվել) 1934 թ. Հռոմի համալսարանում, իսկ խմբի ղեկավարը էնրիկո Ֆերմին էր: Սակայն ամենանշանավոր ֆիզիկոսներից և ոչ մեկը (այդ թվում՝ էյնշտեյնը, Ռեզերֆորդը, Բորը) (չհավատալ), որ հնարավոր է այդ անել: Այդ պատճառով էլ Ֆերմին և նրա աշխատակիցները, դիտելով ատոմների տրոհումը, (չկարողանալ) հասկանալ տեղի ունեցածը: Եվ այդ փաստը (մտնել) մարդկության պատմության մեջ որպես հնգամյա մի մեծ հրաշք, որը (փրկել) աշխարհը:

Մի քանի տարի անց, երբ Ֆերմիին (հարցնել), թե նա (չափսոսալ) արդյոք, որ ձեռքից (բաց թողնել) մեծագույն հայտնագործություններից մեկն իրականացնելու հնարավորությունը, նա անկեղծորեն (պատասխանել). «Ես ուրախ եմ, որ այդպես (ստացվել)»:

387. *Դուրս գրեցեք անկանոն բայերը և բացատրեցեք, թե դիմավոր և անդեմ ո՞ր ձևերում են դրանք անկանոնություն դրսևորում:*

ԲԱՐԴԻ

Ասում են, որ հայոց բարդիները ծնունդ են առել բռնակալ Բելի դեմ կռվի ժամանակ թշնամուն զարկած, բայց, ավա՜ղ, զոհված հայ զորականների արյունից: Դրա համար էլ նրանք նման են զորաշար կազմած կամ միայնակ մնացած զինվորների: Բարդիների անտառ չի լինում, որովհետև Հայկ Նահապետի զինվորները փոքրաթիվ են եղել: Հայաստանի որ անկյունում էլ որ տեսնես նրանց, մենակ լինեն թե շարքի մեջ, հաղթողի պես բարձր են պահում իրենց գլուխները: Հպարտ են անչափ. երբեք չեն լալիս, ուրիշների գլուխ չեն տալիս: Պերճահասակ են, ճերմակաբուն, ճոխ սաղարթով, գեղեցկադեմ: Գարնանը բարդու սերմերը տերևներից բեկվում և քամու բերանն ընկած ձյան փաթիլների պես օդում ճոճվելով՝ հայկական հողից հայկական հողի մեջ են ընկնում, ծլարձակում ու բարդի դառնում:

Բարդիները հայոց հողմակոծ դրոշներն են, որոնց կողքով մի օրվա պես սուրացին խառնիճաղանջ, բազմալեզու հազարամյակները:

Բարդիները կանաչ շատրվաններ են, որոնք մեղմացրին հայոց տոթակեզ դաշտերն ու լեռնապարերը ու զովություն բերեցին նրանց:

Հայոց Երվանդունի արքաներն ամեն տարի բարդու զվարճատոն են արել: Երկրի տարբեր կողմերից վեր են կացել եկել, հավաքվել են դպրության աստծու բոլոր նվիրյալները և իրենց ձոներն ասել բարդու ծառին: Մրցանակ շահած ձոները քրմերն արտասանել են մեհյաններում: Քրմերից հետո էլ այդ ձոները չեն կորսվել և իրենց շունչն են թողել մեր երկրում:

Մեկուկես դար է բարդի ծառի կյանքի սահմանը, գրեթե այնքան, որքան հին մարդունը: Բայց բարդին աննկատ վերընձյուղվում է ու մնում հայոց աշխարհի ու հավերժության հասակակիցը:

Ըստ Հ.Խաչատրյանի

388. *Գրեցեք անկանոն բայերի շարքը* և լրացրեք հետևյալ աղյուսակն ըստ վանդակների երանգավորման (մեկական նմուշով):*

Բայ	Անկանոնությունը դրսևորվում է			
	ներկա ժամանակում	անցյալ կատարյալի հիմքում և նրանից կազմվող ձևերում	անցյալ կատարյալում	հրամայական եղանակում
գալ	գալիս (է)	եկ- — եկած, եկող, եկել,	եկավ	ե՛կ, եկե՛ք

* Աղյուսակը կազմելիս նկատի չենք ունեցել *գարկել* և *բառնալ* բայերը:
** *Բառնալ* բայն աղյուսակում ընդգրկեցեք կայունացած *բացել* ձևով:

389 *ա) Հետևյալ հատվածից դուրս գրեցեք պակասավոր բայերը: Բացատրեցեք, թե որտեղ է դրսևորվում նրանց պակասավորությունը:*

1915թ. հուլիսին Վալերի Բրյուսովին զանգահարեցին Մոսկվայի հայկական կոմիտեից և խնդրեցին ռուսերեն հրատարակվող հայկական պոեզիայի ժողովածուի խմբագիրը լինել: Բրյուսովը վճռականորեն հրաժարվեց: Նախ՝ ինքը չգիտի լեզուն, հայ պոեզիայի մասին տարտամ պատկերացում ունի: Եվ, բացի այդ, արժե՞ արդյոք ժամանակ կորցնել, ի՞նչ արժեքավոր բան կարող է իրեն տալ այդ աշխատանքը. ինքը բավականաչափ ծրագրեր ունի:

Հեռախոսային բազմաթիվ զանգերին հետևեցին զրույցները, ընկերների հորդորները: Բրյուսովը վճռեց, որ ոչ մի պարտավորություն չի ստանձնում, կփորձի, կնայի աշխատանքը, ապա վերջնական պատասխան կտա: Սակայն հայ մշակույթի գործիչների հետ հանդիպումները, ժողովրդի պատմության մասին առաջին դասախոսությունները, հայոց լեզվի առաջին դասերը, ընթերցած գրքերն այնպես ապշեցրին բանաստեղծին, որ նա մինչև կոկորդը թաղվեց Հայաստանի ուսումնասիրության մեջ: Մի քանի ամիս աշխատելով վիթխարի եռանդով՝ Բրյուսովը ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն և լատիներեն կարդաց իրեն մատչելի ամբողջ գրականությունը:

Ի՞նչ կարող է հուսալ, ի՞նչ կարող է ցանկալ, ձեռքերը լվալ և մի կո՞ղմ քաշվել: Ո՛չ, Հայաստանն արդեն իր սրտի մեջ է:

Բանաստեղծը հետագայում խոստովանել է.«Արտաքին ոչ մի նկատառում չէր կարող հարկադրել ինձ՝ կատարելու այդ ամբողջ աշխատանքը, կարդալու այս բոլոր գրքերը, այսքան սովորել և այսպես խորանալ գործի մեջ: Հարկադրել կարող էր միայն մեկ բան. Հայաստանի ուսումնասիրության մեջ ես հոգեկան բարձրագույն երջանկության անսպառ ակունք գտա: Կես տարուց մի փոքր ավելին, անշուշտ, չափազանց կարճատև ժամանակ է, որպեսզի մարդ քիչ թե շատ հիմնավոր տեղեկություններ ստանա մի ժողովրդի այդքան հերոսական պատմության մասին, որն ընդգրկում է երկուսուկես հազարամյակ, և գրականության մասին, որի սկիզբն ամենաքիչը հասնում է մեր թվագրության V դարը»:

Վ.Բրյուսովին այդքանն էլ քիչ թվաց: 1916 թ. հունվարին նա շրջագայության մեկնեց Անդրկովկաս՝ տեղում ստուգելու իր գրքային տպավորությունները:

«Հայաստանի պոեզիան» ժողովածուի համար, որից ամեն ինչ սկսվեց, բանաստեղծը թարգմանել է շուրջ չորս հազար տող:

Գրքի առաջաբանում այսպիսի տողեր կան.«Միջնադարյան հայկական քնարերգությունը մեկն է մարդկային ոգու սքանչելի հաղթանակներից»:

Ըստ Կ.Բակշիի

բ) Ակնարկ կամ հաղորդում պատրաստեցեք հայ ժողովրդի և հայ մշակույթի օտարազգի ուրիշ բարեկամների մասին:

390. *Հետևյալ բայերի հետ համապատասխան հոլովներով գոյականներ գործածեցեք:*

ա) ընդառաջել	դ) կարոտել	է) վերաբերվել	ժ) պատահել
բ) հանդիպել	ե) զրկվել	ը) դիմել	ժա) կպչել
գ) զգուշանալ	զ) ուշանալ	թ) խուսափել	ժբ) զբաղվել

391. *Հետևյալ հարադրություններով կազմեցեք նախադասություններ:*

ա) շնորհակալություն հայտնել, շնորհակալ լինել
բ) ներողություն խնդրել, ներում հայցել

392. *Հետևյալ բայերի հետ կապային կառույցներ գործածեցեք:*

ա) կռվել	դ) բարեխոսել	է) վիճաբանել
բ) հմտանալ	ե) ստորանալ	ը) խորհրդակցել
գ) աղոթել	զ) զայրանալ	թ) պաշտոնավարել

393. *ա) Դուրս գրեցեք այն բայաձևերը, որոնք ըստ լծորդության այժմ ընդունելի չեն (կամ ուղղակի սխալ են):*

1. Մեր օրորոցի վրա մեր լեզվով մեզ նանիկ ասեցին *(ԽԱ)*: 2. Ռումբերն սկսեցին մռնչելով սլանալ բերդի վրայից *(Ր)*: 3. Նրանք ծիծաղով, բարձր խոսալով, խումբ-խումբ անցուդարձ էին անում *(ՄԻ)*: 4. Լուսափայլ աստղիկ կուզեի դառնալ... Ինչպես ադամանդ շողշողել, ցոլալ... *(ՀՀ)*: 5. Բակից դուրս թռավ մի ածդահա գամփռ ու խռպոտ հաչաց: *(ՍԽ)*: 6. –Սիրտս լիքն է, մի՛ խոսա *(ՀՇ)*: 7. Այդպես թմրած, ննջալով նրանք անցկացրին հավանաբար մեկ-երկու ժամ ևս *(ՎԱ)*:

բ) Գտեք այն բայաձևերը, որոնք այսօր ընդունելի չեն, և համապատասխանեցրեք ներկայիս գրական լեզվի կանոնին:

1. Քո օրը խավարեցավ *(ԽԱ)*: 2. Գագիկ Արծրունին ավելի գեղեցկացրեց Ոստանը, նորոգելով ու ամրացնելով հին բերդը և իր համար փառավոր պալատներ կառուցանելով *(Ր)*: 3. Բայց նույն միսիոնարը իր հայրենիքում այդպես չէ վարվում. նա սիրում է իր ազգը, նրա պատմությունը, նրա բանաստեղծությունը և նրա մինչև անգամ հեթանոսական դարերի ավանդություններն ու առասպելները *(Ր)*: 4. Նրանցից շատերն սկսան քաջաբար աղեղները լարել, նետեր արձակել, բայց բնությունն ինքը օգնության էր հասնում հայերին *(Մ)*: 5. Բարձրադիր սարավանդակը, որի վրա կառուցած էր ամրոցը, շրջապատված էր բնության փառահեղ և ահարկու տեսարաններով *(Մ)*: 6. Նրան զբաղեցնողն այդ

ռոպեին Սևադայի հոգեկան աշխարհը չէր, այլ այն միտքը, թե ի՞նչ պիտի պատասխանե իշխանին, եթե նա յուր այստեղ գալու մասին հարցնե *(Մ)*: 7. Արագածը, Արայի լեռը և նույնիսկ Եռաբլուրը պատած էին դեռ ծյունով *(Մ)*: 8. Անիծվի՛ս, եթե վերջին կամքս չես կատարիլ *(Շ)*:

394. *Հետևյալ հատվածներում գտեք փոխանվանաբար (գոյականաբար) գործածված բառերը:*

Ա. Զրույցը մեղավորի ու անմեղի, չարի ու բարու մասին էր:

Մեղքի հասկացողությունը պայմանական է, հարաբերական: Իմ արարմունքը մեկի համար լավն է, մյուսի համար՝ վատ: Շահերի հարց է: Բացի այդ, իմ մեծ մեղքը ես չեմ էլ հիշում, իսկ քո չնչին զանցանքը չափազանցնում եմ: Այսինքն՝ մեծը չնչին է դառնում, չնչինը՝ մեծ. նայած թե ո՛ւմ դիրքերից ես նայում, ո՛ր տեսանկյունով ես չափում: Ես չեմ ժխտում, որ նշված երկու չափումներից բացի կա նաև երրորդը՝ բարոյականը. սա օբյեկտիվ է ու անշահախնդիր:

Քիչ հետո ավելացրեց.

- Ես գիտեմ, որ անմեղներ չկան. ամեն մարդ ինչ-որ մեղք ունի: Ու եթե մենք հիշաչար լինենք, հասարակությունն անկում կապրի: Կյանքն առաջ տանողը բարին է: Բարին շատ է, չարը՝ քիչ: Բայց չարը կազմակերպվող, համախմբվող ուժ է, իսկ բարին տարերային է: Եվ վտանգ կա, որ չարը կարող է հաղթել բարուն, եթե մարդու մեջ չմշակվի ուրիշի նկատմամբ մեծահոգի ու ներող լինելու զգացում:

Ըստ Ռ.Զարյանի

Բ. Մեկը կանչում է ինձ,
Երկար կանչում է ինձ,
Կանչում են բոլոր ապրողներն ու մեռածները բոլոր,
Կանչում են բոլոր օտարները՝ հարազատի ձայնով,
Եվ հարազատներս կանչում են ինձ՝
Երակներիս արյան անհուն ձայնով:

Ռ.Դավոյան

395. *Հետևյալ բաղադրիչներով բայական արժեք ունեցող դարձվածքներ գրեցեք (առնվազն 5-ական):*

ա) աչք բ) սիրտ գ) գլուխ դ) ձեռք ե) հոգի

396. *Ինչպիսի՞ հարցին պատասխանող արտահայտիչ ածականներ, դերբայներ կամ գոյականներ գործածեցեք հետևյալ բառերի հետ:*

ա) անտառ գ) երկինք ե) Աստված է) մազեր
բ) աչքեր դ) ծով զ) ընկեր ը) հայրենիք

397. *Ընդգծված բառերին հարմար լրացումներ գրեցեք (տեքստից անկախ):*

Թումանյանի տանը Անդրանիկին ու Թումանյանին միասին հաճախ եմ հանդիպել:

Նրանք իրար շատ էին սիրում. բարքերի, ըմբռնումների խիստ նմանություն կար երկուսի միջև: Անդրանիկը ևս անզուգական պատմող էր: Նրան լսելիս պատմության, անձնավորությունների, տեղի, ժամանակի, ընդհանուր մթնոլորտի ամենաիրական, կենդանի պատկերացումն էինք ստանում:

Մի օր մի ընկերոջ հետ մտնում ենք Թումանյանի սենյակը ողջերթ մաղթելու նրան: Թումանյանը պիտի գնար Հանքային ջրերը ընդունվելու. Մենք ներս մտանք այն պահին, երբ Անդրանիկը պատմում էր ինչ-որ կռվի պատմություն: Թումանյանը կանգնած էր՝ մի ոտը դրած թախտի վրա, թևերը բարձրացրած վեր, փայլուն, արծարծուն աչքերով լսում էր:

- Թուրս քաշեցի՞...,- ասաց Անդրանիկը և կանգ առավ:

Նա ուներ այդպիսի սովորություն: Այդ դադարը երբեք չէր դանդաղեցնում պատմությունը, այլ ընդհակառակը, ավելի խորացնում էր. կարծես կանգ էր առնում, ժամանակ էր տալիս, որ լսողն ընդգրկի պահը:

Բայց Թումանյանը չհամբերեց և սկսեց գոռալ.

- Խփի՛ր, խփի՛ր...

Մենք, որ դրսից էինք եկել և տարված չէինք պատմությամբ, հազիվ կարողացանք զսպել մեր ծիծաղը:

* * *

Մի օր սեղանի շուրջը Թումանյանն առաջարկեց խմել Անդրանիկի կենացը, և ինքը վերցրեց առաջին խոսքը:

- Սրանից քսան տարի առաջ,-սկսեց Թումանյանը,-կար երկու նշանավոր բան Խրիմյան Հայրիկը և իմ «Շունն ու կատուն»: Քսան տարի է անցել, և էլի երկու նշանավոր բան կա իմ «Շունն ու կատուն» և Անդրանիկը: Խմում եմ երկու նշանավորներից մեկի Անդրանիկի կենացը:

Բոլորն սկսեցին ծիծաղել: Անդրանիկն էլ ծիծաղեց, հետո Թումանյանին պատասխանեց.

- Կանցնեն տարիներ, ո՛չ ես կլինեմ, ո՛չ էլ Թումանյանը, բայց կլինի մի նշանավոր բան «Շունն ու կատուն»: Խմենք նրա կենացը:

Ըստ Վ.Թոթովենցի

398. *Ընդգծված բայերը փոխարինեցեք հոմանիշներով:*

Ա. Այստեղից սկիզբ է առնում մի խորդուբորդ ճանփա ու կորչում ծառերի մեջ: Ծառերն իրենց խիտ սաղարթներով ճյուղերը խառնել են, և դրա հետևանքն արևն անձրևի պես է կաթում ներքև:

Գյուղ տանող ճանփա է. առանց միտքը փոխելու գնում ու կանգ է առնում գյուղի եզրին: Գյուղի թիկունքին սար կա՝ բլուրներով ու ձորերով ծուլված Արա լեռանը: Ընկուզենիները արմատները խրել են հողի մեջ և իրենց փարթամ ճյուղերով ասես ծերնակ ամպերն են քշում: Եվ ամենն

ընկուզենի մի տեղ երկինքն ու երկիրը կապել է իրար: Ի՞նչ իմանաս, թե ընդերքից ի՛նչ են ուղարկում արևին ու աստղերին և ի՛նչ են պոկում երկնքից:

Աշնանն ընկույզները գլոր-գլոր իջնում են գյուղ, հասնում սարի փեշին կոքնած տներին կամ տեղ գտնում քարերի արանքում: Իսկ երբ ձմեռն է մուտք գործում գյուղ, ընկուզենիները պայքարի մեջ են մտնում քամու դեմ, հաղթում են նրան, ու քամին նահանջում է:

Գարնանը, երբ ծիրանենու բունը դեռ ծածկված է լինում եղյամով, ճյուղերին արդեն ճերմակ ծաղկաբույլեր են նկատվում, և մյուս բոլոր ծառերն իրենց նախանձալից հայացքները սևեռում են ծիրանենուն, հետո ամեն մեկն իր գույնով ծաղիկ է բացում արևի տակ:

Իսկ աշնանն աշխարհի բոլոր գույները հավաքվում են գյուղի թիկունքին և հեռավոր սարերից հորդում երփներանգ ջրվեժի պես: Այդ ծառերն են արտասվում, սարսռում դատարկված հոգու համար:

Գյուղը լուսաշաղախ ու երազուն հայացք է գցում խճապատ ճամփին, որ սկիզբ է առնում ծորապռնկից ու ձգվում մինչև մեծ ճանապարհի այն հատվածը, որտեղ այն, չգիտես ինչու, հանկարծ մտափոխ է եղել ու ծռվել:

Ըստ Մ.Գալշոյանի

Բ. Գետը դուրս է պրծնում անդնդախոր կիրճի կապանքներից և անզուսպ ու կատաղի հոսքով սլանում հովտով:

Կեսգիշերին հոլիկում արթնանում եմ գետի հոխորտալի դղրդյունից: Լուսնկա գիշերն իր փայլփլուն աստղերով այբ է գցում ներս, սառը քամին ուժգին պոռթկումներով վրա է տալիս, և թվում է, թե գետն է սպառնագին գրոհում մեր կացարանը: Զուրն այնքան մոտ է թվում, որ ակամա սարսափ է պատում քեզ. հանկարծ տանի հոլիկը:

Գեղեցիկ է գիշերը մարգագետնում. այստեղ-այնտեղ երևում են ծիերը, որ կուշտ արածելուց հետո հանգիստ նիրհում են: Իսկ կողքին, քամուց տարուբերվող եղեգները մեկ-մեկ կռացնելով, խուլ ծայնով քարերն է տեղից տեղ շարժում ահեղամռունչ գետը ու իր սպառնագին աղմուկն է տարածում չորս կողմը: Խավարի մեջ ուրվագծվում են արծաթազօծ լեռնագագաթները:

Այդպիսի գիշերներին ես միշտ հիշում եմ Դանիյարին: Նա սովորաբար գիշերն անցկացնում էր ուղղակի գետեզրին: Մի՞թե չէր սարսափում: Նա ասես այս աշխարհից չէր: Նրա աչքերը նայում էին թախծոտ, և միայն շարժուն հոնքերն էին կենդանացնում նիհարավուն, միշտ մտախոհ դեմքը: Երբեմն դեմքի մկանները լարվում էին, ասես ուրիշներին անհասանելի ինչ-որ բան էր ունկնդրում, և աչքերը վառվում էին անզուսպ կրակով: Գուցե ականջ էր դնում գետի ճողփյունի՞ն, ուրիշներին անհասանելի հնչյուններ ու շրշյունն՞ր որոնում: Չգիտեմ:

Ըստ Չ.Այթմատովի

399 *Հետևյալ բայերով կազմեցեք նախադասություններ:*

ա) փորձել - փորձարկել
բ) քննել – քննարկել
գ) դիտել - դիտարկել
ե) վերաբերել – վերաբերվել
զ) գործել - գործարկել
է) ծրագրել – ծրագրավորել

400. *Կետադրեցեք համր բնագիրը: Դուրս գրեցեք բայերը՝ նշելով նրանց ձևաբանական հատկանիշները:*

Իմ անցյալ տարին հիմա որտեղ է հարցրեց մի օր որդիս արի գնանք իմ անցյալ տարվա մոտ:

Որդիս քիչ առաջ կոտրել էր մոր ամենասիրած հայելիներից մեկը մայրն ամենասիրած չորս հայելի ունի բայց սա իմիջիայլոց: Ես երկար ու ծանծրալի բացատրեցի թե հիմա նա մեծ տղա է և եթե հայելին անցյալ տարի կոտրած լիներ ոչինչ քանի որ անցյալ տարի նա փոքր էր չէր հասկանում թե ինչ է անում...

Իմ այդ խոսքերի վրա որդիս վիթխարի սև աչքերն ավելի մեծացրած մտածեց-մտածեց հետո իր զարմանալի հարցը տվեց Իմ անցյալ տարին հիմա որտեղ է...

Եվ ես ստիպված հորինեցի այս հեքիաթը մարդու ապրած-անցկացրած տարիների մասին: Մարդու կյանքը նման է գնացքի: Ճանապարհը սար է ինչպես Արարատը: Առաջին քառասուն տարում գնացքը բարձրանում է մյուս քառասուն տարում իջնում: Մարդու առաջին տարվա գնացքը մի վագոն է: Մարդը ուրեմն աշխարհ է դուրս գալիս մի վագոնով: Երբ լրանում է նրա մի տարին և նա մտնում է երկուսի մեջ ճանապարհին թողնում է այդ առաջին տարվա վագոնը նստում մի ուրիշը մի քիչ ավելի մեծը: Այդպես կամաց-կամաց մարդու կյանքի գնացքը բարձրանում է սարնիվեր ճանապարհներին ծաղիկների ու փշերի մեջ թողնելով իր տարիները: Ամեն կայարանում մեկը:

Ես քանի տարեկան եմ հարցրեց որդիս:

Չորս ասացի փետրվարին կլինես չորս:

Իմ անցյալ տարվա գնացքն եմ ուզում: Հիմա որտեղ է:

Հեռու շատ հեռու տեղ է ասացի հետո մտածեցի որ այս հեքիաթը շատ ավելի ինձ համար էր որ շատ ավելի ես կուզենայի վերադառնալ իմ մանկության կայարանները որտեղ ես մեկիկ-մեկիկ թողել եմ իմ տարիները:

Հիմա իմ կյանքի գնացքն իջնում է զառիվայրով: Ես հետ եմ նայում ոչինչ չի երևում: Ես հետ եմ նայում ինքս իմ մեջ իսկ իմ մեջ մանուշակագույն մշուշ է շատ բան կորել է մոռացվել պետք է հորինես:

Այսպես ծնվեցին իմ պատմվածքները որ նամակներ են իմ մանկության կայարաններից: Այդ նամակները ես գրել եմ ինքս ինձ իսկ որդիս որ հիմա չորս տարեկան է գուցե մի օր կարդա դրանք կամ որ ավելի հավանական է երևի չկարդա նրա մանկության գնացքն ուրիշ է ճանապարհի ծաղիկներն ու փշերն ուրիշ են ուրիշ են կայարանները...

Ասում են ապրած տարիների խարույկից մարդ պետք է կրակները վերցնի այլ ոչ թե մոխիրը... Տարիների մոխիրների տակից ես փորձեցի արթնացնել իմ մանկության կրակները: Չգիտեմ կարողացա արդյոք...

Ըստ Վ.Պետրոսյանի

ՄԱԿԲԱՅ

401 *Առանձնացրեք մակբայները և որոշեցեք նրանց տեսակը:*

Մեր առջև մի թեք բարձունք էր: Հազիվհազ էինք առաջ շարժվում, ժամանակ առ ժամանակ կանգ էինք առնում, փոքր-ինչ հանգստանում և դարձյալ շարունակում բարձրանալ լանջնիվեր: Հանկարծ փայլատակեց երկինքը, ուժգնորեն որոտացին ամպերը, և սկսվեց անձրևը: Սկզբում կաթիլներն ընկնում էին մեկիկ-մեկիկ, դանդաղ, ապա մի վայրկյանի չափ տեղ-տեղ երևաց կապույտ երկինքը, բայց մութ ամպերը գրեթե չնահանջեցին. կրկին արագորեն ծածկեցին երկինքը, և նորից հորդառատ անձրև տեղաց: Չնայած չափազանց հոգնել էինք, բայց շարունակ գնում էինք ու գնում: Ձորում խշշում էր գետը: Մերթընդմերթ մեզ էին հասնում հովիվների ձայնը, շների միալար հաչոցը: Կամաց-կամաց սկսեց գծագրվել բնակավայրը:

Վերջապես դուրս եկանք մի տափարակ տեղ: Դիմացը սարի երկճյուղ կատարն էր, իսկ քիչ այն կողմ՝ սարվորների ժամանակավոր կացարանները:Գեղեցիկ, շատ գեղեցիկ էր հանդիպակաց բարձունքը. ամենուր երփներանգ ծաղիկներ էին և զուլալ աղբյուրներ, որոնց անմահական բույրն ու հաճելի քչքչոցը տարածվել էին շուրջբոլորը:

402 *Խմբավորեցեք տրված մակբայները:*

Ցարդ, դեմ դիմաց, այլուր, միանգամից, իսպառ, փոքրիշատե, հաստատապես, հանգամանորեն, հնուց, ցմահ, ընդառաջ, ընդմիշտ, որպեսզի, վերջիվերջո, ամենևին, գերազանցապես, շարունակ, հանկարծ, հաճախ, հոտնկայս, շուտով, անընդհատ, ստեպ-ստեպ, ներկայումս, մեն-մենակ, լեռնիվեր, մեկ-մեկ, նյութապես, հետագայում, մերթընդմերթ, բերնեբերան, սարեսար, բոլորովին, հերոսաբար, դաժանորեն, ամենուրեք:

տեղի	ժամանակի	ձևի	չափի	ընդհանրական

403 *Ժամանակի մակբայները խմբավորեցեք ըստ հետևյալ իմաստների:*

Այժմ, հավիտյան, գիշեր-ցերեկ, տարեցտարի, վաղուց, ցմահ, ընդմիշտ, առժամանակ, օրնիբուն, դարեդար, ժամանակով, հետո, մշտապես, միառժամանակ, գիշեր ու զօր, հնուց, ցարդ, ներկայումս, օր

օրի, հավետ, հիմա, շուտով, մանկուց, որպե առ որպե, այսուհետև, միշտ, առաջ:

ժամանակի մշտատևություն	
տարորոշված ժամանակ (ներկա, անցյալ, ապառնի)	
գործողության ժամանակային սկզբնակետ	
գործողության ժամանակային վախճանակետ	
ժամանակի տևականություն	
ժամանակի անորոշություն	

494 ***Տրված մակբայները գրեցեք համապատասխան տեղերում:***

Այժմ, վաղուց, մշտապես, այլևս, ժամանակով, տարիներ ի վեր, արդեն, վերջապես, ցմահ:

Արևելքի մի հրաշագեղ աշխարհում արդարածիտ ու խելացի թագավոր է լինում: Մի օր կանչում է իր որդիներին և ասում.

Սիրելի՛ որդիներ, ձեր հայրն ծերացել է ու չի կարող երկիրը կառավարել: Ես .... իջած կլինեի իմ գահից, եթե .... կատարված տեսնեի այն միտքը, որ .... հուզել է հոգիս: Եվ .... ձեզնից ով որ լուծի իմ այդ միտքը, նա կստանա իմ թագը և կկառավարի իմ ժողովրդին:

495 ***Գրեցեք ձևի մակբայներ, որոնք ցույց են տալիս՝***

գործողության կատարման արտաքին ձևը	*գործողության ներքին դրսևորման հատկանիշը*

496 ***Գրեցեք չափի մակբայներ, որոնք ցույց են տալիս՝***

հատկանիշի չափը մասի և ամբողջի հարաբերությամբ	*հատկանիշի չափի առատությամբ*	*հատկանիշի չափը նրա կրկնվելու, նորից կատարվելու նշումով*

407. *Մակբայական ինչպիսի՞ իմաստներ կարելի է նշել հետևյալ միավորներում:*

Տեղնուտեղը, տեղ-տեղ, դեմուդեմ, դեմ հանդիման, դեմ դիմաց, արտաքուստ, ներքուստ, մեկ-մեկ, շուտ-շուտ, անընդհատ, շարունակ, իսպառ, ամբողջովին, դեմ առ դեմ, բոլորովին, բերնեբերան:

408. *Տրված բայերի հետ գործածեցեք՝*

ա) տեղի մակբայներ

Գնալ, բարձրանալ, շրջել, իջնել, նայել, կանգնել, անցնել:

բ) ժամանակի մակբայներ

Արթնանալ, այցելել, հիշել, աշխատել, իմանալ, զարգանալ:

գ) չափի մակբայներ

Կատարել, մոռանալ, հավաքել, առողջանալ, լցնել, զգուշացնել:

դ) ձևի մակբայներ

Կռվել, օգնել, ընդունել, երդվել, ժպտալ, փախչել, աղաչել:

409. *Հետևյալ մակբայները գործածեցեք բայերի հետ:*

Ազնվորեն, օրեցօր, տարեցտարի, խորապես, մեն-մենակ, կուզեկուզ, հավիտյան, բարոյապես, հայրաբար, առերևույթ, լռելյայն, բերնեբերան, մեղմորեն, պարզեիպարզ, դեմ առ դեմ, խումբ-խումբ, վերջիվերջո, հոտնկայս, փոխնիփոխ, քանիցս:

410. *Տրված բայերի հետ մակբայներ գործածեցեք և դրանք խմբավորեցեք ըստ տեսակների:*

Հարվածել, ընկնել, հրաժարվել, սահել, հասնել, վերաբերվել, հայտարարել, վերլուծել, հավատալ, չարչարվել, սպասել, դիմավորել, սխալվել, հավաքել, պառկել, ներել:

411. *Հետևյալ ընդհանրական մակբայները տարբեր իմաստներով գործածեցեք նախադասությունների մեջ:*

Առաջ, անընդհատ, մերթընդմերթ, անդադար, մեկ-մեկ:

412. *Ավելացրեք համապատասխան մակբայներ:*

Ա. Մեծ կոմպոզիտոր Ա. Սպենդիարյանի անունը .... էի լսել: «Երեք արմավենի» սիմֆոնիայով սկսվել ու ավարտվել էր իմ ծանոթությունը Սպենդիարյանի ստեղծագործությանը: Սակայն ավելի տարիներ

անց, արտասահմանում .... հանդիպեցի նրա երաժշտությանը: Վենետիկյան ոսկեվառ աշնան մի երազային երեկո, սրճարաններից մեկում նստած, լսեցի հայրենիքից եկած հարազատ ձայներ: կանչեցի սպասավորին ու խնդրեցի, որ գնա ու իմանա, թե ի՛նչ պիես են նվագում: նա վերադարձավ ու հայտնեց Սպենդիարով, «էսքիզներ»:

Պարզվեց, որ հայրենակցիս գործերը եվրոպական նվագախմբերը .... են կատարում. նրա երաժշտությունը, օրինակ, լսել եմ Միլանում:

Բ. Հոգնաբեկ արևը թեքվում է դեպի լեռը, գագաթները հրդեհվում են, անրջային կիսալույսերով իջնում է մթնշաղը, նախիրը տուն է դառնում հանդից: վառվում են ճրագները, գյուղի աղմուկը դադարում է, հանգչում են բոլոր շշուկները: Երկինքը լցված է աստղերով, որոնք կայծկլտում են ու մարում:

Հովիվները խարույկ են վառել. երեկոն էլ գիշեր է դարձել: .... լռություն է տիրում, և միայն ծորի առուն է մրմնջում իր անուշ երգը, ու լճից փչող զեփյուռն է հնչեցնում իր սրինգը:

Ըստ Ավ. Իսահակյանի

413. *Կազմեցեք բառակապակցություններ՝ մակբայները գործածելով՝ բայանուն գոյականների և ածականների հետ:*

414. *Մակբայները փոխարինեցեք հոմանիշներով:*

1. Օտարականը մեկ-մեկ կանգ էր առնում լուսազարդ ցուցանակների առաջ: 2. Մի վայրկյան վառվեց նրա սենյակի լույսը և իսկույն մարեց: 3. Մայրը սովորություն ուներ շուտ-շուտ մտնելու փոքրիկի սենյակը: 4. Տղան չսպասեց անծանոթի օգնությանը և անմիջապես ուղղվեց: 5. Այժմ կարող եմ բոլորովին մոռանալ նրան ու մտածել միայն տարվա այս եղանակին իրենց կանաչը վառ պահած ծառերի մասին: 6. Այնքան շատ ձյուն էր եկել, որ թվում էր՝ աշխարհը հավիտյան մնալու է նրա սառն ու սպիտակ քաթանի տակ: 7. Շարունակ բողոքում էր, որ աչքերը ցավում են, և ինքը գրեթե ոչինչ չի տեսնում: 8. Երգչի պահանջները հետզհետե սպառնալիքի ձև էին ընդունում: 9. Բոլորն էլ զգում էին, որ նկարչի դրությունն օր օրի ավելի էր վատանում: 10. Միշտ նկարեցե՛ք բնությունից և մի՛ կրկնօրինակեք ուրիշ վարպետների գործերը:

415. *Դուրս գրեցեք մակբայներն ու նրանց համարժեք դերանունները: Խմբավորեցեք դրանք:*

1. Թռչունները կտուց կտուցի այնպես էին փայփայում իրար, որ նույնիսկ չնկատեցին, թե ինչպես սոխակը գլխիկոր հեռացավ այնտեղից: 2. Քո շնորհած վարդերը աշխարհի ամենաչքնաղ վարդերն են եղել միշտ և երբեք չեն թառամել: 3. Քանի որ դու այդքան սիրում ես այդ

աղավնուն, փոխարենը տու՛ր քո մարմնից այնքան միս, որքան կշռում է աղավնին: 4. Անցորդը նայում է վեր՝ ձողի ծայրին, և այնտեղ փայլուն մի բան տեսնում: 5. Մեն-մենակ թափառում եմ այնպես, աննպատակ և ժպտում մարդկանց՝ որքա՜ն սիրալիր, որչա՜փ բարեդեմ: 6. -Երբեմն-երբեմն ու՞ր են տանում այս գերիներին,- հարցրեց երիտասարդը: 7 Մի մութ գիշեր, երբ քաղաքում բոլորը քնած էին, մեծ բանաստեղծը գաղտագողի հեռացավ հայրենի տնից:

416. *Գոյականով կապակցությունները կամ գոյականները փոխարինեցեք մակբայներով:*

1. Կարող էինք հենց այդպես՝ խմբով մոտենալ նրան: 2. Նա երկու անգամ խախտեց իր խոստումը: 3. Ծերունու դողդոջուն մատները զգուշությամբ սահում էին ծաղիկների վրայով: 4. Նա մի վայրկյանում ուշքի եկավ, հավաքեց վրձիններն ու ներկապնակները և նետեց վառարանի երախը: 5. Նկարիչն սկսեց ձեռքի համար վարժություններ անել, և ցավը որոշ ժամանակ անհետացավ: 6. Ամեն տեղ արև էր որոնում ու ջերմություն: 7 Դե արի՛ ու հանգստացի՛ր, երբ մարդը քեզ օգնության ձեռք է մեկնում, իսկ դու թշնամու պես ես վերաբերվում նրան: 8. Կինը գրկեց երեխային և մոր պես ջերմ-ջերմ համբուրեց նրան:

417. *Տրված մակբայները խմբավորեցեք ըստ կազմության:*

Առհավետ, դեմուդեմ, մանկուց, այնուհետև, վեր, ընդառաջ, տնետուն, կամացուկ, արագ, միասնաբար, օրեցօր, թեթևակի, փոքրիշատե, քառակի, հաճախ, սարնիվեր, ստեպ-ստեպ, գյուղ առ գյուղ, դեմ հանդիման, ցմահ, ի վերջո, նախօրոք, օրավուր, շտապ, չորեքթաթ, փոքր-ինչ, անշեղորեն, մեղմիվ, ուշ, փութով, իսկույն ևեթ, հնուց, վայրկենաբար, ամենուրեք, միաբերան, գիշերուզօր, մերթընդմերթ:

պարզ	*ածանցավոր*	*բարդ*	*քերականական ձևերից առաջացած*

418. *Տրված գոյականներից կազմեցեք մակբայներ՝*

ա) ածանցման միջոցով

Հոգի, եռանդ, դիվանագետ, ընկեր, գազան, խումբ, եղբայր, վերջ, առավոտ, ազգ, նյութ, գլուխ, տուն:

բ) բառաբարդման միջոցով

Ծայր, գյուղ, տուն, բերան, երկիր, քարափ, դուռ, ծառ, լեռ, տարի, վերջ, չար, բաց, քար, վայրկյան:

419. *Տրված գոյականներից ի վերը, ի վարը, ի վայր յաղադրիչներով կազմեցեք տեղի մակբայներ:*

Երես, բերան, գլուխ, լեռ, քարափ, ծոր, ափ, հոսանք, ծառ, հիմք:

420. *Տրված ածականներից մակբայներ կազմեցեք:*

Խորամանկ, խոլ, դաժան, էական, խոնարհ, թեթև, փոքր, բարեխիղճ, հին, մեղմ, խիզախ, քաջ, բարյացակամ:

421. *Որոշեցեք հետևյալ մակբայների բառակազմական ընդհանուր հատկանիշը և գրեցեք նմանատիպ ևս 10 օրինակ:*

Ցայսօր, ջուրնիվար, քիչ առ քիչ, առհավետ, ի բնե, մերթընդմերթ, ինքնըստինքյան, ցկյանս, ի մոտո, կույրիկույր:

422. *Մակբայներ կազմեցեք հետևյալ վերջածանցներով:*

ա) -բար բ) -պես գ) -որեն դ) -ովին ե) -ինցս զ) -ակի

423. *Հարադրական բայեր կազմեցեք հետևյալ տեղի մակբայներով:*

ա) առաջ բ) դեմ գ) դուրս դ) ետ /հետ ե) ներս զ) վեր

424. *Տրված բառերը խմբավորեցեք ըստ խոսքի մասերի և դրանցով (նաև արմատների տարբերակներով) կազմեցեք ածանցավոր մակբայներ:*

Երեք, ամբողջ, դանդաղ, հին, մանուկ, կամաց, նյութ, բազում, արագ, հաճախ, առավոտ, մահ:

425. *Կետադրեցեք համր բնագիրը և ընդգծեցեք մակբայները:*

Ես խոնարհաբար կանգնում եմ նրա նկարազարդած մագաղաթե մատյանների կողքին և արդեն որերորդ անգամ իմ առջև վերստին հառնում են անպատասխան մնացած միևնույն հարցերը: Ով էր Թորոս Ռոսլինը ինչ սովորեց և ինչ սովորեցրեց...

Հին աշխարհի մեծերի կյանքում զարմանալիորեն շատ են այսպիսի ցավալի իսկությունները մենք համարյա ոչինչ չգիտենք նրանց անձնականի մասին: Նրանց անշնորհակալ ժամանակն է մեղավոր թե այն երկարատև թվացող դարերն ու հազարամյակները որ մեզ բաժանում են միմյանցից և մենք չնայած մեր մեծ ցանկությանը պատմության

թանձր մշուշի մեջ չենք տեսնում նրանց: Մեր տեսածը կարծրացած տարածություն է զգացածը խուլ ու անտարբեր լռություն: Մինչդեռ նրանք աշխարհի մեծերը իրենց ստեղծածի մեջ արարիչ են կյանքում մահկանացուներ մարդկայինը շատ ավելի խոր զգալու ընդունակ: Սակայն երևի տարված այդ մեծերի արարչական գործունեությամբ ժամանակի վկաները մոռացության են տվել նրանց անձը կամ որ ավելի հավանական է չեն զգացել մեծությունը չեն հավատացել նրանց հանճարեղը մոլորյալ է թվացել տաղանդավոր անձը ամենասովորական մարդ: Իսկ եթե հետո հասկացել են ուշ է եղել ափսոս շատ ուշ...

Այժմ խոնարհ կանգնած նրա նկարազարդած մատյանների առջև չեմ կարողանում չհարցնել Ով էր նա հայոց միջնադարի նկարչական արվեստի այդ հսկան Դանթեի ժամանակակիցը և իտալական Վերածննդի առաջին նկարչին Ջիոտտոյին նախորդած վիթխարի տաղանդը:

Ռոսլինի կյանքի մասին պատմում են նրա նկարները և շատ քիչ հիշատակարանները գրված իր իսկ ձեռքով միայն իրեն բնորոշ ոճով: Ռոսլինի մտքի հոգու տաղանդի կենսագրությունն իր նկարների մեջ է և դրանք են օգնում կռահելու թե ինչպիսի աշխարհընկալում ունի նա մտավոր ու հոգևոր ինչպիսի իմացություններ մի քիչ էլ ենթադրելու ինչ է տեսել կյանքում տեսածից ինչն է ավելի հոգեհարազատ:

Լույսի մի ճառագայթ կա որի տակ թվում է կարելի է կարդալ Թորոս Ռոսլինի կյանքի պատմությունը թեև խիստ կարճառոտ:

Գրում եմ այս տողերը և հոգուս խորքում խլրտում է մի կնճռոտվող վիրավորանք ու ես հարցնում եմ ինքս ինձ Այս ինչ դաժան ճակատագիր է ինչու բոլոր հաջորդները որ սովորում էին նրանից փորձում էին ընդօրինակել զարմանալիորեն լուռ մնացին և ոչ մի տեղ ու ոչ մի անգամ չմտաբերեցին թե մի ժամանակ ապրել է իր դարից շատ առաջ անցած հանճարեղ մի նկարիչ Թորոս Ռոսլին հնչեղ անունով: Լռեցին որովհետև չհասկացան նրա լռությունը թե իսկապես դարերն էին այդքան դաժան թեպետև սովոր էին հանճարներ ծնելու բայց նաև անշնորհակալ հեշտությամբ մոռացության էին մատնում նրանց: Հետո լռում եմ ու մտածում որ Թորոսի հաջորդներից թերևս շատերն են գրչին հանձնել նրա անունը բայց ինչպես հաճախ է եղել մեր պատմության դաժան ընթացքում այդ և նման շատերի ոչ գիրն է մնացել ոչ նշխարը պատերազմների վայրագ ավերածությունների ժամանակ դրանք անդարձ հունցվել են հող ու քարին: Թերևս եղածին ավելացնեմ նաև այն թե չափազանց համեստ էին նկարչության արվեստի մարդիկ կամ զրկված էին իրենց մասին շատ և մանրամասնորեն հիշատակելու իրավունքից: Եվ նրանց հաջորդներն էլ կարծում էին թե այդ համեստությունը պահանջում է որ իրենք էլ լռեն:

Ըստ Վ.Խեչումյանի

ԿԱՊ

426. *Դուրս գրեցեք կապերը:*

Համաշխարհային գորգագործության մեջ, որի ծագումն ու զարգացումը կապվում է Հին Արևելքի ժողովուրդների հետ, հայկական գորգարվեստը առաջնակարգ տեղ է գրավում: Հայկական գորգերի մասին հիացական տողեր են թողել արաբ աշխարհագիր ճանապարհորդները՝ մեզանից տակավին բազում դարեր առաջ (VIII-XIV դդ.): Բազմաթիվ վկայություններ կան նաև հունա-հռոմեական, պարսկական, բյուզանդական՝ և բուլղարական աղբյուրներում: Եվրոպան դրանց վերաբերյալ տեղեկություններ քաղեց իտալացի հայտնի ճանապարհորդ *Մարկո Պոլոյի գրքից* (1298 թ.): *Փոքր Ասիայով մինչև Հայաստան* հասած եվրոպացին գրում է, որ հայերը «հյուսում են աշխարհի ամենագեղեցիկ գորգերը»:

Հայկական գորգերը մեծ համարում ունեին միջազգային շուկայում: Հետաքրքրական է, որ XV-XVI դարերի եվրոպական նկարիչների կտավներում հաճախ են հանդիպում հայկական գորգերի պատկերներ: Եվ այժմ մեր գորգարվեստի պատմության այդ շրջանի մասին ամբողջական պատկերացում են կազմում հիմնականում իտալացի, հոլանդացի և գերմանացի նշանավոր գեղանկարիչների կտավների միջոցով: Ի լրումն ասենք, որ հայերեն *կապերտ (կարպետ)* բառն էլ անցել է եվրոպական բազմաթիվ լեզուների՝ լատիներենին, անգլերենին, սերբերենին և այլն:

Գորգերն ըստ զարդանախշային սկզբունքների լինում են բուսական, կենդանական, երկրաչափական և այլն: Հայոց զարդամոտիվներն արտահայտում են ժողովրդական հնագույն պատկերացումներ: Ամենահին գորգերից են վիշապագորգերը՝ իրենց վրա պատկերված գալարագեղ վիշապներով, սրանց զայրույթը մեղմելու համար զոհաբերված խոյերի մորթիներով, կայծակներով:

Հայկական գորգերը նշանավոր են եղել նաև իրենց սքանչելի գույների շնորհիվ: Դրանք ստացվել են տարբեր ծառերի կեղևներից ու տերևներից, բույսերի արմատներից ու ծաղիկներից: Բուսական ծագման ներկերից զատ օգտագործվել է նաև կենդանականը (ամենաարժեքավոր գունանյութը որդան կարմիրն է), հանքանյութերից ստացվածներ և այլն:

Միջնադարում (ինչու չէ, նաև այսօր) գորգը հարստության չափանիշ է եղել և աղջկա օժիտի զարդը:

127. *Հետևյալ կապերը խմբավորեցեք ըստ շարադասության:*

Առաջ, առթիվ, ի, անկախ, հետ, մասին, առանց, համաձայն, սկսած, ըստ, մեջ, չափ, քան, առ, բացի, հանձին, պես, մինչև, համար, ի դեմս, նախքան, միջև, զատ, շուրջ, շնորհիվ, հանուն, վրա, որպես, փոխարեն, վերաբերյալ, չնայած, հեռու, հակառակ, մինչ, տակ, ներքո, նկատմամբ:

նախադրություն	*ետադրություն*	*երկդրություն*

128. *Կազմեցեք կապակցություններ, որոնցում միևնույն կապը գործածված լինի որպես նախադրություն և ետադրություն:*

129. *Ետադրությամբ կառույցները փոխարինեցեք հոմանիշ՝ նախադրությամբ կառույցներով:*

ա) հանգամանքներին չնայելով
բ) առյուծի պես
գ) հրամանի համաձայն
դ) սովյալների օգտին
ե) սկսելուց առաջ
զ) հավատի համար
է) այն մասին
ը) թշնամիների դեմ

130. *Հետևյալ կապային կառույցներում ետադրությունները փոխարինեցեք հոմանիշներով (այլ ետադրություններով):*

ա) հնագույն ժամանակներից սկսած
բ) կարևոր հարցի վերաբերյալ/մասին
գ) Մայր Աթոռի հովանու տակ
դ) հոբելյանական հանդիսության ժամանակ
ե) քաջ զինվորի նման
զ) Աստծու աչքի առաջ
է) սիրեցյալից բացի
ը) այսինչ հոդվածի համաձայն

131. *Հետևյալ կապերը խմբավորեցեք ըստ կազմավորման աստիճանականության:*

Համար, ի, ի վեր, ներքո, առ, առաջ, դեպի, հեռու, ներս, տեղ, առիթով, համաձայն, հանդեպ, ըստ, ժամանակ, մինչև, պատճառով, պես, որպես, կից, մասին, իբրև, մոտ, համեմատ, շնորհիվ, նման, չափ, հակառակ, առջև, միջև, հանուն, վրա, երեսից, հանդերձ, վեր, դիմաց, նպատակով, ի վար, քով, հանձին(ս), առընթեր, զատ, դեմ, հետևանքով, ձեռքով, վերաբերյալ, մեջ, տակ, մեկ, միջոցով, դուրս, նախքան:

իսկական կապ	*անիսկական կապ*	*կապական բառ*

432. *Հետևյալ անիսկական կապերն ու կապական բառերը խմբավորեցեք ըստ այն խոսքի մասերի, որոնցից առաջացել են:*

Անունից, առաջ, առջև, առիթով, առընթեր, գծով, դուրս, դեմ, ընդառաջ, դիմաց, երեսից, զուգընթաց, ընթացքում, ժամանակ, կից, կողմից, հետ, հետո, հակառակ, համաձայն, հետևանքով, հավասար, համապատասխան, հեռու, ձեռքից, ձեռքով, միջոցով, մոտ, ներս, նայած, ներքև, նպատակով, չանցած, չնայելով, սկսած, վերև, տարբեր:

գոյական	ածական	մակբայ	բայ

433. *Հետևյալ կապերը խմբավորեցեք ըստ նրանց արտահայտած հարաբերությունների և իմաստների:*

Առաջ, առանց, անց, զատ, ըստ, փոխարեն, հանդերձ, համար, առջև, դուրս, առթիվ, համաձայն, որպես, հետ, պատճառով, հետո, նախքան, բացի, չնայած, իբրև, դեմ, շուրջ, երեսից, դիմաց, օրոք, հակառակ, քան, գծով, շնորհիվ, հանդեպ, նման, ուղղությամբ, հանձին, վերաբերյալ, ներքո, սկսած, պես, ի հեճուկս, ի վեր, ի դեմս, ընդդեմ, մասին, միջև, հանուն, ինչպես, համեմատ, հօգուտ:

տարածական	
ժամանակային	
վերաբերության	
բացառման	
պատճառի և հիմունքի	
նպատակի	
փոխարինության	
համապատասխանության	
ձևի և նմանության	
բացահայտման	
միասնության	
չափի	
համեմատության	
տեղադրության	
ընդդիմության	
դիմաջնության	
զիջման կամ հակառակ հիմունքի	

134. *Բառակապակցությունների միջոցով ցույց տվեք, որ հետևյալ կապերը կարող են գործածվել մեկից ավելի նշանակություններով:*

1. **պես**
   ա) ժամանակի
   բ) ձևի և նմանության
2. **մեջ, ի վեր**
   ա) տարածական
   բ) ժամանակային
3. **համար**
   ա) նպատակի
   բ) շահի
4. **որպես**
   ա) բացահայտման
   բ) ձևի և նմանության

435. ***Ժամանակ, անունից, երեսից, գծով, ձեռքով*** *բառերն ու բառաձևերը բառակապակցությունների մեջ գործածեցեք որպես գոյականներ և կապեր:*

436. *Կազմեցեք նախադասություններ, որոնցում* ***անկախ, նման, զուգընթաց*** *բառերը գործածված լինեն որպես ածականներ և կապեր:*

437. ***Հեռու, առաջ, դեմ, մոտ, հետո, շուրջ*** *բառերը կապակցությունների մեջ գործածեցեք մակբայների և կապերի արժեքով:*

438. *Գրեցեք կապեր, որոնց կազմում որևէ նախդիր լինի:*

439. *Աղյուսակը լրացրեք տվյալ հոլովաձևերը պահանջող կապերով:*

սեռական	
տրական	
հայցական	
բացառական	
գործիական	

440. *Հետևյալ կապերի հետ համապատասխան հոլովաձևերով բառեր գործածեցեք:*

Ի դեմս, հանձին, հանձինս, զատ, համաձայն, ի հեճուկս, չնայած, հակառակ, համընթաց, ի թիվս, ի փառս, ընդառաջ, հօգուտ, հանուն, պես, չափ, սկսած, բացի, մեկ, հանդերձ, փոխանակ, շնորհիվ, համեմատ, առ, առընթեր, նման, կից:

441. *1-ին և 2-րդ դեմքի անձնական դերանունները գործածեցեք մոտ, վրա, պես, համար, նման, ի դեմս, հետ, հանձինս կապերի հետ:*

442. *Կապակցություններ կազմեցեք, որոնցում հետևյալ կապերը գործածված լինեն մեկից ավելի հոլովների հետ.*

1. *առաջ*
   ա) սեռական
   բ) հայցական
   գ) բացառական
2. *հետո, ի վեր*
   ա) հայցական
   բ) բացառական

443. *Փակագծերում տրված բառերը գործածեցեք համապատասխան հոլովաձևերով և/կամ կապային կառույցով (հնարավոր են նաև զուգաձևություններ): Հիմնավորեք այս կամ այն ձևի ընտրությունը:*

1. Երբ զգաց, որ կուրծքը նեղվում է շքանշանների ծանրությունից, հանեց ու դրեց գրասեղանի (դարակ): 2.Բոլոր գրառումները պահում էր (դարակ): 3. Դրամի համար նախատեսված (անցք) հինգ լումա գցելու դեպքում կարող եք ստանալ Ձեզ անհրաժեշտ տեղեկությունները: 4. Այստեղ նա իրեն զգում է ինչպես ձուկը (ջուր): 5. Բաժակի (ջուր) կաթեցրեք հինգ կաթիլ յոդ: 6. Ուսումնասիրողները պարզել են, որ (ջուր) կան աղեր, օրգանական և այլ նյութեր, մանրէներ ու այլ կենդանի օրգանիզմներ: 7. Շողիկը հրաշալի երեխա է. (նա) այնքան պարզություն ու ջերմություն կա: 8. «Մեկ բոպեով վերադարձրե՛ք, խնդրեմ, դեղատոմսը. ես (նա) մի փոքրիկ ուղղում պիտի անեմ»,- ասաց բժիշկը: 9. (Մենք) երբեմն արտահայտվել և արտահայտվում է մի կարծիք, թե երիտասարդ ստեղծագործողներին հատուկ երեկո նվիրելը վաղաժամ է: 10. Նա անմիջապես նկատեց, որ (գիրք) չորս տակ ծալված թուղթ կար: 11. Չեմ հիշում, թե որ (գիրք) եմ կարդացել այդ մասին: 12. (Ծրար) դրեցի նաև փղի լուսանկարը: 13. Իմ (նամակ) ես ամենայն մանրամասնությամբ նկարագրեցի մեր կենդանաբանական այգու փղին, որ քայլում է իրեն տրամադրված չորս (պատ) ու ոչ ոքի չի վնասում: 14. «Ես չեմ կարող համաձայնել այդ (տեսակետ)»,- բացականչեց գիտնականը: 15. Մի մարդ, որ համաձայնվում է (բոլոր), արժանի չէ, որ մեկնումեկը համաձայնվի (նա): 16. Մի օր պուրակում զբոսնելիս նա հանդիպեց իր բարեկամներից մեկին, որը նրան ծանոթացրեց անվանի (գրող): 17. Նրանք մեզ ծանոթացրին գործին վերաբերող բոլոր (փաստաթուղթ):

444. *Գրեցեք 5-ական կապային կառույց, որոնք՝*

ա) *իմաստով համարժեք են գոյականի որևէ հոլովաձևի,*
բ) *իմաստով չեն համապատասխանում գոյականի որևէ հոլովաձևի:*

445. *Հետևյալ կապերից որո՞նք կարող են գործածվել այս, այդ, այն դերանունների հետ:*

Համաձայն, շուրջ, առթիվ, չափ, զատ, հանուն, հօգուտ, ց, ի հեռուկս, ի զարմանս, մասին, օգտին, ձեռքով, նպատակով, փոխանակ, օրոք, վերաբերյալ, առանց, ի վեր, ընդդեմ, պատճառով, ի, չնայած, կողմից, բացի, ըստ, իբրև, առ, նման, պես:

446. *Կապակցություններ կազմեցեք տրված կապերով և գրեցեք դրանց հականիշները:*

ա) նախքան	գ) ընդդեմ	ե) առանց
բ) ի հեռուկս	դ) հակառակ	զ) ի վար

447. *Հետևյալ կապերով նախադասություններ կազմեցեք:*

ա) շուրջ – շուրջը	գ) շնորհիվ – պատճառով
բ) հանձին – հանձինս	դ) կողմից – ձեռքով

448. ***Մեջ, մոտ, մինչև, վրա*** *բաղադրիչներով դարձվածքներ գրեցեք:*

449. *Կետադրեցեք համր բնագիրը, դուրս գրեցեք կապերը՝ դրանք խմբավորելով ըստ տեսակների:*

Մի անգամ գիշերվա մի ուշ ժամի Մահարին կանգնեց Կառավարական շենքի դիմաց ու ձեռքերը բարձրացնելով դեպի երկինք բացականչեց Արվեստի հրաշագործություն է... Ինչ լավ արեցին որ նույն ոճով կառուցեցին մյուս շենքերը ասես սրա արտացոլքը լինեն:

Հետո լռեց ու լուռ կանգնած մնաց շենքի առջև: Հասկանում էի որ ինչ-որ զգացումներ են խլրտում նրա հոգում ու ես էլ լռում էի: Երբ մի հինգ-տասը րոպեի չափ կանգնելուց հետո շարժվեցինք և քայլելով անցանք Աբովյան փողոցի կեսը իսկ ճանապարհն անցանք լուռ ամեն մեկս իր մտորումներով տարված Մահարին կռացավ ու ականջիս շշնջաց Մինչև հիմա ոչ ոքի չեմ ասել ու երևի ոչ մեկի չեմ էլ ասի բացի քեզնից: Գիշեր ժամանակ երբ քաղաքն ամայի է լինում մեկ-մեկ գալիս կանգնում եմ հրապարակում այս շենքի մոտ ու հիանում: Պատկերացնում ես այդպիսի մի գիշեր ուշ ժամի երևի ժամը երկուսը լիներ ինձ մոտեցավ մի միլիցիոներ և կասկածն աչքերի մեջ ըստ նրա ես պիտի որ արտասահմանից ուղարկված լրտես լինեի հարցրեց թե ինչու եմ մեն-մենակ կանգնած այդտեղ: Փոխանակ պատասխանելու ես

հարցրի նրան թե ինչ կփոխվեր եթե մենակ չլինեի այլ լինեինք ասենք երկուսով կամ երեքով: Այդ պահին միլիցիոնները շփոթվեց բայց մի քանի վայրկյան անց սթափվեց և քանի որ իմ խուսափուկ պատասխանի պատճառով նրա կասկածն ավելի խորացավ ինձ առաջարկեց իր հետ գնալ քաղմաս պարզելու ով եմ ես և ինչ նպատակով եմ այս ուշ ժամին կանգնած նման պատասխանատու տեղում: Այդ միջոցին փորձեցի շտկել դրությունը ասացի նրան որ Մահարին եմ: Բայց նա տեղյակ մարդու նման ժպտաց և ասաց թե իրեն հեշտությամբ չես մոլորեցնի ինքը որոշ տեղեկություններ ունի Մահարու մասին: Դպրոցում իրենց հայոց լեզվի ուսուցիչն ասել է որ Մահարին ապրելիս է եղել Բաղդադում բանաստեղծ է եղել և մեռել է դարեր առաջ:

Քաղմասի հերթապահ միլիցիոները ավելի բարձր պաշտոնյա լսեց ինձ բերած սպայի հաղորդումը և նրա հեգնական արտահայտությունը թե ես նախքան այդտեղ գալը և ամբողջ ճանապարհին իրեն հավատացրել եմ որ Բաղդադում դարեր առաջ ապրած ու մեռած Մահարին եմ:

Դուք Գուրգեն Մահարին եք հարցրեց պաշտոնյան:

Ես ձեռքս տարա գրպանս անձնագիրս հանելու: Սակայն ի պատիվ նրա պիտի ասեմ որ թույլ չտվեց այդ անել պատճառաբանելով որ դրա կարիքը չկա ինքը կարդացել է իմ երկերը:

Իմ գրադարանը հորիցս մնացած միակ ժառանգությունն է: Այդ գրքերի մեջ է նաև Մրգահասը որ երկու անգամ եմ կարդացել:

Հետո ասաց թե ներողություն է խնդրում պատահածի համար բայց և միաժամանակ ուրախ է որ այդ թյուրիմացության շնորհիվ ծանոթացավ հայ գրողներից մեկի հետ:

Ըստ Ռ.Զարյանի

ՇԱՂԿԱՊ

450 *Գտեք շաղկապները, որոշեցեք նրանց տեսակները:*

Մեծերից մեկն ասել է, թե ճարտարապետությունը քարացած երաժշտություն է: Եվ մենք էլ, նրան մեքենայաբար կրկնելով, չենք զգում, որ այստեղ մի սխալ կա. ճարտարապետությունը, ճիշտ է, քարից է, բայց ո՛չ քարացած, և եթե մեկը տեսնում է նրա երաժշտական կերպարը, չի կարող նաև չլսել այն: Ուրեմն՝ ճարտարապետությունը քարե երաժշտություն է, ոչ թե քարացած: Սակայն երևի արժե այստեղ ավելացնել, որ ճարտարապետությունը նաև առարկայացած-քարացած պատմություն է, ժողովրդի ամենահաստատուն ու ամենավստահելի ինքնակենսագրությունը:

Հայաստան աշխարհի քարե կենսագրության թե՛ միջնադարյան և թե՛ նորդարյա վկայագրերն արդեն լայն ճանաչում են գտել, և օտարների համար էլ այլևս կասկած չի հարուցում այն, որ հայ ժողովուրդն ունեցել է իր սեփական, ինքնուրույն ու ինքնատիպ ճարտարապետությունը, և որ այս ճարտարապետության լավագույն դրսևորումներն առանց վարանելու կարելի է համեմատել աշխարհի ամենաքաղաքակիրթ ժողովուրդների ճարտարապետական հրաշալիքների հետ:

Ըստ Բ.Ուլուբաբյանի

451 *Հետևյալ համադասական շաղկապները խմբավորեցեք ըստ իմաստի:*

Իսկ, և, ոչ թե այլ, կամ, էլ, բայց, թե՛.... թե՛, սակայն, ու, բայց և այնպես, թե չէ, ևս, այլ, թե, ոչ միայն այլ նաև, նաև, միայն թե, և կամ, այլև, կամ թե, ապա թե ոչ, ոչ միայն .... այլև, մինչդեռ, և՛.... և՛:

միավորիչ-հակադրական	*ներհակական*	*տրոհական*

452 *Գտեք համադասական շաղկապները և որոշեցեք դրանց արտահայտած իմաստային հարաբերություններն ու կազմությունը:*

Ձեռքը աշխարհ է ստեղծում և կյանք: Քարը դնում է քարի վրա, ու քաղաքներ ենք տեսնում մենք: Ձեռքը քարի մեջ նաև շունչ է դնում, և քարը մեր մեծ նախնիների կերպարանքով բարձրանում է հրապարակներում ու պուրակներում, որ ապրի մեզ հետ, իսկ հետո դեպի սերունդները գնա և դարերի հետ էլ ապրի: Ձեռքը մարդուն դեպի աստղերն է ուղարկում, և մեր առջև ոչ միայն այսօրը, այլև վաղն է ծառանում իր մեծությամբ:

Ես ճանաչում եմ մեկին՝ ալեհեր մի մարդու.... Բայց ինչու՞ միայն ես. Երևանն էլ է ճանաչում նրան, Հայաստանն էլ, աշխարհն էլ: Ո՛չ տուն է կառուցում նա, ո՛չ երգ հյուսում, ո՛չ էլ քարին շունչ տալիս, այլ կտավն է կենդանացնում: Երևա՛նն է նկարում այդ ձեռքը, Հայաստա՛նը, աշխա՛րհը: Հայաստանի լեռների ժայռոտ բարձունքներն է նկարում նա, հովիտներն ու ծաղկուն այգիները, թե, ասենք, եգիպտական կամ պարսկական պատկերներ, հային է նկարում նա, թե աշխարհի մարդուն, այդ նկարներում կյանքն ես տեսնում դու, երգ ես լսում, շունչ ես զգում:

Նկարում է նա, և ամեն նկար ավարտելիս նրա մի անկյունում իր ազնիվ ու բարի ձեռքով գրում է մի անուն, մեզնից առաջ ապրած, մեզ հետ ապրող և դեպի սերունդները գնացող մի անուն՝ Մարտիրոս Սարյան:

Ըստ Գ.Բեսի

153 *Լրացրեք հետևյալ գծապատկերը:*

Ստորադասական շաղկապների իմաստները	Ստորադասական շաղկապներ
Մեկնական	
Նպատակի	
Ժամանակի	
Պայմանի	
Պատճառի և հիմունքի	
Հետևանքի	
Զիջական	
Համեմատության (ձևի և նմանության)	
Բացահայտական	

154 *Բացատրեցեք որ շաղկապի արտահայտած իմաստային հարաբերությունները: Որտեղ հնարավոր է, փոխարինեցեք հոմանիշ շաղկապներով:*

1. Դարգ էր, որ առաջվա պես այս մեծ ու լայն աշխարհում ծնվել էի ինքս ինձ հետ: 2. Ավելի հարմար բառ չէի գտնում, որ ամենքի համար պարզ, շոշափելի ձևով արտահայտեի միտքս: 3.Կյանքիդ առաջին իսկ քայլից դու որ այդ ուղին բռնեցիր, ինչե՞ր կանես հետո... 4. Որ դու էլ ես նույնը պնդում, ես այլևս ասելիք չունեմ: 5. Նորածին աղջիկն էլ որ հարս դառնա, տունը կդատարկվի, կմնան ինքն ու կինը: 6.Նա գնաց ու գնաց,

այնքան քայլեց, որ քաղաքը կորավ աչքից: 7. Առաքելը ծառերի տակ աղջկան որ տեսավ, խավարն էլ ցրվեց, երկինքն էլ պարզվեց աչքին: 8. Ի՞նչ իմանայինք, որ գործն այդպիսի ընթացք կստանա: 9.Նրանք որ մարդ լինեին, ինձ հետ այդպես չէին վարվի: 10. Որ խավարած երկնքին նայեց, հիշեց, թե ինչու էր անտառ հասել: 11. Որ այդպես է, ուրեմն նա բախտավոր մարդ է: 12. Քունը չէր տանում. որ քունը չէր տանում, ինքն էլ աչքը գցել էր առաստաղին ու մտածում էր, մտածում... 13. Սիրում էի մեկին, բայց նա մերժեց ինձ՝ ասելով, որ ուրիշին է սիրում:

455. *Նախադասություններ կազմեցեք՝ թե շաղկապը գործածելով համադասական և ստորադասական նշանակություններով:*

456. *Կազմեցեք նախադասություններ՝ հետևյալ բառերը գործածելով կապի և շաղկապի արժեքներով:*

ա) մինչև բ) չնայած գ) փոխանակ դ) նախքան

457. *Կազմեցեք նախադասություններ՝ հետևյալ բառերը գործածելով շաղկապի և վերաբերականի (կամ մակբայի) արժեքներով:*

ա) հենց բ) միայն գ) կարծես դ) ապա

458. *Գտեք շաղկապները և որոշեցեք նրանց արտահայտած իմաստային հարաբերությունները:*

Գրողը, աչքերը փակ կամ բաց, լսում էր նրանց և չէր կարողանում անգամ ժպտալ, ծիծաղել նրանց միամտության վրա: Նա ուզում էր զգուշացնել իր շուրջը հավաքվածներին, թե այն, ինչ սկսել է ու չի վերջացրել, այդպես էլ կիսատ կմնա, ուզում էր ասել նրանց. «Ի՞նչ վեպի և կամ ի՞նչ նոր ստեղծագործության մասին եք խոսում, եղբա՛յր, երբ անողոք պարտատիրոջ պես ներս սողոսկած մահը դատարկածեռն չի հեռանա այստեղից: Ինձ հետ մի՛ խոսեք, ոչինչ մի՛ ասեք, որովհետև ո՛չ լսել եմ կարողանում, ո՛չ պատասխանել»:

Սակայն մի անգամ նա հավաքեց հոգեպահուստ մնացած բոլոր ուժերը և խոսեց, թեև դրա համար անասելի ճիգեր պահանջվեցին, խոսեց, քանի որ գիտեր՝ շուտով փակվելու են կյանքին միշտ սիրով ու կարոտով նայող իր աչքերը:

-Տեսե՞լ եք ուշ երեկոյան փողոցով սուրացող տրամվայը: Ո՞վ գիտի, ցերեկը քանի՞-քանի՞ անգամ է կտրել-անցել քաղաքը, քանի՞-քանի՞ ուղևոր է փոխադրել՝ միշտ աշխուժորեն զնգացնելով զանգերը: Ու այնպես է թվում, թե հենց կյանքն է զնգզնգալով անցնում քաղաքով: Իսկ

ուշ գիշերվա: Ժամերին դատարկ են նրա վագոնները, և լույսերը՝ մոմերի նման, որ ուր որ է պիտի հանգչեն: Ու ասես ոչ թե հանդարտ գնում է տրամվայը. այլ ինչ-որ տեղ է շտապում: Եվ որովհետև շատ է շտապում, կանգառներում երկար չի սպասում, որ ուղևոր վերցնի: Հենց որ հասնում է կանգառին, դանդաղեցնում է ընթացքը, տոմսավաճառն էլ դուրս է հանում գլուխը և անտարբեր ծայնում. «Տրամվայը պարկ է գնում»: Մարդիկ հասկանում են, որ վերջացել է այդ տրամվայի աշխատանքային ժամը, ուստի և թափ են տալիս ձեռքերն ու հեռանում, այսինքն՝«որ այդպես է, գնա՛, քեզ բարի ճանապարհ»: Հասկացե՛ք, ես ևս «պարկ եմ գնում», իմ «աշխատաքային օրն» էլ է վերջացել:

Այս ասաց թե չէ, լռեց գրողը: Լռե՞ց: Վագոնը հավաքակայան գնաց:

Ըստ Գ.Բեսի

459. ***Շաղկապները խմբավորեցեք ըստ կազմության:***

Այլապես, և, ուստի և, քան թե, եթե ... ապա, որ, ու, նաև, եթե, հետևաբար, հենց որ, կա՛մ կա՛մ, էլ, Է՛լ ...Է՛լ, այլև, թե, թեպետ, հետևապես, ըստ որում, սակայն, այնուամենայնիվ, կամ, մինչ, չնայած, մինչև, որպես:

պարզ շաղկապներ	ածանցավոր շաղկապներ	բարդ շաղկապներ	քերականական ձևերից առաջացած շաղկապներ

460. ***Բարդ շաղկապներ թվարկեցեք:***

ա) ***թե, որ*** բաղադրիչներով՝ հարադրական

բ) ***և*** բաղադրիչով՝ համադրական և հարադրական

461. ***Զուգադիր շաղկապներով նախադասություններ կազմեցեք:***

ա) թեև .... բայց

բ) ոչ թե այլ

գ) ոչ միայն .... այլև

դ) չնայած այնուամենայնիվ

462. ***Փոխադրեցեք՝ հագեցնելով կրկնադիր շաղկապներով:***

Երևանի շուկան ամռանը դրախտի է նման: Սիրտդ կանգնում է նարնջագույն դեղձի, մեղրի պես քաղցր ծիրանների, խնկագույն խաղողի ողկույզների վրա: Կաս-կարմիր պոմիդորներ, կեռ պոչերով կծու տաքդեղներ, բուրումնավետ ուրց ու դաղձ...

Ի՞նչ գույներ ու բույրեր... Արևածաղկի մեծ-մեծ գլուխներ՝ սև, լիքը սերմերով, ծմերուկի ու սեխի բլուրներ, իսկ սերկևիլի հո՞տը...

463. *Լրացրեք հետևյալ աղյուսակը:*

Բարդ շաղկապներ		
կցական բարդություններ	*հարադրական բարդություններ*	
	զուգադիր շաղկապներ	*կրկնադիր շաղկապներ*

464. *Յուրաքանչյուր շաղկապի դիմաց մեկական հոմանիշ գրեցեք:*

ա) հետևաբար գ) Է՛լ Է՛լ ե) քանի որ է) թեև
բ) հենց (հենց որ) դ) մինչև զ) քանի ը) ևս

465. *Ծավալեցեք տեքստը՝ գործածելով տարբեր շաղկապներ:*

Գարնան օրեր են: Մթնշաղ է: Օդը տաք է: Փողոցում շատ մարդիկ կան: Երեխաներն ուրախ խաղում են: Հանկարծ ինչ-որ իրարանցում է սկսվում: Քիչ անց մարդիկ հավաքվում են փողոցի մի կետում: Հավաքված բազմությունը միանգամից լռում է: Մի տեսակ մտատանջություն է երևում մարդկանց դեմքերին:

466. *Գիտական գրականությունից մի տեքստ պատրաստեցեք՝ գործածելով այսինքն, այն է, ուստի, հետևաբար, ուրեմն շաղկապները (կամ դրանց մի մասը):*

167.

ա) Կարդացեք պատումը, փոխադրեցեք այն՝ ուղղակի խոսքն ըստ անհրաժեշտության դարձնելով անուղղակի, և վերնագրեցեք:

բ) Բացատրեցեք շաղկապների կիրառական առանձնահատկությունները:

Արևելյան մի քաղաքում ամառվա միջօրեի շոգին փողոցում՝ պատի ստվերում, պառկած էր մի դերվիշ:

Ցնցոտիների մեջ դերվիշը պառկել էր մայթի լայնքին՝ նվաղուն աչքերը կիսափակ:

Քաղաքապետ իշխանը՝ հպարտ ու վեհ, հագած ճոխ ու զարդարուն, գալիս էր դանդաղ քայլերով, շրջապատված շքախմբով:

Փողոցում մարդիկ ոտքի էին կանգնում, կպչում պատերին և խոնարհ գլուխ տալիս անցնող իշխանին:

Շքախմբի առաջնորդը, գավազանը թափահարելով, գոռաց դերվիշի վրա.

-Ի՞նչ ես մեկնվել մայթին, ճանապարհը բռնել: Չե՞ս տեսնում, թե ո՛վ է գալիս. վե՛ր կաց, անպատկա՛ռ:

-Ես միայն ինձնից մեծի առաջ ոտքի կկանգնեմ,-անվրդով պատասխանում է դերվիշը:

Քաղաքապետը լսում է դերվիշի պատասխանը և հետաքրքրված մոտենում է նրան ու հարցնում.

-Մի՞թե ես քեզնից մեծ մարդ չեմ:

-Իհարկե ո՛չ: Քեզնից բարձր դեռ շատ աստիճաններ կան: Այո՞, թե՞ ոչ:

-Այո՛:

-Դու քաղաքապետ իշխան ես, գիտեմ: Որ բարձրանաս, ի՞նչ պիտի դառնաս,- հարցնում է դերվիշը:

-Նահանգապետ,- պատասխանում է քաղաքապետը;

-Հետո՞:

-Հետո՝ վեզիր:

-Հետո՞:

-Փոխարքա:

-Հետո՞:

-Սահմանը սա է: Մեր բոլորի վրա շահն է: Նա է ամենից մեծը:

-Ասենք թե շահ դարձար, հետո՞,- հարցնում է դերվիշը:

-Հետո՝ ոչինչ,-պատասխանում է քաղաքապետը:

-Ահա այդ ոչինչը ես եմ: Ոտքերիս տակից անցի՛ր, գնա՛ քո ճանապարհը,-նույն անվրդովությամբ պատասխանում է և նվաղուն աչքերը գոցում:

Ըստ Ավ. Իսահակյանի

գ) Հետևյալ թևավոր խոսքերից ո՞րն է (որո՞նք են) ավելի համահունչ տրված պատումի բովանդակությանը:

ա) Մեծ մարդն էլ սոսկ մարդ է:

Գյոթե

բ) Մեծությանը վիճակված են նաև մեծ փորձություններ:

Եվրիպիդես

գ) Բոլոր մեծ մարդիկ համեստ են:

Լեսինգ

դ) Ով նսեմացնում է շրջապատողներին, նա ինքը երբեք մեծ չի լինի:

Յոհան Զեյմե (գերմանացի գրող)

ե) Հասարակ լինելը հենց մեծ լինել է նշանակում:

Ռալֆ Էմերսոն (ամերիկացի գրող, փիլիսոփա)

զ) Եթե դուք ուզում եք, որ ձեր ժամանակակիցները ձեզ մեծ ճանաչեն, ջանացեք նրանցից այնքան էլ մեծ չլինել:

Ամբրոս Բիրս (ամերիկացի գրող)

168 ***Կետադրեցեք համր բնագիրը՝ ընդգծելով համադասական շաղկապները մեկ, ստորադասականները՝ երկու գծով:***

Թեև թվականը չեմ հիշում բայց շատ մանրամասնություններ այն դասախոսությունից որ Կոստան Զարյանը կարդաց Արվեստի աշխատողների տանը մնացել են հիշողությանս մեջ:

Դասախոսության թեման էր Լեոնարդո դա Վինչիին և Հայաստանը:

Գրողը պատմեց թե նկարչի մահից հետո ինչ ճակատագրի են արժանացել նրա ձեռագրերը որոնց թիվը հարյուր քսան գրքի է հասել: Շատ քիչ բան է պահպանվել բայց այդ քիչն էլ հինգ հազար էջից պակաս չէ: Պահպանվել է Ատլանտյան մատյանը որի մասն է կազմում Հայկական նամակներ շարքը:

Իտալացի գիտնականները ժխտում են Հայաստանում նկարչի լինելու հնարավորությունը քանի որ ըստ իրենց նրա կենսագրությունն այնքան մանրամասն է հետազոտված որ հայտնի է յուրաքանչյուր տարվա կյանքը: Այլ երկրների մասնագետներ Լեոնարդոյի նկարագրածը համարում են ոչ թե երևակայության խաղ այլ իրական փաստ և ցույց են տալիս որ ուսումնասիրողները հաճախ կամ անուշադրության են մատնել կամ վարպետորեն շրջանցել են նկարչի կյանքի որոշ մանրամասներ: Օրինակ նրանք մինչև հիմա չեն պատասխանել թե այսինչ կամ այնինչ թվականին որտեղ է եղել և ինչ է արել նկարիչը:

Զեկուցողը ոչ միայն հաղորդում էր հարցի ուսումնասիրության փաստագրությունը այլև վիճում էր տեսակետներ հայտնում կամ դիմում փաստերի օգնությանը հաստատելու տարբեր կարծիքներ այդ թվում օտարազգի ուսումնասիրողներից մեկի այն միտքը թե հայկական պարզ գմբեթի հատակագիծը անցել է Եվրոպա և դա Լեոնարդո դա Վինչիի Հայաստանում լինելու հետևանք է:

Դասախոսությունը չափազանց հարուստ էր փաստական նյութով միևնույն ժամանակ այն վկայությունն էր թե գրողի հետազոտական երկարատև աշխատանքի թե պատմության նկարչության ու ճարտարապետության ասպարեզում նրա հիմնավոր պատրաստության և թե մտքի թռիչքի ու տրամաբանության:

Ըստ Ռ.Զարյանի

ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆ

469. *Գտեք վերաբերականները և որոշեցեք դրանց տեսակները:*

ա) Հանդիպում եմ հաճախ նրան,
Բայց նա այնպես սառն է նայում...
Գլուխն անգամ չի խոնարհում,
Չի կարմրում ոչ մի վայրկյան,
Կարծես ինձ չէր նա գուրգուրում
Վարդերի մեջ անցած գարնան:

* * *

Դու կին ու գինի ու փառք կերազես,
Բայց ահա լսիր շշուկը կյանքի.
-Կնոջ ետևից երբեք չվազես,
Չվազես երբեք ետևից փառքի,
Ինչքան շատ վազես նրանց ետևից,
Փառքի ետևից և թե աղջկա,-
Այնքան կփախչեն միշտ քո ետևից...

(ՀՇ)

բ) Ու՞ր էլ լինես, ում գրկի մե՞ջ,
գիտե՛մ, կգա՞ս, իմ հեռավոր,
Չէ՞ որ դարձիդ ճամփին նայող,
խոր կարոտած քո Վա՞նն եմ ես...

* * *

Ո՞չ, դու կին էիր ծնվել աշխարհում
Սիրելու համար ու նվիրվելու,
Մի պարզ օջախի կրակ դառնալու
Ու մոխրանալու այդ նույն օջախում:

(ՍԿ)

գ) Ամպը լեզուն կուլ է տվել,
Հնար չունի որոտալու:
Ցերեկն էլ է ցրտից կծկվել,
Չէ՛, երևի ձյուն է գալու:

* * *

Եթե քո փառքին
Ավելադրել եմ ես գեթ մի նշխար,
Դու դիր իմ հողին հատարակ մի քար
Ու վրան գրիր.
-Հայոց դպրության մեծ տերության մեջ
Այս քարափների դեսպանն էր նա:

(ՀՄ)

170 *Հետևյալ վերաբերականները խմբավորեցեք ըստ տեսակների:*

Արդարև, գուցե, անգամ, նեթ, այո, երևի, երևեկ, բարեբախտաբար, միգուցե, իսկ, իրավ, ոչ, մի՞թե, դժբախտաբար, հենց, գեթ, ահավասիկ, իրոք, չէ, թող, ասես, ցավոք, մանավանդ, թեկուզ, ահա, հարկավ, հիրավի, թերևս, երանի, դե, նույնիսկ, միմիայն, ինչևէ, անտարակույս, կարծեմ, լոկ, ինչ էլ լինի, իսկապես որ, չլինի՞ թե:

հաստատական	
ցուցական	
ժխտական	
երկբայական	
գնահատողական	
սաստկական	
սահմանափակման	
բաղձանքի	
զիջական	
կամային	

171 *Նախադասություններ կազմեցեք բառային և բառաբերականական հետևյալ համանուններով:*

ա) ♦ ասես բ) ♦ անգամ գ) ♦ իսկ դ) ♦ հենց
♦ ասես ♦ անգամ ♦ իսկ ♦ հենց

172 *Հետևյալ երկբայական վերաբերականները խմբավորեցեք ըստ իմաստային առանձնահատկությունների: Յուրաքանչյուր ենթատեսակից ընտրեցեք մեկական վերաբերական և դրանով նախադասություն կազմեցեք:*

Երևի, իբր, չլինի՞, կարծեմ, արդյոք, կարծես, թերևս, իբր թե, ասես, չլինի թե, միգուցե, կարծես թե, գուցե, մի՞թե, ըստ երևույթին:

երկբայական-հավանական	
երկբայական -անհավանական	
երկբայական-հարցական	

473. *Շարադասական և կապակցելիության ինչպիսի՞ յուրահատկություններ ունեն խոկ, նույնիսկ և անգամ սաստկական վերաբերականները:*

474. *Լրացրեք հետևյալ գծապատկերը:*

պարզ վերաբերականներ	ածանցավոր վերաբերականներ	բարդ վերաբերականներ	
		կցական	հարադրական

475. *Գրեցեք քերականական ձևերից առաջացած վերաբերականներ:*

բայի դիմավոր ձևերից առաջացած վերաբերականներ	գոյականի հոլովաձևերից առաջացած վերաբերականներ

476. *Նախադասություններ կազմեցեք՝ վերաբերականի նշանակությամբ գործածելով հետևյալ մակբայները:*

ա) բոլորովին բ) երբեք գ) բնավ դ) ամենևին

477. *Նախադասություններ կազմեցեք՝ վերաբերականի նշանակությամբ գործածելով հետևյալ բայաձևերը:*

ա) խնդրեմ բ) տես գ) քեր դ) եկ/արի

478. *Ոճական-գործառական ինչպիսի՞ շերտերի կարելի է բաժանել հետևյալ վերաբերականները:*

Երնեկ, հարկավ, ահա, մի, հավաստյավ, գեթ, հո, մի՞թե, չլինի թե, իհարկե, չէ, լոկ, ցավոք, դե, գուցե, արդարև, թերևս, երևի, ահավասիկ, այո՛, ախր, հա՛, դժբախտաբար, իրավամբ, երանի, արդյոք, անտարակույս, հիրավի:

479. *Հետևյալ հարցերին և մտքերին արձագանքեցեք հաստատական, ժխտական, երկբայական և գնահատողական վերաբերականներով:*

ա) Հայերը Մաշտոցից առաջ գիր ունեցե՞լ են:
բ) Հայերեն առաջին գիրքը տպագրվել է 1511 թ. Վենետիկում:
գ) Հայերը պիտի մերժեի՞ն պարսից Հազկերտ II արքայի հավատափոխության պահանջը:

դ) Ասում են, թե Լեոնարդո դա Վինչին եղել է Հայաստանում:
ե) 1375թ. Կիլիկիայի հայկական թագավորությունը կործանվեց:
զ) Առաջին աշխարհամարտի տարիներին ցեղասպանության հետևանքով մենք կորցրինք մեր պատմական հայրենիքի զգալի մասը:
է) Պահպանելու՞ ենք ղարաբաղյան պատերազմի հաղթանակները:

480. *Տարբեր վերաբերականների միջոցով ձեր վերաբերմունքն արտահայտեցեք հետևյալ տեղեկությունների նկատմամբ:*

ա) Թեյի մշակության հնագույն կենտրոնը Չինաստանն է:
բ) 1641 թ. հոլանդացիները Չինաստանից թեյը ներմուծեցին Եվրոպա:
գ) Թեյ մշակում են արևադարձային և մերձարևադարձային խոնավ շրջաններում՝ Հնդկաստանում, Շրի Լանկայում, Ինդոնեզիայում, մեր հարևան Վրաստանում և այլուր:
դ) Թեյի տերևներն օգտագործում են հատուկ մշակումից հետո:
ե) Թեյն օգտակար ըմպելիք է և ունի բուժիչ հատկություններ:
զ) Կանաչ թեյը կանխում է ուռուցքների աճը:

481. *Բաց թողնված տեղերում ավելացրեք համապատասխան վերաբերականներ:*

Ա. Էդիսոնի բարեկամները նկատել էին, որ նրա ամառանոցի այգու դուռը մեծ դժվարությամբ է բացվում: Ով մեկ անգամ բացել էր այն, գիտեր, թե որքան ջանք էր պետք գործադրել դրա համար: Նրանք տարակուսում էին. «.... գյուտարարը չի կարող մի գյուտ էլ իր դռան համար անել»: Սակայն ոչ մեկը չէր համարձակվում խոսք բացել այդ մասին՝ վախենալով գիտնականին վիրավորելուց: Բայց մի անգամ .... այդ հարցը տալու հարմար առիթ եղավ: Պատճառը Էդիսոնի բարձր տրամադրությունն էր: Հրավիրվածներից մեկը, գիտնականի ուշադրությունը գրավելով ներս մտնողների վրա, հարցրեց.
-Պարո՛ն, նայեցե՛ք նրանց: չեք տեսնում, թե յուրաքանչյուրն ի՛նչ վիճակով է ներս մտնում: Իսկ գիտե՞ք , որ պատճառը Ձեր այգու դուռն է: Լավ կլիներ, որ մի գյուտ էլ Ձեր դռան համար անեիք:
իրավացի եք,- ասաց Էդիսոնը,- բայց պիտի վշտացնեմ Ձեզ: Այդ գաղափարն իմ մտքում շատ ավելի վաղ է ծագել, և գյուտը արված է: Ես Ձեզ կարող եմ ցույց տալ այն:
Եվ Էդիսոնն իր բարեկամին տարավ ջրավազանի մոտ ու ասաց.
սա է իմ գյուտը: Բանն այն է, որ մուտքի դուռը կապված է պոմպի հետ: Այնպես որ դուռը բացողը քսան դույլ ջուր է լցնում ջրավազանը:

Բ. Մի անգամ, երբ Հենրի Ֆորդն իր մեքենայով ճամփորդում էր Ֆլորիդայում, խճուղու վրա տեսավ մի վարորդի, որը փորձում էր գործի գցել իր շքեղ մեքենան, բայց դա նրան ոչ մի կերպ չէր հաջողվում: Ֆորդը կանգնեցրեց մեքենան, դուրս եկավ ու հարցրեց.

-Ինչ-որ բա՞ն է փչացել:

-.... փչացել է,- պատասխանեց վարորդը, բայց .... չգիտեմ՝ ինչը: Մի բան գիտեմ .... դեռ երկար պիտի չարչարվեմ:

-Կարո՞ղ եմ .... Ձեզ որևէ բանով օգնել,-հարցրեց Ֆորդը:

-.... նայեցե՛ք, գուցե դուք գտնեք խափանման պատճառը:

Ֆորդն ինչ-որ բան ստուգեց, ինչ-որ բան ուղղեց, հետո դիմեց այդ շքեղ մեքենայի վարորդին:

փորձեք հիմա:

Մեքենայի տերը սեղմեց մեկնարկիչի ոտնակը, և շարժիչն աշխատեց:

-Շնորհակալ եմ, պարո՛ն, Դուք մեծ ծառայություն մատուցեցիք,- ասաց վարորդը՝ Ֆորդին մեկնելով 20 դոլար:-Վերցրե՛ք, պետք կգա:

շնորհակալություն, դրա կարիքը չկա,-պատասխանեց Ֆորդը:- Ինձ դրամ հարկավոր չէ. իմ գործերը լավ են, շատ լավ:

-Օ՜, ...,-զարմացավ վարորդը:-Ուրեմն ես սխալվեցի, և մեղավորը .... Ձեր «Ֆորդն» է: Ես մտածեցի, որ եթե մարդ ճամփորդում է նման մեքենայով, փողի կարիք կունենա:

482. *Փոխադրեցեք տրված հատվածները՝ դրանք վերածելով երկխոսությունների, և գործածեք տարբեր վերաբերականներ:*

Ա. Ֆրանսիացի մի հայտնի բժիշկ մի անգամ Պաբլո Պիկասոյին ասաց, որ ինքը մարդու կազմվածքի լավ գիտակ է և կարող է ասել, որ նրա նկարների մարդիկ մարդակազմության տեսակետից մեծ տարակուսանքներ են առաջացնում: Սակայն Պիկասոն նրան հավաստիացրեց, որ իր նկարների մարդիկ ավելի երկար կապրեն, քան բժշկի հիվանդ այցելուները:

Բ. Սառա Բեռնարը չափազանց դյուրաբորբոք անձնավորություն էր և առարկություն չէր հանդուրժում: Մի անգամ, երբ լավ տրամադրություն ուներ, թատրոնի ռեժիսորին ասաց, որ մարդիկ իրեն սխալ են հասկանում և կարծում են, թե ինքը վատ բնավորություն ունի, քննադատություն չի հանդուրժում: Սակայն, ըստ նրա, իրականում այդպես չէ, քանի որ ինքն ավելի է համակրում նրանց, ովքեր անկեղծ են և ասում են այն, ինչ մտածում են իր մասին: Ռեժիսորը համաձայնեց նրա ասածին և ավելացրեց, որ երբ ինքը ծանձրանա թատրոնում աշխատելուց, անկեղծորեն կարտահայտի իր կարծիքը դերասանուհու

մասին, և հավատացած է, որ վերջինս մեծ համակրանքով կլցվի իր նկատմամբ ու տեղնուտեղը ... կվռնդի թատրոնից:

Գ. Մարկ Տվենը հայտնի էր իր ցրվածությամբ: Մի անգամ, երբ նա գնացքով ինչ-որ տեղ էր գնում, նրան մոտեցավ հսկիչը: Տվենն սկսեց արագ փնտրել տոմսը, բայց ապարդյուն: Ի վերջո հսկիչը, որ ճանաչում էր Տվենին, ասաց, որ գրողը տոմսը կարող է ներկայացնել հետո, երբ վերադառնա, իսկ եթե չգտնի էլ, հոգ չէ: Սակայն Տվենը, որ շարունակում էր փնտրել այն, սրդողած պատասխանեց, որ ինքն անպատճառ պիտի գտնի տոմսը, այլապես չի իմանա, թե ուր է գնում:

483. *Գրեցեք մի երկխոսություն, որտեղ վերաբերականները գործածված լինեն նաև իբրև բառ-նախադասություններ:*

484. *Բանաստեղծական տողեր հիշեցեք տրված վերաբերականներից առնվազն երկուսով:*

Երնեկ, թող, ախր, մի՞թե, գեթ, միայն, կարծես, ասես, ահա, անգամ:

485. *Կետադրեցեք համր բնագիրը: Առաջին երկու պարբերության մեջ ընդգծեցեք վերաբերականները և որոշեցեք դրանց տեսակները:*

Պլատոնի ուսուցիչ Սոկրատեսը որն ապրել է մ.թ.ա. 5-րդ դարում սիրում էր կրկնել ես գիտեմ միայն այն որ ոչինչ չգիտեմ: Փիլիսոփայական մտքի պատմության մեջ շատերը Սոկրատեսի այդ միտքն ինքնաոչնչացնող քննադատություն էին համարում: Սակայն ինչ խոսք իրականում այդպես չէ: Ինչքան մարդու գիտելիքները շատ են այնքան լավ է հասկանում նա թե ցավոք որքան չնչին են դրանք այն գիտելիքների համեմատությամբ որ նա դեռ չի յուրացրել կամ իր չգիտելիքն են դեռ: Պատմությունից հայտնի է որ նույն դարի փիլիսոփա Զենոնը նույնիսկ փորձել է ակնառու կերպով ապացուցել այս դրույթը: Ասում են այդ ճշմարտությունը չընդունողի առջև Զենոնը տարբեր մեծության շրջանագծեր է գծել և հայտնել որ մեծը ցույց է տալիս իր գիտելիքի ծավալը իսկ փոքրը զրուցակցի: Շրջագծից դուրս գտնվողը չգիտելիք է թե մեկի և թե մյուսի համար: Ակնհայտ է որ մեծ շրջանագիծը շփման ավելի շատ կետեր ունի շրջագծից դուրս գտնվող բնագավառի հետ քան փոքրը: Պարզ չէ արդյոք որ չգիտելիքի մասին շատ գիտի ավելի բանիմացը:

Իմացածի ու չիմացածի փոխհարաբերությունն իրականում դրսևորվում է որպես սահմանափակի և անսահմանի փոխհարաբերություն: Այդ մտքին են հանգում բոլոր նրանք ում վիճակվում է գիտելիքի խորխորատները տանող ուղին բռնել: Ամփոփելով իր և գործընկերների շախմատային հարուստ փորձը Տարտակովերը այն համոզմունքն է հայտնում թե սոսկ ուժեղը գիտի որքան թույլ է խաղում: Սեփական

գիտելիքի պակասի զգացումը այո կախված է ունեցած գիտելիքի ծավալից ու խորությունից:

Թերևս տեղին է խոսել նաև անբավարար գնահատականի նկատմամբ ուսանողների վերաբերմունքի մասին: Երբ պատասխանողը որոշակի գիտելիքներ ունի բայց գիտի որ իր պատասխանը դեռ բավարար չէ ինքն է իր անբավարար գնահատականը նշանակում մինչ դուք կարտահայտեք ձեր կարծիքը: Իսկ եթե գիտելիքն այնքան անբավարար է որ պատասխանողը չի հասկանում դրա սահմանափակությունը նա բավարար գնահատական է ակնկալում զարմանալով ու վրդովվելով իր ստացած անբավարարից: Ահա և հանգում ենք այն եզրակացության որ ճիշտ ինքնագնահատականն էլ որոշակի ճիշտ գիտելիք է: Տարտակովերը այսպիսի մի ասույթ ունի Շախմատիստներ կան որոնք վատ են խաղում և չգիտեն այդ: Դրանք տգետներ են խուսափիր նրանցից: Շախմատիստներ կան որոնք լավ են խաղում և նույնպես չգիտեն այդ: Նրանք համեստ են հարգիր նրանց: Շախմատիստներ էլ կան որոնք լավ են խաղում և գիտեն որ լավ են խաղում: Նրանք իմաստուններ են հետևիր նրանց օրինակին: Ասույթի հեղինակը ոչ միայն ներկայացնում է իմացածի ու չիմացածի փոխհարաբերությունը կոնկրետ բնագավառում այլև գնահատում է դրանք: Սակայն միթե նրա բոլոր գնահատականներին կարելի է համաձայնել: Կարծում եմ ոչ: Օրինակ երբ շախմատիստը լավ է խաղում և չգիտի այդ ապա դա ամենևին էլ նրա համեստության վկայությունը չէ ինչպես կարծում է հեղինակը այլ նրա գիտելիքների *որոշ պակասի*: Իսկ *համեստությունն ու անհամեստությունը* շատ դիպուկ է բնորոշել չինացի մտածող Լաո Ցզին Շատ իմանալն ու իրեն գիտակ չներկայացնելը բարոյական բարձրություն է իսկ քիչ իմանալն ու իրեն գիտակ ներկայացնելը հիվանդություն: Դժվար չէ նկատել որ նրա նշած բարոյական բարձրությունը համեստությունն է իսկ հիվանդությունը անհամեստությունը:

Ըստ Գ.Բրուտյանի

ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

486

ա) Գտեք ձայնարկությունները, որոշեցեք նրանց տեսակները և արտահայտած իմաստները:

Հե՜յ, ագահ մարդ, հե՜յ, անգոհ մարդ, միտքդ երկար, կյանքդ կարճ,
Քանի՞ քանիսն անցան քեզ պես, քեզնից առաջ, քո առաջ.
Ի՞նչ են տարել նրանք կյանքից, թե ի՛նչ տանես դու քեզ հետ,
Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրվան էս ճամփեդ:

* * *

Խայամն ասաց իր սիրուհուն. «Ոտքդ զգույշ դիր հողին,
Ո՞վ իմանա ո՛ր սիրունի բիբն ես կոխում դու հիմի...»:
Հե՜յ, ջա՜ն, մենք էլ զգույշ անցնենք, ո՞վ իմանա, թե հիմի
Էն սիրուհու բի՞բն ենք կոխում, թե հուր լեզուն Խայամի:

* * *

Ամեն անգամ Քո տվածից երբ մի բան ես Դու տանում,
Ամեն անգամ, երբ նայում եմ, թե ինչքա՞ն է դեռ մնում,-
Զարմանում եմ, թե՝ ո՞վ Շռայլ, ինչքա՜ն շատ ես տվել ինձ,
Ինչքա՜ն շատ եմ դեռ Քեզ տալու, որ միանանք մենք նորից:

Հ.Թումանյան

բ) Հայ քնարերգությունից ձայնարկություններով ուրիշ տողեր քաղեցեք:

487 *Վա՜յ ձայնարկության հետևյալ իմաստները նշեցեք ըստ համապատասխան նախադասությունների:*

1. Ցավի՝ վշտի՝ լացի՝ ողբի բացականչություն:
2. Ափսոսանքի բացականչություն:
3. Կարեկցանքի, վշտակցության բացականչություն:
4. Վախի՝ անհանգստության՝ տագնապի բացականչություն:
5. Զարմանքի բացականչություն:
6. Ուրախության (նաև զարմանքի) բացականչություն:
7. Սպառնալիքի բացականչություն:
8. Սխալը գիտակցելու՝ շվարածության բացականչություն:

ա) Վա՜յ ծեզ, հզորնե՛ր, որ իր խրճիթում լացացրիք խեղճին, այրուն ու որբին *(ՀԹ)*:

բ) Հյուրասիրում եմ արտերին պուտով, Արտերին... վա՜յ, չէ՞... ծովին կարկուտով *(ՊՍ)*:

գ) -Վա՜յ, տունդ քանդվի, ա՛րջ... քոթոթը սատկել է,- ծնկանը զարկելով գոչեց քեռիս (*ՎԱ*):

դ) -Վա՜յ, մայրի՛կ ջան, տե՜ս, բակն ու դուռը լի Ինչքա՜ն սպիտակ թիթեռ է գալի (*ՀԹ*):

ե) Վա՜յ, ճիշտ որ կույր եք (*ՀԹ*):

զ) Վա՜յ, չկտրես, Աստվա՛ծ սիրես (*ՀԹ*):

է) Եվ սիրտը մոր ասավ տխուր, Լացակումած. «Վա՜յ, խե՛ղճ տղաս, Ոչ մի տեղդ չցավա՞ց...» (*ԱԻ*):

ը) Կխոցեմ խորին, վա՜յ նրա օրին, Որ չհնազանդի իմ օրենքներին (*ԱԻ*):

488. *Գրեցեք այն ձայնարկությունները, որոնցից կազմվել են հետևյալ բառերը:*

Չրխկալ, ծվծվալ, կռկռոց, վայել, ծլնգոց, թրխկոց, թխկոց, բզզալ:

489. *Զգացական ձայնարկություններով կազմեցեք նախադասություններ, որոնցում նրանք արտահայտեն՝*

ա) զարմանք բ) ուրախություն գ) ափսոսանք դ) ցավ

490. *Մեկական նախադասություն կազմեցեք* ***ա՜, է՜, ու՜, օ՜*** *ձայնարկություններով և նշեցեք նրանց արտահայտած նշանակությունները:*

491. *Գրեցեք դարձվածքներ, որոնց մի բաղադրիչը ձայնարկություն է, և բառարանով ճշտեցեք դրանց իմաստները:*

492. ***«Անտառի աշնանային մեղեդին»*** *վերնագրով շարադրություն գրեցեք գործածելով ձայնարկություններ, ինչպես նաև դրանցից կազմված գոյականներ և բայեր:*

493. *Փոխադրեցեք տրված հատվածի բովանդակությունը՝ գործածելով համապատասխան ձայնարկություններ:*

Մարուքա սարի գլխին գալարուն պար բռնեցին արնագույն բոցերը:

Գյուղում դուռ ճռնչաց:

Ոչ ոք չկանգնեց շեմին, չխաչակնքեց, չմոտեցավ աղոթարանի մաշված սալքարին:

Հովիվները «ձեն ձենի» չտվեցին: Արշալույսը գնդակահարել էին, արնոտել դեմքը: Գյուղի ժամացույցը կանգ էր առել:

Մամիկն աչքերը բացեց: Ծանր էին կոպերը՝ տաք թոնրի սալքար խփի նման ծանր ու տաք: Գլխի մոտ կծկված կատուն մլավեց: Մամիկը մշուշված հայացքով նայեց կապտափայլ երկնքին, սևացած օճորքին և հին սովորությամբ ուզեց աղոթել: Չկարողացավ շուրթերը շարժել, գլխի վրա ցավ զգաց... և հիշեց: Հոգու խորքում ճչաց, իսկ չորացած շուրթերի վրա նվազեց ճիչը: Երդիկը մթագնեց, ճոճվեցին մրով թրծված գերանները, օրորվեցին սյուները: Կրակոցներ, ծղրտոց, իրարանցում, թոռների աղեկտուր ճիչ...

Մ. Գալշոյան

494. *Կարդացեք մանրապատումը և ծայնարկություններով հագեցած նմանատիպ մեկ այլ զրույց գրեցեք:*

Նրանք հանդիպեցին իրար: Նրանցից մեկը չէր սպասում, որ մյուսը կենդանի է: Լսել էր, որ նրան դժբախտություն է պատահել, որ նա չէր դիմանա այդ դժբախտությանը, կմեռներ:

Եվ ահա, ի՜նչ ուրախալի բան, նա կենդանի՜ է...

Իրար էին նայում և չէին խոսում: Ճիշտը՝ չէին կարողանում խոսել: Խոսքը քիչ եղավ: Չկար այն խոսքը...

Միայն նայում են իրար և ...

-Հը՛մ,-ժպտում է սա:

-Հա՛,-ժպտում է մյուսը:

Կրկին նայում են իրար ոտից գլուխ ու էլի ... ժպտում.

- Հա՛, հը՛մ...

Է՛հ: Նախամարդի՞կ են, ի՞նչ են, թե՞ ապագայի մարդիկ: Ու՞ր կորավ լեզուն, հազարավոր տարիների լեզուն... «Հա՛, հը՛մ». սրանով խոսք ու զրու՞յց կլինի:

Բայց տե՛ս, եղավ:

Եվ որքա՜ն նրբություններ, խոր մտքեր այս մի «հը՛մ, հա՛»-ի մեջ...

Դ. Դեմիրճյան

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Խոսքի ուժը քիչ բառերով յատ բան արտահայտել կարողանալն է:

Պլուտարքոս

Պարզությունը խոսքի գլխավոր արժանիքն է:

Արիստոտել

Մշուշապատ խոսել կարող է ամեն ոք, պարզ խոսել՝ քչերը:

Գալիլեյ

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՑԵՍԱԿՆԵՐԸ (ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՀՆՉԵՐԱՆԳԻ)

[redacted] *Կարդացեք հանձնարարական հնչերանգով և ասացեք, թե ինչ հնչերանգի նախադասություններ կան տեքստում:*

[redacted]

[redacted]

[redacted]

[redacted]

[redacted]

երբե՛ք, ոչ մի օր այս հողը չի՞ փորձել խլել օտարինը, և այստեղ, այս հողի վրա, անարդար ձևով օտարի ոչ մի կաթիլ արյուն չի թափվել...

Այստե՛ղ, այս երի՞ցս անիծյալ և յոթնապատի՞կ սիրելի հողի վրա, որը փոքր է, այո՛, սակայն մեծ՝ իր զավակներով, իր անձնվե՞ր սիրով դեպի մյուս ժողովուրդները, դեպի ազնիվը, վսեմն ու բարին...

***

Մեր ժողովրդի անհամար զրկանքներն ու տառապանքները, նրա ուժերի մշտական լարումն ու դիմադրությունը ավերիչ ուժերին, նրա զարմանալի՞ հատկությունը՝ հնար գտնել անհնարին վիճակներում, թրծել-սրել են նրա միտքը, ձիրքը, ձեռքը, կառուցման ու ստեղծման նրա դարեր խլացված ու զսպված տենչն է՛լ ավելի բորբոքել, և այդ ամենը, պարարտ հող ու հնարավորություն գտնելով, հրաշքներ է գործում:

Գ.Էմին

496. *Որոշեցեք նախադասությունների հաղորդակցական տեսակները, բացատրեցեք նրանց հնչերանգային առանձնահատկությունները:*

Ձրի գնացող աղջիկներից շիկավարսը կանչեց.

- Կարմիր կապավո՛ր կտրիճ, ո՞ւր ես գնում մենավոր...

Ավետիքը կարմրեց, մի կերպ զսպեց իրեն, կանգ չառավ: Ջահել աղջիկներ էին, խաղք էին անում: Եվ ինքն էլ ծիծաղեց:

- Ձեր արևն ասեմ,-կանչեց բարձրագոչ,- մի՛ հեռացեք տաք օրորոցից, սելջուկի շուն ու զինվորի չերևաք:

Պատասխանը եկավ զանգակ զնգոցով, ջրի խշշոցով.

- Մե՞նք վախենանք... Քեզ պես հայ կտրիճ կա՝ զույգ աչքը մեզ վրա...

Ու կրկին ծիծաղեցին: Ավետիքը նայեց շիկավարս աղջկան: Պտույտ եկավ գլուխը. հեշտ չէր: Երանի հոգնած պառկեր խոտին, թեժ ու կրակ արեգակն արյան միջից անպակաս, և այս ոսկեորի խտուտ եկող ծնկին դներ գլուխը: Թող ասեր կամեցածը: Ինքը կիսախուփ կաներ աչքը և այդպես կմնար...

Ավետիքն ափսոսանքով շարունակեց ճամփան: Բայց չէ, ձեռք չքաշեցին շինական աղջիկները, ասացին, ծիծաղեցին նորից.

-Արի՛, հոգի՛, արի՛...

-Տո՛ւն դարձիր, օրոցք կապենք, հոգի՛, արի՛...

Եվ ծիծաղ, հռհռոց, ծափ ու ճիչ:

Վա՜յ, անխիղճ, հանդո՞ւգն աղջիկներ, ուրիշ խոսք չունեի՞ք ասելու: Չմտածեցի՞ք, որ դրանից նեղսրտություն կգա, կմքնի ու կմռայլվի Ավետիքը: Նրան որտեղի՞ց տուն տանող ճամփա: Տունն օտարի ոտքի տակ, ճամփաները՝ նույնպես: Ո՛չ երդիկ, ո՛չ սեր, ո՛չ մանկան օրոց:

Ըստ Վ.Խեչումյանի

497. *Մեկական հարցական նախադասություն կազմեցեք այնպես, որ դրանք՝*

ա) մի բան իմանալու կամ հավաստիանալու նպատակ ունենան
բ) մեղմ խնդրանք արտահայտեն
գ) հանդիմանություն, դժգոհություն, որևէ գործողության մերժում արտահայտեն
դ) ճարտասանական բնույթ ունենան

498. *2-ական հարցական նախադասություն կազմեցեք՝*

ա) հարցական դերանուններով բ) երկբայական վերաբերականներով

499. *Նախադասություններ կազմեցեք, որոնցում հարցում արտահայտող բառը լինի՝*

ա) նախադասության գլխավոր անդամներից մեկը
բ) որևէ լրացում
գ) նախադասության անդամ չհանդիսացող բառ
դ) կապ

500. *Մեկից ավելի հարցում պարունակող երկու նախադասություն կազմեցեք:*

501. *Ճարտասանական հարցով ձևակերպեցեք ձեր միտքը*

ա) հայրենիքի ապագայի մասին
բ) երիտասարդությանը հուզող որևէ խնդրի վերաբերյալ

502. *Փորձեք տեքստի բովանդակությանը և ոճին համապատասխան հարցական հնչերանգի 1-2 նախադասություն ավելացնել (որևէ մասում):*

Շա՜տ և ամե՜ն տեսակ քար կա Հայաստանում, բայց անգրագետ քար համարյա չե՜ս գտնի:

Զգո՜ւյշ քայլիր այս հողի վրա և զգո՜ւյշ վարվիր ամեն մի քարի հետ, որն արտաքինից կոպիտ է, չեչոտ, չոր մամուռով ու քարաքոսով պատած: Զգո՜ւյշ, որովհետև եթե եղունգով փոքր-ինչ մամուռը քերես, նրանցից ամեն մեկի վրա նախնադարյան մարդու գծանկարներ կտեսնես, նշանագրեր, արամեական, հեթիթական ու խալդ-ուրարտական սեպագիր արձանագրություններ, զարդ ու քանդակ, իսկ չորրորդ դարի վերջից սկսած՝ նաև այն երկաթե պայտերի նմանվող ամուր ու դիմացկուն տառերը, որոնք անբաժան են այս քարերից ավելի քան 1600 տարի... Ո՛չ միայն գրագետ՝ ստորագրվա՜ծ են այս քարերը, մե՛ր քարերն են....

Նրանցից ամեն մեկի վրա մեր ինքնության դրոշմը կա, ճիշտ այնպես, ինչպես այս հողի վրա մեր ինքնության քարե ծանր կնիքը՝ մեր ճարտարապետական կոթողների տեսքով...

Մեր ինքնության քարե կնիքն են այս հողի վրա Հռիփսիմեն, Գեղարդը, Աղթամարը, Տեկորը, Էջմիածինը, Կարմրավորը...

Հայոց հողի ամեն էջի վրա, ամեն դաշտում, ձորում, լեռան ծերպին կամ գագաթին կոթող կա՝ մի քարե վանք, մի խաչքար, մի կամուրջ, մի իջևան,- քարե մի կնիք առ այն, որ այս հողը մերն է, մեր Սեփականը:

Գ.Էմին

503. ***Ինչպես, ով, որ դերանունները նախադասությունների մեջ գործածեցեք հարցական և բացականչական հնչերանգներով:***

504. ***Հրամայական նախադասություններ կազմեցեք, որոնք արտահայտեն՝***

ա) հրաման, կարգադրություն
բ) հորդոր, խնդրանք
գ) արգելք
դ) առաջադրանք
ե) խորհուրդ
զ) կոչ

505. ***Հրամայական նախադասություններ կազմեցեք, որոնց ստորոգյալն արտահայտված լինի՝***

ա) հրամայական եղանակի դրական և ժխտական խոնարհման բայերով
բ) ըղձական եղանակի հոգնակի 1-ին դեմքով
գ) պայմանական (ենթադրական) եղանակի 2-րդ դեմքով
դ) սահմանական եղանակի անկատար ներկայի 2-րդ դեմքով
ե) սահմանական եղանակի ապակատար ներկայի 2-րդ դեմքով
զ) անորոշ դերբայով

506. ***Գրեցեք մեկական հրամայական (հորդորական) նախադասություն, որն արտահայտված լինի՝***

ա) բառ-նախադասությամբ
բ) անվանական նախադասությամբ

507. ***Բացատրեցեք ըղձական և բացականչական նախադասությունների ընդհանրություններն ու տարբերությունները:***

508. ***Նախադասություններ կազմեցեք այնպես, որ բացականչական հնչերանգը կրեն՝***

ա) ձայնարկությունը
բ) դերանունը
գ) անդեմ բայը
դ) վերաբերականը
ե) ածականը
զ) կոչականը

509. *Գեղարվեստական գրականությունից օրինակներ քաղեցեք, որոնցում միաժամանակ տարբեր հնչերանգներ են արտահայտվում: Մատնանշեցեք հնչերանգային համակցման դեպքերը:*

510. *Հետևյալ նախադասություններին (կամ նախադասության անդամներին) փորձեցեք հնչերանգային այլ երանգավորում հաղորդել:*

ա) Բայց արդեն ուշ էր, չափազանց ուշ, և Նոյին հարկավոր չէին գանձն ու փառքը:

բ) Քանի՞ անգամ էր քչփորել-պեղել՝ խորքը մտնելու ցանկությամբ:

գ) - Օրինակ վերցնենք Քրիստոսից,- ասաց Գոշը,- նա իշխում է մեր մարմնի ու հոգու վրա, իշխում է, չի հոշոտում, մարդկանց տանում է հույսի ու հավատի ճանապարհով, ապրեցնում է:

դ) Ձենք ու զորականի պակաս կա Հայաստան աշխարհում,- ասաց Զաքարեն:

ե) Կհաղթենք, հաստատ է,- քրթմնջաց Մխիթարը:- Բայց հետո հաղթանակած հայ իշխանը սելջուկից կորցրածը ետ բերելու մարմաջով ագահորեն կընկնի սեփական կալվածքների վրա:

զ) - Որոտանը փոխել է հունը, հոսում է հակառակ ընթացքով,- իր կուսակրոն հոգևորականներին ասաց վանահայրը,- ինչպե՞ս փրկենք այսքան դիվահար ու հալածական մարդկանց:

է) Շատ ժողովուրդ էր հավաքվել հուղարկավորելու,- դառնությամբ շարունակեց Սահակը:

Ըստ Ա. Մարտիրոսյանի

511. *Ըստ հետևյալ տեքստի եզրակացրեք, թե ինչով կարող է արտահայտվել պատմողական նախադասության ստորոգյալը:*

- Այստեղ շատ բան ունեմ դիտելու և հիշելու. ամբողջ Աթենքն է փռված չորս կողմը: Ես մի քիչ կնստեմ այն ժայռի վրա,- ասացի ուղեկցիս:

Ինձանից ձախ՝ քիչ հեռվում, ժայռերի վրա, նստել էին երիտասարդներ՝ մի քանի զույգ այստեղ-այնտեղ, իսկ մեկն էլ, ամենամոտիկը, մորուքավոր մի երիտասարդ, որ հատկապես ուշադրություն էր գրավել, աջ թևի վրա ընկողմանած՝ նայում էր Ակրոպոլիսի արևմտյան կողմի բլուրներին: Աչքերից երևում էր, որ արվեստագետ հոգի է ու մտածող միտք: Բարի նախանձ շարժվեց իմ մեջ. նա կարող է ուզած ժամանակ գալ այստեղ, այդպես ընկողմանել ու դիտել, մտածել ու երազել: Ես էլ, երբ Աթենքի բնակիչ մի պատանի էի պարզապես, արել եմ այդպես մեկ թե երկու անգամ, բայց թերևս լիովին չեմ զգացել, թե ինչպիսի երանություն է դա: Իսկ հիմա... գեթ մի քիչ, գեթ մի քանի րոպե նորից նստեմ այստեղ, ահա այս կարմրավուն ժայռի վրա, որ անդիմադրելիո-

րեն կանչում է ինձ, նստեմ այս պայծառ, տաքուկ, իսկապես ոսկեշող արևի տակ այս հրաշալի, այս իրական ու անիրական հետմիջօրեին:

Ու նստեցի: Մորուքավոր երիտասարդից մի քանի քայլ հեռու: Չնայեց իմ կողմը, ինչպես պիտի աներ որևէ մեկը պարզ բնազդական մղումով, երևի չնկատեց էլ ինձ. ամբողջ կերպարանքով ասես դարձել էր մարմնացյալ հայեցողություն: Մտքումս նորից երանի տալով նրան՝ ինքս էլ նայեցի արևմտյան կողմի բլուրներին՝ մոտակա սպիտակ ժայռաբլուր Արեոպագոսին, քիչ ավելի հեռու Հավերժահարսերի գեղեցիկ բլուրին, որի գագաթին աստղադիտարանն է:

Քառասուներկու տարիների խորքից հիշեցի մեր ուսուցչին, որի հետ մի քանի ժամ անցկացրինք Ակրոպոլիսի վրա և շուրջը՝ լսելով մեր ուսուցչի բացատրությունները ու միաժամանակ զբոսնելով, նախաճաշեցինք Հեփեստոսի տաճարի մոտ՝ սոճիների պուրակում, գետնին նստած:

Իրոք որ «կենդանի դաս» էր՝ զբոսանքի ազատ, բերկրալից մթնոլորտում:

Ըստ Կ.Սուրենյանի

ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

ՄԻԱԿԱԶՄ ԵՎ ԵՐԿԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

512. *Գտեք միակազմ և զեղչված անդամով նախադասությունները, մատնանշեցեք նրանց քերականական առանձնահատկությունները:*

Մեքենան ի վերջո կանգ առավ ծառաշատ լեռնալանջի մթության մեջ, և մենք դուրս եկանք: Լուռ քայլեցինք բլուրն ի վեր: Լուսինը մեզ ուղեկցում էր դեպի բարձունք: Երբ վեր բարձրացանք, մինչև որ իրոք կտեսնեի, կանխազգացի. այստեղ մեկը կա: Մեկը, որ տառապում է անքնությամբ: Տառապում է տագնապով: Հավերժորեն: Եվս մի ակնթարթ, և ես տեսա-նրան: Կրակ էր: Կենդանի կրակ: Գիշերվա մեջ: Կրակից վեր քարե սալեր էին, որ շեղորեն երկինք էին հառնում: Մաշկիս վրա անմիջապես զգացի ժամանակը: Ինչպես քամին ես զգում: Անպաշտպան, ասես մենավոր ինչ-որ կրակ էր... Եվ միաժամանակ՝ վիթխարի, համաժողովրդական մի խարույկ: Կրակի շուրջը ողջ Երևանն էր: Ողջ Հայաստանը: Ե՛վ այն Հայաստանը, որ այստեղ է, իր հողի այս կտորի վրա, և՛ այն Հայաստանը, որ այնտեղ է, մեր դարի թափառիկ ճանապարհներին, այնտեղ՝ Արարատից այն կողմ: Այնտեղ՝ անընդգրկելի աշխարհում: Եվ նրա շուրջը պատմությունն է: Համարյա երկու միլիոն հայ հոգիներ՝ 1915-1920 թվականների հրեշավոր ցեղասպանության զոհերը, թվում էր, սավառնում են այդ սրբազան կրակի վրա և պահանջում են, որ իրենց հիշեն, իրենց հիշեն: Խոնարհված սալաքարերին մոտիկ երկինք էր մխրճվել հուշասյան նետը, որ երկճեղքված է ներքևում՝ իբրև ողբերգություն, և իբրև հույս՝ միածուլված է վերևում, աստղերին: Միախառնված հավերժությանը:

Ըստ Ե.Իսակի

513. *Փոխադրեցեք հետևյալ պատկերն այնպես, որ այն առավելագույնս հագեցած լինի միակազմ նախադասություններով:*

Եղանակը փոխվում է անակնկալ, սկսվում է մրրիկը, և խաթարվում է բնության սրբազան անդորրը: Լուսնի դեմքից պոկվում է քողը և մի կողմ նետվում: Նա կարծես կերպարանափոխվել է, քնքշացել, մաքրվել և արծաթազօծել իրեն:

Անդորր ծովի վրա այժմ հողմն է շաչում-շառաչում և անկասելի հարվածներ տեղում: Քաղցր նիրհից արթնանալով՝ ծովակը կամացուկ շարժվում է, հետո խուլ հառաչում հուսաբեկ, ընկնում այս ու այն կողմ և դանդաղորեն փրփուրներ արձակում վիրավոր կրծքից: Սուլոցով մոտենում է լերկ ժայռերին ու քերծերին, դարձյալ հետ քաշվում, նորից մոտենում և գանգուրներով զարդարված ճակատով մարտնչում նրանց հետ: Ճակա-

տամարտն անընդհատ շարունակվում է, ալիքները, բյուր անգամ ջարդուփշուր եղած, սրընթաց հետ են վազում, կրկին հարձակվում՝ ջանալով պատառոտել իրենց ճնշող ժայռի կուրծքը: Ուստի ճիգ են թափում, մոլեգնում, բայց զգալով կտրիճ հսկայի անհաղթահարելիությունը՝ ընկրկում են:

Լուսինը, տեսնելով ծովի զայրույթը, հետզհետե բարձրանում է երկնակամարի վրա՝ աղմուկ-աղաղակը չլսելու համար: Նրան օղակել են ջինջ ամպերը, ինչպես ընկերուհիները՝ ամոթխած հարսնացուին, և գուրգուրում են նրան փաղաքուշ:

Երկինքը թափանցիկ է և սև, ուստի լուսնյակն իր արծաթյա շողերով ավելի պայծառ է երևում մթամած պատկերի վրա, ինչպես գեղեցկուհին՝ սև զգեստի մեջ:

Ըստ Գ.Բաշինջաղյանի

514. *ա) Ասացեք, թե հետևյալ առածներում (միակազմ նախադասություններում) ինչո՞վ է արտահայտվել գլխավոր անդամը:*

Երկաթը տաք-տաք կծեծեն:
Լավություն արա, ջուրը գցիր:
Ում սայլին նստես, նրա հորովելը երգիր:
Մի ձեռքով երկու ծմերուկ չեն բռնի:
Մորը տես, աղջկան առ:
Հարուստն օձ կերավ, ասին դեղ է, աղքատը կերավ, ասին՝ սոված է:
Ճտերն աշնանն են հաշվում:
Ճիշտ բանը հանաքով կասեն:
Ամեն բարև տվողին բարեկամ չեն ասի:
Հարուստի հագին շոր տեսան, ասին՝ շնորհավոր, աղքատի հագին տեսան, հարցրին՝ որտեղի՞ց:
Շունը սատկեցնողին են քարշ տալ տալիս:

բ) Յուրաքանչյուր տեսակից 1-2 օրինակ ինքներդ գրեցեք:

515. *Հաստատական, ժխտական և հարցական բառ-նախադասությունների մեկական օրինակ ունեցող որևէ երկխոսություն գրեցեք:*

516. *Հայ ժողովրդին հուզող ամենակարևոր խնդիրները շարադրեցեք բայական միակազմ նախադասությունների միջոցով:*

517. *«Պատերազմի արհավիրքները» վերնագրով խիստ հակիրճ մի պատում գրեցեք, որն ամբողջությամբ կազմված լինի անվանական միակազմ նախադասություններով:*

518.

ա) Գտեք թերի նախադասությունները, 1-2 դեպքում վերականգնեցեք նախադասության զեղչված անդամները:

Զրուցում եմ մի քանի օր առաջ միջնակարգ դպրոցն ավարտած մի պատանու հետ:

- Ավարտեցի՞ր, ի՞նչ ես մտածում անել:
- Չգիտեմ, մի բան կանեմ, էլի:
- Ինչպե՞ս թե, իսկ ինքդ ոչինչ չե՞ս երազում...
- Երազո՞ւմ: Ո՞վ է իր երազածին հասնում որ: Անցյալ տարի մեր դպրոցի ամենադմբո աշակերտն ընդունվեց ինստիտուտ, իսկ ես...
- Դու ի՞նչ...
- Գիտեմ, որ չեմ ընդունվի:
- Հետո՞ ինչ: Դրանով կյանքը կվերջանա՞...

Չի վերջանա: Կսկսվի: Ինձ աշխատանք են խոստացել սրճարանում, եկող տարվանից՝ ռեստորանում...

- Մատուցո՞ղ...
- Նրանք շատ լավ փող են աշխատում:
- Իսկ քո երազնե՞րը: Մի՞թե քեզ այդ թևերը տվել են, որ...
- Բա ինչի՞ են տվել...
- Գուցե թռչելո՞ւ համար...
- Թռչելո՞ւ,-անկեղծ ժպտաց պատանին,- մարդու ինչի՞ն է պետք թռչելը, ինչի՞ են պետք մարդուն թևեր:
- Ինչի՞ են պետք մարդուն թևեր: Ո՛չ, պետք են:

Ըստ Վ. Պետրոսյանի

բ) Շարունակեցեք՝ գործածելով բառ-նախադասություններ:

519 *Թվարկեցեք շարահյուսական կապակցության միջոցներն ու եղանակները:*

520 *Հետևյալ հատվածում ցույց տվեք շարահյուսական կապակցության միջոցները (վերջավորություններ, կապեր, շաղկապներ, շարադասություն, հնչերանգ):*

Մի անգամ մեր տանը Չարենցը թաշկինակի փոխարեն մի սպիտակ և մեծ շոր հանեց գրպանից ու շրթունքները մաքրեց:

Ի՞նչ փոքր է թաշկինակդ,- կատակեցի ես:- Ի՞նչ է, թաշկինակ չունե՞ս, որ այդ շորի կտորով ես բերանդ մաքրում:

Մարո ջան, Բոժիկս ծնվեց, ես հրաժարվեցի թաշկինակից, սա Բոժիկի բարուրի շորն է, գրպանս եմ դրել, որ միշտ նրա բույրը զգամ և

միշտ հիշեմ նրան: - Ա՛յ տղա, Ալազա՛ն, դու չես հասկանում, թե որքան քաղցր է առաջին զավակը. ես նրան խելագարի պես եմ սիրում:

Անցան տարիներ: Մի օր Աբովյան փողոցում զբոսնելիս Չարենցը մի մեծ, վարդագույն շոր հանեց գրպանից և դեմքի քրտինքը սրբեց:

Արփիկն արդեն մեծացել է, էդ ո՞ւմ բարուրի շորով ես երեսդ սրբում,- հարցրի ես ծիծաղելով:

- Ադոկի՛:

- Վա՜հ, ինչպե՞ս եղավ, որ նրան սիրեցիր,- հարցրի զարմացած:

Գիտե՞ս ինչ, Մարո՛, երբ տեսա, որ Անահիտիս քիթը գնալով փոքրանում է, դեմքով ու խելքով էլ ինձ է նմանվում, դրանից հետո ես նրան անչափ սիրեցի...

Ըստ Մ.Ալազանի

521. *Համաձայնության, առդրության և խնդրառության երեքական դեպք մատնանշեցեք և բացատրեցեք:*

Ինձ դուր են գալիս հայ ժողովրդի լավատեսությունը, աշխատասիրությունը և անկոտրում կամքը: Նման խառնվածք այստեղ ձեռք է բերվել այնպիսի պայմաններում, երբ մարդն ստիպված է լինում մի կաթիլ ջուր աղերսել Աստծուց, ինչպես երկնային մանանա, և որտեղ հացն անգամ ստիպված էին քարից քամել: Եվ այսուհանդերձ, անտեսելով ամեն դժվարություն, մարդիկ այստեղ ուրախ ու զվարթ են գարնան հավքերի նման: Ի՜նչ կենսախինդ են այստեղ պարերը: Որքա՜ն բարեհնչյուն են երգերը: Դրանք ուղղակի հրաշք են: Հայկական պարերը բաց են աշխարհի առաջ: Այստեղ շատ դյուրին է մարդկանց հետ շփումը: Այդ իսկ պատճառով ես կարճ ժամանակում այստեղ գտա իմ երկրորդ տունը: Հայաստանն իմ ուշացած սերն է: Ես սիրում եմ մարդկանց երակներում արևի լույս ներարկող հայ քնարերգությունը, որը մարդկանց հաղցնում է մինչև Արարատի բարձունքները:

Հայաստանը գալիս է վաղնջական այնպիսի անցյալից, որը կարելի է համեմատել նույնիսկ Արարատի բարձրության հետ: Ինձ համար Հայաստանը կրկնակի Արարատ է: Մեկը գտնվում է պատմական անցյալի խորքերում, իսկ երկրորդը հասնում է մինչև աստղերը: Այս աշխարհը՝ Հայաստան երկիրը, քաղաքակրթության հոյաշեն, վիթխարի բեկոր է:

Ըստ Էդ. Մեժելայտիսի

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

ԳԼԽԱՎՈՐ ԱՆԴԱՄՆԵՐ

522. *ա) Տեքստում, որտեղ հնարավոր է, փորձեք ենթակաները արտահայտման այլ ձևերով գործածել:*

բ) Փոխադրեցեք և հարմար վերնագիր ընտրեցեք:

Քայլում էի աշնանային պուրակով: Աշնան ոսկեկարմիր ու կանաչ գույները խճճվել-ծուլվել էին, նախշուն գորգ դարձել: Նստեցի մի նստարանի: Քիչ այն կողմ խաղում էին մի խումբ երեխաներ: Երեխաներն աշակերտական տետրի թղթից ինչ-որ բան էին պատրաստել: Մակույկներ էին: Հետո մակույկները հանդիսավորությամբ ջուրն իջեցրին, ու սկսվեց նրանց խաղաղ նավարկությունը անձրևից գոյացած ջրափոսում: Իսկ ես, այդ խաղաղ նավարկությունը դիտելով, ընկա մտքերի օվկիանը:

-Օգնությո՜ւն, օգնությո՜ւն, օգնությո՜ւն,-հանկարծ լսվեց մի տագնապած կանչ:

Այդ կանչը մի պահ սթափեցրեց ինձ, և ես հանկարծակիի եկած հարցրի.

-Ի՞նչ է պատահել:

-Նավը խորտակվում է,- ասաց օգնության կանչող տղան:

-Ի՞նչ նավ, ո՞ր նավը,-շփոթված հարցրի ես, հետո միայն հասկացա, որ խոսքը թղթե մակույկների մասին է:

-Նա, որ երեխաներ ու մայրիկներ է տեղափոխում,- շտապ-շտապ վրա բերեց մի փոքրիկ տղա:

Առաջին մակույկն սկսել էր սուզվել, և ես, որ այնքան «նավաբեկություններ» եմ տեսել, տխրեցի նրա համար:

Մյուս երեխաները քարեր էին գցում ջրի մեջ, ալիք ու փոթորիկ անում:

-Մշուշը խանգարում է, նավը չեմ տեսնում, նույնիսկ լուսարձակները չեմ տեսնում,-հայտարարեց մի ուրիշ տղա՝ մեկը մյուսի հետևից վառվող լուցկիներ նետելով վեր:

Լուցկիներն ընկնում էին ջուրը, թշշոցով մարում ու խեղդված ուղևորների նման լողում ջրի երեսին: Մակույկն արդեն թեքվել էր, ու նրա բարձրացած կողին ջրից թրջված թվաբանական մի խնդիր էր նշմարվում, որը տարիներ առաջ երևի ես չեմ կարողացել լուծել: Մռայլվում, տխրում եմ նավակի ու չլուծված խնդրի համար, իսկ կողքիս կանգնած փոքրիկ աղջիկը զարմացած ասում է.

-Մի՛ հավատա դրան, քեռի՛, այնտեղ ոչ մի մարդ էլ չկա, ազնիվ խոսք...

Ու ես ժպտում եմ փոքրիկին, որ չգիտի, թե այնտեղ՝ թղթյա մակույկում, ինչ թանկ բան կա, շա՜տ թանկ բան՝ մանկություն...

Ըստ Ռ.Արամյանի

523. *Երկուական նախադասություն կազմեցեք՝ ենթակաները դնելով ուղղական և բացառական հոլովներով:*

524. *Կարդացեք տեքստը: Կատարեցեք խմբագրական անհրաժեշտ միջամտություններ՝ փոփոխելով ենթակաների բառային դրսևորումները:*

Հեռավոր ժամանակներ էին: Մարդիկ ո՛չ գործիքներ ունեին, ո՛չ էլ մեքենաներ: Աթենքում ապրում էր մեծ քանդակագործ Դեդալոսը: Նա հույներին սովորեցրեց շենքեր կառուցել: Նրանից առաջ արվեստագետները չէին կարողանում մարդկանց պատկերել շարժման մեջ: Նրանք փակ աչքերով տիկնիկներ հիշեցնող արձաններ էին կերտում: Նա սովորեցրեց մարմարից այնպիսի արձաններ քանդակել, որոնք մարդկանց պատկերում էին շարժման մեջ: Իր աշխատանքի համար նա ինքը գործիքներ հնարեց և ինքն էլ պատրաստեց դրանք: Հետո նա մարդկանց սովորեցրեց օգտվել դրանցից:

Նա մի զարմիկ ուներ: Նա արվեստանոցում օգնում էր քանդակագործին: Մի անգամ նա Դեդալոսի հետ բարձրացավ Ակրոպոլիս՝ այնտեղից քաղաքը դիտելու: Մտքերով տարված՝ նա ոտքն անզգուշորեն դրեց անդունդի եզրին և չկարողանալով իրեն պահել ժայռից ցած գլորվեց: Աթենացիները պատանու մահվան մեջ մեղադրեցին Դեդալոսին: Նա ստիպված եղավ փախչել Աթենքից: Նավով հասնելով Կրետե կղզին՝ նա ներկայացավ Մինոս թագավորին: Մինոսը շատ ուրախացավ. չէ՞ որ ճակատագիրն իր մոտ էր բերել աթենացի նշանավոր շինարարին ու քանդակագործին: Ապաստան տալով Դեդալոսին՝ Մինոսը միաժամանակ նրան ստիպեց աշխատել իր համար: Նա նրա համար բազմաթիվ սենյակներով ու խճճված մուտքերով մի լաբիրինթոս կառուցեց: Այնտեղ ընկնողն այլևս դուրս գալ չէր կարող: Նրա կառուցած այդ հոյակապ շինության մնացորդները մինչև հիմա էլ պահպանվել են այդ կղզում:

525. *Որոշեցեք ստորոգյալի տեսակները և նրանց արտահայտության ձևերը:*

Գորովագութ մայրը գրտնակ էր անում, խմոր հարթեցնում, հետո գցում թևերին, վարպետ շարժումներով ծգում, լայնացնում ու զարկում թոնրակողին: Խմորը կամաց-կամաց գունավորվում էր, ասես ծաղկում, դառնում կարմրաթուշ: Քրտինքը Սանդուխտի ճակատից ծորում, թափվում էր կրակին, դառնում գոլորշի, շաղախվում եփվող պուտ-պուտ լավաշին:

Մինասը լուռ նայում էր: Մայրը բարձրացրեց հայացքը, մոռացավ թոնրակողի հացը, ապա ուշքի եկավ, կուտ գնացած հացը հանեց և դրեց որդու դիմաց:

- Կյանքն էլ է այսպես,-ասաց,-ուշացար՝ կվառվի, մոխիր կդառնա, շտապեցիր՝ հում կմնա: Սա մի՛ մոռացիր...

Մինասը խորհում էր, որ լավաշը միայն խմոր չէ, սերմ է, հող, քրտինք, հասկ, ջրաղաց, թոնիր է, թոնրածուխ, կրակ, հոգու կրակ: Նա մտածում էր մոր ասածի վրա և ներքին զգացողությամբ համոզվում, որ մայրը ճիշտ է: Մայրը կենդանի բնություն է՝ իր բնատուր մտածելակերպով: Մոտեցավ, համբուրեց մոր ալրաթաթախ ճակատն ու հանգիստ դուրս եկավ թոնրատնից:

Ջաջուռը խարկվում էր Մինասի կտավի վրա: Նա թաթախեց վրձինն ու պաստառի վրա մի հսկայական կորագիծ քաշեց: Հետո մի տուն ծնվեց, սկսեցին գունավորվել գիծն ու տունը: Նկարիչը գծում էր, ներկում, երանգավորում, փորձում էր կյանք տալ գույներին, որ հետո պիտի զարմացնեին մարդկանց:

Կտավի վրա կյանք էր առնում գունավոր աշխարհը:

Ըստ Զ.Սարգսյանի

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

526. *Այս տեքստի հիման վրա ցույց տվեք որոշչի արտահայտության ձևերը:*

Հռոմեացի զորավար Անտոնիոսը՝ Եգիպտոսի Կլեոպատրա թագուհու սիրեկանն ու Հայաստանի մոլի թշնամին, պարսիկների դեմ մղած ճակատամարտերից մեկում իր խայտառակորեն պարտված, ջախջախված բանակի մնացորդները հավաքած, իրեն հազիվհազ Հայաստան է գցում՝ Արտավազդից ապաստան և օգնություն մուրալու:

Դիվանագետ արքան, բնականաբար, ինքն էլ մեկ հարվածով վերջնականապես կխորտակեր իր վաղեմի և ոխերիմ թշնամուն: Բայց քանի որ այդ արքան բանաստեղծ էր, մարդկային խղճի ու կարեկցանքի հարուստ պաշարների տեր, ոչ միայն չի խորտակում իր թշվառ թշնամուն, այլև ապաստան է տալիս, ամբողջ ձմեռ կերակրում նրա զորքի սովահար մնացորդներին: Իսկ Անտոնիոսը, ինչպես վկայում է Կասիուս Դիոն պատմագիրը, «շարունակ շողոքորթում էր թագավորին և անընդհատ խոստումներ տալիս»: Անտոնիոսը՝ խորամանկ ու նենգամիտ, շուտով, հիրավի, ամոթը փարատելու, Կլեոպատրայի աչքին իր վարկը վերականգնելու համար հաջորդ տարի հոծ բանակով գալիս է Հայաստան և Արտավազդին իր մոտ խորհրդակցության հրավիրում: Խաբված, նենգ ու անվայել միջոցներով ծուղակն ընկած Արտավազդը ձերբակալվում է և արծաթից շղթաներով կապված՝ իր կանանց ու որդիների հետ

տարվում Եգիպտոս՝ Կլեոպատրային նվեր: Անտոնիոսն ի լուր Եգիպտոսի հռչակում է, թե ինքն իբր նվաճել է Հայաստանը և այդ առթիվ կազմակերպում է մի հաղթահանդես՝ շքեղ, արքայավայել:

«Հանդիսավոր երթի ժամանակ Արտավազդը կալանված էր ոսկե շղթաներով,-վկայում է Կասիուս Դիոնը,-իսկ Կլեոպատրան նստած էր ոսկեզօծ գահի վրա՝ արծաթապատ բեմում: Հայոց թագավորին և նրա ընտանիքին հորդորում էին խնդրանքով ու աղերսանքով դիմել Կլեոպատրային՝ ազատություն ստանալու համար: Սակայն սրանք չուզեցին դիմել, ոչ էլ գլուխ խոնարհեցին, այլ ցույց տվին հոգու վեհություն, որի համար վեհամիտ մարդկանց համբավ ստացան»:

Ըստ Վ. Դավթյանի

527. *Հետևյալ բառերով որոշչային կապակցություններ կազմեցեք՝ յուրաքանչյուր բառի համար իբրև որոշիչ գործածելով ածական և գոյական անուններ:*

ա) ժամացույց	դ) ծաղիկ	է) ժողովուրդ
բ) մարդ	ե) փլավ	ը) Անահիտ
գ) Մարտիրոսյան	զ) աղջիկ	թ) շենք

528. *Տրված բառերին դերբայներով արտահայտված երկուական որոշիչ ավելացրեք:*

ա) սարք	գ) զինվոր	ե) ժամանակ
բ) թուղթ	դ) ջուր	զ) բժիշկ

529. *Համասեռ և անհամասեռ 3-ական որոշիչներ ավելացրեք տրված տեքստին:*

Արդեն երրորդ օրն էր, ինչ զինվորները ապրանքատար գնացքների փոքրիկ կայարանում վագոններից քարածուխ էին բեռնաթափում: Կայարանամերձ ծառերն անշարժ էին, տերևներն օրվա տապից կուչ էին եկել: Բաց տարածության մեջ գտնվող ամեն մի առարկա բովվում էր ու նվաղում օգոստոսյան բարկ արևի տակ: Զինվորներն անընդհատ ծարավում էին, կիսատ թողնում աշխատանքը, գնում էին մոտակա աղբյուրը՝ գոլ ու անհամ ջուր խմելու: Օրվա անշարժ շոգի մեջ ամեն շարժումից փոշի էր բարձրանում՝ օդը դարձնելով հեղձուկ: Ճանապարհամերձ հեռագրասյուների միալար բզզոցը հարազատ էր ու առինքնող:

Այդ կայարանից այն կողմ՝ մի քանի կիլոմետր հեռավորության վրա, ինչ-որ գործարան կար, որտեղից գնացքներով աշխատելու էին տանում կալանավորներին: Երբ նրանց գնացքը գալիս անցնում էր կայարանով, որտեղ զինվորներն էին աշխատում, լարված իրավիճակ էր ստեղծվում:

Նրանց գնալուց հետո տարածության մեջ մի անտեսանելի ներկայություն էր մնում, որ ամեն տեղ էր, ու բոլորն էլ զգում էին: Գնացքը, պատվանդաններին թառած ուղեկցող հրացանավոր պահակներով շրջափակված, առավոտյան աշխատանքի էր տանում կանանց, իսկ մյուս գնացքը օրվա վերջին նրանց փոխարինելու էր բերում տղամարդկանց, և երբ երկու գնացքները կայարանում հպանցիկ հանդիպում էին, չլսված աղմուկ-աղաղակ էր բարձրանում: Նրանք հաշվի չէին առնում պարեկների սաստումները:

- Է՛յ,-գոռում էին կալանավորները,- դեղնակտուցնե՛ր, ծխելու բան չունե՞ք:

Քարածուխ բեռնաթափող զինվորները, գնացքի ընթացքին հարմարեցնելով, ծխախոտ ու դաշտից նոր բերված, դեռ դեղին թերթիկներով արևածաղիկ էին նետում: Նրանց ուղեկցող սպան սպառնում էր, բռունցք թափ տալիս, հայհոյում: Բայց նրա ափերից դուրս գալը ոչ ոք հաշվի չէր առնում:

Ըստ Լ.Խեչոյանի

530. *Հայկական հեռուստաընկերությունների հաղորդումներ ընտրեցեք, որոնց անվանումները լինեն՝*

ա) որոշիչ-որոշյալ կապակցություններ
բ) հատկացուցիչ-հատկացյալ կապակցություններ

531. *Տրված գոյականները սեռական հոլովով որպես որոշիչ և հատկացուցիչ գործածեցեք 1-ական բառակապակցության մեջ:*

Ձեռք, դեղձ, ձմեռ, ոտք, թեյ, սար, երեխա, ընկույզ, շուն:

532. *Բանաստեղծական խոսքից ետադաս որոշչի և հատկացուցչի օրինակներ քաղեցեք:*

533. *Տեքստի որոշ հատվածներ այնպիսի փոփոխությունների ենթարկեցեք, որ բացահայտչի բոլոր տեսակներն ունենաք:*

Ֆրանսահայ նշանավոր նկարիչ էդգար Շահինը ծնվել է 1874 թ. Վիեննայում, որտեղ ժամանակավորապես գտնվում էին նրա ծնողները (Պետրոս Շահինը ակնցի էր, Նոյեմզար Սերոբյանը՝ Մոլդավիայի Սուչավա քաղաքից): Ապագա նկարչի մանկությունն անցել է Պոլսում, որտեղ ապրում էին եվրոպական մասի Բերա թաղամասում: 1890-92 թթ. սովորել է Վենետիկի Մուրադ-Ռափայելյան վարժարանում, ապա 1893-ին մեկնել է Փարիզ, հաճախել Ժուլիան ակադեմիա: Առաջին քայլերն սկսել է որպես գեղա-

նկարիչ և առանձնակի ուշադրության չի արժանացել: Այնուհետև սկսել է զբաղվել օֆորտով, և հաջողությունները հաջորդել են իրար:

1900 թ. արժանացել է Փարիզի համաշխարհային ցուցահանդեսի ոսկե մեդալին, 1903 թ. Վենետիկում՝ ոսկե մեծ մրցանակի՝ 20 փորագրությունների համար: Ֆրանսիական կառավարությունը Շահինին շնորհում է Պատվո լեգեոնի ասպետի աստիճան և շքանշան:

Շահինի ստեղծագործությունների հիմնական թեման Փարիզի կյանքն է, այն Փարիզի, որը չի թաքցնում հետնախորշերի ճշմարտությունը և իր տառապյալներին նայում է թախիծով ու քնքշությամբ: Դրանք աղբահավաքներ են, փողոցային աղջիկներ, ծաղկավաճառուհիներ, մուրացիկներ..., որոնց մեջ, Գ. Մուրեյի խոսքերով ասած, «բաբախում է հոգին աշխարհի բոլոր թափառաշրջիկների, երեկվա և վաղվա...

Այս բոլորը վստահ ձեռքով է արված, որովհետև այս բոլորը տեսնված է անկեղծ աչքով»:

«Ահա մի նկարիչ, որին ավելի հուզում է մարդկային վիշտը, ինչն էլ հիմնականում պատկերում է, քանզի ինքն էլ կռացած է հայրենի տխուր հուշերի, իր երկրում տեսած ողբերգական տեսարանների տպավորության տակ»,- գրում է Գ.Սուլիյեն:

Իսկ քննադատ Գ.Քանը գրում է. «Շահինը չի ձգտում գեղեցկացնել պատկերած իրականությունը, սակայն առաջացնում է խղճմտանքի խոր զգացում և թշվառության ու տառապանքի ընդհանրացումից ստեղծում է իր բիբլիական պարզությամբ վեհ մի հոյակապ գեղեցկություն... Նա մեկն է նրանցից, որոնց սև երանգներն ամենից ավելի խորն են, ճերմակները՝ ամենից ավելի այլազան, ամենից ավելի երանգավորված, ամենից տաք, ... որոնք հաջողում են գույնի տպավորություն ստեղծել գծանկարի ուժով, պարզապես ճերմակի ու սևի խաղերով: Նա կատարելության հասցրեց չոր ասեղի տեխնիկան»:

Շահինն իրեն հայ նկարիչ է համարել և ակտիվորեն մասնակցել հայկական մշակութային և ազգային կյանքին: 1916-ից անդամակցել է Հայ արվեստագետների միությանը (1926-ից՝ նախագահը), 1931-ից՝ Հայ ազատ արվեստագետներու միությանը: Նրա մասին Արշակ Չոպանյանը գրել է. «Տառապանքի բոլոր ձևերին ծանոթ իր ցեղի հոգին էր, որ հզոր մղումով կը հայտնվեր նրա ձգտումի մեջ»:

1936-ին Երևանում բացվեց մեծ նկարչի անհատական ցուցահանդեսը, որից հետո ցուցադրված 160-ից ավելի օֆորտները Շահինը նվիրեց Հայաստանին: Հայաստանի ազգային պատկերասրահում այժմ դրանց առանձին ցուցասրահ է տրամադրված:

534. *Թվարկեցեք այն դեպքերը, երբ բուն բացահայտիչը նախադասության մյուս անդամներից չի տրոհվում: Յուրաքանչյուր դեպքի համար մեկական նախադասություն կազմեցեք:*

535 *Տեքստը հարստացրեք գոյականական անդամի լրացումներով:*

Ո՛չ մագաղաթ կար, ո՛չ գրիչ, ո՛չ մելան: Գրելիք ուներ, տեղ չկար: Ուսապարկը դափ-դատարկ էր, գրպանները՝ սրբած մեծ ու մանր դրամից: Տեսածն ու զգացածը տեղավորեց աչքերում, մի մասն էլ պահեց երակներում: «Թող արյան հետ հոսի ու զորանա,-ասում էր մտքում,- երակներն ապահով են, հեռու չարից ու փորձանքից»: Նա քայլեց երակներում տեղադրված Անիի միջով, ճանապարհին կանգ առավ Կաթողիկե եկեղեցում, երեք մոմ վառեց. մեկը՝ իր, մյուսը՝ նշանածի, երրորդը՝ Անիի համար: Սպասեց, մինչև մոմերը հալվեն, վերջանան, որպեսզի ցանկությունը կատարվի: Ուզում էր, որ քաղաքը հեռու լիներ չարից ու փորձանքից: Մոտիկից նա նկատեց մի բան, ինչն անհասկանալի է սովորական այցելուին, և ինչի մասին տեղաբնակները շշուկով՝ են խոսում իրար ականջի: Սարդոստայնն էր, որ մեղքի պես փաթաթվել էր քաղաքի պարանոցին: Յուրաքանչյուր բնակիչ իրենից թոթափում է մեղքը՝ տան բակում, փողոցի խաչմերուկում, աչքի ընկնող վայրերում աղոթատեղի կառուցելով, և երկարածգում է քաղաքի հոգեվարքը: Դրա համար էլ եկեղեցիները շատ են բնակելի տներից:

Ըստ Ա.Մարտիրոսյանի

ԲԱՅԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

536 *Գտեք բայական անդամի լրացումները, որոշեցեք նրանց շարահյուսական պաշտոնը, արտահայտման ձևը:*

Բնությունն ասես ինքն է ստեղծել այս վայրը Գառնիի բերդի համար: Եռանկյունաձև բարձր ժայռի երկու կողմերում խոր կիրճն է: Երեք հարյուր մետր խորությամբ կիրճով հոսում է Ազատ գետը: Անմատչելի են կիրճի բազալտե ուղղաբերձ լանջերը: Հրվանդանի հյուսիսային կողմը հարում է հարթավայրին, որտեղից սովորաբար հարձակվում էին թշնամիները: Հենց այդտեղ էլ ստեղծվել է պաշտպանական հզոր համակարգը՝ 14 աշտարակ ունեցող ամուր բերդապարիսպը:

Այն հատվածում, որտեղ բնական արգելքները դժվարացնում էին բերդին մոտենալը, և հակառակորդի հարձակումը հավանաբար կարելի էր կասեցնել սակավաթիվ ուժերով, աշտարակներ քիչ կան. դրանք միմյանցից 25-32 մետր հեռավորության վրա են: Իսկ այնտեղ, որտեղ թշնամին կարող էր համեմատաբար անարգել մոտենալ պարիսպներին, և, բնականաբար, նրա դեմ պետք էր մեծ ուժեր կենտրոնացնել, աշտարակները խիտ են տեղադրված. միմյանցից 10-13,5 մետր հեռու:

Թշնամուն լավ գնդակոծելու համար հյուսիսային պարսպի միջին մասը գոգավոր էր: Աշտարակներն ուղղանկյուն էին: Այդպես էին կառուցված Էրեբունի, Թեյշեբաինի բերդերը...

Գառնիի ինչպես բերդապարիսպները, այնպես էլ աշտարակները կառուցված են տեղի երկնագույն բազալտի խոշոր կտորներով, որոնցից յուրաքանչյուրը 5-8 տոննա կշիռ ունի: Քարերը սրբատաշ են, շարված առանց շաղախի, իրար են միանում երկաթե կեռերով, որոնց միացման անկյուններում կապար է լցված: Քարերի միացման անկյունները ջարդված են, և կապարը դուրս է հանված, ըստ երևույթին փամփուշտ պատրաստելու համար, երբ ասպարեզ է եկել հրազենը:

Բերդի տարածքի (3,5 հա) ներսում եղել են աշխարհիկ և պաշտամունքային շինություններ հեթանոսական տաճար, խճանկար հատակով բաղնիք, պալատական շենքեր:

Դատելով քարերի շարվածքից՝ Գառնիի բերդապարսպի շինարարության մեջ ակնհայտ են մի քանի շրջաններ. բերդն առնվազն հինգ անգամ վերակառուցվել է:

Բերդ տանող դարպասը միակն է, մուտքը՝ նեղ: Անմիջապես մուտքի մոտ՝ աջ կողմում, գտնվում է հունարեն գրությամբ մի քար. «Տրդատ Մեծը՝ տերը Մեծ Հայքի... Տիրակալը թագուհու համար կառուցեց տաճարն ու բերդն այս անառիկ իր թագավորության 11-րդ տարում...»: Դա մեր դարաշրջանի 77 թվականն էր:

Ըստ Վ.Սեկոյանի

537. *Լրացրեք տրված աղյուսակը: Արտահայտման բնորոշ ձևի դեպքում + նշեցեք, մյուս դեպքում՝ -*

Արտահայտման ձևը / Խնդիրներ	Տրական հոլով	Հայցական հոլով	Բացառական հոլով	Գործիական հոլով	Ներգոյական հոլով	Կապակցիչ կառույց
Ուղիղ խնդիր						
Հանգման խնդիր						
Անցանման						
Միջոցի						
Ներգործող						
Վերաբերության						
Սահմանափակման (մասնավորման)						

538. *Այնպիսի նախադասություններ գրեցեք, որոնցում խնդիր լրացումը հնարավոր լինի արտահայտել շարահյուսական հոմանիշով:*

Նմուշ՝ Փայտերը մեկ-մեկ գցում էր կրակի մեջ և պատմություններ անում անցած-գնացած *օրերից, որսից ու անտառից.*

Փայտերը մեկ-մեկ գցում էր կրակի մեջ և պատմություններ անում անցած-գնացած *օրերի, որսի ու անտառի մասին.*

539. *Հետևյալ տեքստի մեջ մատնանշեցեք տեղի, ժամանակի, ձևի, չափի, հիմունքի, միասնության, պատճառի, նպատակի պարագաները: Որոշեցեք նրանց արտահայտման ձևերը:*

ՄԱՇՏՈՑԻ ԱՋԸ

Մանկությանս օրերին մայրս, ձեռքիցս բռնած, ինձ տանում էր մեր գավառական քաղաքի եկեղեցին՝ ժամերգության կամ պատարագի, ծնկաչոք համբուրել տալիս մթաստվեր մի դամբանաքար: Երկյուղածությամբ խաչակնքելով երեսը՝ ինքն էլ էր համբուրում քարը և ամեն անգամ կրկնում նույն հոգեբուխ բառերը.

-Ջորությունդ ու լույսդ անպակաս, սուրբ Մեսրոպ:

Մի անգամ հարցրի մորս, թե ո՞վ է սուրբ Մեսրոպը:

-Հայոց Աստվածաշունչը, Մաշտոցը, Նարեկը, մեր բոլոր գրքերը սուրբ Մեսրոպն է գրել: Երբ երանելին խոր ծերության է հասել, հոգին բաժանվել է մարմնից և լույսեր արձակելով համբարձվել երկինք, իսկ մարմինը թաղվել է այստեղ:

Հետո երկրորդ դասարանի գրքում կարդացի, որ Մեսրոպ Մաշտոցը հայոց այբուբենի արարիչն է, հայկական մատենագրության հիմնադիրը, որ նա մահացել է Արարատյան աշխարհում, թաղվել Օշականում: Եվ անգիտության մեջ մեղադրեցի մորս:

Մայրս զննեց իմ անմեղ, հետաքրքրասեր աչքերը, աղոթքի լսելի խոսքեր շշնջաց, ապա մեղմ ավելացրեց.

-Տղա՛ս, սուրբ Մեսրոպի աջն է թաղված այստեղ: Մեր չարը խափանողը, մեզ լուսավորողն ու փրկողը նրա հովանավոր աջն է:

Մի անգամ՝ աշնանամուտին, սայլերի երկարածիգ քարավանով ուխտի էինք գնացել մի ուրիշ սրբավայր՝ Արմաշ: Այստեղ էլ վանքում, մորս ցուցումով ծնկաչոք համբուրեցի մարմարե փայլուն շիրմաքարը, որի տակ ևս, ինչպես ասացին, Մաշտոցի աջը կար:

Տարիներ անցան: Բռնագաղթի ճանապարհին եղա մի ուրիշ քաղաքի՝ Կոմիտասի ծննդավայր Կուտինայի եկեղեցում: Այստեղ էլ ցույց տվեցին Մեսրոպի շիրմաքարը: Ասացին, թե սրբի հովանավորող աջն է դրված համբույրներից մաշված և գրերն անընթեռնելի դարձած շիրմաքարի տակ, և նա լույս ու արև է պարգևում Կուտինայի հայությանը...

Տարօրինա՜կ բան: Ոչինչ չէի հասկանում: Մի՞թե նման բան կարող էր լինել:

Ես տխրեցի, անակնկալից շփոթ մտքերի մեջ ընկա ու թերահավատությամբ նայեցի մորս աչքերին: Մայրս բոլորովին շվարել էր...

...Մա՛յր իմ, մանկությանս թերահավատ տարիներն անցել են արդեն. այժմ ես հավատում եմ, հավատո՛ւմ, որ Մաշտոցի հովանավոր աջն ամե՛ն, ամե՛ն տեղ է, ուր ծխում է հայկական օջախը...

Ըստ Ատ. Կուրտիկյանի

540. *Լրացրեք տրված աղյուսակը: Տվյալ պարագային բնորոշ արտահայտման ձևի դիմաց + նշեցեք, իսկ բացասական պատասխանի դեպքում՝ -*

Պարագաներ / Արտահայտման ձևը	տեղի հետ	ժամանակի վերաբերյալ	տեղի հետ	ժամանակի հետ	ժամանակի հետ	ժամանակի հետ	ժամանակի հետ	ժամանակի հետ	ժամանակի հետ	ժամանակի հետ
Գոյականի տրական հ.										
Գոյ. հայցական հ.										
Գոյ. բացառական հ.										
Գոյ. գործիական հ.										
Գոյ. ներգոյական հ.										
Ածական										
Մակբայ										
Դերանուն										
Կապային կառույց										
Դերբայ										
Դերբ.դարձված										
Բառակապակցություն										

541. *Հետևյալ տեքստի մեջ ցույց տվեք այն տեղի պարագաները, որոնք մատնանշում են՝*

ա) գործողության կատարման տեղը
բ) գործողության նպատակակետը կամ այն տեղը, դեպի ուր ուղղված է գործողությունը
գ) գործողության սկզբնակետը
դ) այն տեղը, որի մի ծայրից մինչև մյուսը, վրայով կամ միջով կտրումանցնում է գործողությունը
ե) այն տեղը, որի վրայով, միջով, մոտով, տակով, վերևով, շուրջը, դիմաց և այլն կատարվում է գործողությունը:

Տարիներ առաջ «Արմենիա» հյուրանոցում ծանոթացա ամերիկահայ արձակագիր Ասատուրյանին: Մի խումբ հայրենակիցների հետ նա տակավին նոր էր շրջագայել Արևմտյան Հայաստանում, եղել էր Սասունում, Տիգրանակերտում, Խարբերդում, գնացել Վան, այցելել Աղթամար կղզին (այն այժմ վերածվել է հնագիտական տեսարժան վայրի) և Կարսի վրայով հասել էր Երևան:

Ուղևորության ընթացքում գրողը պատմական հայրենիքում լուսանկարել էր ուրարտա-հայկական շատ հնություններ, Սասունի բնանկարներ, նաև իր մանկության ամայացած գյուղը, արդեն հողի մեջ սուզվող տապանաքարերը:

Նա ինձ ցույց տվեց նվիրական մասունքներ, հնամենի վանքերի ավերակներ, որտեղ հայ քրիստոնյան վաղուց ի վեր չի աղոթել, կիսաքանդ բերդեր ու ցամաքած աղբյուրներ, որոնց մամռակալած քարերի վրա դեռ ընթերցվում էին մեսրոպյան ջարդոտված տառ ու տարեթիվ:

Մի ժամանակ այստեղ ուխտի էին գնում հացաբույր հայ մամիկներ ու պապիկներ, շինական կանայք ու այրմարդիկ, կարմրաթուշ աղջիկներ ու թուխ-թխահեր տղաներ: Նրանք լեռներում շուրջպար էին բռնում ու երգում պապերի բարձրահնչյուն երգերը: Այժմ չկան նրանք: Դաշտերում ու այգիներում չկան այդ հողաբու՞ույր, չարքա՞շ հայ շինականները, սեգ սարերի վրա՝ կտրիճ հովիվները, կուժն ուսին դրած՝ աղբյուրից գյուղամիջյան ճամփաներով տուն դարձող ջահել հարսներն ու աղջիկները: Ամենուրեք հայի հուշն է միայն:

Զրուցակիցս նկարագրում է տխո՞ւր, սարսռո՞ւն մի ամայություն, որ հաջորդում է աշխարհակործան արհավիրքներին...

- Սասուն աշխարհը գոց ակունքով ցամքած աղբյուր էր, որ լաց էր լինում անարցունք...

Ըստ Ստ. Կուրտիկյանի

542 *ա) Կարդացեք, փոխադրեցեք այնպես, որ ունենաք տեղի պարագայի արտահայտության բոլոր ձևերը (տեղի մակբայներ, գոյականի տարբեր հոլովաձևեր, դերանուններ, կապային կառույցներ):*

ԵՐԿՈՒ ՀԱՅՐ

1896-ի կոտորածի ծմեռն էր: Մի խումբ փախստականներ Սասունի կողմերից հասան Էջմիածին: Նրանց մեջ էր և Ա. գյուղի ծերունի տեր Սարգիսը:

-Հայրիկի աջը կուզեմ համբուրել,-խնդրեց նա Վեհարանում, ու ներս թողին:

-Բարով, տե՛ր հայր,-աջը մեկնեց Հայրիկը:

Քահանան համբուրեց ու ետ եկավ, կանգնեց դահլիճի մեջտեղը հոգնած, խորտակված:

-Որտեղի՞ց կուգաս:

-Սասունի կողմերեն. ես Ա.-ի տեր Սարգիսն եմ...

-Ա.-ի տեր Սարգի՞սը...

-Այո՛, Հայրիկ:

-Է՞

-Ես քսան հոգուց գերդաստան ունեի, Հայրիկ. տղաներս կոտորեցին, հարսներս տարան, թոռներս կորան, տունս թալանեցին, վառեցին. մնացի

այսպես...

-է՜, հիմի...

-Ես ոչինչ չեմ ուզում, Հայրիկ: Ես ... այնպես եկել եմ ... եկել եմ Հայրիկին ասեմ... էլ ոչինչ չեմ ուզում...

Ու Հայրիկի առջև կանգնած էր մարդը, որ ամեն ինչ կորցրել էր ու ոչինչ չէր ուզում:

Երկուսն էլ լուռ էին:

-Քանի՞ որդի կորցրիր, տե՛ր Սարգիս,-գլուխը վեր քաշեց կաթողիկոսը:

-Ամենքը միասին քսան, Հայրիկ:

-Դու քսան որդի ես կորցրել, իսկ ես՝ քսան հազար ու քսան... Ո՞ւմն է շատ, տե՛ր Սարգիս...

Քահանան ցնցվեց ու լուռ կանգնած էր:

-Ո՛ւմ վիշտն է մեծ, տե՛ր Սարգիս:

-Հայրիկինը...

-Դե, եկ, տե՛ր Սարգիս, մո՛տ եկ, աջդ դիր գլխիս, աղոթի՛ր, օրհնի՛ր, որ այս վշտին դիմանամ:

Ասավ ու գլուխը խոնարհեց:

Քահանան շտապեց առաջ, աջը դրավ իր Հայրապետի գլխին, սկսավ աղոթք մրմնջալ, ու աչքերը լցվեցին արտասուքով...

Նա օրհնում էր Հայոց կաթողիկոսի՜ն...

Նրա առջև խոնարհած էր Հայոց Հայրիկը...

Հովհ. Թումանյան

բ) Հետևյալ ասույթներից ո՞րն է (որո՞նք են) համահունչ նովելի բովանդակությանը:

Արթո՛ւն կացեք և աղոթեցեք, որպեսզի փորձության մեջ չընկնեք:

Ավետարան ըստ Մարկոսի

Դժբախտ է նա, ով ոչ մի բանի չի հավատում:

Հյուգո

Վիշտը իմաստունների ուսուցիչն է:

Բայրոն

Վիշտը հարևանություն է անում ուրախության հետ. չկա ավելի սարսափելի վիճակ աշխարհում, քան ուրախությունների ու վշտերի մեջ մասն չունենալը:

Լոնգֆելլո

Մանր տխրությունները շատախոս են, խորունկ վիշտը՝ անմռունչ:

Սենեկա Կրտսեր

Ուր հավատ չկա, ամեն բան խախուտ է:

Շիլլեր

Մեղավորների պատճառով հաճախ տուժում են և արդարները:

Սերվանտես

Բախտը կույր է թվում լոկ նրանց, ում նկատմամբ անբարեհաճ է:

Լառոշֆուկո

543. *Թվարկեցեք այն դերանունները, որոնք հանդես են գալիս տեղի պարագայի պաշտոնով:*

544. *Կազմեցեք նախադասություններ, որոնցում ժամանակի պարագան ցույց տա՝*

ա) ներկա, անցյալ և ապառնի ժամանակներ
բ) գործողության մշտատևություն
գ) ժամանակային հաջորդություն, կրկնություն
դ) ժամանակային սկզբնակետ
ե) ժամանակի վերջնակետ

545. *Դերբայական դարձվածով արտահայտված ժամանակի տրոհվող և չտրոհվող պարագա ունեցող մեկական նախադասություն կազմեցեք:*

546. *Թվարկեցեք այն կապերը (և կապական բառերը), որոնցով ձևավորվում են հիմունքի և զիջման պարագաները:*

547. *Բառակապակցությամբ արտահայտված միասնության տրոհվող և չտրոհվող պարագայով մեկական նախադասություն կազմեցեք:*

548. *Գրեցեք այնպիսի նախադասություններ, որոնցում պարագան հնարավոր լինի արտահայտել շարահյուսական հոմանիշով:*

Նմուշ՝ Եվ հազարավոր նարնջագույն տերևներ տեղացին կայտառ աղջկա *ուսերին:*
Եվ հազարավոր նարնջագույն տերևներ տեղացին կայտառ աղջկա *ուսերի վրա:*

549. *Գտեք բազմակի լրացումները և որոշեցեք նրանց շարահյուսական պաշտոնները: Ասացեք, թե ինչպես են դրսևորվել դրանք:*

Ծառերի, բարձրիկ թփերի ճյուղերի մեջ խաղում են մայրամուտի դեղին ցոլքեր՝ ոսկե խազալով զարմացած լույսի ծվեններ: Անտառում և նրա շրջակայքում մութն ընկնում է աննկատելի, աստիճանաբար: Ծառերի ուսերից սև թավիշներ են սահում, և նրանց տակ մարում է արահետի ճերմակը: Չեմ շտապում: Ո՞ւր շտապեմ, ինչո՞ւ: Անցած օրերի երգն եմ որոնում այստեղ և Աստղի լույսը:

Աշնան անտառ է՝ աշնան գույներով՝ նարնջի, մավի, ոսկեղենիկ, կապույտ, և նորից գույներ՝ սև, կարմիր, նույնիսկ ճերմա՜կ-ճերմա՜կ:

Բուրում է մեծ մառան անտառը զկեռի, վայրի տանձի սուր հոտերով և մոռի բույրով և ճաքած թզի: Պտուղի քաղցրությունից մոշահավի կտուցը կպել է, չի ճեղքվում: Մոշահավը կտուցը եռանդով քսում է խոնավ մամուռներին:

Մոռացված, հեռու անտառ է: Ճամփա չունի: Վայրի այծյամը, նրբիրան կխտարը չեն խրտնում հրացանի ձայնից կամ մարդկանց գոռում-գոչյունից: Կուշտ մոշ ու տանձ ուտելուց լուսնի դեմ թոնթորում է արջը, դժգոհում է նաև արևից:

Ոտքիս տակ ոլորվում է արջի ու քարայծի ոտնահետքերի նախշերով արահետը, որ երբեմն դեղին ոսկի է, երբեմն կարմիր թավիշ՝ սևահոդի սև կարկատաններով: Աշնան արևն անցնում է՝ անտառում թողնելով իր ջերմությունը միայն: Մեկ-մեկ հանգչում են բարձր կատարների մոմերը:

Ըստ Ս.Խանզադյանի

550. *Փոփոխեցեք դերբայական դարձվածի շարադասությունը և որոշեցեք նրա շարահյուսական պաշտոնը: Ուշադրություն դարձրեք կետադրությանը:*

1. Բնությունից գեղեցիկ չլինելով՝ անչափ հմայիչ ու առինքնող էր այդ կինը: 2. Եվ հողը մեռնում է՝ չկարողանալով ուրիշ կերպ իր վրեժը լուծել մարդկանցից: 3. Ես ամեն ինչ արեցի՝ հոգեկան խռովքս թաքցնելու համար: 4. Բաբելոնում գտնվող պարսիկները, վախենալով իրենց կյանքի համար, չհամարձակվեցին դուրս գալ մակեդոնացիների դեմ: 5. Մահը զգալիս ծեր արծիվները քարանձավներ են որոնում: 6. Աշխարհի բոլոր գրերն արարվել են ճշմարտությունը պաշտպանելու և սուտը մերժելու, անարդարը կործանելու համար: 7. Ցանկանալով թեթևացնել հայրենիքի նկատմամբ կնոջ կարոտը՝ Բաբելոնի թագավորը նրան նվիրեց կախովի այգիները: 8. Ես շնորհակալություն հայտնեցի նրան՝ գեղեցիկի հետ իմ հանդիպման պատճառ դառնալու համար: 9.Չկա մեծն Սարյանը՝ մարդկանց մխիթարողը, աշխարհին ծաղիկներ, լույս ու տխրություն բերողը: 10. Կարմիր կուժն ուսին դրած այդ չքնաղ աղջիկը աղբյուրից էր վերադառնում:

551. *Որոշեցեք դերբայական դարձվածի բաղադրիչ միավորների շարահյուսական պաշտոնները:*

1. Մի կարճատև պահ արթնացավ պատուհանի կիսաբաց փեղկից փչող սառը քամուց: 2. Միայն հզոր պետականություն և նյութական հզոր հնարավորություն ունեցող ժողովուրդը կարող է իր պատմությունն ու մշակույթը ցուցադրել աշխարհին: 3. Արևը լեռներից կանթեղներ է շինել իր համար՝ գիշերվա մթության մեջ աստղեր վառելու: 4. Ի՞նչ են զգում ձյան փաթիլները՝ սքանչելի օրորումից հետո գետնին դիպչելիս: 5. Ես հետաքրքրվում եմ իմ ժողովրդի անցյալով՝ նրա ներկան ճիշտ գնահատելու համար: 6. Տեսնելով բժշկի զուսպ դեմքն ու սևեռուն աչքերի մթին հայաց-

քը՝ նա անմիջապես լրջացավ. ժպիտը սրբվեց դեմքից: 7. Նկարներս ցուցադրելիս կամ դրանց մասին խոսելիս օրերից մի օր երևի կոմիտասյան մեղեդիների նվագակցությունը կօգտագործեն: 8. Հոգու հեռավոր ու ապահով անկյունում այնքան խանդաղատանքով պահվող նրա միակ թանկ հուշը հանգուցյալ որդու վերհուշն էր: 9. Ոմանք գանգատվում են ամառանոցում ժամանակի դանդաղ անցնելուց: 10. Երիտասարդ թագավոր Ալեքսանդր Մակեդոնացին, ոգևորված բազմաքանակ թշնամու դեմ տարած փայլուն հաղթանակով, շարժվեց դեպի Բաբելոն:

552. *Որոշեցեք տրոհված լրացումների շարահյուսական պաշտոնները:*

Հենց որ իջանք ձորը, մեր դիմաց՝ երկնքի կապույտին, երևաց մի թեքված խաչ, ապա խաչակիր, քառասյուն գմբեթ և, օ՜, հրա՜շք, ժայռե բարձունքի վրա հանդարտ վեհությամբ նիրհող տաճարը՝ Ծիծեռնակաբերդը:

Բազիլիկ տաճար է՝ երկայնաձև, ուղղանկյունի, ներսը երեք մասի բաժանող երկշարք սյուներ՝ ծաղկավոր խարիսխներով, զույգ ավանդատուն՝ արքայաշուք վեհությամբ:

Չեղունի բարձր քիվին կտուց կտուցի մի զույգ աղավնիներ են ծվարել:

Ընկերներս՝ բանաստեղծն ու ճարտարապետը, որոնք առաջին անգամ են այստեղ, զարմացած են:

-Օ՜, մարդկայի՛ն ձեռք,-քրմի ջերմեռանդությամբ գոչում է ճարտարապետը՝ աչքերը վեր հառած,-այս ի՜նչ աստվածային գործ ես կատարել:

Բանաստեղծը մատների խաղով շոշափում է քարե խարիսխների քարե ծաղիկները՝ հիշողության մեջ նուրբ նախշերը դաջելու համար: Երևի երկունք է. երգ է ծնվում: Մի ժամանակ էլ, երբ հում պատանի էի, մի ուրիշ երգ էր ծնվում այստեղ՝ հինավուրց տաճարի կամարների ներքո:

Վաղո՜ւց, շա՜տ վաղուց էր...

Լուսնյակ գիշերով՝ խաղաղ գիշերվա լռության մեջ, երկու աստղ էին պլպլում Ծիծեռնավանքի ծուռ խաչի վրա: Երկու մոմ էլ մարմրում էին ավանդատան ճրագթաթին: Երկու զուլալ գետ իրար էին փարվում հենց տաճարի ոտքերի տակ և ավելի զուլալվում՝ լուսնկայի արծաթ շողերով լուսավորվելիս:

Մի ծաղկած կեռասենի սպիտակ արցունքներ էր կաթկթում համբուրվելուց խենթացած նրանց ջրերին:

- Դու մեր ձորից չես հեռանա, չէ՞:

Աստղն է շշնջում՝ շրթունքների մեղրով քաղցրացնելով շունչս:

- Չէ՛:

Չեղունի քարե ծաղիկներից աղավնու մի փետուր է ընկնում ավանդատան՝ արևից ու անձրևից մաշված ու ճաքճքած սալ քարերին: Ես վերցնում եմ ծիրանագույն տաք փետուրը, հագցնում Աստղի մազերին: Աստղը ծիծաղում է՝ իր անուշ շնչով շոյելով առաջին անգամ ածիլված իմ այտը:

Աստղերից մեկը վայր է ընկնում և զարնվելով ծռված խաչին՝ մարում: Մոտիկ գյուղից անքուն Շողեր մամը կանչում է.

-Է՜յ, ա՛յ Աստղ, տու՛ն եկ:

Ըստ Ս.Խանզադյանի

553. *Տրոհվող որոշչի և հատկացուցչի երկուական օրինակ գրեցեք:*

554. *Տրոհվող ձևի, նպատակի, ժամանակի, պատճառի, հիմունքի և զիջման պարագաների մեկական օրինակ գրեցեք:*

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԴՐՎԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐ

555. *Տրված նախադասություններին համապատասխան կոչականներ ավելացրեք (տարբեր դիրքերում):*

ա) Ցավում եմ, որ սրտիդ չհասավ, այլ ականջիդ,-դառնորեն ավարտեց վանականը:

բ) Նա բարձրաձայն հեկեկում էր, աղոթում՝ ասելով. «Մեղա՜, մեղա՜, հիմարություն արեցի, ների՛ր»:

գ) - Հայի փրկությունը հայի ձեռքով պիտի լինի,-խրոխտ ձայնով ամփոփեց գեներալ-մայոր Անդրանիկը:

դ) «Ի՞նչ է քեզ պակասում,-ասաց նա ինքն իրեն,-վերցրո՛ւ մի կապ մագաղաթ, թանաք և գրիչ, նստի՛ր բարձունքին և գրի՛ր հիշատակարանդ՝ մտաբերելով քաղաքի կյանքի բոլոր մանրամասները»:

ե) – Մի՛ փորձիր վերծանել Աստծու գաղտնիքը,-ասաց Ավետիքը,-միևնույն է, դա հասկանալուց հետո ուրիշը կծնվի անակնկալ. դեպի Աստված տանող սանդուղքն անվերջ է, հաղթահարելը՝ անհնար:

556. *Մեկական նախադասություն կազմեցեք՝ իբրև կոչական գործածելով հետևյալ բառերն ու բառակապակցությունները:*

ա) օրիորդ	գ) ծյուն	ե) հարգարժան պարոն
բ) արև	դ) Վահան Տերյան	զ) Հայաստան աշխարհ

557. *Բանաստեղծական տողեր հիշեցեք, որոնցում կոչականներ կան:*

558. *Փակագծերում խոսողի վերաբերմունքը կամ լրացուցիչ տեղեկություն արտահայտող միտք ավելացրեք:*

ա) Զվարթնոցը (.....) ամեն օր դեպի իրեն է ձգում հազարավոր մարդկանց:

բ) Մինչ Զավենը գլուխը կախ նորից իր նախկին գործին էր (.....), Արմեն Գասպարյանն ամբողջովին զբաղված էր նրա բնակարանի հարցով:

գ) Հաջորդեց երկարատև լռություն (.....), բայց Աստղիկը դժգոհ մնաց իր կոպիտ պատասխանից:

դ) Հովվերգական, անդորրավետ պատկերներից հետո (.....) դժվար էր մոտալուտ աղետ կանխատեսել:

ե) Երեկ՝ ուշ երեկոյան, դուռը թակեց հայրենադարձ Սարգիսը (.....) և ներս մտավ՝ ձեռքին պտուղներով լի զամբյուղը:

զ) Այդ ժամանակ Հայոց աշխարհի Բզնունյաց ծովում (.....) դեռ ոչ մի կղզի չկար:

559. *Հետևյալ բառակապակցություններն ու նախադասությունները գործածեցեք իբրև ներդրյալ կառույցներ:*

ա) երկրաբանները հաստատում են, որ Մեծ Մասիսը 3,5 միլիոն տարեկան է

բ) նախկին անունը՝ Ալեքսանդրապոլ

գ) 8-րդ դարի հայ պատմիչ

դ) ա՜խ, երանի ետ բերեի այդ օրերը

ե) այստեղ պահվել է մի մասունք այն գեղարդից, որով խոցել են Հիսուսին

560. *Կետադրեցեք և տեքստին համապատասխան 3-4 ներդրյալ բառակապակցություն կամ նախադասություն ավելացրեք:*

Հին ժամանակների մի փաստ պատմում է թե պարսից Շապուհ արքան ներխուժելով Հայաստան շուրջը մահ ու ավեր սփռելով հասնում է Արտագերս ամրոցին որտեղ պատսպարվել էր հայոց Փառանձեմ թագուհին: Գրավելով ամրոցը Շապուհը ոչ միայն արքային այլև առհասարակ տղամարդուն անվայել ձևով է վարվում Փառանձեմի հետ նա մերկացնում է թագուհուն և կախում ամրոցի աշտարակից:

Բայց ահա հայոց սպարապետ Մուշեղ Մամիկոնյանն իր բազմահազարանոց բանակով ելնում է Շապուհի դեմ և ահեղ ճակատամարտում մի այնպիսի ջարդ է տալիս որ պարսից թագավորը հազիվհազ կարողանում է մի ձիով ճողոպրել մարտի դաշտից անտեր թողնելով իր ջարդված բանակի մնացորդները և իր կանանոցը որ միշտ իր հետ էր տանում...

Շապուհի կանանոցը... Աշխարհի տարբեր երկրներից գերված կամ գնված հարյուրավոր գեղեցկագույն կանայք...

Մուշեղ սպարապետի զորականներն ու զինվորները Փառանձեմ թագուհու անարգման վրեժից կուրացած ուզում են նույն ձևով վարվել Շապուհի կանանց հետ բայց սպարապետը ոչ միայն սաստում ու զսպում է նրանց թույլ չտալով մատով անգամ դիպչելու որևէ մեկին այլև հրամայում է բոլորի համար հատուկ գահավորակներ պատրաստել և ապահով ու անվնաս հասցնել Շապուհ թագավորին:

Պատմիչն այնուհետև նշում է թե Շապուհն այնքան է զարմացել Մուշեղ սպարապետի այդ վեհասրտության ազնվության և առաքինության վրա որ սեփական հոգում էլ մարդկայնության մի նշույլ է արթնացել: Նա հրամայել է իր գինու գավաթի վրա նկարել սպիտակ նժույգ հեծած Մուշեղ Մամիկոնյանի պատկերը և ամեն անգամ խնջույքի նստելիս միայն այդ գավաթով է խմել ու միշտ նույնը կրկնել Թող սպիտակ ձիավորը գինի վայելի ...

Ըստ Վ. Դավթյանի

561. ***Ցույց տվեք և անվանեցեք այն լեզվական միավորները, որոնք նախադասության անդամ չեն համարվում:***

Պատահե՞լ է, որ հանգչող մշեցի, սասունցի կամ ասենք ալաշկերտցի պապի աչքերը փակեք նրանց հոգեվարքի ժամանակ: Գիտե՞ք, թե ի՞նչ է նշանակում փակել այն աչքերը, որ տասնամյակներ շարունակ նայել են երկիր տանող ու բերող կածաններին, նայել են երկրի փեշերը ծածկող լեռներին, նայել են երկնքի կապույտ հորիզոններին. Տե՞ր Աստված, մի հավք չի՞ գա երկրից, որ գոնե կարոտը նրանից առնեն: Երանի՜ գար...

Երբ մարդն իր ձեռքը դնում ու հավերժորեն փակում է այդ կարոտատենչ աչքերը, իր աչքերն է դարձնում կարոտատենչ, իր հոգու մեջ են լցվում հանգչողի հույզերն ու զգացմունքները, սպասումներն ու տենչերը: Լցվում են մի ակնթարթում և «տոննաներով» : Այդ պահին ո՛չ գիտակցական հրամայականով, այլ արյան կանչով ինքն է դառնում նրա ցավակիրն ու տառապողը և, բնականաբար, իր մեջ է ամբարում հազար տարվա ցավն ու տառապանքը (տեսնես երբևէ պիտի ազատվե՞նք այդ մորմոքից):

Պատահե՞լ է, որ հունվար ամսին հենց գյուղամիջում, ո՞վ զարմանք, հանդիպեք սպիտակ շապիկով, վարտիքով ու բոբիկ սասունցի պապի: Երկրի կարոտից խելագարված պապի չգիտես ինչու, ջրով լի դույլը ձեռքին: «Ծովասար կերթամ, ծաղիկ կտանիմ իմ նահատակներու ոսկորներին",- ասի ու լայն բացած աչքերով նայի Ձեզ. Առեք նրան Ձեր թևերին ու ասեք. «Քեզ համար դժվար է, պա՛պ, դու պառկիր իմ թևերին, իմ պարանոցը գրկիր, որ չընկնես, ու ես քեզ Ծովասար կտանեմ»: Քայլե՞ք ու քայլե՞ք: Ի՞նչ խոսք, դուրս գաք գյուղից ու բարձրանաք սարը: Ծովասար տանելու պատրանքը ստեղծեք:

- Ո՞ւր հասանք, լա՛ռ,-հարցնի:

- Ահա Ծովասարն ենք բարձրանում, պա՛պ, ի՞նչ խորոտիկ սար է,- խաբեք նրան:

Նրա աչքին, հավանաբար, Ծովասարի պատկերները կբացվեն, ու նա տեսիլքների մեջ կսկսի. «Եկա, տեսա, մեր սարերու կարոտն առա»,-ու լեռան կատարին հոգին ավանդի աչքերդ նրա աչքերի մեջ: Մի պահ կանգնեք, ազատություն տաք արցունքներին և տուն բերեք նրան: Գյուղի ծայրին ողջ գյուղը ընդառաջ գա՝ իր տոթի մարմինն ընդունելու:

Պատահե՞լ է... Օ՜, գիտեմ, որ Ձեզ հետ չի պատահել...

Ըստ Գ. Գակոբյանի

ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

562. *Երկուական բարդ համադասական նախադասություն կազմեցեք, որոնց բաղադրիչները կապակցված լինեն՝*

ա) շաղկապով բ) շարահարությամբ

563. *Ընդհանուր ենթակայով (միավորյալ) նախադասություններ օրինակներ քաղեցեք օրվա մամուլից:*

564. *Բարդ համադասական նախադասություններ կազմեցեք բաղադրիչների հետևյալ հարաբերություններով՝*

ա) միավորական գ) հավելական
բ) ներհակական դ) տրոհական

565. *Գտեք բարդ համադասական նախադասությունները և որոշեցեք թե ինչպիսի հարաբերություններ են առկա համազոր բաղադրիչների միջև*

Մեծ, շատ մեծ է տարբերությունը գիտության և, ասենք, գրականության կամ արվեստի ընթացքի, երբ յուրաքանչյուրում ասպարեզ է իջնում հերթական մեծությունը՝ հանճարը: Շեքսպիրից և Տոլստոյից հետո ոչ ոք չի գնում նրանց ճանապարհով, ոչ ոք չի գրում նրանց պես, և դա միանգամայն հասկանալի է: Եթե գրի էլ, ապա կլինի կեղծ, շինծու. մարդիկ կժպտան:

Ռաֆայելը երիտասարդ հասակում տարվեց Միքելանջելոյով, և Ռաֆայելի վաղ շրջանի մարդկային մարմինները՝ խիստ մկանուտ, զորեղ, չէին տարբերվում Միքելանջելոյի կերպարներից: Դրանք ոչ միայն փառք չբերեցին նրան, այլև առհասարակ ուշադրության չարժանացան: Ռաֆայելը Ռաֆայել դարձավ, երբ գտավ, ստեղծեց իր ոճը, իր մտածելակերպը: Ստեղծեց գեղեցկության իր հասկացողությունը, ստեղծեց քնքշանքը: Նրա հանճարի գագաթնակետը՝ «Աթենական դպրոցը»՝ ստեղծված քսանյոթ տարեկանում, ընդհանուր ոչինչ չունի Միքելանջելոյի արվեստի հետ:

Շատ հետո աշխարհ կգա Վան Գոգը, և նույնը կկատարվի նրա հետ: Նրանից առաջ մեծ հանճարներ կային, մինչդեռ նա չկրկնեց ոչ մեկին: Վան Գոգն այլ կերպ էր տեսնում գույնը, այլ կերպ էր այդ գույնը դնում կտավին, և դա բոլորովին նոր խոսք էր արվեստում: Նա բաց արեց մի ամբողջ աշխարհ, բայց հիմա նրան տառացիորեն հետևելն անիմաստ է: Արվեստում քո խոսքը կա՛մ պիտի նոր լինի ու թարմ շունչ բերի, կա՛մ պիտի լռես:

Բոլորովին այլ է գիտության պարագայում. մի հանճարի ասպարեզ գալը կանխորոշում է գիտության հետագա ողջ ընթացքը, այն էլ՝ երկար

ժամանակով: Ի տարբերություն արվեստի՝ այստեղ գործում է կուտակման սկզբունքը: Նմանությունը մեկն է. այստեղ էլ սկիզբը ցնցումն է լինում:

Առաջին ցնցումը եկավ Արքիմեդից: 2200 տարի առաջ նա դրեց հիմքը այն գիտության, որ հետո պիտի կոչվեր ստատիկա: Նա ստեղծեց լծակի գաղափարը և գտավ ուժը մեծացնելու կերպը: Արքիմեդով է սկսվում հսկա գիտությունը՝ հիդրոստատիկան. նա գտավ նավի լողալու գաղտնիքը:

Եթե արվեստը դարերի խորքից եկող բազում մնայուն արժեքներ ունի, ապա գիտության ոլորտում այդպիսիք շատ չեն, սակայն նավը ջրի երեսին մնալու օրենքը բացարձակ անփոփոխ մնաց ծնվելու պահից ի վեր...

Երկրորդ մեծ ցնցումը տեղի ունեցավ Արքիմեդից 1800 տարի հետո: Վերածննդի դարաշրջանի Իտալիայում Գալիլեյը հասկացավ շարժման բնույթը և հիմք դրեց բոլորովին նոր գիտության՝ դինամիկայի: Նա գալիք ժամանակների ֆիզիկայի դարպասները բաց արեց, ոչ թե պարզապես հերթական մի գյուտ արեց: Գալիլեյը ստեղծեց տելեսկոպը, ու բացվեց տելեսկոպային աստղագիտության դարաշրջանը ...

Գալիլեյի մահվան տարում ծնվեց Նյուտոնը: Նա ստեղծեց բոլորովին նոր մաթեմատիկա: Դալամբերի բնութագրմամբ՝ «Նյուտոնի ստեղծած մաթեմատիկան ուղիղ կեսն էր իրեն նախորդող երկու հազար տարվա ընթացքում ստեղծված մաթեմատիկայի....»: Նյուտոնը հայտնագործեց տիեզերական ձգողության օրենքը, ստեղծեց նոր, զուտ մաթեմատիկական գիտություն՝ երկնային մեխանիկան, հիմք դրեց բոլորովին նոր փորձառական գիտության՝ ալիքային օպտիկայի...

Ինքը Նյուտոնը, այսպես է բնութագրել իր արածը. «Եթե ես տեսել եմ ավելի հեռուն, ապա շնորհիվ այն բանի, որ կանգնած եմ եղել հսկաների ուսերին...»:

Ըստ Գր. Գուրզադյանի

566 *Առանձնացրեք համադասական նախադասությունները:*

1. Եթե Սայաթ-Նովայից մնացած լինեին միայն նրա սիրո երգերը, դրանք բավական կլինեին նրան աշխարհի լավագույն բանաստեղծներից մեկը համարելու համար: 2. Եթե ճարտարապետությունը քարացած երաժշտություն է, ապա այդ հուշարձանները մեր ինքնության երգերն են...: 3. Եթե Հայաստանում շատ ու շատ բաներ առաջին անգամ ստեղծվել են մեր կյանքի վերջին տասնամյակներում կամ վարար գետ են դարձել մեր անցյալից մեզ հասած բարակ առուներից, ապա գրականությունն ու մշակույթը մեզ են հասել որպես վարար գետ, որպես հոգևոր գանձերի մի ճոխ շտեմարան: 4. Եթե մինչ այդ սիրո երգերի հերոսը, զոջալով իր գործած «աշխարհիկ մեղքը» տառապում էր ներքին հակասություններից, ապա հայրեններում չկա այդ կռիվը...: 5. Եթե հիշենք, որ միջնադարյան տաղերգուները ապրում ու ստեղծագործում էին վանքերում, ապա ավելի հասկանալի կդառնա Հովհաննես Թլկուրանցու հանդգնության չափը:

ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

567. *Որոշեցեք բարդ ստորադասական նախադասությունները և կազմեցեք նրանցից 1-2-ի գծապատկերները:*

Հետո ուսուցիչը մանրամասնորեն պատմեց, թե ինչպես Դրաստամատը երկար տարիներ ծառայեց պարսից արքունիքում, քուշանների դեմ ճակատամարտում փրկեց Շապուհի կյանքը, և Շապուհը նրան ասաց. «Խնդրի՛ր ինձնից ինչ ուզում ես»: Եվ Դրաստամատը խնդրեց, որ իրեն թույլ տան տեսնել Անհուշ բերդում կալանված Արշակ թագավորին, թույլ տան, որ ինքը մի օրով, գոնե մի օրով կապանքներից արձակի տիրոջը, լվանա նրա գլուխը, օծի, արքայավայել պատիվներ տա: «Դժվար բան խնդրեցիր,-ասաց Շապուհը,-որովհետև այն ժամանակից ի վեր, որ բերդը կոչվել է Անհուշ, չի եղել մեկը, որ համարձակված լիներ հիշեցնել թագավորներին, թե բանտարկյալ կա այդ բերդում»:

Բացառության կարգով Շապուհը Դրաստամատին թույլ է տալիս մտնել Անհուշ: Եվ Դրաստամատը արքայավայել ընթրիք է պատրաստում, գինի է տալիս Արշակին և ուրախացնում է նվագարաններով: Արշակը խմում է, գինովանում, միտքն է գալիս երբեմնի իր հայոց փառքը, և զարկում է ծնկներին. «Վա՜յ ինձ, Արշակիս,-հառաչում է,-որտեղից ուր ընկա և ինչ օրի հասա»:

Եվ մինչ ուշքի կգար ներքինի Դրաստամատը, Արշակը վերցնում է խնձոր կծպելու դանակը, սիրտն է խրում: Նույն դանակով ինքն իրեն սպանում է նաև Դրաստամատը:

«Ստրուկի հոգեբանություն»,- որակեց աշակերտը:

«Ստրուկի՞»,- իր պատմությունից հուզված՝ նա բառեր չէր գտնում, որ պատասխանի աշակերտին: Ինչո՞ւ, ինչպե՞ս են աղավաղվում հասկացությունները, երևույթները. հերոսությունը ինչո՞ւ է երբեմն համարվում հիմարություն, ազնվությունը՝ միամտություն, անձնազոհությունը՝ ստրկամտություն:

Ըստ Ռ. Հովսեփյանի

568. *Տրված նախադասություններն ամբողջացրեք՝ ավելացնելով՝*

- *ենթակա երկրորդական նախադասություն*
  ա) Եվ վերջապես ո՞ւմ հայտնի չէ....
  բ) Մեսրոպ Մաշտոցն էր, որ....,
- *ստորոգելիական վերադիր երկրորդական նախադասություն*
  ա) Իմ կարծիքով, գրողի կոչումն այն է....
  բ) Նկարի վրա պատկերված Արարատն այնպիսին էր....

569 *Տրված նախադասություններն ամբողջացրեք՝ ավելացնելով՝*

- *որոշիչ երկրորդական նախադասություն*

ա) Կան մասնագիտություններ....

բ) Հայ միջնադարյան բանաստեղծության մասին խոսելիս անհնար է չխոսել մեր անմահ հայրենների մասին....

- *հատկացուցիչ երկրորդական նախադասություն*

ա) Ա. Խաչատրյանի, Մ.Սարյանի և Ե.Քոչարի արվեստը վառ օրինակ է նրա...,

բ) Հեռու հորիզոնում չարագուշակ գորշ ամպերի կուտակվելը նշան էր....

- *բացահայտիչ երկրորդական նախադասություն*

ա) Կոմիտասը մեզ՝ հայերիս ցույց տվեց մեր երաժշտությունը՝ հավաքելով, զտելով ու մաքրելով եղածը:

բ) Մեր ժողովրդի համար «ազնվազարմության վկայական» են եղել շատերը, նրանց թվում՝ Վիկտոր Համբարձումյանը....

570 *Տրված նախադասություններն ամբողջացրեք՝ ավելացնելով՝*

- *ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն*

ա) Կարո՞ղ էր Աբովյանը կամ մի ուրիշ հայ լուսավորիչ պատկերացնել....

բ) Երևանի շենքերին ու կոթողներին նայող անծանոթն իսկույն զգում է....

- *հանգման անուղղակի խնդիր երկրորդական նախադասություն*

ա) Աֆրիկա ընկած պանդուխտ մի հայ թերթում տպագրած իր հայտարարության մեջ մեծ գումար է խոստանում....

բ) Ասում են, թե այդ հայտարարությունն օգնում է....

- *վերաբերության անուղղակի խնդիր երկրորդական նախադասություն*

ա) Կցկտուր լուրեր էին պտտվում....

բ) Ամբողջ գիշեր պատմում էր....

- *անջատման անուղղակի խնդիր երկրորդական նախադասություն*

ա) Զգուշացեք....

բ) Մի՛ վախենաք....

- *միջոցի անուղղակի խնդիր երկրորդական նախադասություն*

ա) Հայերը սիրում են հպարտանալ....

բ) Թշնամին սպառնաց....

571. *Տրված նախադասություններն ամբողջացրեք՝ ավելացնելով՝*

◆ *ժամանակի պարագա երկրորդական նախադասություն*

ա) .... դահլիճում ամպրոպի պես ճայթեցին ծափերն ու բացականչությունները:

բ) Այդ տխուր զգացումը մարդ ունենում է....

◆ *պատճառի պարագա երկրորդական նախադասություն*

ա) Դժվար է հարուստ ավանդներ ու գանձեր ունեցող մի գրականության ժառանգորդ լինելը....

բ) Հսկա չէին կարող լինել մեր ճարտարապետական կոթողները....

◆ *պայմանի պարագա երկրորդական նախադասություն*

ա) Դարեր շարունակ պատերազմներից ու աղետներից տառապած մեր ժողովուրդը դժվար թե դիմանար ու հարատևեր....

բ) ծեռագրատան խորհրդավոր սրահները կլցվեին աղոթքներով, եկեղեցու զանգերով, զենքի շաչյունով, Նարեկացու մրմունջով և սիրո գողտրիկ երգերով:

◆ *ձևի պարագա երկրորդական նախադասություն*

ա) Երիտասարդ արձակագիրը ճիշտ այնպես է գրում....

բ) Երեխաների նկարները միշտ անկեղծ են ու ճշմարիտ, որովհետև նրանք աշխարհը պատկերում են....

◆ *չափի պարագա երկրորդական նախադասություն*

ա) Այնքան զորավոր էր այդ մեղեդին

բ) Դարեր շարունակ «Կռունկն» այնքան շատ է երգվել Հայաստանում....

572. *Ամբողջացրեք՝ կազմելով բարդ ստորադասական նախադասություն, և որոշեցեք երկրորդական նախադասությունների շարահյուսական պաշտոնը:*

ա) Հովնաթանյան տոհմի ամենից փայլուն ներկայացուցիչը, անկասկած, Հակոբ Հովնաթանյանն է....

բ) Տերյանին ու Վարուժանին կարելի է Իսահակյանից ավելի շատ սիրել, սակայն Տերյանի և Վարուժանի մուտքը հայ գրականություն ամենևին էլ չի նշանակում....

գ) Շատ երիտասարդ էր Պետրոս Դուրյանը....

դ) Հայ գրիչները գրքի մասին մտածել ու գրել են....

ե) Նարեկացու «Մատյանը» սեղմված զսպանակ է, որը կարող է բացվել....

573. *Բարդ նախադասություններ կազմեցեք՝ ստորադաս նախադասությունը գերադասին շաղկապելով որտեղ և ուր հարաբերականներով: Բացատրեցեք նրանցից յուրաքանչյուրի գործածության առանձնահատկությունը:*

574. *Նախադասություններ կազմեցեք ժամանակի ստորադասական շաղկապներով և բացատրեցեք, թե ժամանակային ինչպիսի փոխհարաբերություններ կան գերադաս և ստորադաս նախադասությունների միջև:*

ա) մինչ, մինչև
բ) հենց, հենց որ, թե չէ
գ) երբ որ
դ) քանի

575. *Բարդ նախադասություններ կազմեցեք այնպես, որ տրված շաղկապներով կապակցված երկրորդական նախադասությունները շարահյուսական տարբեր պաշտոններ ունենան:*

ա) որովհետև
բ) մինչև
գ) որ
դ) թե

576. *Գծեցեք տրված նախադասությունների գծապատկերները և որոշեցեք նրանց կառուցվածքային տեսակը:*

1. Ինձ թվում է, թե մայրենի լեզվի նկատմամբ սերը մի անբացատրելի զգացում է, բնազանցական մի երևույթ, որը կարող է և հրաշքներ է գործում: 2. Թումանյանը նման է աշնանային այն խաղաղ ջրերին, որոնց հատակը շատ պարզ է երևում, սակայն միայն միամիտը կարող է չհասկանալ, որ դա ծանծաղությունից չէ, այլ ջրի հստակությունից ու մաքրությունից: 3. Նարեկացին ահեղ համանվագ է, որը Բախի արիայի պես հնչում է ջութակի միայն մի լարի վրա, և մոնոդիկ մի նվագ է կամ մեղեդի՝ աշխարհի ամբողջ բազմաձայնության հնչեղությամբ: 4. Թվաբանությունը ստեղծել են փյունիկեցիները, որովհետև վաճառական լինելով՝ պիտի պահեին առուծախի հաշիվը, իսկ աստղագիտությամբ առաջինը զբաղվել են քաղդեացի նավազները, որպեսզի աստղերի օգնությամբ ճշտեին նավի ճանապարհը: 5. Մեր ունեցած ամենաթանկ գանձերից մեկը հայ ժողովրդական երգերի այն անմահական աղբյուրն է, որը դարերի փոշուց, օտար պղտորությունից ու տիղմից մաքրվեց Կոմիտասի տաղանդով, և որից այսօր էլ լիաբուռ ջուր են խմում հայ և այլազգի երաժիշտներից շատերը: 6. Թեև Վիլյամ Սարոյանը ծնունդով ամերիկացի է և անգլերեն է գրում, բայց հայ գրող է, որովհետև գրվածքների ոգին հայկական է:

577. *Տրված գծապատկերներով բարդ նախադասություններ կազմեցեք և նշեցեք երկրորդական նախադասությունների բնույթը:*

ա)



բ)



գ)



578. *Հետևյալ տեքստի նախադասություններին տարբեր բնույթի առնվազն 5 երկրորդական նախադասություններ ավելացրեք: Նշեցեք նրանց շարահյուսական պաշտոնը, շարադասությունը, կապակցման միջոցը:*

Արեգակն արթնանում էր ամենաանհանգիստ աշխատավորից էլ վաղ: Եվ այգիներում վերսկսում էին միջատների միալար շշուկները: Բուրումներից հարբած թիթեռները օդում գտնում ու կորցնում էին իրար: Ցանկապատների մոտ մողեսները, խոտերը խշխշացնելով, հետապնդում էին միմյանց, մտնում քարերի տակ ու ելնում, անցնում իրար կողքով ու չէին նկատում, վազում էին մեկմեկու հետևից ու չէին հասնում:

Խաղողի բուռն հասունացման շրջանն էր: Վազին հարկավոր էր ավելի շատ արև և ավելի շատ ջուր, որպեսզի այդ երկուսն իրար շաղախելով՝ անսպառ քանակի մեղր ամբարեն ողկույզների մեջ:

Ձրի ճանապարհը երկար էր, ու ընթացքը՝ դանդաղ: Նա մինչև չանցներ մի առվի միջով, ճանապարհ չէր ստանում դեպի մյուսը գնալու համար: Իսկ երկնքից կրակ էր տեղում բոլոր այգիների վրա:

Արևը գնալով երկյուղալի էր դառնում սիրո վարարման պահին գրկի մեջ մանկանը խեղդող մոր պես:

Այգիներում, ճանապարհների ու դաշտերի վրա տոթն օր օրի կապարի ծանրություն էր առնում: Բնությունը կաթվածահար էր լինում մարդ-

կանց աչքի առաջ: Չէր շնչշնկում հովը, թռչունները չէին ճռվողում, չէին տարուբերվում ծառերի կատարները, չէին ծածանվում խոտերն ու արտերը: Հասկերը նման էին տենդով հիվանդների:

Երաշտ էր սկսվում...

Ըստ Ա.Սահինյանի

579. *Կարդացեք՝ պարզ նախադասություններից ձևավորելով բարդ (համադասական կամ ստորադասական) նախադասություններ: Օգտագործեք կապակցման տարբեր եղանակներ:*

Երկար ժամանակ Դեդալոսն ապրում էր Կրետեում: Մինոս թագավորը գերության մեջ էր պահում նրան: Դեդալոսը հաճախ էր նստում ծովի ափին: Նայելով իր հայրենի երկրի կողմը՝ կարոտով հիշում էր իր հարազատ քաղաքը: Շատ տարիներ էին անցել: Երևի արդեն ոչ ոք չէր հիշում նրա հանցանքը: Դեդալոսը կուզեր վերադառնալ: Ի՞նչ կարող էր անել: Ինչպե՞ս կարող էր հեռանալ կղզուց: Կրետեից դուրս եկող ոչ մի նավ չէր համարձակվի վերցնել նրան՝ վախենալով Մինոսի հետապնդումից: Կարոտը տանջում էր Դեդալոսին: Նա անընդհատ մտածում էր տուն վերադառնալու մասին: Ծովով նա չէր կարող վերադառնալ: Բայց ո՞վ կարող էր խանգարել նրան երկնքում: Թռչուններն իրենց թևերով հատում են երկինքը: Ինչո՞վ է մարդը թռչունից վատ: Գերությունից ազատվելու համար Դեդալոսը որոշեց իր համար թևեր պատրաստել: Նա սկսեց մեծ թռչունների փետուրներ հավաքել: Հետո վուշի ամուր թելերով դրանք իրար կապելով՝ ամրացրեց մոմով: Շուտով չորս թև պատրաստեց: Երկու թևը՝ իր համար էր: Մյուս երկու թևը՝ որդու՝ Իկարոսի համար: Նա հոր հետ ապրում էր Կրետեում:

Հասավ թևերը փորձարկելու օրը: Դեդալոսը դրանք խաչաձև ամրացրեց իր կրծքին ու բազուկներին: Ձեռքերը համաչափ թափահարելով՝ վեր բարձրացավ: Թևերը նրան պահում էին օդում: Թռչում էր ցանկացած ուղղությամբ: Ցած իջնելով՝ թևերը հագցրեց նաև որդուն: Նա սկսեց որդուն թռչել սովորեցնել:

-Հանգիստ և համաչա՛փ թափահարիր թևերդ: Շատ ցած մի՛ իջիր: Ծովի ալիքները կարող են թրջել թևերդ: Շատ մի՛ բարձրանա: Արևի ճառագայթները կայրեն քեզ:

Հաջորդ օրը՝ վաղ առավոտյան, թևերն ամրացնելով, հայր ու որդի թռան-հեռացան կղզուց: Նրանց տեսան միայն ձկնորսներն ու հովիվները: Դեդալոսն ու որդին թևավոր աստվածներ թվացին նրանց: Շուտով ժայռոտ կղզին մնաց հեռվում: Ներքում միայն լայնարձակ ծովն էր երևում: Օրը տաքացավ: Արևի ճառագայթները գնալով սկսեցին ավելի ուժեղ այրել: Դեդալոսը շատ զգույշ էր թռչում: Նա վախով հաճախ նայում էր ետ՝ որդուն: Իկարոսին դուր էր գալիս ազատ թռիչքը: Նա շատ ավելի արագ էր հատում օդը: Իկարոսն ավելի ու ավելի վեր էր բարձրանում՝ մոտենալով արևին: Շուտով նա շատ մոտեցավ արևին: Կիզիչ ճառագայթներից հալվեց փետուրների մոմը: Փետուրները պոկվեցին: Նրանք շաղ եկան օդում: Իզուր

էր Իկարոսը թափահարում ձեռքերը: Նրան արդեն ոչինչ օդում պահել չէր կարող: Նա արագորեն ցած էր ընկնում: Քիչ հետո ջրի ճողփյուն լսվեց: Ալիքները կուլ տվեցին նրան...

Դեդալոսը ետ նայեց: Նա լուրթ երկնքում չտեսավ որդուն: Բայց նայելով ծովին՝ տեսավ ալիքների վրա լողացող ճերմակ փետուրները...

Դեդալոսը հուսահատված իջավ առաջին իսկ պատահած կղզին: Նա ջարդեց իր պատրաստած թևերը: Դեդալոսն անիծեց այդ արվեստը: Այն կործանեց իր որդուն:

Բայց մարդիկ հիշեցին այս առաջին թռիչքը: Այդ օրվանից մարդկանց հոգում ապրում էր լայնարձակ երկինքը նվաճելու երազանքը:

580. *Բարդ նախադասությունները դարձրեք դերբայական դարձվածով պարզ նախադասություններ:*

1. Նա չէր կարողանում որևէ կերպ իրենից վանել այն թախիծը, որ կապարի պես ծանրացել էր կրծքին: 2. Ես Բյուրականի աստղադիտարանից վերադառնում եմ հաստատ որոշումով, որ չեմ գրելու մեծ գիտնականի կոչումների ու տիտղոսների մասին: 3. Այն, ինչ ոգու հետ կապ չունի, չունի սկիզբ ու վերջ, ունի միայն ընթացք: 4. Մարդիկ ուզում էին ըմբոշխնել աշնանային հոգնած արևի շողերը, որոնք երկնքից ասես քամվում ու ներքև էին ծորում: 5. Բանաստեղծը նման է ջրաղացպանի, որ աղունը ժողովրդից առնում ու նրան ալյուր է տալիս: 6. Լույսն ավելի ցանկալի է դառնում, երբ պարուրվում է խավարով: 7. Ով չգիտի իր երկրի պատմությունը, ներկան էլ չի հասկանա: 8. Նոր միայն զգաց, որ այդ աղմկահույզ աշխարհում ինքը միայնակ է: 9. Ես պետք է լայն բացեի պատուհանները, որպեսզի ցրեի սենյակներում խտացած միայնությունն ու ծանձրույթը: 10. Մաշտոցը տառերը երկնեց նրա համար, որ այդ գրերով հայրենի հողը պաշտպանեն: 11. Այդ ժամին ծառերի ստվերներն այնքան էին երկարած լինում, որ խառնվում էին գետից բարձրացող մութի թևերին: 12. Եթե իր սեփական արտը ցաներ, իրեն երբեք թույլ չէր տա սերմը կիսատ բռով շաղ տալ: 13. Մարդը ծնվում է, որպեսզի կյանքում ինչ-որ լավ բան անի: 14. Հենց քաշեցի հրացանի ձգանը, գլխովս կայծակի արագությամբ մի միտք անցավ:

581. *Դերբայական դարձվածով նախադասությունները դարձրեք բարդ ստորադասական նախադասություններ:*

1. Տանը միայնակ չմնալու համար նա հաճախ արտաժամյա պարապմունքներից հետո էլ իր համար որևէ զբաղմունք էր որոնում: 2. Մեզ համար միակ տրամաբանական և ճիշտ ուղին Հայաստան

վերադառնալն ու մեր ստեղծագործական կորովը հայ ժողովրդին ծառայեցնելն է: 3. Հաջորդ օրն իսկ մեկնեցի Սթրադֆորդ Շեքսպիրի ծննդավայրը՝ խոնարհվելու հանճարեղ գրողի աճյունին: 4. Ամպ նկարելիս երիզը արևի շողքով պիտի լուսավորես: 5. Հանճարե՛ղ Սարյան, չեմ կարող հրաժեշտի խոսք ասել քեզ՝ մեր պատմության ու գալիքի դիմանկարը ստեղծողիդ: 6. Սարյանի նկարներում մեզ դարերի խորքը տանող հին ոտնահետքեր կան: 7. Ռումբ գցողը մի փոս սրտի մեջ է անում, հետո հողի վրա: 8. Վիլյամ Սարոյանն իր գրքերը համարում է աշխարհին ու մարդկանց ուղղված նամակներ: 9. Դաշտենցի «Խոդեդանն» ու «Ռանչպարների կանչը» աշխարհի բոլոր լեզուներով թարգմանվելու դեպքում էլ միայն հայերիս են ուղղված լինելու: 10. Դերենիկ Դեմիրճյանը չէր մտածում մարդկանց միտք ու խոսք հասցնելու մասին, այլ սուզվում էր նրանց արյան մեջ, փոխանցում ոգին: 11. Տղան նայում էր առավոտվա կապույտով շղարշված գյուղին, և աշխարհի գեղեցկությունն ալեկոծվում էր հոգում: 12. Ոտքը շեմից դուրս դնելուն պես ասես ջրվեժ խշշաց ականջներում: 13. Հիվանդ մարդիկ սարերն են գնում՝ իրենց ցավը հովերին տալու: 14. Գունատ դեմքը շփելու փոխարեն Քեռի Թորոսը ընկուզենու բունն էր շփում: 15. Դե հիմա հարցրու քեզ մոտ գալուս պատճառը: 16. Գիշերը կամաց-կամաց դառնում է կապույտ ու արծաթ թելերով հյուսված մի անհուն շղարշ: 17 Սարալանջերի արտերն ու մարգագետինները միշտ էլ իրենց ուժերի ներածին չափ բերք են տալիս:

582 *Առանձնացրեք բարդ նախադասությունները և դրանք ենթարկեցեք կառուցվածքային վերլուծության, որոշեցեք բաղադրիչ նախադասությունների միջև եղած շարահյուսական հարաբերությունները:*

Երջանիկ էի այն օրը, երբ մայիսն իր գարնանային ջերմ շողերը ափռեց ճերմակ մարմարի հսկա այն բեկորին, որը մարմնավորում էր հայ գունանկարչության նահապետ Մարտիրոս Սարյանի կերպարը:

Հետագայում Աղասի Այվազյանը «Գարուն» ամսագրում պիտի գրեր. «Իմ քաղաքին պակասում էր սպիտակ գույնը: Սարյանն իր ողջ գիտակցական կյանքում փնտրել է սպիտակը, և ահա վեր է խոյացել ճերմակագույն այս հրաշք կոթողը, որը հայ ժողովրդի վերածնության մի նոր վկայությունն է»: Մինչ երևանյան Սարյանի տեղադրումը ես երկար ժամանակ աշխատում էի Դոնի Ռոստովում (Նոր Նախիջևան) կանգնեցված Սարյանի հուշարձանի վրա, որը մեր հանրապետության նվերն էր այն քաղաքին, որտեղ ծնվել է մեծ նկարիչը: Պատասխանատվությունը մեծ էր: Իսկ ինչպիսի՞ն պետք է լինի երևանյան Սարյանը: Ես հաճախ էի գալիս այն պուրակը, որտեղ դրվելու էր արձանը, նստում էի նստարանին և երկար

մտորում: Չէ՞ որ սիրելի նկարիչը նույնպես քանի՜-քանի՜ անգամ անցել է այս պուրակով, նստել, զրուցել իր ծանոթների և անծանոթների հետ, ուրեմն հավերժության մեջ նրա անմահությունն ինչպիսի՞ն պիտի լիներ: Իհարկե, աշխատելիս, արարման պահին, ինչպիսին որ նրա դիմանկարներն են: Սուր հայացք, անխոնջ մշակի հագուստ, ինքնամոռաց ստեղծագործելիս:

Երկար աշխատեցի այդ քանդակի վրա. չէ՞ որ պետք է ստեղծեի բնավորություն, կամք:

Վահագն Դավթյանը ոգևորված գրեց. «Քնքուշ նյութ է մարմարը, Թոքմաջյանը սարյանական հզորություն տվեց նրան»: Անչափ զգացված՝ ոգևորության բազում դասեր ստացա իմ շրջապատից: Սակայն շրջապատին մի հարց շատ էր հետաքրքրում, այն է՝ ինչո՞ւ Սարյանի քանդակը ոտաբոբիկ է: «Ի՜նչ լավ է,-մտածում էի ես,- ամեն ինչ հասկանալի է և ընդունելի, բացի ոտքերի լուծումից»: Հուշարձաններում հեղինակները կերպար ստեղծելիս շեշտը սովորաբար դնում են դեմքի և ձեռքերի վրա՝ ստեղծելով երկու խոսուն ծավալներ: Ինչպես, օրինակ, Ալ. Թամանյանի հուշարձանը Երևանում: Կամ՝ Արմեն Տիգրանյանի, Հովհ. Թումանյանի, Ալ.Սպենդիարյանի, Կոմիտասի հուշարձանները: Ես իմ հուշարձանում ավելացրի ևս մի ծավալ՝ ոտքերը, որպեսզի է՛լ ավելի խոսուն ու արտահայտիչ լինի: Նախ՝ գեղեցիկ է այնպես, ինչպես հույներն ու իտալացիներն են իրենց աստվածներին պատկերել: Երկրորդը՝ դրանով շեշտել եմ մեծ նկարչի ամուր կապը մայր բնության հետ, նրանից ծնվող, նրանից դուրս եկող սարյանական գույների ռիթմը: Եվ որ ամենակարևորն է, պլաստիկայի իմաստով այն ներդաշնակ է: Կոմպոզիցիան սկսվում է պատվանդանից, թևերի շրջապտույտ շարժումով դեպի գլուխը:

Իհարկե, սպիտակ գույնը սկզբում խորթ էր երևանցիների համար, որոնք միշտ տեսել էին բազալտե և բրոնզե հուշարձաններ: Այժմ այն կարծես թե ներդաշնակվել է կանաչ տարածության հետ և լուսարձակի նման ակտիվ մի բեկոր դարձել: Իսկ ամենաուրախալին այն է, որ շուրջը միշտ երիտասարդ նկարիչներ են, ասես դասեր են առնում մեծ վարպետից:

Ըստ Լ.Թոքմաջյանի

ՄԵՋԲԵՐՎՈՂ ԽՈՍՔ

583. *Կետադրեցեք հետևյալ նախադասությունները և բացատրեցեք մեջբերվող խոսքի կետադրությունը:*

1. Մի օր Մինաս Ավետիսյանն ասաց Վախենում եմ ոչ թե մեռնելուց այլ քիչ ապրելուց որովհետև ասելու շատ բան ունեմ գույնի վերածելու շատ մտքեր:

2. Հռչակավոր դերասան Վահրամ Փափազյանը գրում է Իմ կարդացած բոլոր գրքերի մեջ ինձ ամենից ավելի հարազատը Օթելլոն է եղել:

3. Օ հարազատներս դուք չարաչար սխալվում եք եթե կարծում եք թե հիվանդ եմ դեմքին հեգնական ժպիտ խաղացնելով ասաց Ստեփանը:

4. Ես ականատես էի թե ինչպես է մեռնում հայ ժողովուրդը հետագայում գրել է Լեոն Մեզ նույնիսկ վտարել էին մարդկության շարքերից:

5. Հիմա ասաց Նիկոլը երբ անցել է քսանհինգ տարի Դուք ինձ հիշեցնում եք մի ծանոթ նայվածք:

6. Ծերունի Սողոմոնը մտովի հարցնում էր իր կրտսեր որդուն Ախ ինչու հորդ չքաշեցիր ինչու երես դարձրիր հողից:

7. Ստանալով հռչակավոր գրողի մահվան լուրը Վերդին որոշեց Քաջությունս չի բավականացնի ներկա լինելու նրա հուղարկավորությանը ուստի ես հետո միայնակ այցի կգնամ նրա գերեզմանին որպեսզի ինձ ոչ ոք չտեսնի:

8. Ես գիտեմ որ Աստված ինձ ավելի մոտ է քան ուրիշներին և մեզ կապող օղակն իմ արվեստն է հպարտորեն հայտարարեց Բեթհովենը:

9. Բնությունն իմ աշխարհն է և ես մտնում եմ այդ աշխարհը ինչպես իմ սեփական տունը ասում էր Մարտիրոս Սարյանը:

584. *Փոխեցեք ուղղակի խոսքի շարադասությունը (մեկ կամ երկու ձևով՝ ըստ նպատակահարմարության):*

1. Մի անգամ Մարտիրոս Սարյանը խոստովանեց.

- Կոմիտաս լսելիս փակում եմ աչքերս, և նկարչի իմ հայացքի առջև մի աշխարհ է ծնվում, որը ես չեմ համադրում իրականին, քանի որ այն կատարյալ է, անսահման մաքուր ու պարզ:

2. Ճարտարապետը, որ կանգնած էր իր կառուցած շենքի դիմաց, ասաց.

-Մեկ-մեկ գալիս եմ, որ կարոտս առնեմ այս շենքից, որի նկատմամբ ես այն զգացումն ունեմ, ինչ ծնողներն ունենում են անդրանիկ զավակի

նկատմամբ:

3. - Վախենում էի, թե Հայաստանում կհանդիպեմ մի հինավուրց երկրի ծերացած ժողովրդի, բայց օր օրի համոզվում եմ, որ այս հնադարյան հողի վրա ապրում է մի կենսունակ ժողովուրդ,- խոստովանեց օտարազգի գիտնականը:

4. Նրա կրակոտ աչքերի մեջ ասես գրված էր.«Ես չեմ հնազանդվի ճակատագրին, չեմ հանձնվի, թեև լինում են պահեր, երբ ես ինձ ամենադժբախտն եմ զգում Աստծու ստեղծած արարածների մեջ»:

5. «Եթե ես հայ լինեի, ինձ երջանիկ չէի համարի մինչև այն պահը, քանի դեռ իմ ազգի թափառական քարավանները չեն հավաքվել իրենց պապենական հողի վրա»,-մի առիթով ասել է անգլիացի գրող Ջեյմս Օլդրիջը:

6. Դիմելով Ջոն Սթայնբեքին՝ Սարյանն ասաց.

- Ձեր աչքերը խորն են տեսնում, ուստի ես հենց այդ աչքերը կնկարեմ:

7. Հարցին Վիկտոր Համբարձումյանն այսպես պատասխանեց.

- Երբ կարոտում եմ երկինքը, գալիս եմ Բյուրական, բայց ոչ թե աստղադիտակից եմ նայում, այլ նստում եմ տանս առջև ու հիանում երկնքով:

8. - Երբ հանդիսատեսն ինձնից խլեց Օթելլոյին և Դեզդեմոնային, իմ հոգում մնացին լոկ հուշեր մեր գաղտնի զրույցների ու զվարթ մտերմության մասին,- տխուր ասաց Ջուզեպպե Վերդին:

9. Ավետիք Իսահակյանը գրել է. «Մայրենի լեզվի բառերը մենք զգում ենք, ապրում, իսկ օտար լեզվինը՝ հասկանում, սովորում, հիշում»:

585. *Շարունակեցեք՝ ուշադրություն դարձնելով կետադրությանը:*

ա) *Արարատ* բառը «որևէ բանի բարձրակետ, գագաթ» նշանակությամբ գործածել է Եղ.Չարենցը հետևյալ տողերում.....

բ) Սիրում եմ Ա.Բակունցի «Միրհավ» պատմվածքի այս պատկերը.....

գ) Հայոց լեզվի մասին ..... ասել է.....

դ) Աշխատասիրության մասին հայկական այսպիսի առածներ կան.....

ե) .....Հայաստանի մասին ասել է օտարներից մեկը.....

586. *Մեջբերվող խոսքով նախադասություններ կազմեցեք, որտեղ հեղինակային նախադասության ստորոգյալն արտահայտված լինի՝*

ա) ասացական բայով
բ) մտածական բայով
գ) մեջբերվող միտքը կամ այդ միտքն արտահայտողին բնութագրող բառերով, ոչ ասացական (մտածական) բայով:

587. *Որևէ լրագիր վերցրեք և հետևեցեք, թե արդյոք ճի՞շտ են կետադրված մեջբերվող խոսք պարունակող նախադասությունները: Մատնանշեցեք հայտնաբերված սխալները:*

588. *Բացատրեցեք մեջբերվող խոսքի մեջ կախման կետերի և բազմակետերի գործածությունը:*

1. Ֆրանսիացի հայագետ Անտուան Մեյեն գրել է. «Ք.հ. հինգերորդ դարից սկսած՝ գոյություն է ունեցել հայ գրականություն՝ .... ինքնուրույն, ամեն տեսակետից հետաքրքրական երկերով: Այն ժամանակ, երբ Ֆրանսիա անունը նույնիսկ գոյություն չուներ, Հայաստանը մեծ դեր է խաղացել պատմության մեջ. այն ժամանակներում, երբ ֆրանսերենը դեռևս չէր տարբերվում լատիներենից, գոյություն ուներ հայերեն կարևոր գրականություն»:

2. Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1500-ամյա հոբելյանին Մեյեն գրել է, որ «....հայերեն այբուբենի համակարգը գլուխգործոց է: Հայերենի հնչյունական համակարգի ամեն մի հնչյուն նշված է հատուկ տառանշանով, և համակարգն այնքան լավ է հաստատված, որ նա հայ ազգին տվել է հնչյունական համակարգի վերջնական արտահայտություն, մի արտահայտություն, որ մինչև օրս պահպանվել է առանց որևէ փոփոխություն կրելու, առանց բարելավման կարիք զգալու, որովհետև նա սկզբից ևեթ կատարյալ էր»:

3. Հայաստանից ուղարկված նամակներից մեկում Մեյեն մեծ գովեստով է խոսում հայուհիների մասին. «Հայուհիները շատ զուսպ են... հեզ են, շատ համեստ, որքան կարելի է քիչ պչրասեր... Խելացի են և դեմքի ջերմ արտահայտություն ունեն, որով ես շատ եմ համակրում նրանց....»:

4. Մեյեի մասին Ա.Չոպանյանը գրել է.«Մեր ցավի օրերուն իր սիրտը արյունեցավ մեզի հետ....»:

589. *Համառոտեցեք տեքստը՝ ըստ անհրաժեշտության գործածելով բազմակետեր և կախման կետեր:*

Լեզվաբանության մեջ ընդունված է ցեղակից լեզուների ամբողջությունը կոչել լեզվաընտանիք: Մեկ լեզվաընտանիքի պատկանող լեզուները ծագում են միևնույն նախալեզվից կամ, ինչպես ոմանք են ասում, հիմք-լեզվից (հիմնալեզվից): Աշխարհում տարբերում են մեծ քանակությամբ լեզվաընտանիքներ: Տարբեր է առանձին լեզվաընտանիքներ կազմող լեզուների թիվը: Կան միայնակ կանգնած, ցեղակիցներ չունեցող լեզուներ, ինչպես ճապոներենը և կորեերենը: Կան երկու կամ երեք անդամ ունեցող լեզվաընտանիքներ, ինչպես խուռռուարարտականը, որ բաղկացած է խուռերենից, ուրարտերենից և, թերևս, Կիպրոս կղզում մեր թվագրությունից առաջ 1-ին հազարամյակում արձանագրություններ թողած էտեոկիպրերենից: Բազմանդամ չէ քարթվելական լեզվաընտանիքը, որ բաղկացած է վրացերենից, զաներենից և սվաներենից: Սրանց կողքին կան բազմանդամ այնպիսի լեզվաընտանիքներ, ինչպիսիք են հնդեվրոպականը, սեմականը, թուրքականը, ֆիննաուգրականը և այլն: Լեզվաընտանիքներից ամենից շատ խոսողներ ունեցողը հնդեվրոպականն է, որի լեզուներով խոսում է մարդկության մոտավորապես կեսը: Մարդկության գրեթե մեկ քառորդը խոսում է չին-տիբեթական լեզուներով: Մյուս լեզվաընտանիքների լեզուներով խոսում է մարդկության մնացած մեկ քառորդը:

Ժամանակին լեզվաբանները նկատել են, որ տարբեր լեզվաընտանիքների միջև երբեմն զգալի նմանություններ կան: Մասնավորապես շատ է խոսվել հնդեվրոպական և սեմական, հնդեվրոպական և ֆիննաուգրական լեզվաընտանիքների նմանությունների մասին: Դանիացի գիտնական Հ.Պեդերսենը հարց դրեց. հնարավոր չէ՞ խոսել այս լեզվաընտանիքների մեջ մտնող լեզուների ցեղակցության մասին, այսինքն՝ ընդունել լեզվաընտանիքների մեջ մտնող լեզուների մերձավոր ցեղակցության հետ նաև տարբեր լեզվաընտանիքների մեջ մտնող լեզուների հեռավոր ցեղակցություն: Նա խոսեց հնդեվրոպական, սեմական, ֆիննաուգրական լեզուների հեռավոր ցեղակցության մասին՝ այդ լեզուների ընդհանրությունը պայմանականորեն կոչելով նոստրատիկ (լատիներեն nostra «մեր» բառից, այսինքն՝ «մերային»): Ռուս երիտասարդ լեզվաբան Վ.Մ. Իլիչ-Սվիտիչը (1934-1966) հետագայում փորձ արեց կազմելու նոստրատիկ լեզուների բառարանը՝ ընդգրկելով հնդեվրոպական, սեմական, ֆիննաուգրական, քարթվելական, թյուրքական և դրավիդյան լեզվաընտանիքները:

Վ.Մ.Իլիչ-Սվիտիչը ծանոթացել է տողերիս հեղինակի «Ուրարտերենը և հնդեվրոպական լեզուները» (1963) գրքին, որտեղ փորձ էր արվել ցույց տալու խուռռուարարտական և հնդեվրոպական լեզուների հեռավոր կամ այլ կերպ ասած՝ կողմնական ցեղակցությունը, և որոշել խուռռուարարտական լեզուները ևս մտցնել նոստրատիկ գերընտանիքի մեջ, բայց վաղաժամ մահը նրան հնարավորություն չտվեց. նրա հետմահու հրատարակված եռահատոր բառարանն այդ նյութը չի ընդգրկում:

Ըստ Գ.Ջահուկյանի

590 *Ուղղակի խոսքը դարձրեք անուղղակի:*

1. Երբ ավարտվեց «Օթելլոյի» առաջին ներկայացումը, Վերդին ասաց.

-Ես սիրում էի առանձնանալ իմ Օթելլոյի և Դեզդեմոնայի հետ, իսկ հանդիսատեսը նրանց խլեց ինձանից:

2. Մարիին ուղղված նամակում Դյուման գրում էր.«Ապարդյուն կլինի պատմել Ձեզ, թե որքան տխուր եմ, որովհետև Դուք էլ գիտեք այդ անկեղծ սիրո պատմությունը»:

3. -Է՜հ, տիկի՛ն Սոնա,-տխուր ասաց օրիորդը,-ես արդեն սկսել եմ հաշտվել այն մտքի հետ, որ մեր զբաղեցրած այդ մութ ու խոնավ սենյակից հեռու չենք գնա:

4. Նազիաթը տխուր ասաց.

-Ես սիրում եմ քո տխրությունը, ո՛վ Սաադի, որովհետև իմաստուն է քո թախիծը:

5. Բժիշկն ասաց տիկնոջը.

Դուք Ձեզ կործանել եք անհիմն կասկածանքներով, տակնուվրա եք արել Ձեր նյարդերը:

6. Ներկաներից մեկը երիտասարդ ճարտարապետին խորհուրդ տվեց.

- Ուշադի՛ր լսիր Հովսեփ Օրբելուն, որի ամեն մի խոսքը դաս է մեզանից յուրաքանչյուրի համար:

7. Հոգևո՛ր հայրեր, պետք է դուրս գանք մեր խցերից,-ասաց Վեհափառը,-դրանք տրամադրենք որբերին ու անտուն երեխաներին և ուտելիք հաթայթենք նրանց համար:

8. Ընկերս ինձ ասաց.

Երբ առողջանաս, միասին կգնանք իմ հայրենի գյուղը, դու կխմես լեռնային աղբյուրների ջուրը, և սիրտդ կփառավորվի:

9. –Թանկագի՛ն վարժապետ, ինչո՞ւ մարդիկ այստեղ դժբախտ են, ի՞նչն է խոչընդոտում նրանց բախտավորությանը,-հարցրեց նա՝ արտասուքը կուլ տալով:

591 *Անուղղակի խոսքը դարձրեք ուղղակի:*

1. Մի օր Մարտիրոս Սարյանը խոստովանեց, որ եթե տարիներ առաջ իրեն բախտ վիճակվեր հանդիպելու Կոմիտասին, ինքը ծնկի կիջներ, կհամբուրեր աջն ու կասեր, որ իր պապերն անգամ նրա երգերն են երգել:

2. Իսկ Կոմիտասը կզարմանար ու կասեր Մարտիրոսին, որ ինքը նրանից ընդամենը տասը տարով է մեծ, կարող էր մեծ եղբայր լինել, այդ ինչպե՞ս է, որ նրա պապերն իր երգերն են երգել:

3. Սարյանը կպատասխաներ Կոմիտասին, որ նա Նոյի տապանից իջած առաջին երգահանն է, որ ջրհեղեղից հետո առաջին եղեգը կտրեց այս հողագնդի վրա, սրինգ պատրաստեց ու հայ երգեր նվագեց:

4. Երբ Սարյանը նկարում էր Ջոն Սթայնբեքին, գրողն ասաց, որ նրա ձեռքի շարժումներն իր մեջ երաժշտություն են ծնում, ինքը երաժշտություն է լսում, կոմիտասյան ու բեթհովենյան երաժշտություն:

5. Մի օր Սարյանն ասաց իր երիտասարդ բարեկամին, որ եթե նա լսի իր մահվան լուրը, չհավատա, այլ գնա Հայաստանով մեկ շրջագայելու և ամենուր կտեսնի իրեն:

6. Մի անգամ Մարտիրոս Սարյանն ասաց, որ եթե իր նկարների Հայաստանները գումարեն, հայ ժողովուրդը նորից տեր կդառնա այնքան հողի, որքան պետք է հայոց հին մայրաքաղաքները մայր հողի գիրկն առնելու համար:

7. Ցուցահանդեսում նկարներից մեկի առջև երկար կանգնելուց հետո Սարյանն ասաց Մինասին, որ նա ճիշտ է վարվել, որ չի լսել իր խորհուրդն ու չի փոխել նկարի գունային լուծումը:

8. Անգլիացի գրող Ջեյմս Օլդրիջն ասում էր, որ ինքը եղել է Հայաստանում ու միշտ մտածել, թե ինքն ինչ կաներ, եթե հայ լիներ, ինչ կաներ, որ մնար իր լեզուն, իր դավանանքը:

592. *Ստեղծագործաբար փոխադրեցեք հետևյալ ավանդագրույցի բովանդակությունը այն հարստացնելով մեջբերվող խոսքով և երկխոսություններով: Վերնագրեցեք պատումը:*

Աշխարհակործան ջրհեղեղի ժամանակ Նոյի տապանի առաջին հարկում կենդանիներն էին, երկրորդ հարկում՝ մարդիկ, իսկ երրորդում՝ թռչունները:

Մի անգամ տապանում լուր տարածվեց, թե արջը մրսում-դողացնում է: Այդ ժամանակվա արջն ուներ նույնպիսի բարակ կաշի, ինչպիսին ունեին կովն ու ձին: Բայց ի՞նչ կարող ես անել, որ արջի հարևանները՝ կովն ու ձին չէին մրսում, իսկ արջը մրսում էր: Եվ ահա մարդիկ այստեղից ու այնտեղից լաթեր գտան և սկսեցին դրանցով ծածկել արջի մարմինը: Սակայն դողէրոցքը չէր անցնում: Այդ ժամանակ Նոյեմզարը՝ Նոյ նահապետի կինը, սկսեց մի քուրք գործել արջի համար: Գեղեցիկ մի հանդերձ ստացվեց: Քուրքը հագցրին թե չէ,

դողն անցավ: Բայց քուրքն այլևս չհանեցին. այն մշտապես մնաց արջի հագին:

Ասում են՝ թե Նոյեմզարի գործած քուրքն արջի մարմնին է կպել հենց Նոյի ժամանակներից: Դրա համար էլ արջը մինչև հիմա բրդոտ է մնացել:

Ըստ Հ.Խաչատրյանի

593. *Փոխակերպեցեք հետևյալ նախադասությունները:*

ա) Կրավորական կառուցվածքը՝ ներգործականի:

1. Շուտով գիշերային ճնշող լռությունը կփոխարինվի ցերեկային աշխատանքի հնքով ու աշխույժ աղմուկով: 2. Նա ստեղծեց մի Հայաստան, որ կարողանում ենք տեղից տեղ փոխադրել, ցույց տալ աշխարհին, և աշխարհը ողողվում է սարյանական արևով, և աշխարհը լցվում է սարյանական բարությամբ: 3. Մ.թ.ա. II կամ I դարի նշանավոր գյուտարար Հերոն Ալեքսանդրացին հրապուրվում էր տարբեր ավտոմատ մեխանիզմներ ստեղծելու գործով: 4. Հիմա ես հասկանում եմ, թե մեծ նկարչի վրձնով ինչպես են բացվում անցյալի փակ դարպասները, և ներկապնակի գույներով՝ քանդվում պատմության կծիկը: 5. Երբ լսեցի այդ մարդու մահվան լուրը, ինձ այնպես զգացի, ասես կողոպտված եմ, ասես կտրվեց ծառի այն ճյուղը, որ միշտ դեպի ինձ էր պարզված, ասես ավերվեց փողոցի այն անկյունը, որտեղ միշտ հանդիպում էի նրան:

բ) Ներգործական կառուցվածքը՝ կրավորականի:

1. Հայտնի է, որ Սիրակուզայի պաշտպանության ժամանակ նշանավոր մաթեմատիկոս Արքիմեդը կիրառեց հռոմեացիների նավերը խորտակող չտեսնված ռազմական մեքենա: 2. Ոչ մի բան չի կարող աղճատել, խաթարել այն համակրանքն ու հարգանքը, որ տածում եմ նրա նկատմամբ: 3. *Իքեբանա* հասկացությունն արտացոլում է ճապոնական սովորույթների այնպիսի նրբերանգներ, որոնք տարբերվում են ծաղիկների՝ արևուտքում ընդունված վերադաշնակումից կամ ռուսների՝ ծաղկեփունջ կապելու արվեստից: 4. Ավելի շատ ակնարկելու, քան հայտարարելու, ուրիշներին իրենց ներաշխարհին համամասնակից չդարձնելու ճապոնացիների բնավորության բնորոշ գիծը օտարազգիները հաճախ մեկնաբանում են որպես նենգության արտահայտություն: 5. Այսօր Տոկիոն գոտևորում են մի քանի գլխավոր պողոտաներ, որոնք միահյուսվում են փոքր ու նեղ փողոցներով, բազմաթիվ նրբանցքներով:

594. *Ճապոնական հետևյալ առածներում ցույց տվեք ժխտման քերականական միջոցները:*

Ապրելով խաղաղության մեջ՝ պատերազմի մասին մի՛ մոռացիր:
Սխալն ուղղելն ամոթ չէ:

Մինչև չկռանաս, չես ուղղվի:
Ո՛չ թույն է, ո՛չ դեղ:
Շատերն են լավ սկսում, բայց ո՛չ բոլորն են լավ վերջացնում:
Ոչ թե ծառն է թռչուն որոնում, այլ թռչունը՝ ծառ:
Ներիր ուրիշին, բայց ոչ քեզ:
Մի՛ նախանձիր քեզանից բարձրին, մի՛ արհամարհիր քեզանից ցածրին:
Վիճաբանության մեջ նա չէ հաղթողը, ով բարձր է բղավում:
Սարը շատ բարձր է, բայց ոչ ոք նրա առջև գլխարկ չի հանում:

595. *Լրացրեք բաց թողնված տեղերը և բացատրեցեք, թե ինչ տեսակի են ժխտական նախադասությունները, որո՞նք են ժխտման քերականական միջոցները:*

Չլիներ, չի եղել, չէ, ո՛չ....ո՛չ, չկա, չի լինի, մի՛ թեթևացրու, մի՛ գցիր, չի բերի, ոչ:

Ամեն անգամ գետը գերան ....
Բարին որ ...., չարն աշխարհը կքանդեր:
Գառին ասացին՝ գայլ որ տեսնես, թքի երեսին. ասաց՝.... տեսնեմ, ... թքեմ:
Միսն առանց ոսկորի ....:
Գիշեր ...., որ չի լուսացել:
Ով ալարի, դալարի:
Ամեն բարև տվող բարեկամ ....:
Բերան կա, հաց ...., հաց կա, բերան....:
Շան հետ ընկերացիր, փայտը ձեռքիցդ ....:
Ծանր տեղդ ....:

596. *Տեքստում փորձեք ըստ անհրաժեշտության գործածել բառային, ձևաբանական և շարահյուսական հոմանիշներ:*

Ռաֆֆին շատ էր սիրում խոսել հայերի անհատական քաջության մասին: Նա ասում էր, որ եթե այդ անհատական քաջությունը ընկերային լիներ, հայերը կարող էին աշխարհի երեսին մի զորեղ ազգ լինել:

- Ամեն մի հայ, առանձին վերցրած, առյուծ է, ինչպես և խելքով ու դատողությամբ՝ հսկա: Բայց ընկերային ոգու բացակայությունը, խմբովին գործելիս, ջլատում է նրա ուժերը: Հային մենակ ձգեցեք վտանգների փոթորկի մեջ, նա արժանավորապես կպաշտպանի յուր գլուխը: Բայց խմբեցեք մի քանի հայեր միասին, և նրանք պաշտպանվելու կամ հարձակվելու փոխարեն կսկսեն խորհել, մտածել, հակաճառել և, վերջապես, թշնամուն թողած՝ միմյանց միսը ուտել: Այո՛, անհատականությունը հայի գլխավոր թշնամին է, և նա տարածված է մեր բոլոր դասակարգերի և բոլոր գործերի մեջ: Արդյոք մեր ազգի

մտավոր առաջնորդները կկարողանա՞ն մի փոքր հիմարացնել *անհատ հային* և խելոքացնել *ընկերային հային*: Եթե այդ եղավ, մենք կարող ենք ապագա ունենալ, եթե ոչ մենք կորած ենք, կամ կապրենք այնպիսի ամոթալի կյանքով, ինչպես ապրել ենք մինչև այսօր:

Ըստ Ալ. Շիրվանզադեի

597. *Տրված տեքստից ընտրեցեք 1-2 նախադասություն և դրանք ենթարկեցեք հնչյունաբանական, բառագիտական, ձևաբանական և շարահյուսական վերլուծության:*

Պիտի խոստովանեմ, որ Երևանում ինձ համար ավելի սիրելի բան չկա, քան Աբովյան փողոցը. սիրում եմ նրա անվերջ շարժումը, նրա եռուն աղմուկը և նրա սլացիկ ընթացքը դեպի վեր դեպի բարձունքը, դեպի կապույտ հորիզոնը.... Սիրում եմ նրա զվարթաձայն առուները, որ փողոցի երկու կողմով շտապում են վար, ասես գրազ եկած ուղևորներ, թե ո՛վ շուտ կհասնի: Սիրում եմ Աբովյանի ծառերը, որ օրեցօր երկինք են պարզում իրենց ջահել կատարները:

Սիրում եմ Աբովյանը և նրա համար, որ նա մեր Բուլվար Միշելն է, մեր Հայդ Պարկը, մեր Ֆորումը, մեր ուրախությունը... Բայց Աբովյանին սիրում եմ առավելապես նրա համար, որ նրանից ավելի շահագործվող փողոց չկա Երևանում: Ո՞ր փողոցն է այնքան քանդվում, տրորվում, այնքան զրույց ու բամբասանք լսում, որքան Աբովյանը:

Տանջվա՛ծ Աբովյան փողոց:

Բայց չնայած դրան՝ այսուամենայնիվ Աբովյանը սիրտն ու զարկերակն է Երևանի: Կամ, ուրիշ կերպ ասած, նա այն մեծ գետն է, որին իրենց ջրերն են խառնում բոլոր վտակները: Ամեն օր, ամեն ժամ, մանավանդ երեկոները, քաղաքի բոլոր թաղերից՝ Կոնդից, Չորագյուղից, Նորքից, Շենգավիթից ու համալսարանից այցի են գալիս Աբովյանին՝ մեծ ու փոքր խմբերով ծառայողներ, բանվոր, արհեստավոր, ուսուցիչ, ուսանող և ամեն մասնագիտության մարդ, ուստի կյանքի և մարդու առատությունը թույլ չի տալիս, որ կարգ հաստատվի Աբովյանում:

Ինչպես հորդացած գետը չի ընդունում պատ ու պատնեշ, այնպես էլ մարդկանց հոսքը այստեղ լցնում է մայթ ու փողոց...

Քայլում են ինչպես դաշտում... Սիրում են շրջել թևանցուկ, քառյակներով, հաճախ նաև խմբերով... Սիրում են խոսկալ ու խորհել բարձրաձայն և խոսե՛լ, խոսե՛լ... Բացօթյա պառլամենտ է Աբովյանը:

Իսկ ի՞նչ է զրույցների նյութը. ինչ ուզեք՝ սեր, վիշտ, տրտունջ, գանգատ, բամբասանք, վեճ, առևտուր, որոնց աղմուկից երբեմն խանդավառվում, իսկ հաճախ տխրում է ու տնքում Աբովյանը:

Օ՜, մեծ է Աբովյանի մագնիսական ուժը: Թովիչ զորություն ունի Աբովյանը:

Ըստ Սմ. Չորյանի

ՏԵՔՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

598 *ա) Համառոտեցեք պատումը:*

ՄԵԾ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակով մի մեծահարուստ մարդ է լինում: Այդ հարուստը որոշում է մի մեծ շենք կառուցել: Բազմաթիվ վարպետ ու բանվոր է վարձում: Ինքը առավոտ վաղ աշխատավորներից առաջ, ոտքի է կանգնում՝ աշխատանքը հսկելու, և երեկոյան միայն գնում է հանգստանալու:

Վարպետ ու բանվոր աշխատում են բարեխղճորեն, և օրեցօր բարձրանում է շենքը: Բայց հարուստ մարդուն թվում է, թե գործը շատ դանդաղ է առաջ գնում, շենքը դանդաղ է բարձրանում: Նրան այնպես է թվում, թե օրը շատ կարճ է, սովորական օրերից շատ կարճ, որովհետև հազիվ լուսացած՝ կեսօր է դառնում՝ բանվորների ճաշի հանգստաժամը, և հանկարծ երեկոյի զանգերն են հնչում, արևն էլ շտապ մայր է մտնում:

Սարսափելի է, գործը գրեթե դեռ չտեսած՝ հասնում է օրավարձի դառն վայրկյանը: Ի՞նչ է նշանակում այս: Մի՞թե իր դեմ դավադրություն կա: Չէ՞ որ եկեղեցին կարծես դիտմամբ առավոտյան այնպես ուշ է զանգերը տալիս, իսկ երեկոյան այնպես շուտ, չափազանց շուտ: Բայց արև՞ը. արևն անկաշառ է անշուշտ, սակայն ինչու՞ է նա այնպես շտապ կտրում իր երկար ուղին արևելքից արևմուտք: Եվ սրտնեղում է հարուստ մարդը, խիստ հրամաններ է արձակում, որ եռանդուն աշխատեն, արագաշարժ լինեն, չդանդաղեն, չծուլանան: Բարկանում, աջ ու ձախ զայրանում է ամեն բանվորի վրա, սպառնում է զրկել օրավարձից, սպառնում է հանել գործից:

Անշեղ կատարվում է հրամանը, բայց կրկին նրա աչքին շենքը դանդաղ է բարձրանում, մինչդեռ երեկոն իսկույն վրա է հասնում, և նա դժկամությամբ բացում է քսակի բերանը և սրտի ցավով վճարում յուրաքանչյուրի օրավարձը՝ իր ձեռնարկումը անմիտ գործ համարելով, ծախսված փողը՝ ջուրն ընկած:

Այնպես եղավ, որ տարիներ հետո թշնամին խուժեց այդ քաղաքը, ուր ապրում էր մեծահարուստ մարդը, կողոպտեց քաղաքացիներին մինչև վերջին թելը, ավերեց և հրդեհեց ամբողջ քաղաքը, բնակիչներից շատերին կոտորեց, շատերին գերի տարավ, ոմանք էլ փախան՝ հազիվ ազատված սրից ու հրից:

Հին հարուստը՝ հիմա կողոպտված ու աղքատ, գնաց մի ուրիշ երկիր՝ շեն ու օտար մի ուրիշ քաղաք:

Ընտանիքի օրվա հացը վաստակելու համար ստիպված եղավ մի մեծ շենքի կառուցման վրա աշխատելու:

Արևի հետ ելնում էր աշխատանքի և արևի մայր մտնելու հետ գնում էր հանգստանալու: Բայց ինչքա՜ն, ինչքա՜ն երկար է օրը՝ ծանր, դժվարին: Քարացել է ժամանակը և չի շարժվում: Այդ ե՞րբ էր, որ լույսը ծագեց. շատ վաղուց էր այդ, բայց տակավին կեսօր չկա, իսկ արևն իր կրակն է թափում

վերևից: Ինչքա՜ն, ինչքա՜ն հոգնած է, քաղցած, ծարավ. ծնկները ծալվում են, այնինչ օրը դեռ չի թեքվել, իսկ շենքն ի՜նչ արագ է աճում, աճում է ժամառժամ:

Ե՞րբ պիտի եկեղեցու երեկոյան զանգերը հնչեն, որ օրավարձն ստանա ու չարչարված ոտքերին հանգստություն տա:

Մի՞թե իր դեմ դավադրություն կա կազմակերպված, որ եկեղեցու առավոտյան զանգերը այսպես վաղ հնչեն ու այսպես ուշ ավետեն երեկոյի ժամը: Բայց արև՞ը... արևն անկաշառ է անշուշտ, սակայն ինչու՞ նա էլ կրիայի պես հազիվ է տեղից շարժվում. նա ե՞րբ պիտի կտրի-անցնի այդ անվերջանալի ուղին արևելքից արևմուտք:

Եվ երբ մի օր ուժասպառ ու հոգնած ընկավ գետին և երբ լսեց իր գլխավերևում կանգնած անսիրտ գործատիրոջ հայհոյանքն ու զայրույթը, այն ժամանակ միայն տեսավ հրամայողների ու վայելողների անխղճությունը և աշխատավորների ու տանջվողների դառնագին վիճակը: Այն ժամանակ միայն հասկացավ և զգաց կյանքի մեծ ճշմարտությունը:

Ըստ Ավ. Իսահակյանի

բ) Կյանքի մեծ ճշմարտությունը ձևակերպեցեք որևէ թևավոր խոսքի, ասացվածքի կամ առածի միջոցով:

599 ***ա) Համառոտեցեք պատումը:***

ՃԱԿԱՏԱՄԱՐՏ

Խոշորագույն իրադարձությունները շահած ճակատամարտեր են: Բոլոր ասպարեզներում: Ճակատամարտ ռազմադաշտում, դեմ առ դեմ ընթացող կռվում, ճակատամարտ հակառակորդի դեմ, իր դարն ապրած գիտության դեմ, հնացած, անպտուղ գործելակերպի դեմ, լճացած, ճկունությունից զուրկ կառավարման համակարգի դեմ:

Ճակատամարտը շահելու մի ձև, մի միջոց կա միայն՝ արագ վճիռ կայացնելը: Ալեքսանդր Մակեդոնացին չի սխալվել ոչ մի անգամ, տանուլ չի տվել ոչ մի ճակատամարտ. նա վճիռները կայացրել է արագ ու գործել կտրուկ: Ի տարբերություն շատ զորավարների, նա անմիջական մասնակցություն է ունեցել բոլոր կռիվներին, բոլոր ճակատամարտերում միշտ եղել է ամենաթեժ կետում, սուրը ձեռքին, ոսոխներով շրջապատված: Նրա վրա հարձակվել են բոլոր կողմերից, նրա վրա են նետվել անթիվ-անհամար նետեր, և ամեն անգամ մարտից հաղթող է դուրս եկել, ողջ մնացել. նա ոչ մի անգամ չի սխալվել, վճիռները կայացրել է կայծակնային արագությամբ: Ու միշտ՝ ճիշտ, անսխալ:

Ալեքսանդր Մակեդոնացուց երկու հազար տարի առաջ եղել է Ռամզես երկրորդ՝ բոլոր ժամանակների այդ լեգենդար, անընդունելի երևույթը: Նա երկար է ապրել՝ 90 տարի, որից 67 տարին՝ որպես փարավոն: Հազիվ թե մի զորավար գտնվի, որն իր շահած ճակատամարտերի թվով համեմատվի նրա հետ: Անվերջ կռիվներում, անհաշիվ ճակատամարտերում հաղթելուց հետո

նա Եգիպտոսից հասավ Շումերի երկիրը, դուրս եկավ Պարսից ծոց՝ իրար հետևից նվաճելով Միջագետքի այդ տարածքում ընկած բոլոր երկրները: Ռամզես II-ը մարտնչել է սուրը ձեռքին, վճիռները կայացրել արագ և ոչ մի անգամ չի սխալվել: Եվ ոչ միայն ճակատամարտերը վարելու հարցում: Բացառիկ են եղել նաև նրա եռանդն ու գործելու ունակությունը նաև երկիրը երկիր դարձնելու հարցում. թիվ ու հաշիվ չկա նրա օրոք ստեղծված տաճարներին ու վիթխարի կառույցներին՝ փռված Նեղոսի ողջ երկարությամբ:

Նապոլեոնն Աուստեռլիցի մոտ կայծակնային արագությամբ վճիռ է ընդունում. պիտի ամեն ինչ անել, որ ճակատամարտը տեղի ունենա: Եվ այն տեղի ունեցավ... Ու նա շահեց, շահեց պատմության մեջ մտած այդ նշանավոր իրադարձությունը: Որպես ստրատեգ՝ Նապոլեոնը սխալվել է մեկ անգամ. նա փոքր-ինչ հապաղեց Վաթերլոոյում. մարշալ Նեյի հեծելազորը տեղ հասավ կես ժամ ուշացումով, ու նա՝ Նապոլեոնը, մի ակնթարթում կորցրեց ամեն ինչ: Մի ամիս անց նա Սուրբ Հեղինեի կղզում էր՝ Ատլանտյանի կենտրոնում:

Հիտլերը, ի բարեբախտություն համայն մարդկության, չի հասկացել, թե ի՛նչ է գիտությունը և ի՛նչ դեր կարող է խաղալ երկրի հզորությունն ստեղծելու հարցում: Բայց մի անգամ նա անսպասելի խորաթափանցություն է ցուցաբերել. իր մոտ է հրավիրել Վերմախտի բարձրագույն հրամանատարությանը ու գեներալներին ոտքի վրա հարցաքննել, թե նրանք ի՛նչ գիտեն հրթիռների մասին: Երկու րոպեի ընթացքում պարզել է, որ նրանք բացարձակապես չգիտեն, թե ի՛նչ է հրթիռը: Զայրույթով դուրս է հանել բոլորին ու ներս հրավիրել Ֆոն Բրաունին: Երեսուն րոպե զրուցելուց հետո Հիտլերը տեղնուտեղը հրաման է գրել հրթիռների գործն սկսելու մասին: Մեկուկես տարի անց «Ֆաու – 2» հրթիռները թռչում էին Լոնդոնի վրա: Հիտլերի արագ վճիռը հրթիռների դարաշրջանի սկիզբը դրեց:

Բայց մի հարցում Հիտլերը սխալվեց, չարաչար սխալվեց: Դարձյալ չհասկանալով գիտության կարևորությունը և միևնույն ժամանակ հակահրեական մոլուցքից կատաղած՝ նա հասավ այն բանին, որ ազգությամբ հրեա բոլոր ֆիզիկոսները հեռացան կամ աքսորվեցին Գերմանիայից, այդ թվում՝ էյնշտեյնն ու Հանս Բերեն: Իտալիայից Ամերիկա ճողոպրեց Ֆերմին, Հունգարիայից՝ Սցիլարդն ու Թելլերը. սրանք էլ,-ահա բախտի հեգնանքը,-այնտեղ՝ Ամերիկայում, ստեղծեցին ատոմային ռումբը, իսկ հետո՝ ջրածնային:

Գերմանիայում մնացած խոշորագույն ֆիզիկոսները կարող էին ստեղծել ատոմային ռումբը, բայց դա չեղավ, որովհետև չեղավ այդ գործի պետական ընբռնումը: Երբ Հիտլերը դա հասկացավ, արդեն ուշ էր. ռուսական տանկերը ներխուժել էին Բեռլին:

Ստալինը երբ լսում է գերմանական հրթիռների մասին, մտաբերում է, որ երկրում եղել է ոմն Կորոլյով, որ պատերազմից շատ առաջ՝ 1936-ին, ստեղծել էր հրթիռ, որն առաջին իսկ արձակման ժամանակ բարձրացել էր 150 մետր: Պարզվում է, որ Կորոլյովը 1937-ին աքսորված է եղել Սիբիր: Արդեն ուշ էր: Եթե Կորոլյովին թույլ տային շարունակել իր այնքա՛ն հաջո-

ղությամբ սկսած գործը, այս երկիրն առաջինը հրթիռ կունենար, ու,-կարելի է բնավ չկասկածել,- պատերազմը չէր էլ սկսվի:

Ռուզվելտն ատոմային ռումբի ստեղծման հետ կապված առաջին հանձնարարությունը տալիս է 10 րոպե անց այն պահից, երբ նրա խելացի և հեռատես օգնականը՝ Ալեքսանդր Սաքսը, նրան է հանձնում էյնշտեյնի նամակը, որի մեջ գիտնականը տագնապ է հայտնում, որ գերմանացիները կարող են առաջինը ստեղծել ատոմային ռումբը, և հարկ է, որ Ամերիկան շտապի: Ռուզվելտն այդ նամակը հանձնում է սպառազինության գծով իր օգնականին՝ ծովակալ Քինգին՝ ասելով ընդամենը մեկ նախադասություն. «Սը՛ր, այս նամակը կարիք ունի ուշադրության...»:

Ծովակալը նույն օրն ստեղծում է ատոմային հանձնաժողովը, իսկ երեկոյան ստորագրում առաջին հատկացումը՝ երկու միլիոն դոլար...

... Իհարկե, արագ ու անսխալ վճիռ կայացնելը հեշտ բան չէ. ոչ բոլորին է տրված այդ հատկությունը: Այդպիսիք էլ դառնում են պատմություն կերտողները...

Ընդունված է կարծել, որ շտապելը ճակատագրական է. ո՛չ, հապաղելն է ճակատագրական:

Ըստ Գր.Գուրզադյանի

բ) Հաղորդում պատրաստեցեք հայ ժողովրդի պատմության ճակատագրական որևէ պահի մասին:

600. *Փոխադրեցեք հետևյալ բնագրի բովանդակությունը: Ուրիշ վերնագիր առաջարկեցեք:*

ՍՊԱՍՈՒՄ

Կոմիտասը դուրս եկավ հյուրանոցից, վերարկուի օձիքը բարձրացրեց և արագ քայլեց: Դեկտեմբերի կեսն էր. Փարիզի փողոցներում վնգստում էր ցուրտը: Առավոտ շուտ չէր, արևն իր օրվա ճամփից մի երկու պարան անցած պետք է լիներ, բայց չկար. չքացել էր քաղաքի գորշ երկնքում, մի ծխնելույզից պոկված քուլայի պես հալվել-կորել էր: Հատուկենտ էին անցորդները: Թվում էր, թե պաղը երկնքի հետ կապ չունի, ամեն մեկի համար ոտատակից է ելնում ցուրտը, փակ դուռ ու լուսամուտներից և ծխնելույզի շուրթերից դժկամորեն անջատվող ծխի քուլաներից:

Փողոցի շրջադարձում Կոմիտասը մի դրամապանակ նկատեց: Հնամաշ էր, պարունակությամբ աղքատ՝ եղած-չեղածը տասը ֆրանկ: «Խեղճ ու կրակ մեկն է կորցրել,-տխուր մտածեց նա և նայեց շուրջբոլորը,- ա՜խ, այս ցուրտ օրվա ապրուստն է կորցրել. կփնտրի, հետ կգա... Հիմա կգա»: Այսպես համոզեց ինքն իրեն ու նայեց ժամացույցին. 12-ին քառորդ էր պակաս, իսկ 12-ին Մարգարիտի մոտ ճաշի էր հրավիրված:

«Մի քիչ սպասեմ»,-որոշեց ու հանդարտ սկսեց քայլել մինչև փողոցի շրջադարձն ու հետ, շրջադարձն ու հետ՝ ուշադիր նայելով փողոցով անցնող

հատուկենտ անցորդներին: Եվ համոզված էր, որ կգա նա, ու ինքն անմիջապես կճանաչի նրան:

«Տխուր բան է օրվա ապրուստ չունենալը,-մտածեց Կոմիտասը,-դա մարդու ծնունդի դեմ, բնության դեմ բան է: Ամեն մարդ հանապազօրյա հաց պետք է ունենա՝ օդ շնչելու բնական իրավունքով, հագուստ ու կապուստ պետք է ունենա՝ իր մորթու գոյության բնական իրավունքով: Եվ հացի, հագուստ-կապուստի համար չէ որ մարդիկ աշխարհ են գալիս... Իսկ եթե չունեն այդ, ուրեմն մեծ ոճրագործություն է կատարվել բնության դեմ...»:

Եվ մեկեն ծնված այդ միտքը շնչավորեց տասը տարվա տխուր մի հիշողություն: 1896 թվականին էր: Բեռլինի բարձրագույն երաժշտանոցում ուսանելու առաջին ծմեռն էր... Բարերարի ուղարկած ամսական թոշակը վերջացել էր, սպասում էր հաջորդին, բայց չկար: Դուրս էր եկել մի ծանոթից պարտք խնդրելու, բայց ինքնասիրությունը թույլ չէր տալիս բախել դուռը՝ հացի համար դրամ խնդրելու, ու սոված չափչփում էր Բեռլինի փողոցները: Հանկարծ ոտքերի մոտ նշմարեց կես մարկ, վերցրեց ու ավելի շվարեց. ի՞նչ անի. կես մարկով ո՛չ կարող է պանդոկ մտնել, ո՛չ խանութ:

«Ես կեսմարկանոց վիճակախաղի տոմս գնեցի, իսկ հաջորդ օրը շահեցի հարյուր մարկ,-հիշեց Կոմիտասը:-Երկու օր քաղցած մտածեցի միայն ուտելու մասին, դրամի մասին, գտածս կես մարկով դարձա բախտ փորձող վաճառական և շահեցի հարյուր մարկ: Բայց ես կարող էի կուշտ լինել և այդ երկու օրը մարմնոք ապրելու փոխարեն ապրեի հոգով, ինչի համար ծնվել եմ...»:

Հետո նա հիշեց քաղցած ու կիսաքաղց անցկացրած էլի օրեր, դրանք բոլորը համարեց ունայն ու էլի տխրեց, որ գալիք օրերից ոչ մեկը, բոլոր օրերը միասին այդ փուչ օրերից ոչ մեկի պարապությունը լցնել չեն կարող:

Նայեց ժամացույցին. ժամից ավելի սպասում էր:

«Ուշացավ»,-ասաց այնպիսի տոնով, կարծես պատահական ու անծանոթ մեկի չէր սպասում, այլ բարեկամի, որի հետ նախապես պայմանավորվածություն ուներ հանդիպելու հենց այդտեղ, հենց այդ ժամին, միայն թե նա, չգիտես ինչու, ուշանում է: Բայց անպայման կգա, պարտավոր է:

Հետո աչքերում շողաց մի կարևոր միտք, և նա ուրախացավ, որ դրամապանակի տերը դեռ չի եկել, թե չէ ուշ կլիներ, շատ ուշ: Նա գրպանից հանեց հարյուր ֆրանկ, շտապ բացեց դրամապանակը և հարյուրանոցը դրեց դրամապանակի մեջ՝ տասը ֆրանկի տակ: Ապա ժպտաց, ձեռքերը շփեց, խոր շունչ քաշեց հին ու ծանր պարտքերից ազատվողի պես: Ու հանկարծ հասկացավ, որ տասը տարի առաջ վիճակախաղով շահած հարյուր մարկը հոգու խորքում, իրենից էլ ծածուկ, պարտք է համարել: Փորձեց հասկանալ՝ ինչու: «Որովհետև հարյուր մարդ այդ վիճակախաղում հուսախաբ եղավ, իսկ ես շահեցի, սեփականացրի հարյուր մարդու հարյուր մարկը»:

Հետո ձեռքերը տաքացրեց շնչով, հետ ու առաջ նայեց մայթերի երկարությամբ և շարունակեց քայլել մինչև փողոցի շրջադարձն ու հետ, շրջադարձն ու հետ...

Հիմա նա այնպես բծախնդիր չէր նայում անցորդներին, չէր որոնում դրամապանակի տիրոջը. երկժամյա ճամփապահումը ստեղծել էր պատ-

ռանք, թե ծանոթի է սպասում, որը եթե գա, և ինքը չնկատի, կմոտենա, կբարևի և կմեկնի ձեռքը:

Ձմռան այդ օրը աշխարհում միլիոն ու մեկը կողոպուտ էր անում, միլիոն ու մեկը կողոպտվում էր, միլիոն ու մեկ մարդ կորցրել էր դրամապանակը՝ մաշված ու նոր, լիքն ու դատարկ, միլիոն մարդ դրամապանակ էր գտել, գրպանել ու գնացել էր: Ձմռան այդ օր ու ժամին աշխարհում մի մարդ, մեկը միայն ժամադիր էր կորած դրամապանակի տիրոջ հետ...

Ու եկավ նա...

Դեռատի կին էր, որի աչքերում բողոք կար, իսկ հույսը լացի պես կախվել էր շուրթերից ու դողում էր: Նա քայլում էր տրտում ու անվստահ, և ոտքերը հայացքի հետքով կամուկաց շարժվում էին, հայացքի հետ դողում, աչքաթարթումի հետ կանգնում, մտածում աջ ու ձախ թեքվելու, հետ դառնալու մասին:

Կնոջ թափառիկ հայացքը հանդիպեց Կոմիտասի հայացքին, հետո նորից կուչ եկավ ոտքերի մոտ, և նա շարունակեց գաղտուկ հայացքով փնտրել կորածը: Ու հանկարծ զգաց, որ հիմա դրամապանակ չի որոնում, այլ ճիգով պահում է հենց նոր իրեն հանդիպած հայացքը, ուզում է հասկանալ դրա իմաստը, որովհետև այդ աչքերն իրեն ուղղված խոսք ունեին:

-Օրիո՛րդ, դուք որևէ բա՞ն եք կորցրել:

Կինը ցնցվեց: Ամեն քայլի հետ սպասում էր, որ ուր որ է կլսի այդ ծանոթը:

-Այո՛, դրամապանակս եմ կորցրել,-ասաց ցածրաձայն:

Կոմիտասը ձեռքը տարավ գրպանը:

-Ահավասի՛կ, վերցրե՛ք: Իսկ ինչու՞ ուշացաք,-տխուր ժպտաց նա:

Աղջիկը թույլ մեկնեց ձեռքը, դրամապանակն առավ ու դողացող մատներով փորձեց բացել: Դա ակամա մղում էր: Կոմիտասը ափերի մեջ առավ նրա ձեռքերն ու ասաց.

-Օ՜ բացել պետք չէ, ցուրտ է...:

Ապա գլուխ տվեց ու գնաց:

Աղջիկը մոլոր հայացքով հետևում էր նրան, և մատները դրամապանակն էին շոշափում, իսկ Կոմիտասը հեռանում էր՝ հոգում տխուր ու ծանր մի խաղաղություն:

Ըստ Ս. Գաղշոյանի

Փոխադրեցեք հետևյալ նյութի բովանդակությունը:

ՀԱՅԸ

Արդյոք մի բան հասկանու՞մ եք հայից: Որքա՞ն տարօրինակ, հանելուկային արարած, որքա՞ն խաբուսիկ: Երևու՛յթը, ո՛չ ինքը: Բայց և ի՞նչ է ինքը, իր նկարագիրը: Զուտ աշխատանք: Որոնում ես իր ինքնությունը, գտնում, բայց և իսկույն տեսնում ես, որ դա էլ նորից երևույթ է: Անհանգիստ դեմք ունի, չի թողնում նկարես: Թվով գրեթե ամենափոքրն է, տառապանքով՝ ամենամեծը: Ժամանակով ամենահինն է, վիճակով՝ ամենից անփոփոխը:

Ամենից աննպաստն ի՛ր երկրի դիրքն է, ինքը ամենի՛ց համառ կառչեց նրան: Որքա՜ն անհույս է թվում իր ապագան, բայց և որքա՜ն հուսացող է նա: Իր կյանքում նա երկու բան չտեսավ. մեկ՝ բախտ, մեկ էլ՝ հուսահատություն: Ինչպե՞ս ճանաչես նրան, ինչպե՞ս չափես: Իր չափը չափազանցն է. զարմանալի՜ հավասարակշռություն, որ ծայրահեղության մեջ է:

Ահա նայի՛ր այս բեռնակրին: Ի՞նչ է սա: Մեջքին մի սար բեռ՝ ճկվում է, մեջքը կոտրում: Որքա՜ն ուժ, որքա՜ն աշխատասիրություն: Ինչ է թե մի փոքրիկ գումար հավաքի, գնա, խանութ բաց անի: Մարդն իր հացի և իր գործի տերն է ուզում լինել և ոչ թե սրա-նրա ծառան: Եվ արդեն հայ՝ նշանակում է տեր:

Տեսե՞լ եք նրա բնակարանը. խլուրդի ծակուռ: Բայց անցի՛ր նրա երկրով... Ի՜նչ հիասքանչ վանքեր, հոյակապ աշտարակներ, գողտրիկ խաչքարեր: Հավատալ կարելի՞ է, թե ինքն է շինել այդ բոլորը: Լցրել է իր երկիրը եկեղեցիներով, բայց տարին մի անգամ չի մտնում աղոթելու, աղոթք չի անում առօրյա կյանքում, բայց այս չաղոթող ցեղի Նարեկացու շուրթերի՛ց թռավ աղոթքի ամենաբարձր թռիչքն առ Աստված...

Տանել չի կարողանում ծես, ձև, աստիճան, քաղաքավարություն: Ռամիկ է գերազանցապես: Քաղաքականության մեջ մի բանում է շատ հոգածու՝ անկեղծ լինել: Այնքա՜ն անկեղծ է ու միամիտ, որ անկասկածելի խորամանկի և կեղծավորի տպավորություն է թողնում:

Խենթ ու խոնարհ է իր Սասունցի Դավթի նման և նրա պես անսպասելի ըմբոստ, հարվածող: Երբ վրա է հասնում գերագույն վտանգը, հերոսանում է հանկարծ և ծառանում վիշապի նման: Բարի է առհասարակ, շոյի՛ր, և կկողոպտվի, բայց և առհասարակ ինքն է բարեկամ քեզ, իսկ քո բարեկամությունը վանում է: Տաղանդ է՝ իր դեմ ատելություն ստեղծելու: Ուրիշի հաջողության մեջ նախանձոտ է: Եթե գժտվեց մեկի հետ, ոխակալ է, ինչպես ուղտ: Ամեն հայ մի հայ ունի, որի հետ թշնամի է մինչև մահ: Սա նրա անհրաժեշտությունն է: Անկարգ է և անհիշխանական թե՛ հասարակության, թե՛ պետության, թե՛ գաղափարների մեջ:

Ուր հեղափոխություն, այնտեղ՝ հայություն: Ծայրահեղական է: Կոտորածներից ամենազարհուրելին ինքը տեսավ, բայց չխրատվեց:

Հայի ամենամեծ առաքինությո՞ւնն ես ուզում. ամենաներողամիտ ցեղը աշխարհիս վրա: Չի ուզում, որ իրեն դիպչեն, մոտենան, սիրեն թեկուզ: Նա մեկուսի է, բարի և ազատասեր:

Ինձ թվում է, թե մի շատ մեծ վիրավորանք կա հայի սրտի խորքում թաքնված, և դա այն արծվի վիրավորանքն է, որին ցած են բերել բարձր լեռներից: Թպրտում է, ընկնում քարի, աղբի մեջ, կեղտոտվում, թևերը կոտրում: Կերակուր ես մեկնում՝ չի ուզում: Չի սիրում *ո՛չ ստրկություն, ո՛չ երջանկություն*, գերադասում է տառապանք և ազատություն: Մաղձոտ է, բայց չունի գծուծ ատելություն, որ բարձր լեռներին անծանոթ զգացում է: Գերի արծվի խոր վիշտն է իր սրտի մեջ: Սա Հայկն է, որին զրկել են իր կյանքի միակ պայմանից՝ ազատությունից:

«Ոչինչ չեմ ուզում ձեզնից,-ասում է նա իր նեղիչներին,-ձեզ լինի ձեր լուծը, ձեզ լինի ձեր երջանկությունը, գնացե՛ք, ապրեցե՛ք խաղաղ և երջանիկ: Եթե դուք սիրում եք կյանքը, ես սիրում եմ կյանքից ավելի թանկ բանը՝ Ազատությունը»:

Ըստ Դ.Դեմիրճյանի

602. ա) *Փոխադրեցեք աստվածաշնչային հետևյալ առակների բովանդակությունը և ընդհանուր վերնագիր առաջարկեցեք:*

Երկնքի արքայությունը նմանվում է մի թագավորի, որ կամեցավ իր ծառաների հաշիվները կարգադրել: Երբ սկսեց հաշիվն ընդունել, նրա մոտ բերեցին տասը հազար քանքարի պարտք ունեցող մի պարտապանի: Քանի որ վճարելու կարողություն չուներ, նրա տերը հրամայեց վաճառել նրա կնոջը, որդիներին և ունեցվածքը և պարտքը հատուցել: Ծառան, նրա առաջ գետին ընկնելով, երկրպագում և աղերսում էր. «Համբերո՛ղ եղիր իմ հանդեպ, և բոլորը կվճարեմ քեզ»: Այդ ծառայի տերը գթալով արձակեց նրան և ամբողջ պարտքը շնորհեց նրան: Իսկ ծառան դուրս ելնելով գտավ իր ծառայակիցներից մեկին, որ իրեն հարյուր դահեկան պարտք էր: Եվ նրան բռնելով՝ խեղդում էր և ասում. «Վճարի՛ր ինձ, ինչ որ պարտք ես»: Իսկ ծառայակիցը, ընկնելով նրա ոտքերը, աղաչում էր նրան և ասում. «Համբերո՛ղ եղիր իմ հանդեպ, և կվճարեմ քեզ»: Իսկ սա չէր կամենում, ու գնաց, նրան բանտարկել տվեց, մինչև պարտքը վճարեր: Ծառայակիցները, տեսնելով պատահածը, շատ վրդովվեցին և եկան ու իրենց տիրոջը պատմեցին այն ամենը, ինչ եղել էր: Այդ ժամանակ տերը կանչեց նրան ու ասաց. «Չա՛ր ծառա, քո ամբողջ պարտքը ես քեզ շնորհեցի նրա համար, որ աղաչեցիր ինձ: Իսկ դու չպե՞տք է ողորմեիր քո ծառայակցին, ինչպես ես քեզ ողորմեցի»: Եվ նրա տերը բարկանալով նրան հանձնեց դահիճներին, մինչև որ հատուցեր բոլոր պարտքերը:

Ըստ Մատթեոսի Ավետարանի

Մի մարդ երկու որդի ուներ:

Կրտսեր որդին հորն ասաց. «Հա՛յր, տո՛ւր քո ունեցվածքից ինձ հասնող բաժինը»: Եվ հայրը ունեցվածքը բաժանեց նրանց միջև:

Շատ չանցած՝ կրտսեր որդին, փողի վերածելով ամեն ինչ, հեռու երկիր գնաց ու այնտեղ վատնեց իր ունեցվածքը: Եվ երբ ամեն ինչ սպառեց, այդ երկրում սաստիկ սով եղավ, ու տղան չքավորության մատնվեց: Եվ նա գնաց մի ունևոր մարդու մոտ, և սա նրան ուղարկեց իր ագարակը՝ խոզեր արածեցնելու: Եվ նա ցանկանում էր իր փորը լցնել եղջերենու պտղով, որ խոզերն էին ուտում, բայց ոչ ոք նրան չէր տալիս:

Ապա ուշքի եկավ և ասաց. «Քանի՞ վարձու աշխատող ունի իմ հայրը, և նրանք առատ հաց ունեն, իսկ ես այստեղ սովամահ եմ լինում: Վեր կենամ գնամ հորս մոտ ու ասեմ. "Հա՛յր, մեղանչեցի երկնքի դեմ ու քո առաջ և այլևս արժանի չեմ քո որդին կոչվելու: Վերցրու՛ ինձ իբրև քո վարձու աշխատողներից մեկը"»:

Եվ վեր կացավ ու եկավ իր հոր մոտ:

Նա դեռ հեռու էր, երբ հայրը տեսավ նրան ու խղճաց, վազեց նրան ընդառաջ, վզովն ընկավ ու համբուրեց: Եվ որդին ասաց նրան. «Հա՛յր, մեղանչեցի Երկնքի և քո առաջ. ես այլևս արժանի չեմ քո որդին կոչվելու»: Հայրը իր ծառաներին ասաց. «Անմիջապես հանեցե՛ք նրա նախկին պատմուճանը և հագցրե՛ք նրան, մատանին նրա մատը դրեք և նոր կոշիկնե՛ր տվեք նրան: Եվ մսացու եզը բերե՛ք ու մորթեցե՛ք. ուտենք և ուրախ լինենք, որովհետև իմ այս որդին մեռած էր և կենդանացավ, կորած էր և գտնվեց»: Եվ սկսեցին զվարճանալ:

Նրա մեծ որդին հանդում էր: Եվ երբ եկավ ու տանը մոտեցավ, երգերի և պարի ձայնը լսեց: Եվ ծառաներից մեկին կանչեց իր մոտ ու հարցրեց, թե ի՞նչ է տեղի ունենում: Ծառան էլ նրան ասաց. «Եղբայրդ եկել է, և հայրդ նրա համար մսացու եզը մորթեց, որովհետև ողջ և առողջ գտավ նրան»: Նա բարկացավ և չէր ուզում ներս մտնել, բայց հայրը դուրս եկավ և աղաչեց նրան: Նա էլ պատասխանեց ու ասաց հորը. «Այս քանի՞ տարի է՝ ծառայում եմ քեզ և քո պատվիրաններից երբեք դուրս չեմ եկել, բայց ինձ երբեք մի ուլ իսկ չտվեցիր, որ իմ բարեկամների հետ ուրախանայի: Իսկ երբ քո այս որդին եկավ, որ քո ունեցվածքը անառակների հետ կերավ, մսացու եզը մորթեցիր նրա համար»:

Հայրը նրան ասաց.«Որդյա՛կ իմ, դու միշտ ինձ հետ ես, և ինչ որ ունեմ, քոնն է: Իսկ հիմա պետք է ուրախ լինել ու խնդալ, որովհետև քո այս եղբայրը մեռած էր և կենդանացավ, կորած էր և գտնվեց»:

Ըստ Ղուկասի Ավետարանի

բ) *Աստվածաշնչային ուրիշ առակներ պատմեցեք:*

603 *Շարադրեցեք շարունակությունը:*

Ա. Իմ լայն լուսամուտից երևում է ծմեռային թովիչ տեսարանը: Արևի լույսի տակ ձյունը պսպղում է. կարծես մի անտես ծեռքով անհամար ադամանդներ են փշրվել ու ցանվել համատարած ծերմակության վրա: Ես փակում եմ աչքերս և հեռացնելով արևոտ ձմռան տեսարանը՝ տեսնում եմ գույներ, որ վաղուց չքացել են, լսում եմ ձայներ, որ լռել են, բայց որոնց արձագանքը դեռ հնչում է իմ հոգու մի հին մեղեդու նման, հնչում է անդադար՝ բացելով հարազատ հուշերի ժապավենը:

Բ. Պահի՛ր նամակները: Նամակի հետ ժամանակն ես ծրարում, հուշեր, դեմքեր: Պահի՛ր. մի օր ցանկություն կունենաս ընթերցելու, վերապրելու ապրածդ: Կամ թե պատահականորեն կընկնի ձեռքդ, և այնպես կսեղմվի սիրտդ, որից և՛ ցավ կզգաս, և՛ ուրախություն:

Գ. Մեղեդու մի ծվեն անցած-գնացած նվիրական անծրևի բուրմունք է բերում, հետո պատանեկան սիրով լեցուն մի երեկոյի զովություն դիպչում է դեմքիս, ու հիշում եմ

Դ. Հանկարծ Սեդան կանգ առավ և ուղիղ նայեց տղայի աչքերին.
- Այն օրն ի՞նչ էր պատահել քեզ:

604 *Շարադրեցեք սկիզբը:*

Ա. Դուրս եմ գալիս, երկնքում ինքնաբերաբար լուսնի պատկերն եմ որոնում: Ու մեկ էլ, չգիտեմ ինչպես, հանկարծ գլխի եմ ընկնում, որ այդքան սպիտակ, թափանցիկ լուսինն էլ ստվեր ունի, այն էլ սև: Եվ այդ օրվա ամենանիրական ընկալումը երևի դա էր:

Բ. Վերջապես նրանք հասան ափին և բերանքսիվայր պառկեցին ավազին: Լսվում էր միայն քամուց ծածանվող առագաստների ծայնն ու նավակներին զարկվող ալիքների շառաչյունը:

Գ. Այժմ նրանք կանգնել էին դեմ դիմաց, և երկուսն էլ միանման հայացք ունեին՝ զննող և միաժամանակ լարված:

Դ. Աննան զարմացավ՝ պարզելով, որ այն օրից ի վեր, ինչ դադարեց Արմանին սիրելուց, մի տարօրինակ կարեկցանք է զգում նրա հանդեպ:

Ե. Առերևույթ անկարևոր թվացող այդ միջադեպը, սակայն, տրտմության մի բարակ շերտ թողեց Անիի հոգում, ինչպես թեժ կրակի վրա սփռվում է մոխրի թափանցիկ շերտը:

605 *Ամբողջացրեք պատումը՝ գրելով սկիզբը և շարունակությունը:*

Ա. Լուսինը խանդից հալվել, մի պատառ էր դարձել: Հալվել էր, թափվել ծիրանենու սաղարթին, կաթկթել ծառի տակ՝ ծիրանենու դողդողացող ստվերի վրա: Շուրջը լռություն էր, և այդ լռության մեջ մի ճիչ կար՝ լսելի միայն երկուսին, որ մի քանի րոպե հետո պիտի բաժանվեին:

Բ. Ձնծաղիկ հավաքելիս հանկարծ ոտքիս տակի քարն ընկավ, ու ես մնացի օդում կախված: Մատներս խրել էի ժայռի վրայի թաց հողի մեջ, թափահարում էի ոտքերս: Եթե բաց թողնեի ծեռքերս, անպայման կգլորվեի անդունդը:

Գ. Ես նրան հրաժեշտ տվեցի ու շտապ վերադարձա: Ճանապարհին չէի փորձում մտքում դասավորել ասելիքս. չեմ սիրում շինծու նախաբաններով խոսել: Տուն մտա և ...

Դ. Հաջորդ առավոտյան, երբ Մարիան արթնացավ, արդեն տասնմեկն անց էր: Նամակների մեջ կար մեկը, որը փոստով չէր ստացվել: Ծրարի վրա նա ճանաչեց Ռուբենի կանոնավոր, դյուրընթեռնելի ձեռագիրը և բացեց այն:

Ե. Միքայելը նոր միայն գլխի ընկավ ու այնքան զարմացավ, որ դանդաղեցրեց մեքենայի ընթացքը: Մի՞թե Ռուզանի ենթադրությունը ճիշտ է: Համենայն դեպս, ինքը ոչ մի ձևով ցույց չի տվել, թե նա որևէ հույս կարող է ունենալ:

606 *Ինչպիսի՞ ավարտ եք առաջարկում (1-2 նախադասությամբ):*

Ա. Նյու Յորքի երկաթուղային կայարաններից մեկում էլեկտրոնային ուղեղով ռոբոտ էր տեղադրված: Նրա կողքին կախված հրահանգում ասված էր. «Դրամի համար նախատեսված անցքի մեջ 5 ցենտ գցելու դեպքում կարող եք տեղեկություններ ստանալ Ձեր մասին»:
Մի ուղևոր հետաքրքրվեց այդ ռոբոտով: Նա հինգցենտանոցը գցեց անցքը, և ավտոմատից մի գրություն ընկավ: Այնտեղ գրված էր ...

Բ. Չիկագոյի փողոցներից մեկում կարի երեք արհեստանոց կար: Մրցակիցներից առաջ անցնելու նպատակով արհեստանոցներից մեկի տերը այսպիսի ցուցանակ կախեց. «Չիկագոյի լավագույն դերձակը»: Երկրորդ արհեստանոցի տերն ավելի աչքի ընկնող մի ցուցանակ պատվիրեց՝ հետևյալ մակագրությամբ. «Աշխարհի լավագույն դերձակը»: Թվում էր, թե երրորդն արդեն որևէ բան հնարել չի կարող: Բայց նա անձնատուր չեղավ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դիմումի նմուշ

Երևանի Վ.Բրյուսովի անվ. լեզվաբանական համալսարանի օտար լեզուների ֆակուլտետի դեկան պրոֆ. Վ. Երեմյանին
Թարգմանչական բաժնի 1-ին կուրսի
2-րդ խմբի ուսանող Գոռ Արամյանից

Դիմում

Հունիսի 2-ին մեկնելու եմ Ֆինլանդիա՝ մասնակցելու շախմատի միջազգային մրցաշարի:

Խնդրում եմ թույլատրել վաղաժամկետ հանձնելու երկրորդ կիսամյակի քննությունները:

Կից ներկայացնում եմ հրավերի պատճենը:

Դիմող՝ [ստորագրություն] Գ.Արամյան

03.04.2002 թ.

Լիազորագրի նմուշ

Լիազորագիր

Ես՝ դասական բանասիրության ֆակուլտետի հունարենի բաժնի 2-րդ կուրսի ավագ Աստղիկ Գեղամի Հովհաննիսյանս, լիազորում եմ նույն կուրսի ուսանողուհի Աշխեն Դավթյանին՝ ինստիտուտի գանձարկղից ստանալու նոյեմբեր ամսվա կրթաթոշակը:

[ստորագրություն] Աստղիկ Հովհաննիսյան

12.10.02 թ.

*Ստորագրությունը պետք է հաստատվի դեկանատի կամ կադրերի բաժնի կողմից:

Ստացականի նմուշ

Ստացական

Ես՝ Գուրգեն Ավետիքի Հարությունյանս (անձնագրի տվյալները՝ ԱԲ 05716681), «Շուշան» գրախանութի աշխատակից Արմեն Կարապետի Սիմոնյանից ստացա վաճառված դասագրքերի գումարը՝ 150.000 դրամ (հարյուր հիսուն հազար դրամ):

[ստորագրություն] Գուրգեն Ավետիքի Հարությունյան

11.09.2002 թ.

607. *Մեկական դիմում, լիազորագիր և ստացական գրեցեք:*

Ինքնակենսագրություն

Ես՝ Վահան Տիգրանի Գեղամյանս, ծնվել եմ 1974 թ. օգոստոսի 26-ին Էջմիածին քաղաքում մտավորականի ընտանիքում:

1981-91 թթ. սովորել եմ Էջմիածնի հ.2 միջն. դպրոցում, որն ավարտել եմ ոսկե մեդալով:

1991 թ. ընդունվել եմ Երևանի պետական համալսարանի հայկական բանասիրության ֆակուլտետը և 1996 թ. այն ավարտել ուսման բարձր առաջադիմությամբ:

Ուսումնառության ընթացքում թղթակցել եմ հանրապետական մամուլին, 1995 թ. արժանացել եմ «Լավագույն ուսանող թղթակից» մրցույթի հաղթողի կոչմանը:

Համալսարանն ավարտելուց հետո 2 տարի ծառայել եմ հայկական բանակում:

1998 թ. սեպտեմբերից աշխատանքի եմ անցել Արմավիրի մարզի Զվարթնոց գյուղի միջնակարգ դպրոցում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ:

2002 թ. դպրոցի փոխտնօրենն եմ:

Շարունակում եմ լրագրողական աշխատանքս:

Ազատ տիրապետում եմ ռուսերենին և գերմաներենին: Կատարում եմ բժշկական տեքստերի թարգմանություններ:

Այժմ ուսումս շարունակում եմ ՀՀ ԳԱԱ Հր.Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտի հեռակա ասպիրանտուրայում՝ թարգմանության տեսություն մասնագիտությամբ:

Ամուսնացած եմ, ունեմ 2 դուստր:

[ստորագրություն] Վ.Տ.Գեղամյան

3.09.2002

ՏՈՒՐ *Գրեցեք Ձեր ինքնակենսագրությունը:*

Բնութագրի նմուշ

Բնութագիր

Բանասիրական գիտությունների թեկնածու Մարիամ Նիկոլյանը 1990 թվականից աշխատում է Շուշիի Մուրացանի անվան համալսարանի հայագիտության ամբիոնում նախ որպես դասախոս, իսկ 2001 թվականից՝ դոցենտ:

Մ.Նիկոլյանն իր դասախոսություններն ու գործնական պարապմունքներն անցկացնում է գիտական և մանկավարժական պատշաճ մակարդակով՝ օգտագործելով լեզվաբանության, մասնավորապես հայագիտության նորագույն նվաճումները:

Մ.Նիկոլյանը մշտապես աշխատում է իր գիտամանկավարժական մակարդակի բարձրացման ուղղությամբ: Տարիներ շարունակ զբաղվում է հայերենի տերմինաբանության հարցերի ուսումնասիրությամբ, որի արդյունքներն ամփոփված են «Փոխառությունը որպես հայերենի տերմինաբանության համալրման միջոց» թեկնածուական ատենախոսության մեջ: Տարբեր գիտաժողովներում բազմիցս հանդես է եկել զեկուցումներով, հեղինակ է գիտական մի շարք հոդվածների, ուսումնական երկու ձեռնարկի:

Մ.Նիկոլյանը պարտաճանաչ, կարգապահ և սկզբունքային դասախոս է: Ստանձնած պարտականությունները կատարում է բարեխղճորեն, խստապահանջ է իր նկատմամբ:

Ազնիվ, լավ ընկեր է, սրտացավ բարեկամ, հմուտ դասախոս և վայելում է ուսանողների ու գործընկերների հարգանքն ու անկեղծ համակրանքը:

Համալսարանի ռեկտոր [ստորագրություն] Դ. Ավագյան

Հայագիտության ամբիոնի
վարիչ [ստորագրություն] Հ.Գրիգորյան

01.10.2002

* Գրությունը պետք է կնքվի հաստատության կլոր կնիքով:

609. *Գրեցեք Ձեր համակուրսեցու բնութագիրը կամ բնութագրական շարադրություն Ձեր դասախոսներից մեկի մասին:*

Ակտ

Մենք՝ ներքոստորագրյալներս, հաստատում ենք, որ 2002թ. մայիսի 16-ին համակարգչային բաժնի նախկին վարիչ Գևորգ Պողոսյանը ներկայիս վարիչ Սևակ Ավետիսյանին է հանձնել բաժնի հետևյալ գույքը.

1. Pentium III-800 համակարգիչ՝ ամբողջ լրակազմով – 5 հատ
2. Տպիչ HP 1200 – 2 հատ
3. Պատճենահանող սարք Canon – 1 հատ
4. Գրապահարան – 2 հատ
5. Չիրկիզվող պահարան – 1 հատ
6. Սեղան – 7 հատ
7. Աթոռ – 10 հատ
8. Հեռուստացույց Samsung – 1 հատ

Հանձնող [ստորագրություն] Գ.Պողոսյան
Ընդունող [ստորագրություն] Ս.Ավետիսյան

Հանձնաժողովի անդամներ

Ա.Մելոյան
[ստորագրություններ] Հ.Ադամյան
Լ.Մանուկյան

16.05.2002

610. *Փորձեք որևէ ակտ գրել:*

611. *Ինքնուրույն գրեցեք՝*
ա) որևէ արձանագրություն և քաղվածք այդ արձանագրությունից
բ) տեղեկանք
գ) հայտարարություն
դ) հրավիրատոմս

Չարլի Չապլինի նամակը դստերը
(Կրճատումներով)

Դստրի՛կս,

Հիմա գիշեր է: Ծննդյան գիշեր: Իմ փոքրիկ ամրոցի բոլոր անզեն պահապանները քնել են: Քնած են և եղբայրդ ու քույրդ: Նույնիսկ մայրդ արդեն քնել է: Ես քիչ մնաց արթնացնեի այդ նիրհող թռչնակներին, մինչև կհասնեի իմ այս աղոտ լուսավորված սենյակը:

Ինչքան հեռու եմ քեզանից, բայց թող կուրանան աչքերս, թե քո պատկերը թեկուզ մի ակնթարթ հեռանում է աչքիս առաջից: Նա այնտեղ է՝ իմ սեղանին, այստեղ՝ սրտիս մեջ: Այդտեղ՝ հեքիաթային Փարիզում, դու պարում ես փառահեղ թատրոնի բեմահարթակի վրա.... Գեղեցկուհի՛ եղիր և պարի՛ր, ա՛ստղ եղիր ու փայլի՛ր, բայց եթե հանդիսատեսի ցնծությունն ու շնորհակալության խոսքերն արբեցնեն քեզ, եթե գլուխդ պտույտ գա քեզ ընծայված ծաղիկների բույրից, ապա քաշվի՛ր մի անկյուն և կարդա՛ իմ նամակը, ունկնդի՛ր եղիր հորդ ձայնին:

Գիտե՞ս, թե քանի գիշեր եմ անցկացրել քո մահճակալի մոտ, երբ դու փոքր էիր, քեզ հեքիաթներ էի պատմում և՛ քնած գեղեցկուհու, և՛ մշտարթուն վիշապի մասին.... Ես տեսնում էի քո երազանքները, Չերալդի՛նա, տեսնում էի քո ապագան, քո այսօրը, ես տեսնում էի բեմահարթակի վրա խաղացող մի աղջկա, երկնքում ճախրող մի փերու:

Պարի՛ր: Այդ պարերն ու ծափահարությունների որոտը քեզ երկինք կհանեն: Բարձրացի՛ր: Բարձրացի՛ր այնտեղ, աղջի՛կս, բայց և վերադարձի՛ր երկիր. դու պետք է տեսնես՝ ինչպես են ապրում մարդիկ, ինչպես են ապրում այն ծայրամասերի փողոցի պարուհիները. նրանք պարում են ցրտից և սովից դողալով: Ես այնպիսին եմ եղել, ինչպիսին նրանք են, Չերալդի՛նա: ....Ես շատ հեքիաթներ եմ պատմել քեզ այն երկար գիշերներին, բայց իմը՝ իմ հեքիաթը, չեմ պատմել: Իսկ դա նույնպես հետաքրքիր է: Հեքիաթ՝ քաղցած ծաղրածուի մասին, որ պարում ու երգում էր Լոնդոնի աղքատ թաղամասերում, իսկ ապա... ողորմածություն հայցում...

Ահա նա՝ իմ հեքիաթը: Ես գիտեմ՝ ինչ բան է սովը, ինչ է անօթևան լինելը: Դեռ ավելին, ես ճաշակել եմ ստորացնող մորմոքը այն թափառական ծաղրածուի, որի կրծքի տակ փոթորկում էր հպարտության մի ամբողջ օվկիանոս, և այդ հպարտությունը մեռցնում էին նետած դրամները....

Ավելի լավ է խոսենք քո մասին:

Քո անվանը, Չերալդի՛նա, հետևում է իմը՝ Չապլին: Այդ անունով ես ավելի քան քառասուն տարի ծիծաղեցրել եմ մարդկանց: Բայց ես ավելի լաց եմ եղել, քան նրանք ծիծաղել են: Չերալդի՛նա, այն աշխարհում, որտեղ ապրում ես դու, միայն պարերն ու երաժշտությունը չէ որ գոյություն ունեն... Կեսգիշերին, երբ դու դուրս ես գալիս մեծ դահլիճից, կարող ես մոռանալ քո հարուստ երկրպագուներին, բայց մի՛ մոռանա այն տաքսու վարորդին, որը

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲ - Ակսել Բակունց
ԱԻ Ավետիք Իսահակյան
ԳԲ - Գարեգին Բես
ԽԱ - Խաչատուր Աբովյան
ՀԹ - Հովհաննես Թումանյան
ՀՀ - Հովհաննես Հովհաննիսյան
ՀՄ Հրանտ Մաթևոսյան
ՀՇ Հովհաննես Շիրազ
ՀՍ - Համո Սահյան
Մ Մուրացան
ՄՄ Մարո Մարգարյան
Շ - Շիրվանզադե
ՊՍ - Պարույր Սևակ
ՌԶ Ռուբեն Զարյան
ՍԽ - Սերո Խանզադյան
ՍԿ - Սիլվա Կապուտիկյան
ՎԱ Վախթանգ Անանյան
ՎԹ - Վահան Թոթովենց
ՎՓ - Վահրամ Փափազյան
Ր - Ռաֆֆի

Ժորժ Սանդի նամակը Ալֆրեդ դը Մյուսեին
(կրճատումներով)

12 մայիսի 1834 թ.

Ո՛չ, սիրելի՛ս, այս վերջին նամակը մի՛ համարիր վերջին ծեռքսեղմումը քեզ սիրող կնոջ. դա քո քրոջ ողջագուրանքն է: Այդ զգացումը այնքան մաքուր է, այնքան գեղեցիկ, այնքան քնքուշ, որ երբևէ չէի ուզենա կորցնել: Թող հիշողություններն իմ մասին երբեք չխամրեցնեն քո ուրախությունը: Սիրված ու երջանի՛կ եղիր: Սրտիդ գաղտնարանում պահի՛ր իմ սերը, տխուր օրերին հիշի՛ր, որ մխիթարվես:

Մնաս բարով, չեմ ուզում լքել քեզ ու չեմ ուզում նորից քեզ հետ լինել: Ոչի՛նչ, ոչի՛նչ չեմ ուզում: Հիմա ծնկաչոք եմ, բոլորովին ջարդված. թող այլևս ինձ ոչինչ չասեն: Ուզում եմ գրկել հողն ու արտասվել: Չեմ սիրում քեզ այլևս ու սիրում եմ հավերժ: Այլևս քեզ չեմ ուզում, բայց և առանց քեզ չեմ կարող: Թվում է, թե միայն երկնային ամպրոպը կամոքի ինձ՝ ոչնչացնելով...

Մնաս բարով, մեկնի՛ր կամ մնա՛, միայն թե մի՛ ասա, որ չես տառապում: Միայն դա բավական է, որ ավելի տառապեմ...

Գործնական նամակ

1915, 7 - 21 Պետերբուրգ*

Մեծարգո՛ Ալեքսեյ Մաքսիմովիչ,

Մոտ օրերս պատրաստ կլինի Սունդուկյանի «Պեպոյի» թարգմանությունը: Բարի եղեք հայտնել ինձ, թե ինչպես վարվեմ: Թարգմանությունն ուղարկեմ Ձե՞զ, թե՞ գամ (ինչպես պայմանավորվել էինք, եթե չեք մոռացել այդ): Դուք մտադիր եք այժմ ևե՞թ ծեռնամուխ լինել թարգմանությանը: Եթե իմ ներկայությունն անհրաժեշտ համարեք, ես կարող եմ գալ շաբաթ օրը՝ հետս բերելով արդեն պատրաստ ծեռագիրը («Պեպոյի» բառացի թարգմանության): Բանաստեղծներից մնում է թարգմանել մի քանի գործեր, որոնք չեն մտել նրանց բանաստեղծությունների գրքերի մեջ և ցրված են զանազան պարբերական հրատարակություններում: Այդ գործերը կընտրեմ և կներկայացնեմ թարգմանիչներին:

Ժողովածուի վերաբերյալ մնացած բոլոր հարցերի մասին անձամբ կհայտնեմ Ձեզ: *Վահան Տերյան*

*Տրվում է որոշ կրճատումներով և խմբագրումով:

612. ***Անձնական և գործնական (պաշտոնական) նամակներ գրեցեք:***

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲ - Ակսել Բակունց
ԱԻ Ավետիք Իսահակյան
ԳԲ - Գարեգին Բես
ԽԱ - Խաչատուր Աբովյան
ՀԹ - Հովհաննես Թումանյան
ՀՀ - Հովհաննես Հովհաննիսյան
ՀՄ Հրանտ Մաթևոսյան
ՀՇ Հովհաննես Շիրազ
ՀՍ Համո Սահյան
Մ Մուրացան
ՄՄ Մարո Մարգարյան
Շ - Շիրվանզադե
ՊՍ - Պարույր Սևակ
ՌԶ Ռուբեն Զարյան
ՍԽ - Սերո Խանզադյան
ՍԿ - Սիլվա Կապուտիկյան
ՎԱ Վախթանգ Անանյան
ՎԹ - Վահան Թոթովենց
ՎՓ - Վահրամ Փափազյան
Ր - Ռաֆֆի

ԱՌԱՐԿԱՑԱՑԱՆԿ

(Նշված են առաջադրանքների համարները)

ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հնչյուն և տառ 2
2. Ձայնավոր հնչյուններ 3, 4
3. Բաղաձայն հնչյուններ 5, 6
4. Հնչյունային (հնչյունաբանական) վերլուծություն 1, 7, 597
5. Երկհնչյուններ 8, 9
6. Հնչյունափոխություն
• պատմական և փոխադրական հնչյունափոխություն 10-12
• ձայնավորների և երկհնչյունների հնչյունափոխությունը 13-27, 161, 162
7. Շեշտ 28-32, 74
8. Վանկ 29, 33, 34

ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

1. Հայերենի գրատախտակները 35
2. Ուղղագրության սկզբունքները 36
3. Ուղղագրության պատմություն 37,38
4. Ձայնավորների ուղղագրությունը 488
5. Բաղաձայնների ուղղագրությունը 39,40, 42, 49, 50
6. Կրկնակ բաղաձայնների և ձայնավորների ուղղագրությունը 45-48
7. Երկհնչյունների ուղղագրությունը 41,43
8. Բառերի գծիկով, միասին կամ անջատ գրությունը 51-56, 142, 143, 146-148, 159, 165, 240, 329, 488
9. Մեծատառի գործածությունը 57, 58ա,59-65,178-180ա, 241
10. Թվականների ուղղագրությունը 262
11. Տող ադարձ 66, 67
12. Ուղղախոսություն 44, 69-75
13. Տառադարձություն 75
14. Գրաբարի արտասանական կանոններ 76

ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. Բառիմաստ 40,49,57, 97, 99, 104, 105, 109, 122, 123, 296, 361, 364
2. Մենիմաստ և բազմիմաստ բառեր 74-79, 81, 82, 104
3. Փոխաբերական իմաստ և փոխանունություն 80
4. Հոմանիշներ 39, 81-88, 92, 93, 125, 126, 133, 138, 139, 147, 148, 166գ, 213, 217բ, 238, 255, 321բ, 322, 324ա, 325ա, 398, 414, 430, 454, 464, 596
5. Հականիշներ 89-94, 137, 147, 148, 253, 446
6. Համանուններ 95, 96, 471
7. Հարանուններ 97-99, 139, 140, 215, 399
8. Բառիմաստային խմբեր 100-103, 105, 106, 168, 170, 238
9. Հնչանանություններ 119, 120
10. Նորաբանություններ 117, 118
11. Փոխառություններ և օտարաբանություններ 112-116
12. Տերմիններ 105-111
13. Արևմտահայերեն բառեր 121-123
14. Դարձվածքներ 124-132, 214, 273, 395, 448, 491,

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

1. Ձևույթներ 134, 157-159
2. Ածանցավոր բառեր 111,135-141,166-174,, 366, 367, 371

4. Կապերի հարաբերակցությունն այլ խոսքի մասերի հետ 432
5. Կապերի գործածությունը խոսքի մեջ 392, 445, 447, 548
6. Կապերի կազմությունը 438
7. Քննական ուսուցողական 435-437, 488

Շաղկապ

1. Շաղկապ, տեսակները 450, 455, 464, 468
♦ Համադասական շաղկապներ 451, 452
♦ ստորադասական շաղկապներ 453
2. Շաղկապների իմաստները 451-455, 458, 464, 574
3. Շաղկապների կազմությունը 452, 459-463
4. Շաղկապների գործածությունը խոսքի մեջ 454, 455, 461, 462, 464-466, 467բ, 574
5. Քննական ուսուցողական 456, 457

Վերաբերական

1. Վերաբերական, տեսակները 469, 470, 485
2. Վերաբերականների կազմությունը և ծագումը 474, 475
3. Վերաբերականների իմաստները 472
4. Վերաբերականի գործածությունը խոսքի մեջ 471, 473, 476-484
5. Քննական ուսուցողական 476, 477

Ձայնարկություն

1. Ձայնարկություն, տեսակները 486գ
2. Ձայնարկությունների իմաստները 486գ, 487, 489, 490
3. Ձայնարկության գործածությունը խոսքի մեջ 486բ, 489, 490, 492-494

Քննական վերջաբանություն 212, 216, 275գբ, 320, 400, 597

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

I. Բառակազմական կարգություն 61, 82, 87, 140, 146, 200, 206, 228, 229, 239, 242-244, 280, 308, 309, 371, 390, 392, 396, 397, 409, 410, 413, 428, 434, 435, 437, 441, 442, 446
II. Նախադասություն հաղորդական տեսակները (տեսակներն ըստ հնչեղության) 495, 496, 507, 509, 510
♦ Հարցական նախադասություն 297, 497-503, 515
♦ Հրամայական նախադասություն 504-506
♦ բացական նախադասություն 297, 503, 507, 508
♦ պատմող ական նախադասություն 511
III. Գարգ նախադասություն
1. Շարահյուսական կապակցությունները եղ ական ներն ու միջոցները 336, 390-392, 519-521, 579
2. Միակազմ նախադասություններ 512-517
3. Չեղ չվ ած անդամով նախադասություններ 512, 518գ
4. Նախադասությունն գլխավոր անդամներ
♦ Ենթակա 207, 522գ-524
♦ ստորոգյալ 525
5. Գոյական անական անդամի լրացումներ 526-535, 563
6. Բայական անդամի լրացումներ
♦ խնդիրներ 207, 536-538
♦ պարագաներ 208, 536, 539-542գ, 543-548, 564
7. Բառ մասի լրացումներ 549
8. Դերբայական դարձված, ազատված լրացումներ 545, 550, 551-554
9. Նախադասությունը ներդրված միասնորներ
♦ կոչական 555-557
♦ ներդրյալ և միջանկյալ լեզվական միասնորներ 558-561

◆ Ժխտական 311
2. Դերանուն-ների հոլովումը 279, 280, 288, 293, 302, 307, 313-316
3. Դերանվան թիվը 312
4. Դերանվան հարաբերակցությունն այլ խոսքի մասերի հետ 291, 415
5. Դերանուն-ների կազմությունը 317
6. Դերանվան գործածությունը խոսքի մեջ 280-284, 287, 289, 295, 303, 308-310, 543
7. Հոգեր 196-198

Բայ

1. Ը և Ա խոնարհման բայեր 334
2. Բայի կազմությունը 351
◆ Համադրական և հարադրական 325-329, 423
◆ ածականցավոր բայեր 330-335
3. Բայի սեռը 337, 340, 346, 347, 351
◆ ներգործական 336, 338, 345
◆ կրավորական 339, 341, 345
◆ չեզոք և կրավորաձև չեզոք 340, 342, 344
◆ կրկնատեսակ բայեր 342, 343
4. Բայի հիմքերը 348-350
5. Դերբայներ
ա) Անկախ դերբայներ 353, 354
◆ անորոշ 355-358, 368
◆ ենթակայական 360, 361, 365, 369, 372
◆ հարակատար 362-365, 367, 372
◆ համակատար 359
բ) կախյալ դերբայներ 354, 356, 372, 373
6. Ձևաբանական ասորդիժեքությունն 360, 363-365, 477
7. Բայի եղանակաժամանակային ձևերը 374-378
◆ վերջնական և պարզ ժամանակային ձևեր 362, 381, 383-386
8. Ժամանակային ձևերի արտահայտած իմաստները 379, 380, 382, 385
9. Անկանոն և պակասավոր բայեր 387-389ա
10. Բայի հնացած քերականական ձևեր 393
11. Բայի գործածությունը խոսքի մեջ 336, 338, 341, 343, 345, 347, 358, 359, 365, 379, 380, 390-392, 394

Մակբայ

1. Մակբայ, ասույթները 401, 402, 410-412, 415, 426
◆ տեղի 406ա, 419, 423
◆ ժամանակի 403, 404, 406բ
◆ ձևի 405, 406գ, 420
◆ չափի 406, 406դ
2. Մակբայի հարաբերակցությունն այլ խոսքի մասերի հետ 415, 416
3. Մակբայների իմաստները 403, 405-407, 411
4. Մակբայների կազմությունը 417-422, 424
5. Մակբայների գործածությունը խոսքի մեջ 404, 408-413
6. Ձևաբանական ասորդիժեքությունն 476

Կապ

1. Կապ, ասույթները 426, 449
◆ ըստ չարադասության 427-430
◆ ըստ կազմության տարբերական ասույթներ 431, 432
◆ ըստ արտահայտած հարաբերությունների և իմաստների 433, 434
2. Կապերի հոլովությունը 280, 439-442
3. Կապ - հոլով հարաբերությունը 443, 444

4. Կապերի հարաբերակցությունն այլ խոսքի մասերի հետ 432
5. Կապերի գործածությունը խոսքի մեջ 392, 445, 447, 546
6. Կապերի կազմությունը 438
7. Ձևաբանական տարբերությունն 435-437, 466

Շաղկապ

1. Շաղկապ, տեսակները 450, 455, 464, 468
♦ Համադասական շաղկապներ 451, 452
♦ ստորադասական շաղկապներ 453
2. Շաղկապների իմաստները 451-455, 458, 464, 574
3. Շաղկապների կազմությունը 452, 459-463
4. Շաղկապների գործածությունը խոսքի մեջ 454, 455, 461, 462, 464-466, 467բ, 574
5. Ձևաբանական տարբերություն 456, 457

Վերաբերական

1. Վերաբերական, տեսակները 469, 470, 485
2. Վերաբերականների կազմությունը և ծագումը 474, 478
3. Վերաբերականների իմաստները 472
4. Վերաբերականի գործածությունը խոսքի մեջ 471, 473, 478-484
5. Ձևաբանական տարբերություն 476, 477

Ձայնարկություն

1. Ձայնարկություն, տեսակները 486ա
2. Ձայնարկությունների իմաստները 486ա, 487, 489, 490
3. Ձայնարկության գործածությունը խոսքի մեջ 486բ, 489, 490, 492-494

Ձևաբանական վերլուծություն 212, 216, 275աբգ, 320, 400, 597

ՇԱՐԱՀԱՊՈՒՄՈՒԹՅՈՒՆ

I. Բառակապակցություն 61, 82, 87, 140, 146, 200, 206, 228, 229, 239, 242-244, 280, 308, 309, 371, 390, 392, 396, 397, 409, 410, 413, 428, 434, 435, 437, 441, 442, 446
II. Նախադասություն Հաղորդական տեսակները (տեսակներն ըստ հնչերանգի) 495, 496, 507, 509, 510
♦ Հարցական նախադասություն 297, 497-503, 515
♦ Հրամայական նախադասություն 504-506
♦ բացական նախադասություն 297, 503, 507, 508
♦ ազատական նախադասություն 511
III. Պարզ նախադասություն
1. Շարադասական կազմությունը հոդատեսակներն ու միջոցները 336, 390-392, 519-521, 579
2. Միասոս մ նախադասություններ 512-517
3. Չեզ չվածատեղամոլ նախադասություններ 512, 518ա
4. Նախադասությունը դիտարկվող տեղամներ
♦ ենթակա 207, 522ա-524
♦ ստորոգյալ 525
5. Գոյականական տեղամի լրացումներ 528-536, 563
6. Բայական տեղամի լրացումներ
♦ խնդիրներ 207, 536-538
♦ ազատագատներ 208, 536, 539-542ա, 543-548, 564
7. Բառամակի լրացումներ 549
8. Դերբայական դարձվածներ, տարահված լրացումներ 546, 589, 551-554
9. Նախադասությունը ներքրված միասոս տարներ
♦ կոչական 555-557
♦ ներքրյալ և միջանկյալ լեզվական միասոս տարներ 558-561

IV. Բառերի նախադասություն
1. Բառերի համադասական նախադասություն 562-566, 579, 582
2. Բառերի ստորադասական նախադասություն 566-579, 582
V. Փոխակերպումներ 345, 467ա, 580, 581, 590, 591, 593
VI. Մեջբերվող խոսք 467ա, 482, 483, 583-592
VII. Ժխտական քերականական միջոցները 594, 595
VIII. Գաղթականություն 177ա, 274
IX. Շարահյուսական հոմանիշներ 429, 538, 548, 596
X. Շարահյուսական վերլուծություն, գծագրումներ 536, 549-552, 567, 572, 576-578, 582, 597
XI. Նախադասություն կազմել 63, 68բ, 79, 88, 95-98, 129, 192, 193, 196-199, 206, 207, 215, 228, 240, 250, 269, 273, 281, 287, 289, 297, 298, 303, 310, 318, 338, 341, 343, 347, 356, 359, 365, 381, 391, 399, 411, 436, 447, 456, 457, 471, 476, 477, 489, 490, 497-501, 503-506, 508, 523, 527, 528, 531, 534, 538, 544, 545, 547, 553, 554, 556, 559, 562, 564, 568-575, 577-579, 585, 586

ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Համար բնագրի կետադրում (այլ առաջադրանքների հետ) 32, 133, 165, 216, 255, 319, 400, 425, 449, 468, 485, 560
2. Կետադրական առաջադրանքներ 68ա, 534, 545, 547, 550, 553, 554, 583, 585, 587-589

ԽՈՍՔԻ ՊԱՏՐԱՍՏԻ ՄԻԱՎՈՐՆԵՐ

1. Առածներ, ասացվածքներ 247, 251-253, 271, 323, 382, 514, 594, 595, 596բ
2. Թևավոր խոսքեր, ասույթներ 131, 237, 467գ, 542բ, 594բ
3. Շեջասություններ 254

ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔ

1. Փոխադրություն 181, 462, 482, 493, 513, 522բ, 542ա, 592, 600-602ա
2. Շարադրություն 105, 132, 275գ, 299, 352, 467ա, 492, 516, 517
- գրել շարունակությունը 603, 606
- գրել սկիզբը 604
- գրել սկիզբը և շարունակությունը 605
3. Տեքստի հարստացում 181, 245, 462, 502, 529, 535, 569
4. Տեքստի համառոտում 589, 598ա, 599ա
5. Տեքստի ծավալում 465
6. Երկխոսություն 482, 483, 494, 515, 518բ, 592
7. Գործնական գրություններ
- դիմում, լիազորագիր, ստացական 607
- ինքնակենսագրություն 608
- բնութագիր 609
- տակս 610
- նամակ, երկտող 283, 612
- այլ գրություններ 611

ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔ

Հայ ոգեղեն, սակնարկ 58բ, 180գ, 389գ, 596գ, 602գ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 3
Մուտք 5
Հնչյունաբանություն 7
Ուղղագրություն և ուղղախոսություն 17
Բառագիտություն 30
Բառակազմություն 46
Ձևաբանություն
Գոյական 55
Ածական 70
Թվական 81
Դերանուն 90
Բայ 100
Մակբայ 126
Կապ 133
Շաղկապ 140
Վերաբերական 147
Ձայնարկություն 154
Շարահյուսություն
Նախադասության հաղորդակցական տեսակները 157
Պարզ նախադասություն 163
Բարդ նախադասություն 186
Մեջբերվող խոսք 197
Տեքստային աշխատանքներ 206
Գործնական գրություններ 217
Համառոտագրություններ 225
Առարկայացանկ 226